4558

1899
491.99-8
S-45

Y-3 W46

SK 2002

491.99-8
Տ-45

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

498

ՉՉՈ-ՏԷԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԻՒԹԸ

408

1002
8339

Տաննեւմէկերորդ տպագրութիւն

Աշխատասիրեց

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԹԻՓԼԻՍ

Տպ. Կ. Մարտիրոսեանցի. | Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1899

2010

1174

Дозволено цензурою, Тифлисъ, 29-го Мая 1899 г.

ՅԱՌԱՋԱԲԱՆ 9-Դ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մայրենի Լեզուի» երրորդ տարին տպագրում ենք իններորդ անգամ։ Հովանդակութեան կողմից այս տպագրութիւնը շատ է զանազանւում իւր նախընթացից. այս անգամ մենք նորից աչքի անցուցինք մեր նոր գրականութիւնը և ինչ որ յարմար գտանք, աշխատեցինք ընդունել։ Հայց յայտնի է, որ ամենայն ցանկութիւն գործադրելու ժամանակ կարող է արգելքների հանդիպել։ Այսու ամենայնիւ մենք շատ նոր բան աւելացրինք այս տպագրութեան ժամանակ։ Աչքի առաջ ունենալով, որ մեր մանուկ գրականութիւնը այժմ զարմանալի կամայականութեան է մատնուած և մեր գրողներից իւրաքանչիւրը կամենում է իւր ուզած ձևը տալ նորան, աչքի առաջ ունենալով նմանապէս, որ բանաստեղծական գրուածքները, շատ կամ սակաւ, ազատ են կամայականութիւնից, մենք աշխատեցինք այս անգամ աւելի ընդարձակ տեղ տալ բանաստեղծական գրուածքներին և, համարեա, ամեն մի արձակ յօդուածից յետոյ դրինք նորան համապատասխան մի չափաբերական գրութիւն։

Նիւթերի դասաւորութեան կողմից մեր գիրքը բաժանուած է չորս հատուածի. առաջին հատուածի բովանդակութիւնը պատմողական է, երկրորդինը—նկարագրական, երրորդինը—բնագիտական, իսկ չորրորդին—մեր առտնին կեանքի և սովորութիւնների նկարագրութեան է նուիրուած։

«Մայրենի Լեզուի» չորրորդ տարին, որ առաջ երրորդի հետ մի հասին մի գիրք էր կազմում, այս իններորդ տպագրութեան ժամանակ բաժանել և առանձին հատոր ենք շինել։ Չորրորդ տարին, որպէս երրորդի շարունակութիւն, իւր բովանդակութեամբ լրացնում և ամբողջացնում է երրորդին, մատակարարելով աշակերտներին բազմաթիւ պատմողական, նկարագրական, բնագիտական, աշխարհագրական և ազգային կեանքին նուիրուած յօդուածներ։ Միևնոյն ժամանակ չորրորդ տարուայ իւրաքանչիւր հատուածը, որ ըստինքեան կազմում է մի առանձին ամբողջութիւն, լրացնում է երրորդ տարուայ համապատասխան հատուածը։ Այսպէս, օրինակ,

մինչդեռ երրորդ տարուայ չորրորդ հատուածը բովանդակում է իւր մէջ նիւթեր հայերի առտնին կեանքից, չորրորդ տարուայ չորրորդ հատուածը տալիս է նիւթեր հայերի արտաքին կենցաղավարութեան և պատմական երեւոյթներին վերաբերեալ։ Սորա նման երրորդ տարուայ երրորդ հատուածը, օրինակ, բովանդակում է կենդանաբանական և բուսաբանական նիւթեր, մինչդեռ չորրորդ տարուայ երրորդ հատուածը տալիս է նիւթեր բնագիտական և աշխարհագիտական բովանդակութեամբ։ Այս կերպ լրացնում և ամբողջացնում են միմեանց և երկու դրքի առաջին ու երկրորդ, այսինքն, պատմողական և նկարագրական հատուածները։

Հասկանալի է, որ մեր դրքերի բովանդակութիւնը, ըստ մեծի մասին, մեր դրականական անխոնջ մշակների սեպհականութիւնն է։ Մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնելով հայ հեղինակներին, որոնց գրուածներից քաղել ենք մեզ պիտանացու նիւթերը, մենք միևնոյն ժամանակ դիմում ենք նոցա ներողամտութեանը, որ ստիպուած ենք եղել, այս կամ այն պատճառով, որևէ փոփոխութեան ենթարկել նոցանից վերցրած յօդուածները և բանաստեղծութիւնները։ Երբեմն այդ փոփոխութիւնները մենք արել ենք կամայ, նիւթերին մեր ուզած ձևը տալու համար, բայց երբեմն էլ ակամայ... որպէս զի նորանց տպագրած տեսնենք։

Նիկողայոս Տէր-Ղեւոնդեան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1. ԵՐԵԽԱՆ ԴԱՉՏՈՒՄԸ

Մէկ փոքրիկ երեխայ կար։ Ծնողներն ուղարկեցին նրան ուսումնարան։ Պայծառ ու գեղեցիկ առաւօտ էր։ Թռչունները երգում էին անուշիկ ձայնով։ Երեխայի սիրտը փոխուեցաւ. նա չէր կամենում դասի գնալ, այլ ուզում էր խաղալ։ Ճոխ կողմը մտիկ արաւ ու տեսաւ, որ մեղրաճանճը թռչկոտում է ծաղկից ծաղիկ։ «Ո՛վ մեղրաճանճ, ասաց նա. ես մի քիչ խաղանք»։—«Չեմ ուզում, պատասխանեց մեղուն. ես ժամանակ չունիմ խաղալու. ես դեռ պէտք է մեղր ժողովեմ»։

Մի քանի քայլ որ հեռացաւ երեխան՝ պատահեցաւ շանը և ասաց նորան. «Ընկի՛կ, շնի՛կ, ես մի քիչ խաղանք»։—«Չէ, պատասխանեց շունը. ես ինչպէս խաղամ քեզ հետ. ես պէտք է պահպանեմ իմ տիրոջ տունը, որ գող չմտնի»։

Դորանից յետոյ երեխան տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կտուցով խոտ էր կրում իւր բունը: «Սիրուն թռչնիկ, ասաց նորան երեխան, մի քիչ չխաղա՞նք»:—Ո՛չ, պատասխանեց թռչնակը. ես ժամանակ չունիմ խաղալու. ես դեռ պէտք է մամուռ, խոտ, բուրդ հաւաքեմ, որ բուն շինեմ»:

Երեխան հետզհետէ սկսում էր ձանձրանալ. նորա հետ խաղացող չկար: Նա տխրած վազեց առուի մօտ, որ քչքչալով հոսում էր մօտիկ անտառից:

«Ինչպէս տեսնում եմ՝ դու գործ չունես անելու, ասաց երեխան առուակին. ես էլ մի քիչ խաղանք ես ու դու»:

«Ո՞վ չունի գործ, բարկացած պատասխանեց առուակը. ծո՛յլ—ծո՛յլ տղայ: Չե՞ս տեսնում, որ ես գիշեր ցերեկ գործում եմ անդադար: Ո՞վ է ջուր տալիս կենդանիներին, ո՞վ է լուանում կտաւիքը, ո՞վ է պտտեցնում ջրաղացի անիւները, ո՞վ է հանգցնում հրդեհները, եթէ ոչ ես: Տեսնո՞ւմ ես, որ ես մի րոպէ էլ ժամանակ չունիմ: Ուրեմն ձե՛ռք վեր առ՝ դնա՛»:

2. Ա Ր Մ Ի Ն Է

Հինգ տարեկան
Մի աղջկան
Մի մեքենայ կտրեց-տարաւ
Ձէ թևը: (Ի՞նչ աղէտ սրտազրաւ:)
Մանկիկն այնքան հեծեց, լացաւ,
Թափեց այնքան արցունք ու ցաւ,
Որ հայրաբար
Աստուածն արդար
Գթութեան շող ուղղեց վրան—
Ամենաբոյժ սպեղանի,
Որ շուտ փակեց վէրքի բերան,
Եւ մխիթարեց բայց կենդանի

Տուեց իւր մօր
Մանկիկն անդօր:

Անցան օրեր: Եւ Արմինէ,
(Արմինէ էր անունն, ասի՛):
Ազատ վէրքէ, դառնութենէ,
Առաւօտներ կ'երթար դասի
Եւ անդադար
Փերք կը կարդար.
Եւ իւր գործին խիստ ուշադիր,
Ձախողն այնքան լաւ գրէր գիր,
Որ վարժատան յարկի ներքև,
Ինքն առնելով նշան պարգև,
Միւս աղջկանց
Լինէր նախանձ:

Յանկարծ մի օր, մեծ և բարի
Կին՝ (ամուսին Թագաւորի)
Գիւղի միջից անցած ժամին,
Կանգ առաւ և գիւղապետին
Խնդրեց իսկոյն
Որ փոքրագոյն
Բայց խելացի, յառաջադէմ
Մի աշակերտ բերեն իւր դէմ:
Մարդ ղրկեցին և Արմինէն
Առան բերին վարժարանէն:

Աղջիկն անվախ,
Կազմ և ուրախ,
Բայց թևաթուրկ երևեցաւ:
Ազնիւ տիկնոջ աչքը լրցաւ,

Եւ զըզուանքով ու քաղցրաձայն
Իւր գրկի մէջ առաւ նորան,
Տուաւ պաչիկ
Եւ՝ «փոքր աղջիկ»,
Ըսաւ, գոհ եմ, որ դու այդպէս
Լաւ կըզբես, լաւ կըկարդաս,
Եւ կ'ուսանիս, ինչ որ տան պիտ.
Արդ փոխարէն
Առատօրէն
Քեզ վարձադրել կ'ուզեմ այսօր.
Ըսա, ինչ տամ, գրքոյկ մի նոր,
Հագուստ, պատկեր, թէ խաղալիք,
Կ'ուզես շաքար կամ ուտելիք,
Կ'ուզես օղեր,
Մի, մի վախիր,
Ասա շիտակ։—Իսկ Արմինէ,
Հոգին լցուած բերկրութենէ,
Բացաւ շրթունքն և խնդագին,
Գոչեց՝ «Թէ մի տուէք, տիկին»։

---

3. ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մայրիկը մի փոքրիկ որդի ունէր։ Նա այնպէս գեղեցիկ ու խելօք էր, որ ով տեսնէր, պէտք է ակամայ սիրէր նորան։ Մէկ անգամ մանուկը հիւանդացաւ և ստուած նորան իւր մօտ կանչեց։ Խեղճ մայրը մնաց անմխիթար և օր ու գիշեր լաց էր լինում։ Նորան թաղելուց մի քանի ժամանակ յետոյ, մանուկը գիշերն երևեցաւ այնտեղ, ուր կենդանութեան ժամանակ սովորաբար նստած խաղում էր. մայրն արտասուք էր

թափում, մանուկն էլ լաց էր լինում և առաւօտեան, լոյսը բացուելուն պէս՝ անյայտանում էր։ Բայց որովհետև մայրը չէր դադարում լաց լինելուց, եկաւ նա մի գիշեր իւր ոսկեայ շապկով, որով պագաղն էր դրուած, նստեց նորա ոտների մօտ, անկողնու վրայ, և ասաց. «Մայրիկ, էլ լաց մի լինիր, թէ չէ ես պագաղումս չեմ կարողանում քնել, որովհետև քո արտասուքներից իմ շապիկս թաց է լինում բոլորովին»։ Այս լսելով՝ մայրը մեղքացաւ իւր որդուն և լաց չեղաւ։ Եւ ահա միւս գիշերը մանուկը դարձեալ եկաւ, ձեռին մի ճրագ բռնած և ասաց. «Տեսնո՞ւմ ես, մայրիկ, շապիկս չորացել է և ես գերեզմանիս մէջ հանգիստ եմ»։ Մայրն այնուհետև ստուծուն յանձնեց իւր վիշտը, համբերութեամբ ու անխռով տարաւ իւր ցաւը. իսկ մանուկն այլ ևս չերևեցաւ և հանգիստ ննջում էր գետնի տակը, հոգէ անկողնու մէջ։

4. ՄԱՆԿԱՆ Ը

Ուրախութիւն քեզ անպակաս,
Ո՛վ դու մանուկ սիրելի,
Ծիլիս, ճալկիս ու ծերանաս,
Տալով պտուղ արժանի։

Որպէս ճալիկ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհաձեղ որպէս օր.
Մանուկ-մանուկ, ինձ չիտաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր.

Նայիր վերև, տես ինչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր։

Այնտեղ, հոգեակ, բնակւում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուղարկում է
Ե՛ւ կեանք, և՛ սէր և՛ հոգի։

---

5. ԲԱՐԵԽԻՂԱ ԽԱՓՇԻԿԸ

Մի հնդկացի խափշիկ ճխախոտ խնդրեց Հարևանից։ Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի լիք բուռը ճխախոտ։ Միւս առաւօտը հնդկացին դարձեալ եկաւ Հարևանի մօտ և տուեց նորան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ճխախոտի մէջ։ «Ինչո՞ւ չպահեցիր այդ դրամը քեզ մօտ, ասաց այնտեղ պատահող սպիտակադէմ մարդը. քեզ ճխախոտ տուողը դրամն էլ է տուել»։—Խափշիկը ձեռքը դնելով սրտի վրայ՝ ասաց.—Այս տեղումս երկու մարդ կայ՝ մինը բարի, միւսը չար։ Բարի մարդն ինձ ասաց. «Այդ փողը քոնը չէ, ուրեմն տա՛ր, տիրոջը տուր»։ Իսկ չար մարդն ասաց. «Երբ տուել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոննն է»։ Բարին վրայ բերեց. «Չէ, միմիայն ճխախոտն է քոնը և ոչ փողը»։ Չարը նորէն ասաց. «Ի զուր ես նեղութիւն քաշում. գնա դորանով արագ առ, խմիր»։ Ես չգիտէի, թէ ինչ անեմ և պառկեցայ քնելու։ Բայց բարի և չար մարդիկն ամբողջ գիշեր դադար չէին տալիս ինձ և կռւում էին։ Առաւօտեան ես զարթեցայ և յետ բերի փողը։

6. ԱԻԵՏԱՐԱՆ

Ամեն անգամ երբ թերթում եմ
Ես էջերը սուրբ Գրքի,

Միշտ վշտացած մտածում եմ—
Ո՛ւր է սէրը մարդերի,
Որ Փրկիչը սուրբ կտակով
Մարդկութեանը աւանդեց,
Խաչի վերայ իւր արիւնով
Գիր կենդանի դրոշմեց։

Մարդիկ վաղուց մոռացել են
Խաչ ու քարոզ կենդանի,
Աւետարան ուրացել են,
Էլ Սուրբ Գիրքը ղին չունի.
Ամենայն գիրք միշտ կարդում են,
Սերոյ գիրքը չկամին.
Ո՞ւր, չգիտեմ, որոնում են
Բախտը իրանց խեղճ կեանքին։

---

7. ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մի օր Պրուսիայի թագաւոր Փրիդերիկոս Բ. իւր սենեակի մէջ սաստիկ զբաղուած՝ կրկին ու կրկին զանգակը խփեց, բայց մարդ չերևեցաւ։ Անհամբերութիւնից դուռը բաց արաւ և տեսաւ, որ սպասաւորը տախտի վրայ ընկած՝ քնած է։ Մօտ գնաց, որ զարթեցնէ։ Այդ միջոցին աչքովն ընկաւ սպասաւորի գրպանից կիսով չափ դուրս ընկած մի նամակ։ Չհետաքրքրութիւնը շարժած՝ հանգարտ կերպով դուրս հանեց թուղթը, որ իմանայ թէ մէջն ինչ կայ գրած։ «Իմ անգին որդի, աւտած էր նամակում. անչափ ուրախ ու շնորհակալ եմ, որ այս անգամ էլ չուշացրիր ուղարկել ինձ քո ամսականի կէսը. դու քո ծնողասիրութեամբ քաղցրացնում ես մօրդ

օրերը. Հաստատ յոյս ունեցիր, որ Աստուած դորա փոխանակ պիտի օրհնէ քո կեանքը».

Թագաւորը, նամակը կարդալուց յետոյ, մի քսակ ոսկով լցրեց և նամակի հետ միասին դրեց տակաւին քնած երիտասարդի գրպանը, ապա դարձաւ իւր սենեակը և այնպէս սաստիկ Հնչեցրեց զանգակը, որ սպասաւորը զարթնելով ներս վազեց:

«Լա՛ւ քնեցիր», ասաց նորան Թագաւորը: Սպասաւորն աշխատում էր իրան արդարացնել. շփոթման մէջ ձեռքը տարաւ գրպանը և զարմացած դուրս հանեց քսակը: Ոսկիները տեսնելուն պէս՝ գոյնը թռաւ:—«Տէր արքայ, ասաց սպասաւորն արտասուագին և Թագաւորի ոտքերն ընկնելով, երևի մահս են կամենում. չգիտեմ ով է դրել գրպանումս ոսկով լիքը մի քսակ:

—«Ինչպէս, պատասխանեց Թագաւորը, Աստուած շատ անգամ իւր բարիքը քնած ժամանակներս է հասցնում մեզ: Ա՛ռ այդ քսակը, ուղարկիր մօրդ, ողջունիր իմ կողմից և ասա, որ անհոգ լինի. այսուհետև ես պէտք է խնամք տանեմ նորան: Իսկ դու, սիրելի, վստահ եղիր, որ ինձ մօտ բաղդաւոր պիտի լինիս»:

8. ՈՐԲԻԿ

Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ,
Եւ մօրդ գրկում կ՚առնէիր հանգիստ.
Ի՛նչ էր դառնութիւն, չարչարանք ու վիշտ՝
Քեզ ծանօթ չէին.—խաղաղ էր հոգիդ:

Բայց միայն, աւա՛ղ, մահը տարաժամ,
Տառապեալ մօրդ դրաւ գերեզման,
Եւ քեզ, խեղճ դառնուկ, որը, անօգնական
Թողից օտարի մշտաւիակ դռան...

9. ԱԴԱՀՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂԸ

Երեք մարդ, միասին ճանապարհորդելիս, գանձ գտան և բաժանեցին իրանց մէջ: Նոքա պէտք է շարունակէին ճանապարհը. բայց որովհետև ուտելու պաշարը վերջացել էր՝ վըճռեցին, որ իրանցից մինը գնայ քաղաք, կերակուր բերելու և յանձնեցին այս գործը աւելի փոքրահասակ ընկերին: Սա գնաց և ճանապարհին այսպէս էր մտածում լինքն իրան.—Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինեմ, եթէ կարողանամ ընկերներիս բաժինն էլ ինձ առնել. և այս շատ դժուար չէ. կըթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ. իսկ իմ մասին կ՚ասեմ, թէ ճաշել եմ արդէն. ընկերներս առանց կասկածելու կ՚ուտեն ու կըմեռնեն. այն ժամանակ ես կ՚ունենամ ամբողջ գանձը: Բայց միւս ընկերներն էլ այսպէս էին խօսում. «Ինչո՞ւ պէտք է մենք անպատճառ բաժին տանք այս պատանի մարդուն. մի՞թէ չենք կարող գործ դնել մեր սուր դանակները նորա գլխի վրայ, որ մեր հարստութիւնն աւելի կատարեալ լինի. ուրեմն գայ թէ չէ՝ սպանենք խսկոյն»:

Պատանին բերաւ թունաւորուած կերակուրը. ընկերները շտապով սպանեցին նորան, իսկ իրանք մեռան թոյնի ներգործութիւնից: Գանձը մնաց անտէր:

10. ԴԻԻՂԱԿԱՆ ԵՒ ՄՂԱԿ

Երբոր գլուխդ փորձանքի մէջ է,
Դու քեզ օգնողի ոտքերն ես պաչում.
Փորձանքը քեզնից հեռացաւ թէ չէ,
Նոյն իսկ օգնողիդ ես դու կըշտամբում,
Նորա արածի լաւ կողմը թողում,
Պակասը տեսնում:

Դեղձուկ ծերուկն իւր մշակը հետն առած՝
Իրիկուան դէմ տուն էր գալիս դաշտերից.
Մի արջ ելաւ ծերի դիմացը յանկարծ՝
Երբ անցնում էր մութ անտառի նա միջից։
Ծերուկն էլ ուհ-վայ կանչելը չկարաց.
Արջը նորան տակը կոխեց ու գոռաց,
Նըստեց վըրան, շուռ-մուռ տուեց, քաշքըշեց,
Ամեն կողմից զարհուրելի կրծոտեց։
Խեղճ ծերուկի բանը վատ էր, ինչ անէր.
«Մըրտո՛յ եղբայր, հասի՛ր, հասի՛ր», կանչում էր։

Մըրտոն կացինըն առաւ՝
Կայծակի պէս մօտ վազեց,
Արջի գըլխին մոլեգին
Կացնի բերնով հարուածեց,
Յետոյ հանեց դաշոյնը,
Կըռնատակից ներս ցցեց
Եւ ահռելի գազանի
Թոքն ու սիրտը խոցոտեց։

Արջը ոռնաց ու վայր ընկաւ կիսամեռ,
Արիւնի մէջ տապալելով՝ հեծում էր։

Փորձանքը անցաւ.
Ծերուկն ոտք ելաւ,
Ու խեղճ Մըրտոյին
Գըգրել սկսաւ։

Մեր քաջ Մըրտոն ապշեցաւ,
Պարձաւ, ծերուկին ասաւ.
—«Ինչո՞ւ կըգըգրես դու ինձ, մա՛հտեսի»։
—«Ինչո՞ւ կըգըգրե՛մ, ա՛յ յիմար քեզի,
Իմ սիրտս այրւում է. դու ուրախացիր.
Չե՞ս տեսնում որ արջի մորթը փըչացրիր»։

11. ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄԱՀ

Մի գիւղացի ծերացել, աղքատութիւնից ու աշխատութիւնից մաշուել, թառամել էր։ Ձմեռուայ ցուրտ հաւանակին, մի շալակ փայտ կռնակն առած, կամաց-կամաց գնում էր դէպի տուն։ Ծերունին ծանր բեռան տակ հազում ու տնքում էր։ Մի փոքր առաջ գնալուց յետոյ՝ նա յոգնեցաւ, կանգնեց, փայտերը գետնին դրեց, վրան նստեց ու ախ քաշեց. «Ո՛հ, Տէր Աստուած, ինչ օր եմ քաշում. մի կողմից չքաւորութիւն, միւս կողմից զաւակներ. սրա վրայ աւելացրու զանազան ծախքեր, տուրքեր... Արդեօ՞ք կեանքիս մէջ մի լաւ օր տեսած եմ ես»։ Այս կերպով սիրտը կոտրած, ամեն բանից յոյսը կտրած, ծերունին կանչում էր. «Ո՛վ մահ, ո՛ւր ես, ո՛ւր, արի՛, հոգիս ա՛ռ»։ Մահն էլ հօ, թաք նորան կանչես, միշտ պատրաստ է. կ՚ասես թէ միշտ յետևներս կանգնած լինի։ Հէնց որ ծերունու խօսքերը լսեց, իսկոյն եկաւ, երևեցաւ և ասաց. «Ծերուկ, դու ինձ ինչի՞ կանչեցիր»։ Ծերը որ մահի ահեղ կերպարանքը տեսաւ, գունատուեցաւ, շփոթուեցաւ, խօսքի կարգը կորցրեց և հազիւ թէ կարողացաւ այս խօսքերը թոթովել. «Թողութիւն կ՚անես. ես քեզ կանչեցի, որ այս փայտը շալակս տաս»։

12. ՁՄԵՌԻՆ ՈՒ ՄՐՋԻՒՆԸ

Յատքըտան ու շատրուց ճըպուռը
Ձըռճըռալով անցրեց բոլոր ամառը,
Այնպէս որ ինքն էլ զրեթէ չիմացաւ,
Թէ ձմեռն յանկարծ ինչպէս վրայ հասաւ։
Գեղնեցան ու թոշնեցան դալարագեղ դաշտերը.
Ո՛ւր մնացին ամառուան տաք ու պայծառ օրերը,
Երբ ամեն մի տերևի ներքևիկ,
Պատրաստ էր ճպուռի թէ հաց, թէ բարձիկ։

Վաղուց անցան գնացին այն բանները.
Յուրտը կոխեց, սովը մեկնեց ճանկերը.
Սուս-մունջ կացաւ, էլ չէր երգում ճպուռը.
Քաղցած փորով ով է երգում սև օրը:
Խեղճը նեղն ընկած, Հոգին բերանը,
Սողալով գնաց մրջիւնի տունը.
«Սանամայր, ասաց, սիրուն դրացիս,
Ձեռքից մի թողիլ ինձ այս նեղ ժամիս,
Մի ճար, մի ճարակ, քաղցած կըմեռնիմ.
Մինչև որ գարնան օրերին Հասնիմ,
Փոքրիկ մի ապրուստ, տաքիկ մի տեղ տուր»:
—Կարմանամ քեզնից, կնքամայր, իմ քոյր,
Ասաւ մրջիւնիկն. ինչ է պատճառը,
Ի՞նչ արիր ապա բոլոր ամառը:
«Ա՛խ, Հոգիս, ասաւ, մի՛ջոց ունէի.
Ես բոլոր օրը խաղ կանչելու հետ էի.
Պարտէզներում, այգիներում անդադար քէֆ կանէի,
Այնպէս որ մինչև հիմա էլ դեռ գլուխս կըպըտտի»:
– Ա՛, ուրեմն դուն... «Ես ամառն ի բուն,
Խաղեր կանչեցի մէկ մէկից սիրուն»:
—Խաղ կանչեցիր, հա՛, այդ էլ վատ բան չէ.
Ուրեմն այժմ էլ պարէ ու ցատքէ:

---

13. ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու Հիւսիսայինն թունդ քամին վէճ բաց արին, թէ նորանցից ո՞րն է ուժեղ: Երկար վիճեցին նոքա. վերջապէս վճռեցին, որ իրանց ոյժը փորձեն այն ճանապարհորդի վերայ, որ նոյն ժամին մօտից անցնում էր: Նայի՛ր՝ թէ

ինչպէս կընկնեմ նորա վերայ, ասաց քամին, մի ակնթարթում կըխլեմ նորա վերարկուն»: Այս որ ասաց, սկսեց փչել՝ ինչքան ոյժը կտրում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ փաթաթւում էր ճանապարհորդը վերարկուի մէջ. նա, ի՛ հարկէ, դժգոհում էր վատ եղանակից, բայց միևնոյն ժամանակ աւելի շտապում էր առաջ գնալ: Քամին բարկացաւ, կատաղեցաւ և թափեց խեղճ ճանապարհորդի վրայ անձրև ու ձիւն: Նզովելով քամուն՝ ճանապարհորդը վերարկուի թևերը հագաւ, վերևից էլ գօտին կապեց: Չիմա՛ հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել: Արեգակը՝ տեսնելով իւր հակառակորդի անզօրութիւնը, ժպտաց, դուրս նայեց ամպերի յետքից, ջերմացրեց, ցամաքացրեց երկիրը, դորա հետ միասին և խղճուկ սառած ճանապարհորդին: Արեգակի ճառագայթներովը տաքացած՝ նա քաջալերուեցաւ, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին: «Տեսնո՞ւմ ես, ասաց այն ժամանակ հեղիկ արևը բարկացկոտ քամուն. քաղցրութեամբ ու բարութեամբ աւելի բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ»:

14 ԳԹԱՒՈՍ ՔԱՄԻՆ

Աշնան վերջն էր: Ամեն մի տերև,
Թառամած, դեղնած վըրայ իւր ճիւղին,
Ակամայ սլիտի տար վերջին բարև
Եւ բոնէր շուտով բնութեան ուղին...

«Քամին թող չորին իւր հետը տանի,
Ասում էր ուրախ մի տերև փոքրիկ.
Ես ուզում եմ միշտ մնալ կենդանի,
Ես շատ սլիտ՝ ապրիմ, լինիմ երջանիկ»:

Կեանքիս խնայլիր, դարձաւ նա քամուն,
Փակլիր բերանդ, հիւսիս գըլխառատ.
Կամ փչէ այնտեղ, ուր է չար Սամուն,
Ուր ծաղիկ չկայ, այլ մերկ անապատ»:

Խօսքը չաւարտեց: Բորենու նման
Մըրընչաց շուտով կատաղի քամին
Եւ՝ բանալով իւր մահաշունչ բերան,
Փըչեց, թշուառին տապալեց գետին...

Ա՛խ, դու չգիտես, արարած անմեղ,
Որտեղից մարդը կեանք պիտ սպասէր.
Երբ որ դու թոյլ ես, թշնամիդ դօրեղ,
Նա գիտէ՞ մըթէ, ինչ է «դութ» ու «սէր»:

15. ՍԱԳԵՐ

Արտաշէսը տեսաւ վայրի սագերի երամը, որոնք շղթայաձև ընթանում էին բարձր օդի մէջ: Արտաշէսը հարցրեց իւր հօրը. «Հայրիկ, մեր ընտանի սագերն էլ կարո՞ղ են այդպէս թռչել:

Հ. Ո՛չ, չեն կարող:

Ո. Ո՞վ է կերակրում վայրենի սագերին:

Հ. Իրանք են գտնում իրանց համար կերակուր:

Ո. Իսկ ձմեռը:

Հ. Ձմեռն սկսուելուն պէս՝ վայրենի սագերը թռչում են տաք երկիրները, իսկ գարնանը նորից վերադառնում են:

Ո. Բայց ինչո՞ւ ընտանի սագերը չեն կարողանում թռչել նոյնքան լաւ և ինչո՞ւ նոքա էս ձմեռը չեն գնում տաք երկիրները:

Հ. Որովհետև ընտանի կենդանիները մասամբ կորցրել են իրանց նախկին ճարպկութիւնը և ոյժը, և նոցա զգայողութիւնն այնքան նուրբ չէ, որքան վայրենիներինը:

Ո. Եւ ինչո՞ւ է այդպէս:

Հ. Որովհետև մարդիկ հոգում են նրանց համար և չեն թողնում, որ նրանք օգուտ քաղեն իրանց սեպհական ուժերից: Սորանից դու կարող ես հասկանալ, որ մարդս էլ պիտի աշխատէ անձամբ կատարել բոլորը, ինչ որ կարող է: Այն մանուկները, որոնք իրանց յոյսը ուրիշների վրայ են դնում և չեն սովորում անձամբ կատարել իրանց բոլոր պարտականութիւնները, երբէք չեն լինել ուժեղ, խելացի և ճարպիկ մարդիկ:

Ո. Ո՛չ, հայրիկ, այժմ ես կ'աշխատեմ ամենայն բան ինքս անել, որ մեր ընտանի սագերի նման ընդունակութիւններից չզրկուիմ:

16. ԱՐԱԳԻԼ

Գերի արագիլն՝ ինչպէս բանտարկուած,
Բարձր պարսպի յետևն է փակուած.
Կ'ուզէր նա թռչիլ և անցնիլ ծովեր,
Բայց, աւա՛ղ, խեղճի խուզած են թևեր:

Իւր անզօրութիւնն նա լաւ է զգում,
Եւ թևերի տակ գլուխն է ծածկում.
Կըցանկար առաջ նայել նա սիրով,
Բայց փակուած է նա ամուր պատերով:

Կարող չէ տեսնել նա երկնակամար
Իւր մութ, նեղ բանտից, բայց ինչո՞ւ համար.
Այնտեղ թռչում է ազատ կարաւան,
Իսկ նա մատնուած է չար դերութեան...

Եւ նա անհամբեր սպասում է վշտով,
Որ մեջքին բոլոնին թևերը շուտով.
Նա այն ժամանակ չար գերութիւնից
Կրթռչէ ազատ աշխարհ լուսալից։

Ահա սառնաշունչ աշունն է վչում,
Արագիլները տաք տեղ են թռչում.
Թշուառ, իբր ստրուկ նա անհամարձակ,
Վշտագին ու որբ շրջում է մենակ։

Լքսում է ահա վերից կըռընչիւն,
Այդ նորա ճանօթ կռունկների է չուն.
Ականջ է դնում չարատանջ գերին
Ազատ երամի ուրախ երգերին։

Կամենում է նա նորից փորձ փորձել.
Խուզած թևերը բարձր տարածել.
Բայց այլոց նման, աւաղ, նա ազատ
Չէ կարող սլանալ երկիրն հարազատ։

Անբաղտ արագիլ, խեղճ կալանաւոր,
Էլ այն յաղթական դու չես թևաւոր.
Թէ զօրանան էլ թևերդ ուժգին,
Զոհ պիտի լինես անգութ դանակին։

---

17. ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ

Երուսաղէմ քաղաքի տեղը երբեմն մի մշակուած դաշտ էր և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկը ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։ —Հնձի ժամանակ նոքա իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով, թողին դաշտումը։

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր.

—Եղբայրս կնոջ ու որդոց տէր է և նոցա պէտք է կերակրէ, ուստի իրաւացի չէր լինել, որ նորա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նորա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։—Այս ասելով՝ նա գնաց, իւր մտածածը կատարեց։

Նոյն գիշերը միւս եղբայրը արթնանալով՝ իւր կնոջն ասաց.

—Եղբայրս ինձնից փոքր է և, ամուսնացած չլինելով, ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չէր լինիլ, որ նորա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նորա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։ Այս ասելով՝ նա էլ գնաց իւր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտը եղբայրները դաշտը գնացին և շատ զարմացան. երկու դէզերն էլ հաւասար էին և անփոփոխ։ Նոցանից ոչ մէկը չկարողացաւ լմանալ այս հրաշքի պատճառը։

Հետևեալ գիշերը դարձեալ նոյնպէս արին... Եւ այսպիսով նոցա դէզերը ո՛չ պակասում էին, ո՛չ աւելանում։ Վերջապէս, մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար, երկուսն էլ արթուն մնացին և, երբ խուրձերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան։

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու եղբայրների արտը և Աստուծոյ տաճարը շինեցին այնտեղ։

18. ԿԵՆԴԱՆԻ ԵՒ ՆՈՂԻԿ

Ձրկայ. ճաղիկն այն թռուենցաւ,
Գողտրիկ ճաղիկն այն շողշողուն.
Միայն մէկ օր շուտ-վաղագրաւ
Աղօտացրեց իւր փայլըն ողջոյն։

Այսպէս մեր կեանքն էլ կը թռուի,
Խոյս կըտայ միշտ մեզնից անդարձ.
Իբրև ծաղիկ մարդագետնի
Մի օր ուշի լոկ իւր փառաց։

---

19. Բ Ի Ւ Ր Ա Պ Ա Տ Ի Կ

Մի գիւղում բնակում էին մի մարդ ու մի կին։ Մարդը շատ ժամասէր էր։ Ամեն օր եկեղեցի էր գնում և օրը մի գրօշ էր տալիս քահանային։ Քահանան էլ ամեն օր նորան ասում էր.

—Օրհնուէ՛ս դու. Բիւրապատիկը քեզ մէկի փոխանակ հազար տայ։

Նա ուրախանում էր և ինքն իրան ասում. «Այս լաւ բան է. մէկ տալիս եմ՝ հազար պէտք է տայ»։

Այսպէս ամեն օր մի գրօշ տալով՝ իւր բոլոր ունեցածը տուեց քահանային, իսկ ինքն աղքատացաւ։

Մէկ օր կինն ասաց ամուսնուն.

—Վէր կաց, գնա՛ քահանայի մօտ, մի հազարը բե՛ր, տանք հացի, մինչև որ մէկէլ հազարն էլ կամաց-կամաց կըտայ։

Ամուսինը գնաց։

—Օրհնեա՛, տէր։

—Աստուա՛ծ օրհնէ։

—Տէրտէր ջան, ես քեզ տուի, դու ինձ հազարներ խոստացար. հիմա բե՛ր մէկ հազարը տո՛ւր, տանեմ. այն միւսներն էլ՝ յետոյ կըգամ, կըտաս։

—Օրհնուա՛ծ, ասաց քահանան, դու ինձ տուիր, որ Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ։

—Բիւրապատիկն ո՞վ է։

Քահանան նորան մի ճանապարհ ցոյց տուեց.

—Այս երկայն ճանապարհովը կըգնաս, քեզ կըպատահի մի մեծ մարդ, որ նստած կըլինի ոսկէ աթոռի վրայ։ Բիւրապատիկը նա՛ է. տա՛ նորան. «Ինձ տէրտէրն ուղարկեց. մէկ տուել եմ, հազար պէտք է տաս»։

Նա էլ գնաց այն երկար ճանապարհով։ Նորան պատահեցաւ մի քարանձաւ։ Ներս մտաւ և ի՛նչ տեսաւ. քառասուն երևելի դողեր շարուած նստած են։ Սորան պատիւ են տալիս, տեղ են բաց անում և նստեցնում են իրանց մէջտեղը։

—Ո՞վ ես դու, հարցնում են նորան. այսքան ժամանակ է մեր ահից մարդ չէր եկած այս կողմը. ո՞րտեղից ես գալիս և ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանում է. մէկ տուել եմ, հազար պիտի ստանամ։

Դողերն ասում են.

—Ե՛ղբայր, այդ խելքը խելք չէ. թո՛ղ այդ։ Բե՛ր այս տեղ, մենք քեզ մի բուռը ոսկի կըտանք, վե՛ր կաց, քո տունը գնա՛։

—Ո՛չ, ասում է նա. այդ վողը արդար վաստակ չէ։

—Եթէ այդպէս է, ասում են դողերը, դու արդար մարդ ես. երբ գնաս, Բիւրապատիկին հարցրո՛ւ, թէ մեր աշխարհումը մեզ համար տեղ կա՞յ։

—Աչքիս վրայ, ասում է նա ու գնում։

Գնում է՝ պատահում է մի ծերունու, որ նստած էր մի քարի մօտ։ Նա անդադար ասում էր. «Փա՛ռք քեզ, Աստուա՛ծ, փա՛ռք քեզ»։ Եւ որքան ասում էր, այնքան ոսկի էր բղխում քարից։

Ծերունին հարցնում է այս մարդուն.

—Ե՛ղբայր, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանում է նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

—Բե՛ր այս ոսկուց երկու բուռը տամ, յե՛տ գնա, ասում է ծերունին։

—Ո՛չ, ասում է սա. այդ ոչ իմ տուաճն է, ոչ իմ աշխատածը. ես դորան արժանի չեմ:

—Եթէ այդպէս է, ասում է Ծերունին, երբ գնաս Բիւրապատիկի մօտ, հարցրու, թէ ոսկին երբ պէտք է կտրուի այս քարից:

—Աչքիս վրայ, ասում է ու գնում:

Ճանապարհին տեսնում է մի այգետէր, որ հարցնում է.

—Չորաճին, ո՞ւր ես գնում:

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ:

—Երբ գնաս, ասում է այգետէրը, Բիւրապատիկին հարցրու, թէ ինչից ն՝ որ երբ իմ այգու պատը շինում եմ՝ բոլոր կանաչ պտուղները չորանում են, երբ պատը քանդում եմ, կանաչում են:

—Գլխիս վրայ, ասում է նա ու գնում:

Ճանապարհին տեսնում է մի քահանայ, որի մէջքին պատ էր շարած և ինքը տակին տրնքտրնքում էր:

—Որդի, հարցրեց քահանան, ո՞ւր ես գնում:

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանում է նա. մէկ տուել եմ, հազար պիտի ստանամ:

Քահանան ասում է.

—Գնա, Բիւրապատիկին հարցրու, թէ ես այս պատից երբ պէտք է ազատուիմ:

—Լաւ կըլինի, ասում է նա և շարունակում է ճանապարհը:

Գնում է՝ տեսնում, որ մէկ մեծ մարդ նստած է ոսկէ աթոռի վրայ:

Նա հարցնում է.

—Ո՞ւր ես գնում:

—Բիւրապատիկը դո՞ւ ես, հարցնում է ճանապարհորդը:

—Այո՛, ես եմ, պատասխանում է. ինչ ես ուզում:

—Մեր քահանան ուղարկեց ինձ. ես քեզ մէկ տուել եմ, դու ինձ հազար պէտք է տաս:

Բիւրապատիկն ասում է.

—Գնա՛ տունդ, բակիդ մէջ մի թթենի կայ, փորիր նորա տակը, մի կարաս ոսկի դուրս կըգայ, վեր առ քո մէկի փոխանակ հազարանոցը:

Ճանապարհորդը, բացի դորանից, ինչ որ իրան չանձնել էին ասելու, ամեն բան ասաց Բիւրապատիկին և ամենի պատասխանն էլ ստանալով՝ վերադարձաւ:

Հասնելով պատի մէջ տնքող քահանային՝ ասաց.

—Դու այդտեղից այն ժամանակ կ՝ազատուիս, երբ Աստուծուն մեղայ կըգաս:

—Ես ինչպէս մեղայ գամ Աստուծուն, ասաց քահանան և խօսքը բերանից հանեց թէ չէ՝ իսկոյն պատի հետ միասին գետինը մտաւ:

Նա յետոյ գնաց, հասաւ այգետիրոջը և ասաց.

—Եթէ այդուդ պատերը քանդես, որ անց ու դարձ անողներն ուտեն պտուղներից, այլիպ կըկանաչի:

Դեռ խօսքը բերանումն էր, իսկոյն տէրը գնաց, պատերը քանդեց և այդին՝ կանաչից:

Ճանապարհորդը գնալով Ծերունու մօտ, ասաց.

—Քանի որ դու բերանիդ Աստուծու անունը չես պակասեցնիլ, քարից էլ ոսկին չի պակասիլ:

Ծերունին ասաց.

—Մի՛թէ մարդ իւր բերանից Աստուծու անունը կըպակասեցնի. փո՛ռք Աստուծուն:—Ասաց չասաց՝ քարի միւս երեսից էլ ոսկի դուրս թափուեցաւ՝ առաջուանից շատ:

Նա եկաւ գողերի քարանձաւը և նոցա ասաց.

—Եթէ ձեր գողութիւնը թողէք, միւս աշխարհում տեղ ունիք:

Գողերը թողին քալանձաւը, գնացին իրանց յանցանքն ապաշխարեցին ու փրկուեցան:

Վերջապէս մեր ճանապարհորդն եկաւ իրանց տուն, կանչեց կնոջն ու ասաց.

—Ա՛յ կին, բահ ու թիր բեր:

Մարդ ու կին վեր առան բահն ու թիրն, փորեցին թըթենու տակը և մի կարաս գտան ոսկով լիքը: Օրը մթնեց և կարասը թողին, որ առաւօտը հանեն:

Դրացիները իմացան, գիշերն եկան կարասը գողանալու, բայց տեսնելով որ մէջը դեղին հող է, կարասը շուռ տուին տան տիրոջ այգումը: Կարասը կոտրուեցաւ ու հողը ցրուեցաւ:

Առաւօտը զարթնեցան, ինչ տեսան. այգու չորս կողմը ոսկի է փռուել: Ամուսինը գոռաց.

—Ա՛ կնիկ, ցախաւելը բեր. բոլոր այգին ոսկի է դառել:

Ալեցին շողշողուն ու գընդգընդան ոսկիքը. մէկի փոխանակ ութ թէ հազար, այլ անթիւ հազարներ ստացան, հարստացան և Աստուծուն փառք տուին:

---

20. ՄԱՐԴԸ ԵՒ ՀՐԵՇՏԸ

(Հեքիաթ)

Ա.

Ջատ տարի առաջ՝ հին ժամանակը,
Երբ հրաշքներով լի էր աշխարհքը,
Իւր ամուսինով և զաւակներով
Ապրում էր մի մարդ իւր առուտուրով:
Ուրախ ու զուարթ էր նորա կեանքը,

Պատճառ միշտ ոսկով լի էր քսակը.
Բայց յանկարծ բաղդը երես դարձրեց,
Եւ մեր խեղճ մարդը բոլորը կորցրեց.
Ուրախ կեանք և փառք, և հարստութիւն,
Եւ նոցա հետ էլ քաղցր առողջութիւն,
Ընկաւ անկողին, խիստ հիւանդացաւ,
Այժ և զօրութիւն նորանից հեռացաւ,
Չէր կարողանում ոտի վրայ կանգնել,
Մինչև որ սրան իւր կինը չօգնէր:

Գիժբաղդ-տարաբաղդ նորա խեղճ կինը
Ստիպուեց կերակրել այժմ իւր տունը.
Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր,
Որ իւր որդիքը սովից ազատէր:
Ամիս ամսի վրայ այսպէս անցկացաւ,
Վերջապէս կինը խստաւ ձանձրացաւ.
«Ի՞նչ ես վայր ընկել, ասում էր մարդուն,
Գլխիս ցաւ դառել, խըլել ես իմ քուն:
Մինչև ե՞րբ պէտք է այսպէս չարչարուեմ,
Կեանքս մաշելով ես քեզ կերակրեմ.
Վեր կաց, մարդ ես, գնա, գլուխդ քարին տուր,
Եւ որդոցդ համար հարէ կերակուր»:
Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը.
—Իսաւական է ինձ իմ դառը վիշտը.
Քանի ունէի, ե՞րբ բան խնայեցի,
Առողջ ժամանակ ե՞րբ ծոյլ մնացի.
Իսկ այժմ աղքատ եմ և մարմնով տրկար.
Խղճա, մի՛ տանջիր դու ինձ անպատճառ:
Բայց կինը երկար էլ չհամբերեց
Եւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց.
«Գնա, ուր կ՚ուզես, գլխիցս հեռացիր.

Դու իմ խեղճ անձը լաւ չարչարեցիր.
Ինչքան էլ կ'ուզես լաս ու աղաչես,
Էլ տուն չեմ թողնիլ, քանի աղքատ ես»:
—Լա՛ւ, ասաց մարդը ձայնով տխրագին,
Կ'երթամ, կրկորչեմ, ով դու անգութ կին,
Կրտոր հաց, գոնեա՛, տուր հետս առնեմ,
Որ ճանապարհին քաղցած չըմեռնեմ:

Բ.

Կինը դուրս բերեց, տուեց երկու հաց.
Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ, գնաց,
Իւր չար բաղդիցը դանգատ անելով,
Թողեց իւր տունը անհաստատ քայլով:
Ինքն էլ չգիտէր, թէ ուր էր գնում.
Միայն միշտ առաջ քայլում էր տրըտում.
Վերջը դադրելով՝ մի քարի վրայ
Նըստեց՝ որ սակաւ մի հանգստանայ:
Այնտեղ նկատեց որ ճանապարհին,
Նրանից ոչ հեռու ընկած էր գետնին
Մի մագից հիւսած երկար սև պարան,
Որ նա վեր առաւ ասելով այս բան.
«Սա ինքն ըստ ինքեան մի չնչին բան է,
Բայց խեղճիս համար շատ թանկագին է»:
Այսպէս ասելով՝ պարանն փաթաթեց
Եւ իբրև թանգ բան ծոցումը պահեց:

Յետոյ սակաւ ինչ հացով ու ջրով
Իւր տկար մարմնին զօրութիւն տալով,
Նորից վեր կացաւ, կամացուկ քայլով
Առաջ ընթացաւ նոյն ճանապարհով:

Այդպիսով անցաւ նա բաւական տեղ,
Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,
Ուր անց կենալիս՝ տեսաւ շատ հաւեր:
Հաւերից մինը հանդարտ նստած էր
Կիտած աղբի վերայ ու ձու էր ածում,
Եւ մեր խեղճ մարդը դրեց իւր մտքում,
Որ բռնէ նորան ու հետը տանէ,
Մի քանի շահով քաղաքում ծախէ:
Ահա այդ մտքով նա կամաց-կամաց,
Շուռ ածող հաւին զգոյշ մօտ գնաց,
Բայց հէնց այն կողմը իւր ձեռքը մեկնեց,
Վեր թռաւ հաւը և մեկ ձու թողեց:
Իսկոյն վեր առաւ թողած ձուն մարդը,
Դրբեց գրպանը, օրհնեց իւր բաղդը.
—Է՛հ, փառք Աստուծոյ, ասաց ինքն իրան,
Այս մեկ հաւի ձուն, սա էլ է մեկ բան:

Էլի առաջ գնաց մի կարճ ժամանակ,
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ գետակ,
Որ դուրս էր բղխում մօտիկ տնտառից,
Մերթ հանդարտ գնալով, մերթ փըրփըրալից:
Յոգնած, վաստակած մեր մեղաւորը
Շատ ուրախացաւ, երբ տեսաւ ջուրը.
Իսկոյն մօտ գնաց, որ պարզ ցուրտ ջրով
Փոքր ինչ հովանայ, մէջ լողանալով.
Ջրի աւազոտ ափերի վրայ,
Նստոտած էին մի քանի կրիայ.
Մօտեցող մարդուն երբ նոքա տեսան,
Շտապով վազեցին, ջուրը թափուեցան:
Միւսների պէս շուտ հասնել ջրին
Չը յաջողուեցաւ նոցանից մէկին:

Մարդը մօտ գնաց, վեր առաւ նրան,
Իւր գրպանի մէջ տուեց բնակարան։
Ինքն էլ լողացաւ, հազաւ շորերը,
Եւ յետոյ գնաց դէպի անտառը,
Որ շատ հեռու չէր, և մի ժամի մէջ
Արդէն գնում էր խիտ անտառի մէջ։

Գ.

Չատ գնաց, թէ քիչ, վերջապէս նրստեց
Մի աղբիւրի մօտ և շատ մտածեց,
Թէ ինչպէս անէ, որ իւր խղճալի
Անբաղդ դրուխիւնն ուղղէ մի կերպի։

Յանկարծ դղղըդաց բոլոր անտառը,
Թընդաց, որոտաց հովիտ ու լեառը,
Եւ հանդէպ լերան սև ու մութ այրից
Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից
Բնակւում էր այնտեղ և սպանում, լափում,
Ով այրի մօտով անցնել չէր վախում...
Ահա այդ հրէշը դուրս եկաւ այրից
Եւ խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.
«Բարով քեզ, բարի՛, դու համեղ կըտոր,
Որին կ'ընդունէ իմ պատուական փոր.
Արդէն կըլինի մի ամբողջ ամիս,
Որ ես չեմ կերել մարդու անույշ միս»։

—Այդ ինչ խօսքեր են, գարշելի գազան,
Դու յանդգնո՞ւմ ես ասել ինձ այդ բան.
Ապա այդտեղ կաց և դու կըտեսնես,
Ո՛ւր կըշրպրտեմ մարմնիդ երկու կէս։

Ասաց և անվախ մօտ գնաց հրէշին
Եւ խիստ բարկացած նայեց երեսին։

«Ոչ ոք մինչև այժմ—գոչեց գազանը—
Չէ համարձակուել ասել այդ բանը
Ինձ, որի ձեռքից դեռ մինչև այսօր—
Ազատ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր։
Բայց որովհետև մեծ-մեծ բըրդում ես,
Արի մեր ոյժը փորձենք դու և ես.
Ե՛կ գօտեմարտենք, և ով որ յաղթուի,
Թող նա յաղթողին կերակուր լինի»։

—Թէպէտ այդ բանում ես քեզ կըյաղթեմ,
Եւ մինչև վիզըդ գետին կըխրեմ,
Բայց քեզ կարող եմ և աւելի
Հասարակ կերպով յաղթել, գարշելի։

«Լա՛ւ, համաձայն եմ, ցոյց տուր շնորհքդ
Եւ խլոյն և եթ կատարէ խօսքըդ»։

—Ի՞նչ ես շտապում, ասաց նրան մարդը,
Երեք բան կանեմ, թէ կանես հատը,
Ես այն ժամանակ քեզնից յաղթուած եմ,
Իսկ եթէ չանես, զլուխդ կը ջարդեմ.
Մէկ մազ ես հանեմ, մէկը դու հանէ,
Չափենք ու տեսնենք՝ ում մազն երկայն է,
Եւ ով աւելի երկայն մազ ունի,
Թող նա մեր մէջը յաղթողը լինի։
Թէ ոլ կարենաս ինձանից չոր քարից
Գոյն-գոյն ջուր քամել, դու յաղթել ես ինձ։

Եւ ում մարմնի վրայ մեծ միջատ լինի,
Թող որ նա միւսի գլուխը ջարդի:

«Լաւ», ասաց Հրէշը ու մի մազ հանեց
Եւ ուրախ-ուրախ մարդուն դէմ արեց:
—Այդ է—ասաց սա—և հանեց ծոցից
Գտած պաբանը հիւսած սև մազից:

Հրէշն երբ տեսաւ հիւսած պարանը,
Ահից, զարմանքից բաց մնաց բերանը.
Բայց իսկոյնևեթ նորից սիրտ առաւ
Ու խիստ կատաղած մի քար վեր առաւ
Եւ երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց,
Որ աւազի պէս նորան փըշըրտեց:

Մարդն էլ իւր կողմից մէկ քար վերցըրեց
Ու Հրէշից ծածուկ գրպանից հանեց
Հաւից խլած ձուն, և հէնց որ սեղմեց,
Իսկոյն երկու գոյն հիւթը դուրս ծորեց:

«Այդ երկու փորձով—կանչեց Հրէշը—
Դու ինձ յաղթեցիր, ցոյց տուր ուրիշը»:

Մարդը դուրս հանեց գրպանից կրիան՝
—Ահա միջատը, ասաց, գ'որշ գազան,
Ցոյց տուր ինձ իսկոյն սրա հատը, տեսնեմ,
Թէ չէ՝ լիմար գլուխդ երկու կէս կ'անեմ...
Ո՞ւր ես փախչում, էյ. չէ, կաց, սիրելի,
Կաց, որ ընդունես մահ սարսափելի...
Բայց լաւ լսացիր, ուր կ'ուզէ գնաս,
Երբէք ինձանից չես մնալ անվնաս:

Դ.

Իրաւ որ Հրէշը, սաստիկ զարմացած
Մարդու արարքից, իսկոյն փախաւ գնաց:

Սա էլ այն կ'ուզէր: Ուրախ մտաւ այրը,
Անցաւ մի ծայրից մինչև միւս ծայրը.
Տեսաւ լի արկղեր ոսկով, արծաթով,
Գոյն-գոյն ակներով, մարգարիտներով.
Ախոռների մէջ սիրուն ձիաններ
Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ:
Նա էլ ժամանակը զուր չըկորցրեց,
Գրտած գանձերը ձիերին բարձեց,
Դուրս եկաւ այրից, փառք տուեց Աստծուն
Եւ պատրաստւում էր դառնալ դէպի տուն,
Երբ յանկարծ տեսաւ հեռուից Հրէշին
Վազելիս դէպ այր, մի աղուէս ուսին:

Ե.

Բայց թող դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ,
Որ Հրէշը յանկարծ կրկին յետ դառաւ:

Մարդուց փախչելով, կարճ միջոցի մէջ,
Հասաւ հեւալով մինչ անտառի վերջ,
Ուր մի կաղ աղուէս պատահեց նորան
Եւ գլուխ տալով ասաց նա այս բան.
«Բարով քեզ, բարով, իշխան ահաւոր,
Դու մեր անտառի հզօր թագաւոր.
Բայց ինչի, ասա, այդպէս տրրտում ես,

Խնդրում եմ վիշտդ ծառայիդ յայտնես.
Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք գալ
Եւ քո տրտմութեան շուտով վախճան տալ։

Հրէշը կարճ կերպով, մի քանի խօսքով
Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով
Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,
Յաղթուած մի մարդուց իրանից զօրեղ։

«Այդ ինչ եմ լսում, կանչեց աղուէսը.
Թոյլ, անզօր մարդուց ո՞նց պիտ՝ քեզ պէսը
Փախչէ, վախենայ, թողնէ տունը, գնայ.
Ասա, ինչ կ'ասէ, ով այդ իմանայ։
Հաւատա՛ ինձ, տէր, նա քեզ խաբել է,
Իւր հնարքներով աչքդ կապել է.
Եկ, դու ինձ լըսիր, խոկոյն յետ դարձիր,
Ձեռք ընկած որսը զուր մի՛ կորցընիր։
Քանի դեռ ուշ չէ, շուտ արա, դընանք.
Գիտեմ՝ պատուական ընթրիք կ'ունենանք.
Ձատ ցանկանում եմ մարդու միս ուտել,
Պատճառ, այս ոտս մարդիկ են կոտրել»։

Աղուէսի խօսքերն հրէշը լսելով՝
Խոկոյն յետ դարձաւ, արագ քայլերով
Վազեց դէպի այր։ Բայց ճանապարհին
Աղուէսն յետ մընաց և խնդրեց հրէշին
Որ յետ չընթողնէ իւր կաղ ծառային՝
Ձատ ծանր բեռ չէ, շալակէ ուսին։

Այդպէս շալակած—ինչպէս փոքր առաջ
Արդէն ասացի—հրէշը քայ-քայ

Եւ արագաքայլ դէպ՝ այրն էր վազում,
Ուր մարդը կանգնած նրան էր սպասում։

Սա մէկ բոպէում իւր կտրուկ խելքով
Արդէն որոշեց, թէ ինչ հնարքով
Այս երկրորդ անգամ ազատուի հրէշից,
Եւ այս պատճառով գոչեց հեռուից.
—Ա՛յ դու խաբեբայ, անպիտան աղուէս,
Այսօր ինձանից անշուշտ մահ կ'առնես.
Հաւանոցումըս քեզ որ բռնեցի,
Այն պայմանով միայն կեանքըդ խնայեցի,
Որ դու ինձ համար երկու հրէշ բերես.
Դու էլ խոստացար։ Այժմ, սեւերես,
Այսքան սպասեցի, միայն մէկն ես բերում.
Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում։

Հրէշըն երբ լսեց մարդու խօսքերը,
Ինչ ըսիզ կանգնեցան նորա մազերը.
«Խորամանկ աղուէս, որոտաց, մեռիր.
Դու միայն ա՛յն մտքով ինձ այստեղ բերիր,
Որ երկրորդ անգամ սորա ձեռը մատնես,
Որից մէկ անգամ հաղիւ պըրծայ ես»։
Ասաց ու բռնեց աղուէսի ոտից
Եւ սաստիկ ուժով նետեց իրանից,
Իսկ ինքը փախաւ։ Մարդը ազատուեց,
Ծունկ չոքեց խոկոյն, Տիրոջ փառք տուեց.
Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ—զուարթ,
Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ.
Բարձած ձիաններն գըտած գանձերով
Իրարու կապեց և ուրախ սըրտով
Հեծաւ ձիու վրայ ու կամաց-կամաց
Առաջ քըշելով՝ դէպի տուն գնաց։

Ջ.

Արդէն ծածկել էր սև վարագոյրը
Նընջող երկրի վրայ մութը գիշերը,
Երբ որ հասաւ տուն մեր Հարուստ Հրսկան,
Թեծեց տան դուռը և կանչեց կընկան։
«Ո՞վ ես, ռվ», լսուեց դռան յետևից։
—Ես եմ, բայց դուռը, կանչեց նա դրսից.
Ինձ արի, կին իմ, մեղք են ձիաննները,
Ինձ, որ վեր բերեմ ոսկու բեռները։

Ոսկու անունը կինը որ լսեց,
Ինց արաւ դուռը, մարդու դէմ վազեց.
Փաթաթեց նորան իր կըռների մէջ
Եւ համբոյրներին չէր երևում վերջ։

Մարդը ներս տարաւ բերած դանձերը,
Լըցրեց նորանցով իր սենեակները,
Եւ այնուհետև շատ-շատ տարիներ
Ինդ ու խընդութիւն նորանց պակաս չէր։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

21. ԳԱՐՆԱՆ ՍԿԻԶԲԸ

Ջատկից յետոյ Արարատեան նահանգում ով լինի՝ աչքին մի նոր բան կ'երևի. բոլորը ծառ ու տունկ է. կանաչները նոր դուրս եկած, ցընծին են տալիս այգիների ափերումը. ուռի ծառերը՝ բաց արած իրանց լեզուիկ տերևները, գարնան մեղմ քամուց խշխշալով՝ իրար են դիպչում, հէնց իմանաս թէ՝ իրար բարևում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ որը կոկոնել է, կարծես շարած մարգարիտ լինի, որն էլ ծաղկել է եօթանասուն տարեկան ալևորի նման. մանուշակն ու յասմիկն իրանց անուշ հոտերով քաղցր քուն են բերում այգու մէջ զբօսնողին. մանուշակը պըստիկ հարսի կամ համեստ աղջկայ նման գլուխը կախ է դցել, մտել է խոտերի տակը, որ մի գուցէ երևալը հպարտութիւն համարուի. իսկ յասմիկը իւր թփի վերայից ճիթ-ճիթ կախ ընկած ու հոտով աշխարհքը լցրած՝ հէնց իմանաս թէ կանչում է անցկենողին, որ առանց իրան ու իւր պարկեշտ քրոջը տեսութիւն գալու՝ չանցկենայ, չգնայ. վարդն էլ ամեռուան մերկութիւնից դուրս եկած՝ հագել է կանաչ ատլաս շորեր և իւր ոսկէ կոճակի նման կոկոններովն իմաց է տալիս, թէ ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյր մանուշակին, որ ձեզ ուրախացնէ, մինչև որ ես էլ կըգամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ։

Այսպէս ամեն բան իրանց կարգին ընկած՝ մեծ ուրախութիւն էին բերում մարդու վերայ կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը: Սարեակներն էլ՝ ծառի ճղներին կանգնած, կարմիր արեգակի դիմացը, հազար ու մի տեսակ ճլվլացնում էին ու իրանք ածում, իրանք պարում:

22. ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քեզ ողջոյն զուարթուն,
Առուգահասակ գարուն,
Քեզ ողջոյն բիւր անբուն
Տալիս է հայոց Տուն:

Անուշաւանի սօսիք տերևով,
Փիտերն ծառից իրանց ճռուողով
Օրհնում են գալդ, երկնքի դեսպան.
Դու ես մեր կեանքի պաշար ու պաշտպան:

Երբ հեզիկ մօտեցար Մասիսի սարերին,
Բքածին ամպերը տարագիր գնացին.
Չին լեռը բացեց իւր թաւոտ կուրծքը.
Քեզ կանաչ դիպայ սիրեց Հովիտը.
Սիրահար սոխակը իւր վարդի յետքից
Վազեց Արարատ՝ շինել իւր բունը...

---

23. ՍԱՐԳՆԱԼԸ

Գարունը բացւում է և ահա գիւղացիք սարն են տանում տաւարը: Աղբիւրների գլխին, ծաղիկների վրայ վրանները են տնկում և տաւարը ներս են անում այս անմահա-

կան դրախտը: Առաւօտը՝ երբ անկողնիցդ վեր ես կենում, հազար սարի ծայրին ամպն ու ծուխը միմեանց հետ խառնուած՝ երկինք են բարձրանում ու ցողը անձրևի հետ նստում է մարդկանց շորերի ու երեսների վերայ: Կանայք կթի տաւարի հետ են լինում, կաթը ժողովում, իւղ ու պանիր շինում. տղամարդիկ տաւարը սարն են տանում, կամ բուրդ ու իւղ են տանում փողոցը ծախում, իրանց տան պակասութիւնը լրացնում:

Միայն այս չէ կանանց գործը. ցերեկը ճախարակ են մանում, շալ, գորգ կամ կարպետ են գործում և իրանց օրն ուրախ, միամիտ անցկացնում: Էլ ինչ ասել կուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուշ ու ձիգ անելով չեն մանգալիս կամ երեսները կալնում, ինչպէս տանը: Այստեղ մէկ տան պէս են, և ում օբէն (վրանը) մտնես, ամէնքն առողջ, ուրախ ու զուարթ են. այն օդի ու ջրի մէջ, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու գոյնը ինչ կըլինի ապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողում, որ հեռանայ. աղբիւրների քչքչչոցը, ջրերի խըշխըշոցը, ծառերի սըլսըլոցը, թռչունների ծրլվըլոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի բառաչը՝ այս բոլորը կարծես ձեզ ասում են. «Դրախտ ես ուզում, այստեղ կաց, այսպէս կաց. սիրտդ անմեղ, միտքդ խաղաղ»:

24. ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վերայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենի,
Գնա, անցիր սրտիցս հեռի:

Ո՜հ, ինչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, Թռչնիկ.
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ձմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես Թռչնիկ իմ Հայրենի,
Գնա, երգէ սրտիցս Հեռի:

Ո՜հ, ինչ մրմունջ Հանես, վտակ,
Ականակիտ և Հանդարտիկ,
Քո Հայելուդ մէջ անապակ
Նայեն ղիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ Հայրենի,
Գնա, Հոսէ սրտիցս Հեռի:

---

25. ԴԱՇՏՈՒՄԸ

Որքան Հիանալի է լայնատարած դաշտը. Ինչ Հրաշալի ընդարձակութիւն, Ինչ բազմազիմի տեսարաններ ես նշմարում չորս կողմդ: Ահա Հարուստ վարելահողերը — արտերը աշխատասէր գիւղացու քրտնքի վաստակով դանգրաւորուած, տատանում են իրանց պտղալից Հասկերը: Ցորենի, գարու, Հաճարի, վուշի արտերն օրօրուելով, քաղցր ժպիտը երեսին, ողջունում են միմեանց. մեղմ զեփիւռը խաղում է նրանց վերայ և երկրագործը՝ կանգնած մօտակայ բլրակի գլխին, զուարճանում է, տեսնելով իւր արտերի *հէրանց գնալը*: [1]) Արեգակի ճառագայթները փողփողում են նրանց վերայ:

---

[1]) Արտերի մեղմ, ալիքանման տատանումը քամու առաջ կոչւում է հերանց գնալ:

Բայց ահա մի մութ ստուեր երկչոտութեամբ սահեց արտերի երեսով. դա մի կտոր ամպ էր, որ մի րոպէում՝ զովարար ողջոյն մատուցանելով, անցաւ նոցա վերևից. դա եկաւ լմանալու, թէ արդեօք ծարաւ չէն նոքա և իրանց ծաղկած Հասկերի դատարկ պտղամանները լցնելու Համար կարօտ չէն իւր օդնութեանը: Գիւղացին ձեռքերը տարածեց. «Ա՛ստուած իմ, դարձեալ մի առատ անձրև, և այնուհետև ես կարող եմ անվրդով ննջել ցերեկուան տաժանելի աշխատանքից յետոյ» Աստուած լսեց բարի գիւղացու ջերմ աղաչանքը և մեղմ անձրևը, երեկոյից մինչև առաւօտ, ոռոգեց ամբողջ դաշտերը: Գիւղացին ուրախացաւ. այժմ նա Հաց կունենայ իւր ընտանիքի և դարման իւր անասունների Համար: Այդ անասուններն էս շատ են նորան Հարկաւոր: Գոցա կաթը նա ուտում է, գոցանով է Հերկում երկիրը, մինչև անգամ գոցա աղբը գործ է դնում Հողը պարարտացնելու: Վարուցանքի Համար Հիւթալի սեւահող է Հարկաւոր. դատարկ աւազի կամ կաւի վերայ Հացաբոյս չի բուսնիլ: Կան այնպիսի տեղեր, ուր իհնուց բոյսերի և կենդանիների մնացորդների փտելուց սեւահող է գոյացել — այդպիսի տեղերում գիւղացին Համարձակ սերմ է ձգում. բայց կան և այնպիսի *նիհար* տափեր, ուր Հարկաւոր է արուեստական կերպով Հողը պարարտացնել՝ ամենատեսակ անասունների աղբ ածելով, որովհետև աղբից սև Հող է գոյանում:

Բայց թողնենք արտերը և անցնենք դաշտերի մլուս կողմը, ուր ձեզ նոյնքան Հետաքրքրական բոյսեր ու ծաղիկներ կերևանդիպեն: Ա՜խ, ինչ փառաւոր է աճել այստեղ խոտը. տներդ խճճուում են նրա մէջ: Վեր բարձրանանք այս բլրակը, որ այսպէս Հիասքանչ պճնուել է կարմիր ու սպիտակ առուոյտներով (եօնջա). Ինչքան թիթեռնիկներ, որքան բզեզներ և մորեխներ են թռչկոտում ու ցատկոտում այդ բազմագոյն խոտերի և ծաղիկների մէջ. թաւոտ մեղուն մի

կողմն է բզզում, քաղցրաձայն արտուտը մի՛ւս կողմը դայլայլում. իսկ թխթխեռների և թրթռուրների թիւը չկայ։ Նայիր այդ բլրակից չորս կողմդ տարածուած լեռնադաշտին. տե՛ս, որքան բազմազիմի տեսարաններ, որպիսի գոյն գոյն և անուշահոտ ծաղիկներ են տարածուած, մի տեղ սպիտակ, մի՛ւս տեղ դեղին, այս կողմը կանաչ, իսկ մի՛ւս կողմը կապուտակ, կարծես բազմաթիւ ու այլատեսակ գորգեր են փռած։ Հեռուից տեսնւում է եղջիւրաւոր անասունների նախիրները, որոնք իրանց բառաչիւններով թնդացնում են օդը. նոքա առատ և հիւթալի խոտն արածած և իրանց հորթերը մտաբերելով, բառաչելով տուն են դառնում. դուարակները խայտում են, իսկ նախրապետը — ցուլը, իբրև ամեհի գազան, աչքերն արիւնով լիքը, քթի տակին մռնչալով՝ առաջ է քայլում։ Ահա մի ուրիշ նախիր խառնուեցաւ այդ նախրի հետ. ցուլերի մռնչոցը բարձրացաւ. նոքա քանդ անելով դիմեցին միմեանց վրայ և կատաղի կռիւն սկսուեցաւ։ Կռուողների աչքերից կրակ է թափւում. նոցա սուր եղջիւրների չրխկ-չրխկոցը շատ հեռու է տարածւում. անցնում է կէս ժամ, բայց կռուողներից ոչ մինը չէ կամենում տեղի տալ. նոքա աւելի և աւելի են կատաղում։ «Ցաղիկուողի աչքը կրկոտրուի», ասում են տաւարածներն ու խառնւում կռուողների մէջ և, երկար չարչարանքից յետոյ, հաղիւ են կարողանում միմեանցից անջատել զայրացած կենդանիներին։

26. ՎԱՐԴԻՈՍ

Ասա դու ինձ, ոստի վարդի,
Ո՞ւր ես ծլել, ո՞ւր ես ծաղկել,
Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի
Ջարդարանք ես դու եղել։

Երդեօք ծլե՞լ ես Եդեմում,
Եւ ջրե՞լ է քեզ Եփրատ,
Թէ սնուցել է իւր ծոցում
Քեզ Ծերունին Ըրարատ։

Ո՞ր անգութի ձեռն է քաղել
Քեզ քո թփից մայրենական,
Կամ որ անգութն է քեզ տնկել
Այս աշխարհում պանդխտական։

Կամ թէ այն թուի, քո օթևան,
Թառամեցա՞ւ քեզ համանման,
Թէ սոխակները քաղցրաձայն
Մխիթարում են միշտ նորան։

Բայց դու չունիս մխիթարիչ,
Ո՛վ թաղուհիդ ծաղիկների,
Ձունիս դու քեզ սիրոյ երգիչ՝
Թառամում ես երկրիդդ հեռի։

Մի՛ մի աղեաւ վատահամբաւ
Գուշակում է նոր գոյժ, նոր ցաւ,
Իսկ դու տխուր, վիրաւորուած՝
Կախել ես գլուխդ թառամած։

---

27. ԱՆՏԱՌԸ ԵՒ ՆՈՐԱ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Մտնենք այս ընդարձակ անտառը. այստեղ մենք կը-

տեսնենք շատ ու բազմատեսակ ծառեր՝ հացի, բոխի, թխկի, Հաճարի, սօսի, լորենի, կաղնի և այլն: Սակաւ չեն նաև վայրենի պտղատու ծառերը՝ վայրենի տանձենին, խնձորենին, զկռին, Հոնին և ուրիշները: Անտառում բուսնում են նաև շատ թփեր, բանջարեղէնները, խոտեր և անտառային ծաղիկները: Անտառից մարդս մեծամեծ օգուտներ է քաղում: Բացի այն, որ այնտեղ արածում է նորա տաւարը, որ նա իւր վառելափայտն այնտեղից է ստանում, նա մի մեծ և անփոխարինելի օգուտ ևս ունի. ծառերը մաքրում են օդը: Բացի սրանից անտառն արգելում է ջրի շուտով ցամաքելուն և օդի խոնաւութեան մէջ հաւասարակշռութիւն է պահպանում: Երբ գարնանը ձիւները հալւում են, ջուրը բոյսերի արմատների և մամուռի մէջ պահուելով, արագ չէ սահում և մի մեծագոյն մասը մեղմ հալուելուց և դանդաղ ընթացքից Հողի տակ մտնելով՝ շուտով չէ շոգիանում: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի անտառը, երևում է նորանից, որ երբ որևէ լերան վերայից անտառն անխնայ կըտրատում են, ամբողջ պտղաբեր նահանգներ մերկ անապատ են դառնում. օդը զրկւում է իւր նախկին փափկութիւնից և մեղմութիւնից, իսկ ձիւնից և անձրևներից գոյացած Հեղեղները կատաղաբար թևակոխում են դաշտերը: Անտառների անհաշիւ կըտրատելուց մեր երկրի շատ արգաւանդ դաշտեր և դրախտանման տեղեր կորցրել են իրանց նախկին գեղեցկութիւնն ու փարթամութիւնը և ամայի անապատի ձև են ստացել: Արաբատեան նահանգն այն ճոխութիւնը, բուսական և կենդանական Հարստութիւնը չէ ներկայացնում, որը երևում է Ղազար Փարպեցու նկարագրութեան մէջ: Արաքսն ևս իւր նախնի յորդութիւնն ու զօռութիւնը չունի: Անտառների անխոհեմ կըտրատելու վնասները բազմաթիւ են. դորանից երկրի կլիման էլ անչափ փոխւում է՝ ձմեռը լինում են սաստիկ ցրտեր, իսկ ամառը անտանելի շոգեր. այն ինչ անտառը ձմեռ ժամանակ չափաւոր ջերմութիւն է պահպանում իւր մէջ, իսկ ամառը նորանից մեղմ զով և խոնաւութիւն է տարածւում շրջակայքում:

28. ***

Երբ որ ճնշում է քո սիրտը մի վիշտ,
Մի վիշտ հոգեմաշ, ծանր և յամառ,
Ապա մարդկանցից խուսափիր դու միշտ,
Ուղղիր քո գնացքը դէպի մութ անտառ:

Անտառն ու ժայռերն էլ են ընդունակ
Նոյնպէս բառերով վիշտ արտայայտել.
Չէ որ շատ անգամ մրրկին ու կայծակ
Նոցա կուրծքն ու սիրտն են պատառոտել:

Նոքա մարդկանց պէս չեն խօսիլ քեզ հետ,
Որ լոկ խօսքերով տան մխիթարանք.
Այլ ցաւակցելով՝ քո դանդատներին
Չայնակից կլինի նոցա արձագանք:

---

29. ԵՐԱՉՏ

Գարունը քանի գնաց՝ տաքացաւ. մայիսի կիսին կ'աստիճ օգոստոս ամիսը լինէր. երկինքն ամեն օր այնպէս պարզ է լինում, որ դեղապետի համար ամպի նշան չես գտնիլ: Այդ այգինները, որոնք մի քիչ ջրրգլխի են, էլի կանաչի ծեղ երևում է ափերումը, ստուերապատ տեղերումը. իսկ ինչ ներքի այգինների դրութիւնն է, Ըստուած Հեռու անի,—կ'ասես

թէ ամայի անապատ լինին. կանաչ տեղ երազումդ չես տեսնիլ: Աշտարակի որ փողոցներովն անց ես կենում, ամենի քերանից էլ լսում ես, թէ այս տարի մենք ունեցած չունեցածներս պիտի վաճառենք, եթէ մի քանի օր էլ այսպէս գնայ: «Աստուած մեր մեղքը մեր երեսովն է տալիս, չորային լինելը բաւական չէ, թրթուրն էլ մի կողմից է ծառերը սունգ անում (փչացնում). խնձորենիքը, ծիրանիքն ու շլորենիքը կ'ասես թէ մի-մի քրդի տաղաւար լինին, այնպէս են բռնուել թրթուրի ձեռից: Տնաշէնները, մեր քրիստոնէութիւնը վերացել է, Հաւատներս բոլորովին պակասել. ամենայն տարի այս ժամանակ սուրբ Գէորգի մասունքը (մեռնի՛մ նորա սուրբ զօրութեանը) երկու անգամ բերած էինք լինում, այս տարի սուրբն էլ ենք մտքից գցել, Աստուածն էլ հետը: Այս մեր կոտորուած երեխայքն էլ նուրին գոնէ չեն ման ածում, որ գուցէ Աստուծու սիրտը քաղցրանայ վրաներս, մի լոյս ու ճար անի»: Այսպէս խօսում էին մի քանի մարդ իրար հետ, ձանձռապանենց դռանը կանգնած, երբ որ Գարեգինը շտապելով անց էր կենում այնտեղից: «Կանգնի՛ր, կանգնի՛ր, կանչեց նորանցից մինը. Գարեգինը վարժապետ, ախմր այս ի՞նչ պատուհաս է. գրի սև ու սպիտակը դուք էք հասկանում՝ ինչ է ասում գիրն այս տարուան համար՝ անձրև պիտի գայ, թէ չէ ձեռներս լուանանք, յոյսներս կտրենք, յետ նստենք»:

Ի հարկէ չի գալ, ասաց Գարեգինը. մի տեղ որ ջերմեռանդութիւն չլինի, սուրբերի պատիւը վերանայ, Աստուածը մոռացուի, թափօր չլինի, այնտեղից Աստուած չի՛ հեռանալ: Վաղը ականջներդ ձէնի (ձայնի) պահեցէք, պատրաստ կացէք, առաւօտեան զանգակի ձայնը որ լսէք, դուրս եկէք, որ սուրբ Գէորգի մասունքը պէտք է բերենք. գուցէ մի փարատութիւն ընկնի:

Միւս օրը՝ արևը մի փոքր բարձրանալուց յետոյ, զանգակները քաշեցին: Տիրացուները հագան ժամաշապիկները, որը քշոցը վերառաւ, որը խաչվառը, որն էլ մոմերը բռնած՝

առաջ ընկան: Գարեգինն էլ՝ սրանց կարգի դցելուց յետոյ, շարականը խոտրեց՝ տարաւ. տէրտէրներն էլ շուրջառները ժամհարի կռնատակը տուած՝ գնացին դէպի Մողնու ուխտատեղին: Ժողովուրդն էլ՝ մեծ ու փոքր, մայր ու մանուկ, բոլորը տէրտէրի յետևից մասունքի առաջը դուրս եկան: Վանահայր վարդապետը, երբոր ժողովրդի կամքն իմացաւ, փութաւորուի ինքը, խսկոյն պատրաստուեցաւ, գնաց, ժամի դռները բաց արեց, մասունքները խորանից հանեց, տէրտէրների հետ ինքն էլ շուրջառաւորուած ու ամենքը մի մի մասունք վեր կացած, շարական ասելով, խաչ ու խաչվառով, մեծ հանդէսով եկան դէպի Աշտարակ: Չէնց որ գիւղին մօտեցան, ջերմեռանդ ժողովուրդը, որ այդտեղ սպասում էր, գլխները բաց, արտասուքն աչքերին՝ թափուեցան առաջը: Կանայք ու մարդիկ ձեռները երկինք բարձրացրած, աղաղակում էին. «Ո՛վ սուրբ Գէորգ, քո զօրութիւնին մատաղ, մեր տէրն ու պահապանը դու ես, այս տաք ջրին մի հով ջուր ածի՛, մեր լաց ու աղաղակը լսի՛ր, մեր երեխաներին խղճա՛»: Այնուհետև հոգևորական դասը, բոլոր ժողովրդի հետ՝ գիւղի չորս կողմը թափօր տալուց յետոյ, եկան Ամենափրկիչ եկեղեցու առաջը: Այնտեղ էլ թափօր արին, առուի վերայ խաչալուայ արին, սուրբ Գէորգի մէջը քաշեցին ջրի մէջը, որ երթայ այգիները, թրթուրը կտրի. յետոյ տարան եկեղեցի և սեղանի վրայ բազմեցրին:

Երեք օր սուրբ Գէորգը մնաց Աշտարակ: Աստուածապաշտ ժողովուրդն այնքան զոհեր ու կարասներով գինի խոստացաւ, թող իրանց գցած գանձանակը, որ Մողնու միաբանք ուզի ամիս ուտէին՝ չէր վերջանալ: Երեք օրից յետոյ՝ սուրբ Գէորգի մասունքը ինչ հանդէսով որ բերել էին, յետ տարան: Երեխայքն էլ նուրին շինեցին ու ման ածեցին. երկուսը կռնիցը բռնեցին, մինը տոպրակ էր վերցրել, միւսն էլ մի փոքրիկ բժուժ, ման են գալիս տները և որ դռան առաջ կանգնում են, ասում են՝

Նուրին-Նուրին եկել է,
Աչքայ Հուրին եկել է.
Չիլայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է.
Իւղ բերէք՝ պորտը քսենք,
Ջուր բերէք՝ գլխին աճենք.
Մեր Նուրինի վայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

Կանայքը մի աման ջուր բերում են՝ աճում այդ Նուրինէ գլխին ու մանուկներին բրինձ, իւղ կամ ձու տալիս, որ տանեն՝ քէֆ անեն:

Այն իրիկունը՝ երբ ուրբ Գէորգի մասունքը տարան ու Նուրին էլ մանն աճեցին, մի փոքրիկ ամպ Արագածի գագաթից վեր կացաւ՝ դէպի Մասիսը գնաց: Ամպը քիչ-քիչ շատացաւ, երկնքի երես թղպեց ու կէս ժամից յետոյ, մի այնպիսի անձրեւ եկաւ, որ աշխարհ շինեց ցեխ ու բաթլախ. երեք օր միմեանց վրայ չկտրուեցաւ անձրեւը. այգիներն էլ կշտացան, տաւարի արօտն էլ լաւացաւ, քարքարուտ տեղերն անգամ մէկ թիզ կանաչեցան, բոխն էլ դուրս եկաւ, արտերն էլ իրանց կարգին յառաջ եկան, մի շաբաթումբ երկու թիզ բարձրացան. աշնանավար ցորենները հասկը գցելուն մօտեցան. գարնանավարի հասկերն էլ այնպէս էին ցնծին տալիս երեկոյեան մեղմ քամու առաջ, որ մտիկ տուող սիրտը ուրախութիւնից վեր-վեր էր թռչում: Թրթռուրը հօ այնպէս փչացաւ, որ նշանն էլ չէիր գտնիլ: Ամեն մարդու բերանից փառք ու շնորհակալութիւն էր լինում Աստուծուն, ամենքն ուրախ էին, ամենքի սիրտը տեղն էր ընկել:

30. ԱՒԱԻՕՏ

Գիշերն անցաւ. առաւօտեան
Մէգը փռուեց դաշտի վրայ.
Ջուտով արտոյտն իւր վաղորդեան
Աւետիքը պիտի տայ.
Արշալոյսը բացուեցաւ,
Քնած երկիրն արթնացաւ:

Դեռ նիրհում են դաշտ, անտառ,
Բայց զեփիւռը արտերին
Գուրգուրելով երգ սիրաւառ
Շշնչում է մեղմագին.
Արշալոյսը բացուեցաւ,
Չամ-արաճ արթնացաւ:

---

31. ԱՄՊ

Յուլիսի տօթալին օրերից մէկն էր: Արեգակը անխնայ կերպով այրում էր: Չրաբորբոք օրը անտանելի էր: Ամեն առարկայի վրայ տիրում էր թմրութիւն և տաղտկութիւն: Թռչունները լռել էին. ծառերը ցած էին թողել իրանց ոստերը. թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետնին: Այլ ևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ուրախ շշունջը. նրանք խոնարհեցրել էին իրանց գլուխները և կամաց կամաց մեռնում էին ծարաւից: Կովերը, ձիանները, այծերը հազիւ հազ շարժւում էին: Ձորս կողմում ամեն ինչ լռութեան մէջ էր. ոչ մի ձայն չէր լսում...

Մի կողմում, օդի չերմութեամբ լցուած տարածութեան վրայ, երևում են խրճիթներ. այնտեղ մարդիկ տխրութեամբ նայում են դէպի ժլատ երկինքը, որ նորանց անձրև չէ տալիս: Այդ սգաւոր գիւղերի մէջ այլ ևս լսելի չեն լինում ոչ ծիծաղ, ոչ հանաքներ և ոչ ուրախ երգեր: Մինչև անգամ երեխաները, թուլացած օրուայ տապից, մոռացել էին իրանց խաղը և սիրելի փողոցները, սուս էլին կացել և թափուել էին մարագներում...

Երաշտութիւնը սարսափելի դժբախտութիւն է շինականի համար, որը ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով: Երաշտութիւն—դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար, մահ աղէտալի և սովատանջ: Նա աղքատացնում է մինչև անգամ և նրանց, որոնց մօտ փոքր ի շատէ պահպանուել է ուտեստի հին պաշարից... Շինականները հասկանում են այդ և տրտմութեամբ նայում են դէպի երկինքը:

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմութեան են սպասում երկնքից,—բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկայ... Այրուեցաւ խոտը, այրուեցան անտառները, նիհարացան, լղարեցին տաւարները: Մարդիկ յուսահատուած թափառում են որպէս ուրուականներ...

Արդէն մի քանի անգամ բարի քահանան սուրբ մասունքներ, խաչ ու պատկեր իւր հետ տանելով՝ հանդստան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, Աստուծուց անձրև հնդրելով: Շինականների չերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտասուախառն աղօթքներով շրջապատել էր նրան: Ջօրաւոր է հաւատը այդ խեղճ, համբերող մարդկների մէջ:

Ահա բաց կապտագոյն երկնքի վրայ երևաց ամպի մի փոքրիկ թափանցիկ պատառ: Նա նմանում է մի սպիտակ թաշկինակի, որ հազիւ է նշմարւում: Նա կամաց լողում է, կարծես թէ վախենալիս լինի... Տառապեալ շինականները

տեսան նրան և նրանց վշտալի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ... Մօտ է փրկութիւնը սովատանջ մահից... Բայց փոքրիկ է ամպիկը, գուցէ մի րոպէից յետոյ կորչի երկնքի անսահման կապուտակութեան մէջ... Ո՛չ, նա չի դաւաճանիլ. նա կըցօղէ երկիրը բարեբեր անձրևով:

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբաղդ գիւղերի վրայ, տխուր խրճիթների վրայ, և հետզհետէ աճում է, հաւաքում է իւր ուժերը, որ փրկէ սովատանջներին:

—Իզուր ես աշխատում, փաղաքշելով ասում է նրան արեգակի կիզող ճառագայթը. թո՛ղ նրանք տանջուին, դու ինչո՞ւ ես Հոգ տանում նրանց կեանքի համար: Դու կանգնած բարձրում, փայլում ես ոսկու մէջ, իսկ նրանք այնտեղ, ներքևում, թաւալւում են փոշիների մէջ: Քեզ ի՞նչ պէտք են նրանք: Դու կ'ոչնչանաս, կըմեռնիս, նրանց ազատելով: Միթէ՞ աւելի լաւ չէ քեզ համար՝ լողալ երկնքի կապուտակութեան մէջ, խաղալ մեզ հետ, սլանալ Հողմերի թևերի վրայ և զուարճանալ կեանքով:

Իսկ սպիտակ ամպիկը դէմքը խոժոռեց և դժգոհութեամբ երեսը շուռ տուեց արեգակի ուրախ ճառագայթներից: Նա սկսեց աճել և մթին գոյն ստանալ: Վերջապէս բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառագայթները և ակնջ չդրեց նրանց ձանձրալի խրատին՝ թէ կըմեռնիս, կ'ոչնչանաս... ինչո՞ւ ես դու Հոգ տանում ուրիշների համար, մտածիր միայն քո մասին... ապրիր միայն քեզ համար...

Ամպը ակնջ չդրեց իւր օգտին բարեկամներին և շուտով այնքան աճեց, որ դարձաւ ահագին սև մեգ, որը սիրալիր կերպով ցած էր իջնում թշուառացած դաշտերի և տխուր ծառերի վրայ: Լսելի եղաւ խուլ դղրդիւն, որը հետզհետէ սաստկանալով, սկսեց որոտման մի հարուածը միւսի յետևից աւելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ ու խրամատների մթին խորշերում և, ծծի նման դալարուելով, նշմարուեցաւ կայծակը... մի անգամ ևս, միան-

գնամ ևս... Տեղաց առատ, զովացուցիչ անձրև: Երկար հեղուում էր նա, ոռոգելով ամեն մի արմատը տոչորուած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուզենու, սգաւոր ուռենու, և նրանք ագահութեամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները... Ծառերն սկսեցին ազատ շունչ առնել. խոտերը կանաչ գոյն ստացան. ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները. թռչուննները սկսեցին ծլվլալ. երեխաները դուրս թափուեցան դէպի փողոցները, սկսեցին կազմել լճակներ վազող վտակներից: Կեանք ստացան գիւղերն ու դաշտերը:

Ամպը, կատարելով իւր բարի գործը, ճշմարիտ է, մեռաւ, ցած թափուելով փրկաբար անձրևի ձևով, բայց նա մեռաւ հաճելի մահով: Նրա կեանքը սպառւում էր ժպտալով, երբ նայում էր զուարթացած ծառերին, պայծառ խոտաբոյսերին, ուրախ ծաղիկներին: Եւ նա, կորչելով երկնքի ընդարձակ տարածութեան վրայ, զգում էր, որ մեռնում է ոչ առանց օգուտ բերելու. կանաչ խոտը, յարութիւն առած բնութիւնը, շինականների ուրախ դէմքերը—նրա գործն էր:

Այնուհետև ամպը բարակ շերտով սկսեց առաջ լողալ. թռչունների ուրախ ձայները, ծաղիկների ու դաշտային խոտաբոյսերի օօսափման անուշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչև նա աննկատելի կերպով անհետացաւ երկնքի անսահման կապուտակութեան մէջ: Նա կորաւ այնտեղ, վերևում, իսկ կաթիլների ձևով սկսեց ապրել այստեղ, ներքևում, ամեն մի թուփի, բոյսի, ամեն մի փոքրիկ կենդանու մէջ...

32. ԱՄՊԵՐ

Հայոց երկնքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռից.
Սև սև ամպերը սարերի նման
Անցնում արտերից:

«Կացէք, ա՛յ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
Անձրև չէք թափում.
Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
Ու ձեզ սպասում:
Քամի, դու քամի, խղճա՛ արտերին,
Թող այդ ամպերին,
Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
Ջրեն մեր արտեր»:

Քամին Հանդարտեց. մեղմ անձրև թափուեց,
Արտերը ջրեց.
Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
Ու հասկեր բռնեց:
Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
Խնդաց ու ասաց.
«Փառ՛ք քեզ, ո՛վ Աստուած, որ տուիր մեզ հաց.
Ջենք մնալ քաղցած»:

33. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

Թէպէտ կէսօրից չորս ժամ արդէն անցել էր, բայց արեգակը դեռ այրում էր քաղաքի փողոցները: Ամեն տեղ անց ու կարգը նուաղել էր: Զուկայում խանութպաններից ոմանք քաշուել էին խանութների անկիւնը և գլխները *դահլի* կամ հաշուետետրերի վրայ դրած՝ խոր քնով խռմփում էին. ոմանք անգործութիւնից յոգնած՝ հաւաքուել էին այս ու այն դրացու մօտ և անհոգութեամբ զրոյց ու կատակներ էին անում, աշխատելով *քնաւաղ* առևտուրի օրը շուտով մթնեցնել: Սակաւ էին այն բաղդաւորները, որոնց օրուայ այդ ժամին յաջողել էր

ձեռք ձգել իրանց ընկերներից յետ մնացած մի գիւղացի կամ հեռաւոր թաղերից եկած մի անփորձ տղայ և մի փոքր առևտուր անել, վաճառելով նրան ապրանքի հետ միասին երդումների մի ամբողջ շարակոյտ: Մեծ հրապարակն անգամ, որ քաղաքի միակ բաբախող սիրտն էր, վաղուց անշնչացել էր: Նպարավաճառներն էլ լսելի չէին անում իրանց գովասանական անախորժ բացականչութիւնները և յաղթահարուած տիրապետող տօթից, հազիւ մէկ-մէկ ջուր էին սրսկում թառամող վարունկներին կամ կանաչեղէնի *թաքախներին*: Հարևան մսագործները, ահագին փափախով զլուխները իւղոտ կշռասեղանի վրայ դրած, անուշ-անուշ քնած էին, թողնելով ճանճերին շահատակել մսի կիսաննների վրայ, որոնք արևի տաքութիւնից արդէն դեղնել ու չորացել էին: Քաղաքի կշիռը նոյնպէս անգործ ընկած էր:

Ամբողջ քաղաքի մէջ միայն Ազայ-Մելքոնի պարտէզն էր, որ օրուայ այդ տօթագին ժամին զովաստուեր և հովաշունչ է: Գեղահասակ բարդիները, որոնք բոլորում էին ամբողջ պարտէզը և հողմի իւրաքանչիւր հոսանքից քաղցր շշիւնով ծածանւում էին աջ ու ձախ, բազմամեայ ակաթենիները, որոնք երկուստեք հովանաւորում էին աղիւսախճճի ճեմելիքները և իրանց ձիւնաթոյր ու ողկուզաձև ծաղկափնջերով նրանց կանաչազարդ կամարակապը զարդարում, սաղարթախիտ ուռենիները, որոնք շրջաբոլոր եզերում էին ընդարձակ աւազանը և սփռում նրա շատրուանի վրայ մի սիրախորժ ստուեր, և վերջապէս բազմաթիւ պտղատու ծառերը, որոնք դրաւել էին պարտիզի մի ընդարձակ մասը և դունաւորել նրան իրենց բազմերանգ պըտուղներով, ստեղծում էին այդ արուեստական դարաստանի մէջ մի հովաշունչ և կենսաբեր եղանակ՝ անծանօթ քաղաքի հասարակաստեղծ մարդկանց: Պարտիզի ծառերն ու ծաղիկները արդէն ջրուած պատրաստ էին և աւազանի սիւնաձև շատրուանը կարկաչաձայն դուրս էր թափում իւր զովարար աղբերակը...

34. ԾԱՌԻԿ

Ա՛յ նորատունկ իմ ծառիկ,
Ձիւեր արա՛ գեղեցիկ,
Արմատ ձրդէ դու հողում,
Որ չշարժէ քեզ մրրիկ:

Ես ամեն օր քեզ համար
Ջուր կըբերեմ սափորով
Եւ քո տակը կըփորեմ,
Որ զօրանաս դու շուտով:

Ծաղիկ, տերև ու պտուղ
Թող զարդարեն քո ճիւղեր,
Նորանց վերայ թող երգեն
Անուշ ձայնով սոխակներ:

Մի՛ վախենար չար որդից,
Որով լի է ողջ աշխարհ,
Քորանց համար մեր երկիր
Վաղուց դառել է օտար:

Հաստացրո՛ւ քո բունը,
Այն ժամանակ վոթորիկ
Թող մռնչէ, որոտայ,
Չի վնասիլ քեզ, ծառիկ:

35. ԱՄԱՌՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ա.

Ճաշուայ շոգն անց էր կացել: Սար ու ձոր գլխները նոր-ից բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն: Արեգակը Մասիսի քամակիցը աչքը հանդարտ բաց էր արել, մունջ-մունջ Երևանու բերդին էր մտիկ տալիս և ուզում էր, որ կա-մաց-կամաց մայր մտնի:

Թանձր խաւարը, սև մառախուղը եկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացել էր:

Թռչունը տեղիցը չէր ուզում շարժվել, հաւը բնիցը գլուխը հանել: Ամէն տեղից տաքը խաղաղուել, ամէն տեղից ձայն ու ձոր լռուել, պապանձուել էր:

Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը —հանդումը, այգեպանը՝ իւր ծառի տա-կին՝ շուաքումը քուն մտել, հանգստացել: Արդ, կին, մանուկ գիւղերումն էլ չէին երևում: *Բազի* կոնդի (բլրի) ծայրից, բազի սարի լանջից, բազի ճանապարհում, հանդում մէկ սև մազի չափ ստուեր սևին էր տալիս, ձիու քամակից դէս ու դէն թեքւում, երեսի, քամակի վրայ շուռ գալիս, էլ յետ գլուխը շտկում, ասպանդակն ու սանձը ժաժ տալիս, ձիուն թափիկ տալիս, կամ մտրակում, որ ոտները մի քիչ շուտ-շուտ փոխի, շուտ տեղ հասնի: Բազինն էլ, ձեռն ականջի քամակին դրած, տխուր բարակ ձայնով մէկ *ջայլաթի* էր բարձրացնում քթի տակին, ձիու սանձը գլխին գցած, ինքն իրան նղղում, գնում էր, որ տուն հասնի, իւր յոգնած, ջարդուած մարմինը կամ մէկ շուաքի տակին հանգստացնի, կամ իրան տան դուռը, իւր ընտանիքի երեսը, քանի որ դեռ մութը վրայ չէր հա-սել, տեսնի ու սիրտը բացուի:

Հօտաղներն էլ իրանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել ու մէկ ստուերի տակ գութանը մէկ կողմը, եղները մի-ւս, ջրերի ափին վեր էին թափուել, քաղցր քուն մտել: Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը՝ մի-ւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, փնչացնում, արոճ անում: Հովիւն էլ, գլուխը մէկ քարի վրայ դրած, նղղել, աչքը կպցրել էր, որ շոքը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը իրիկ-նահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի:

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կի-տել, մարաղ է մտել, որ թէ գող, գայլ, գաղան սիրտ անի, մօտենայ, մէկէնմէկ վրայ թռչի, պատառ-պատառ անի, իւր տիրոջ ոչխարները պահի: Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ կամ մէկ ծաղիկ ոչ մէկ տեղ չէր երևում, որ մարդ հոտն առ-նի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի ու իւր ճանա-պարհի երկարութիւնը մոռանայ, կամ շոգի ձեռից այրուած խորովուած մարմնին հովութիւն տայ. —այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել: Մի-միայն խոտերի յօդուններն ու թփերի սուր-սուր ծայրերն էին այստեղ-այնտեղ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տըր-տում, մոլորուած, պաշարուած կանգնել, մնացել:

Սև-սև գիշակեր ագռաւները կամ վախլուկ *տուլաշներն* էին հէնց մենակ մնացել, որ այստեղ, մէկ քարափի ծայրի, մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ՝ ճանապարհի մէջում իրար գլխի հաւաքուել էին, նստել, կամ պտոյտ էին գալիս, իրար կտցա-հարում, իրար թևերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռից խլեն, բաժին անեն, իրանց ձագերին էլ տան կամ հետները տանեն:

Օձ, կարիճ, մողէս, բզէզ ու ինչ կերպ գազան ասես՝ մօլեխ, մժեղ, հանդէս էին բաց արել: Որը մէկ թփի տակից, որը մէկ քարափի գլխից, որը խոտերի միջին՝ կամաց-կամաց

ժաժ գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ յետ սուս անելով, կամ գետնի, ասլառաժի վրայ սողալով, վիշտացնելով, շուացնելով, փշշացնելով, ծվվալով, ծղրտալով, ոտն էլին ելել, ուզում էլին իրանց արևի ձէնն ածեն:

Որն էլ իւր բնի առաջին արևակող անելով, գլխները հանել, մունջ-մունջ ականջ էին դրել, սուր-սուր աչքերը ցցել, պելացել, շլացել, այս կամ այն կողմն էլին մտիկ տալիս, որ ոտքը խազաղուելիս՝ գուրս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ յետ իրանց բունը մտնեն, էլ յետ գնան քնեն, հանգստանան:

Խազի պատաճակի արտնքից կամ քարի ճայրից էլ մէկ անճար բու, գլուխը վեր թողած, քիթ ու պռունկ կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իւր սև օրը ողբում: Հաւի թշնամի ուրուրն էլ՝ թևերը փռած, ճանկերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբելով կամ կուրծքը քրջքրջելով, երկնքի երեսին, գլուխը կուրծքի տակին քաշ գցած, սուր աչքերն այս կողմն այն կողմն էր գցում, պտրտում, պատրաստուում, որ մէկէնիմիկ, ականթօթափել, վայր վազի նրա լեալոր ճուտերի գլխին, որ մօր թևերի տակին կամ մօր գլուխը քրելով, թևը քաշելով, ծվծվալով, կտկտալով կամ կտուց կտցի տալով մօր կռըխալուն, ծլվլալուն ականջ դնելով, սուսուփուս նստում էին իրար հետ կամ քջուջ էին անում,—կամ մէկ խեղճ անճար լորի քամակի խիլ ու ծվծվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, փետրի ու իւր ագահ փորին մատաղ անի...

Բ.

Այսպէս մեռել լռել էր բնութիւնը ու ոչ մէկ շիրխիրթու մէկ տեղից չէր լսւում: Միմիայն հեռու տեղից մէկ բարակ

քամի երբեմն երբեմն փչում, ծառի տերևները սրլսրլացնում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անցկենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում:

Ինչպէս ծխի մէջ խրուած՝ հեռու տեղից դաշտի գիւղերը, հանդերը, փոսերը մթնած, լռուած, ինչպէս սև ամպի կտորներ կամ այրուած, խանձուած տեղեր, այստեղից այնտեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում:

Արաքսը, ինչպէս մէկ նետ օձ կամ արծաթի գօտի արևմտեան կողմիցը, ձորերի միջիցը իւր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, լուռ, հանդարտ գալիս՝ Մասիսի փեշին մի քիչ խփում, շիում էր ու էլի խեթ-խեթ նայելով, նորան սպառնալիք տալով, ձէնըձոր անելով, գլուխը պտրտելով, գնում ջանգու ու փառնի գետերն իւր ծոցն առնում և խազալով, խայտալով, վշվշալով՝ հեռանում քոյրերի հետ ու պռունկ-պռունկի, լանջ-լանջի, քամակ-քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքերը խփում, նղղում ու զարուրի տափարակ ծոցումը ծեծուած, ջարդուած քուն մտնում:

Այս տխուր հրապարակի չորեք-շուրջը՝ աչքդ որ բաց չես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամպակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոտնատակ տայ՝ Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբաչի, գետին խցկի, որ համարձակւում են իրանց գագաթն այնպէս բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտը բռնելու տեղ չունենալով, իրանց երկինք մօրիցը խռոված, վեր են գալիս ու նրանց գլխին քուլայ-քուլայ դիզուում ու այնպէս իրար վրայ նստում, որ շատը, տեղ չունենալով, միւսներին քրինչ է տալիս, բոթ-բոթում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում:

Այս հատուածի մէջ եղած օտար բառերի տեղը բուն հայերէն բառեր դրէք:

36. ԲՈՍՏԱՆՉԻ

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհըրատում.
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում.
Գորտն էլ է լռել, էլ չի կրկռում:

Ամէնքն էլ փախել՝ հով տեղ են գտել,
Իրանց բներում լռուել, պապանձուել.
Միայն մի հատիկ մարդ է երևում
Խորընկած դաշտում, առուի եզերքում:

Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ճունկը բաց, բահը իւր ուսին.
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թասակ կայ գլխին:

—Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,
Արևի տակին ինչմո՞ւ է այրւում:
Նա *բոստանչի* է, *բոստան* [1]) է ջրում.
Սեխն ու ձմերուկն այնտեղ են հասնում:

---

37. ԿԱԼՈՑԻ ԺԱՄԱՆԱԿ

Պատահել է քեզ տեսնել, ընթերցող, մրջիւններին, որոնք ահագին քանակութեամբ վխտում են մի արտի մէջի, մի թմբի գլխի: Այդ փոքրիկ աշխատասէր կենդանիներից ոմանք մի-մի հունդ շալակած, տրնքտրնքալով տանում են իրանց

1) Բոստան—սեխաստան, *բոստանչի* բոստանը մշակողը:

ստորերկրեայ բունը, ոմանք ցորենի կամ գարու քիստով բեռնաւորուած, արիւն քրտինք մտնելով, շտապում են դէպի մի ուրիշ բուն: Այստեղ մի մրջիւն միւսի բերնից որսը խլել է կամենում, այնտեղ մրջիւնների բանակն իրանց թշնամի բուռի դէմ պատերազմ է մղում:

Ձիշդ այդպէս է գիւղական կեանքը կալոցի ժամանակ: Ջառամեալ ծերերից սկսած մինչև երեք-չորս տարեկան երեխայք կալերի մէջ զործում են: Մինը կամն է քշում, միւսը կալը շուռ տալիս, երրորդը ծեծուած օրանը (հաշանը) եղում—եղանում, չորրորդը թեղ անում: Սա մաղում է, նա ծանծը, (կէջոնքը) քարմաղում: Յանկարծ ամպերը թըխպեցին. գիւղացին ամէն բան թողած՝ շտապում է մխիթայն կալը ժողովել և իրան դառը քրտինքով ձեռք բերած հացահատիկները պահել, պատսպարել անձրևից: Դադարում է անձրևը. մի քանի ժամից կամ մի երկու օրից չորանում է գետինը և կալերը նորից փռւում են. բոպէական հանգստութիւնը չքանում է: Ամէնքը՝ թէ մեծ և թէ փոքր, նորից ձեռք են առնում ընդհատուած գործը, նոր եռանդ, նոր աշխոյժ է ընկնում ամէնքի սիրտը.—գործունէութիւնը տիրում է կալերում:

38. ԿԱԼԻ ԵՐԳ

Մեր գիւղացին երբ տեսնում է՝
Լծած եզը տնքալիս,
Երբ արևից նա այրւում է՝
Խուրձը *հաշան* անելիս,
Կաման վերայ երբ կանգնում է՝
Ջուխտ եզներին քշելիս,
Ահա այսպէս նա երգում է
Իրան կալը կալսելիս.
«Ե՛զը չան, կա՛լ արա, կալիդ մա՛ն արա,

Հասկերը փշրիր, ցորեն դուրս արա,
Հաշանն տրորիր, լաւ դարմանն արա։
Ես ու դու մին ենք—իրար եղբայր ենք,
Մինչև երեկոյ իրար հետ տանջուենք.
Ես երեկոյեան կալը կը*թեղեմ*,
Դէպի կանաչ խոտ քեզ բաց կըթողնեմ.
Լուսնակ գիշերին թեղը կըքամեմ,
Դարմանից ցորենն մեղմով կըջոկեմ,
Դարմանն մղանով մարագը կածեմ,
Ցորենն էլ ուրախ ամբարս կըլցնեմ.
Երբ որ ձմեռը կըգայ, կըմրսենք,
Դու՛ք դարման կուտէք, մենք ցորնով կապրենք.
Ե՛ղը ջան, կալ արա՛,
Կալիդ ման արա՛...»

«Ե՛ղը ջան, եղբայր, դու իմ աչ կուռն ես,
Իմ թև ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենալ,
Կալ էլ չեմ կալսիլ, ցորեն ստանալ։
Փողի պարտք ունիմ՝ ցորնից եմ տալիս,
Հարկ ու *ըզգառը* ցորնից դուրս գալիս.
Տան կարիքները ցորնով եմ հոգում,
Տէրտէրի հարկը ցորեն վճարում.
Աղքատ-անճարին ցորեն եմ բաշխում,
Աշըղի, որբի՝ ցորնից մաս հանում.
Խօսքով, ցորենը մեր բոլոր յոյսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.
Ման տուր, իմ եղը՛,
Ապրի քո վիզը՛...»։

39. ԿԱՐԿՈՒՏ

Անցել էր գարուն, ամառ էր մտել, բիւր անթիւ բարիք գիւղացուն բերել, կանաչ արտերի ցորենն ու գարին, կորեկն ու հաճար ուռել ու լցուել, ոսկեգոյն ներկուել, և այգիների խնձորն ու տանձը, դամբուկն ու ծիրան հասել, կարմրել, ծառերը բռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ, դդումն ու գաղար փորներն ուռցրել, մեղրի համ առել...

Գետը պարզել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ գաշտերը փուռել, ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բուն դրել, ձագուկներ հանել...

Սողում էր օձը խոտերի միջից, մեղուն թռչկոտում ծաղկից դէպ ծաղիկ. կրիան էլ վիզը հանած պատեանից, քաշուում, քաշկրտուում թփերի տակից...

Պայծառ էր օրը. պայծառ էր երկինք. ուրախ են թըռչունք, անասուն, մարդիկ...

Բայց այն ինչ ամպ է, որ սարի գլխից, գալով գալիս է ու իրան յետքից՝ կարծես շղթայած քաշում է բերում մեծ ու սև ամպեր՝ ամեն տեղ փուռում...

Մի րոպէ ևս խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդաց. փայլակն ու կայծակ իրարու խառնած, մարդկանց սրտերը ահ ու դող դցեց։ Ռընչաց քամին, շարժուեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափուեց. անձրևի ետքից սառցէ գնդակներ, չրը՛խ ու շրը՛խ, երկիր գլորուեց։ Թափուում է, թափուում, սար ու ձոր ծածկուում, ոչ դաշտ է հարցնում, ոչ այգի ասում։

«Ա՛խ, կարկո՛ւտ, կարկո՛ւտ, կանչում են մարդիկ.
Այս ինչ պատիժ է. խնայէ՛, երկինք...»։

Փերը ծնկաչոք, արտասուքն աչքին, աստուած է կանչում՝ խնայել երկրին. պառաւը հանած երկնէ կասկարան բակն

է շպրտում ու նզով կարդում. Հարս ու աղջիկներ, պատի տակ շարուած, սուր դանակներով կարկուտ են կտրում՝ երկնքին նայում. իսկ նրանց մօտը մշակ, երկրագործ յուսահատ կանգնած, ձեռը իւր ծոցում, ակն-վա՛խ է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանդերի մէջ այս ինչ շփոթ է ու իրարանցում... Հօտը ցրուել է, նախիրը վախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել, թռչունքը թռել, բունի մէջ պահուել, հովիւ, հօրթաբած, փայտհատ, կովարած՝ ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած...

Դադարեց կարկուտ. որոտը լռեց.—ամպերի ճեղքից արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ:

Այգեպանը վազեց իւր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած.—ծառեր տերևթափ, ճիւղերը կոտրըտուած, բոլոր պտուղները կարկտահար եղած.—«վա՛յ իմ աշխատանք, ափսո՛ս իմ այգի», ասաց, հեռացաւ, աչքերը լցուած...

Արտատէրը գնաց, իր արտը հասաւ: Թուլացան ոտները, սևացան աչքերը, երբ տեսաւ հասկը ջարդուած, փշրուած, հողին հաւասար, անգութ հեղեղից աւազով ծածկուած. «Կորա՛ւ իմ յոյսը, փչացա՛ւ իմ արտ», ասաց ու գնաց սիրտը մորմոքուած...

Դրսում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց բուն. բայց ա՛խ, ինչ տեսան. բունը աւերուած, ձագուկներն ընկած. չորսից միայն մէկն ողջ էր մնացած, իսկ այն միւսները թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են, աչքները փակել, որպէս գլուխը, որպէս թևիկը կարկտից չարդուել:

Ծվվաց թռչունը, սգաց իւր ձագուկ,
Դէս ու դէն ընկաւ՝ արեց ողբ ու սուգ...

Այսպէս ամեն տեղ, որ մի ժամ առաջ
Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,
Այժմ յաջորդեց, կարկտի շնորհիւ,
Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ...

40. Ա Ղ Օ Թ Ք

„Տէր, եթէ զշրթունս իմ բանաս,
Բերանն իմ երգեսցէ զօրհնութիւնս քո“:

Դիշեր ու ցերեկ, Տէր, Քո սուրբ անուան
Մենք պիտի լինինք յաւէտ փառաբան.
Թէ արև ծագէ, քարոզ քո փառաց,
Թէ դիշեր հասնի, պարգևդ ողորմած.
Մենք խոնարհ հոգով Քո մեծ բարութեան,
Կանգնած ենք պատրաստ լինել սրբաբան:

Բայց մարդիկ վաղուց, մոռացած քո խրատ,
Դահիճ են դարձել եղբարցն Հարազատ.
Ուրացած անմահ խօսքդ մարդասէր,
Չգօրն աշխարհին դարձել է արդ տէր,
Եւ փոքրը չունի այլ ևս բերան՝
Կարդալ սաղմոսը Քո օրհներգութեան:

Ընդունի՛ր արդ, Տէր. մեր խունկն աղօթից,
Տո՛ւր մեզ վայելել խոստացած բաղդից՝
Թէ վաստակեալներն ու բեռնաւորներ
Պիտի գտանեն հանգիստ երկնանուէր.
Եւ բաց մեր շրթունք, Տէր Ադովնայի,
Երգել օրհնութիւն Քո անբաւ փառքի:

41. Ա Շ Ո Ւ Ն Ք

Աշունքացաւ։ Սրարատեան դաշտի կանաչ այգինները, որոնք մարդու սիրտը ուրախացնում էին իրանց գեղեցիկ տեսքովն ու անուշ հոտովը, Աստուծուց փառաւ կանաչ խալիչաներովը, հազար տեսակ ծաղիկներովը, հիմա այն դրուխեանն էին, որ մարդու սիրտ չէր տալիս, որ վերան նայէ. խաղողի թփերը, որ մի օր գլուխ գլխի կպցրած՝ իրանց սաթի նման ողկոյզներով մարդիս բերանի ջուրը բերում էին ու նրա երեսին ծիծաղում, հիմա մեռած մարդկանց գերեզմանների նման՝ հողի կոյտերով էին ծածկուած։ Ծառերը, որ մի թեթև քամուց իրանց տերևներով տարուբերուում ու մարդու տխրած սիրտն էլ բաց էին անում, հիմա մերկացած, մի տերև էլ չես գտնիլ վրանները — չոր-չոր չոփերն են երևում միայն բիզ-բիզ։ Ջրերի ափերը, որ բազմերանգ խոտերի և ծաղիկների շատուլթիւնով՝ մարդու աչորժակը բաց էին անում, հիմա հէնց լմանաս թէ ուրթ օրէն մեռած մարդու երես են դարձել։ Ամէն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան է ներկայացնում։

Բայց գործի տէր մարդիկ նոր են սկսում ուրխանալ. այգու բաներից պրծել են ու դադարել. ունեցող — չունեցողն էլ հիմա տանիցը մաքուր հագնուած է դուրս գալիս։ Մարդ չկայ, որ իրան կարողութեան չափ գինի չունենայ։ Ով որ հոգս ունի, ծախում է գինին ու իրան տունը նորում, ամեռայ պատրաստութիւնը տեսնում։ Մի գիւղացի իւր ցորենի աւելորդը, միւսը իւր գինու ու արաղի մի մասը, երրորդը իւր ձեռատունկ ծառաստանի կտրուածքը՝ ամէն մարդ իւր առատութիւնից մի բաժին վաճառում, իրանց միւս պակասութիւնները ծածկում են։ Ում հասած աղջիկ կամ տղայ ունի, շտապում է հարսանիք անելու։ Գիւղացու ուրախութիւնները, մեծ մասամբ, աշնան սկզբներումն է լինում։

42. ԱՂՆԱՆ ՎԵՐՋԸ

Փչեց ցրտաշունչ քամին Հիւսիսից
Եւ այլանդակեց բնութեան պատկեր.
Մերկացան այգիքն իրանց զարդերից,
Մերկացան սար, ձոր, անտառ ու դաշտեր։

Մերկութիւն, այո, միայն մերկութիւն,
Այդ է երևում ամեն տեղ աչքին.
Կորան աշխարհի փայլ ու պերճութիւն,
Այժմ ամեն ինչ դունատ է, դեղին։

Կապոյտ երկինքը տխուր, ամպամած,
Էլ չի շողշողում լուսափայլ արև,
Երկրի երեսը մշուշով պատած՝
Երկնքից անվերջ թափւում է անձրև։

Լռել է սոխակ։ Կանաչ պարտիզում,
Ո՛հ, էլ չէ հընչում նորա դայլայլիկ.
Լռել է սարեակ. չուել է ծիծառ.
Էլ չի գեղգեղում սիրուն դեղձանիկ։

Կեռասն ու ծիրան, կարմրաթուշ խնձոր
Էլ չեն զարդարում պարտիզի ծառեր.
Այժմ նրանց տեղ մերկ ճրղանց վերայ
Խշշում են քամուց դեղնած տերևներ։

Անխօս նըստել է և այգեպանը
Իր մութ ու խոնաւ ցուրտ կացարանում,
Էլ ինչ սրտով պիտ՝ շրջի նա այգում,
Երբ մերկութիւն է նորա մէջ տիրում։

Սիզաւէտ դաշտում, ոսկեշող արտում
Արդէն դադրել են Հոգս ու աշխատանք.
Ձի շարժւում արօր, լուռ է սերմնացան,
Դաշտային կեանքի կորել են բերկրանք։

Փըչում է քամին, փըչում է ուժգին,
Ձըմրան գալուստը գուժում աշխարհին.
Նայում ես շուրջդ՝ սուգ, ամայութիւն,
Ողբում է երկինք, ողբում բնութիւն։

43. Ա Յ Ֆ Ե Կ Ո Ւ Թ

Յերեկը գիշերին յաղթելով՝ ցրիւ տուեց նրա թանձր մութը. մարդկանց քունը փախաւ գնաց աշխարհի տակը։ Սուրբ-Խաչի մեռելոցին, երկուշաբթի օրը, արևը դեռ նոր էր լուր գլուխը հանել, որ Հինգ—վեց Հարիւր Հոգի Կարբցիք ու Չանավանքցիք, կթոցները շալակներին, մի երկու ցամաք Հայ միջին, մօտեցան Աշտարակի այգիներին։ Աշտարակցիք այսօր մի մարդ են ուղարկում բանւորներ բռնելու։ Դեռ արևը նոր էր բարձրացել, որ այնքան բանւորներից մէկը չըմնաց. բոլորը ցրուեցան այգիները։ Քաղն սկսուեցաւ։ Խաղողի տեսակները՝ *հծապտուկը, քիշմիշին, ասկեարին, մնխալին, կոթռունջը, եզնաչքը, ճիլայը, եզանդարին*, մէկ խօսքով ինչքան պատուական խաղողներ կային, բոլորը թլթլում էին, բոլորը քաղող էին կանչում։ Կեանքը եռուն էր այգիներում։ Քաղող քաղողի, ուտող ուտողի, տանող տանողի էր։ Ադքատների, չունևւորների աչքն էլ լիքն է այդ օրերը։ Սրանից յետոյ, մինչև այգեկութի վերջը, ինչ որ այգեստէրերի դրութիւնն է, Աստուած ոչ շհանց տայ. մարդ որքան էլ Հարուստ լինի, Հազին այնպիսի ցնցոտի կըլինի, որ ծլանքներն ուռենու տերևի պէս

երկար-երկար քաշ ընկած կըլինին. բոլորը պատառոտուել են խաղողի թփերի մատներիցը կամ տաշտակներիցը։ Կանայքը, որոնք տանն են քնում, առաւօտենց շտապելով իրանց բանը կըպրծնեն ու դէպի այգին. մէկ խօսքով՝ մի մաքուր շոր չես գտնիլ, որ շիրտ եղած, կուպր դարձած չլինի։ Հէնց որ քաղից պրծան՝ բոլոր խաղողը ջոկըջկեցին. պահունին տուն տարան՝ կախան անելու, իսկ մնացածը հնձանը հաւաքեցին։ Քաղը վերջանալուց յետոյ՝ խաղողատէրերը և նոցա վարձաւորները ոտները Հանեցին, խտակ լուացան, Աստուծու անունը տուին, մտան առագաստի մէջն ու խաղողը տրորեցին. տրորելուց յետոյ դիրք դրին, ժողովեցին և վրան տախտակներ շարեցին, որ քամուի։ Մարդու սիրտ փառաւորւում է, երբ որ քաղցուն, Աշտարակցու սրտի ուրախութիւնը, նորա տարեկան ապրուստը, առու է լինում առագաստի միջով ու թափւում տաքարը։ Աշտարակցու սրտին գանգի ձայնից քաղցր է թւում այն ղընգղընգոցը, որ տաքարից լսւում է քաղցուն իր մէջը լցուելիս. բայց մանաւանդ ո՛րքան մեծ է լինում նրա ուրախութիւնը, երբոր, մին էլ ես տեսնում, տաքարը շրթունքներից հետ լցւում և քաղցուն եկած տեղիցը յետ է դառնում, առագաստումը լճանում, իմաց տալով իր տիրոջը, թէ ինձ կրիր, պրծիր, կարասներդ լցրու։ Քանի՛ ու քանի փառք և գոհութիւն է վեր ուղղում մարդ այս ժամանակը դէպի Արարիչը։

44. Ա Շ Ո Ւ Ն

Ամառն անցաւ վերստին.
Անցաւ ղեփիւռն էլ նախշուն.
Եւ թրփերի թարմ հոտին
Ձուտ յաջորդեց ցուրտ աշուն։
Կանաչազուրկ ու դեղին
Են դաշտօրայք ու լերինք.

Արդէն հովիւք էլ թողին
Իրանց մախաղն ու սրինգ։
Ամպերի մէջ՝ դիմասքօղ՝
Լուսակորոյս է արև.
Ձրկան զուարթ ու երգող
Թրռչունք ծառոց ըստորև։
Ձրկան թիթռունք գունսզարդ՝
Որ թրրթրռան սիրագին.
Ձրկան շուշան, ձրկան վարդ,
Որ նախանձեն մեխակին։
Ձրկան բուրմունք անուշակ,
Ո՛չ յասմիկ, ոչ շահոքրամ.
Ոչ էլ գողտրիկ մանիշակ
Եւ ոչ ճրճեաց խօլ երամ։
Եւ ոչ ճրպուռ, որ Հեղու
Իւր *Ճրղճղունները* ոստոց տակ.
Եւ ոչ փութկոտ ժիր մեղու,
Որ բերէ մեղր ի փեթակ։
Վեհ կաղնիներն անտերև
Գլուխնին ուղղեն դէպի վեր,
Ուստի կարկուտ և անձրև
Թափին՝ երկրիս տալ աւեր։
Գիշերներն էլ անմրուռնչ՝
Ձունին ո՛չ աստղ, ոչ լուսին.
—Մի քանի բու մահաշունչ
Իրարու հետ կը խօսին։

---

45. Ձ Մ Ե Ռ

Ֆարեկենդան էր։ Ձիւնն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզըկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճըրճըռում, ճաքճըքում էր և մարդու մարմինը սըրսըռացնում, ձայն տալիս։ Ամեն մէկ ծառի ճղներից, ամեն մէկ տան բաշից՝ հազար տեսակ սառուցի *լուլայ*, հազար տեսակ ձիւնի *քուլայ*՝ կախ էր եղել ու բիղ-բիղ իրար վրայ սառել։ Չէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել՝ մահուան դուռն ընկել։ Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, այստեղ-այնտեղ վայր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ, բունը մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն էր սպասում։ Գետերի, առուների երեսը սառուցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել և այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտերին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառուցի տակին տխուր տրտում քըլքըլում էր ու էլ յետ այստեղ-այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում։

Արեգակն այս առաւօտ, որ քնատեղից ու աղօթարանից գլուխը չբարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ չգցեց, շողքը (ճառագայթները) սարերի գագաթին, դաշտերի գլխին այնպէս էր փայլում, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս անդամանդ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին՝ դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրծքին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդի քիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին էլ կամ

ձորերը գցում, խեղդում կամ ճնումը թաղում, շունչը կտրում կամ ոտ ու գլուխ փետացած, ճանապարհից խուկում, սար ու ձոր գցում, խեղդում կամ քարեքար տալիս։

46. ՍԱՒՆԱՄԱՆԻՔ

Ձըմեռն է, ձըմեռ, սիրուն երեխէք,
Ձըմեռն է, և դուք դողում, մրսում էք.
Բայց դուք մենակ չէք, ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պէս դողում, սարսըռում։

Եւ գիտէք արդեօք ինչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարուած ծերը։
Ո՛հ, մի հարցնէք, ես սարսափում եմ,
Երբ դորա արարք մէկ-մէկ յիշում եմ.
Այդ անիրաւը ուր ոտք է դնում,
Մահ է տարածում ամեն կողմերում.
Երեսին առած ծերունու դիմակ,
Մեղնից ծածկում է բուն դէմքն այլանդակ։
Ձատ ժամանակ չէ, ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ.
Դորա երկիւղից գետը քար կտրեց,
Քըչքըչան առուն լռեց, պապանձուեց,
Դալար բոյսերը սառան, փէտացան,
Նախշուն հաւերը թըռան, հեռացան.
Բայց էլի շատին իր ճանկը գցեց,
Ռուք, բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցըրեց,
Սոխակի լեզուն տակիցը կտրեց...

Ջըրաղաց չըկայ—ջուրը սառել է.
Ճանապարհ չըկայ—ձիւնը կապել է.
Թէ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած,
Ողբում-լալիս են, մահուան դուռն ընկած։

Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լոյսը նուաճուել, խաւարն է տիրել.
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած...
Այսպէս է ահա սոսկալի ձմրան
Ալիքով ծածկած պատկերը դաժան...

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրուն երեխէք,
Եթէ ինձ նման դուք էլ մրսում էք,
Եկէք միասին մի հնար գըտնենք,
Ձըմրան ճանկերից մեր գլուխն ազատենք.
Ես իմ բազմամեայ հասակիս փորձով,
Պուք ձեր մանկական անարատ մտքով,
Եթէ կամենաք, խելք խելքի կըտանք,
Եւ ինչից ասես, կրակ կըստանանք—
Կրակ լուսատու, պայծառ, անսպառ,
Որ տաքացընէ սառնեղէն սըրտեր,
Որ կենդանացնէ գօսացած ձեռներ,
Որ հալեցընէ սառցապատ լեռներ...

---

47. ԻՄ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Տունը, ուր ես բնակւում եմ, մի բարձր և երկար շինութիւն է։ Նա շատ նոր չէ և պտնւում է Ղուշի քաղաքի մի հեռացած ծայրում, բաժանուած միւս տներից մեծ ու խոր ձորով, որ սկսւում է նորա հիւսիսային կողքից։ Այդ ձորը շատ

մռայլ տեսք ունի: Գարնանային հեղեղները տարէց տարի քանդում, խորացնում են նորան. զառիվայրը, որ սկսւում է տան պատերի մօտից, աւելի և աւելի ուղղաձիգ է դառնում:

Իմ վարձած երկու սենեակների առջև կայ մի փոքրիկ դստիկոն: Այդտեղից երևում է մեծ բլուրը, որի զառիվայր լանջերի վրայ խիտ կուտակուած են տները: Բայց միշտ իմ ուշադրութիւնը ամենից շատ գրաւում է մեր տան ներքին յարկը: Այդտեղ ամեն անգամ աչքիս երևում է սևացած մռայլ պատը մի փոքրիկ պատուհանով և նոյնպիսի դռնով, որ բացւում է դէպի ձորը: Սկզբում ես կարծում էի, թէ այդտեղ նկուղ է, ուր պահւում են անպէտք բաներ: Բայց շուտով իմացայ, որ դա բնակարան է մի փոքրիկ ընտանիքի, մի այրի մօր և մի փոքրիկ աղջկայ: Վերջինիս շատ անգամ էլ տեսնում շէմքում նստած, գլուխը ցած գցած, մենակ խաղալիս: Նորա անունը չեղինէ էր...

Բարձր, երկար տան միւս սենեակում կենում են մի քանի ուրիշ տնկիցներ:— Ահա իմ բոլոր հարևանները:

Ձմեռն է:

Տխուր ու ցուրտ օրերը անփոփոխ յաջորդում են միմեանց:

Ձիւնն ու ցեխը բոլորովին արգելում են տանից դուրս գալ: Տաք վառարանը թմրացնում է անդամները, իսկ ձմեռային երկար գիշերները բոլորովին ծուլացնում են մենակ մարդուն, որ սովոր է անփոփոխ ընկերութիւն վարել մի կոյտ գրքերի և մի գրչի հետ միայն: Ձմեռը իւր սառը կնիքը դրել է այդ մշտական ընկերների վրայ:

Տաղտկալի միանմանութիւնը մաշում է ինձ: Ի՞նչ կլինէր դրութիւնս, եթէ հարևան սենեակում չապրէր մի բազմամարդ ընտանիք, բաղկացած գլխաւորապէս փոքրիկ արարածներից: Մի պատ միայն բաժանում է ինձ նրանցից, բարակ պատ, որ, սակայն, չի կարողանում անջատել իմ հոգին այն ուրախ, անհոգ և մշտաճիճաղ կեանքից, որ նրա միւս կողմումն է

տիրում: Լուսաբացին այնտեղ արդէն ոտքի կանգնած է այդ աղմկաւոր աշխոյժ կեանքը, որ լռում է միայն ձմերային գիշերուայ կէսին: Անընդհատ լսւում են ծիծաղի, ուրախութեան, ոստիւնների ձայներ, լսւում են մանկական երգի կցկտուր, խառնիխուռն հնչիւնները. երբեմն լինում է և պար: Ծիծաղում է ընտանիքի մայրը, ծիծաղում են երեխաները, ուրախութեան ձայներ է արձակում խուլ ու մունջ փոքրիկ տղան: Ուրախութիւնը սրտի գործ է, անպատճառ լեզու չի հարկաւոր նրան արտայայտելու համար:

Այդ կենդանի աղաղակների ժամանակ գործել չի կարելի, և ես լուռ նստում եմ և ականջ դնում. լսում եմ պատի քամակին տիրող իրարանցումը, որ հոգում է օրուայ ապրուստը և հէնց այդ պատճառով զուարթարար, հրապուրիչ է ինձ համար: Լսում եմ և ինքս էլ ուրախանում, մինչև անգամ սկսում եմ երգել: Բայց լինում է ժամանակ, երբ երգեցողութիւնը խանգարում են ծանր ու զգոյշ քայլերը, որոնք անցնում են սենեակիս մօտով: Ընտանիքի հայրն է դա, որ գալիս է տուն ծանր աշխատանքից հանգստանալու: Եւ խոնջած անդամներին ուրիշ հանգստութիւն չկայ, բացի այդ աղմուկով լիքը սենեակը: Երջանիկ մարդ:

Երեկոն մօտենում է: Մոխրագոյն ամպերի տակ հետզհետէ հաստատւում է խաւարը: Ես դուրս եմ գալիս դստիկոնը՝ ծառայիս կանչելու համար: Ձիւնի առատ տարափը թափւում է մեծ եռանդով. ձորը արդէն մթնել է, աւելի ևս տգեղացնելով իր կերպարանքը: Կիսամթութեան մէջ ես նկատում եմ մի մարդկային պատկեր, մի ուրուական, որ ձորի խորութիւնից բարձրանում է նեղ զառիվեր շաւիղով, որ դեռ նշմարելի է ձիւնի մէջ: Նորա մարմինը խոնարհուած է մի ծանրոցի տակ, քայլերը դողդոջուն. նա քարշ է տալիս իւր ահագին ասիական կօշիկները, միևնոյն ժամանակ ոյժ է գործ դնում յետևից եկողի համար էլ, որ կպած է նրա կանացի հագուստի փեշից:

Պատուհանին մոտանում եմ, ուշադրությունով նայում եմ այդ պատկերին, որ նոյնինքն աղքատությունն է: Ահա նա բոլորովին դուրս եկաւ ձորից և կանգնած է փոքրիկ դռան առաջ: Դա ներքին յարկի բնակչուհին է, այն միայնակ կինը: Գլխի վրայ կրում է լուացքի ահագին կապոցը. իսկ նրա յետևից եկողը աղջիկն է՝ չեղինէն: Փոքրիկ արարածը լռիկ մնջիկ հեկեկում է. նրա գլուխն ու դէմքը փաթաթած են ցնցոտիներով: Նա հիւանդ է:

Խեղճ...

Նրա համար պատկելու մի տաք անկիւն չկայ... Ո՛չ մի տեղ...

48. Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը.
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարուիլ ցրտից:
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ-պատառ,
Ձունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին՝
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր,
Այս խըղճալի աղքատը,
Այն ցրտումը, ոտաբոբիկ,
Կանգնած ժամի դռնումը.

Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին՝
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր նրա դրանում
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորա բարեկամ.
Այժմ զրկուած ամեն բանից,
Ձունի անգամ հացի դինն՝
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանում էր, մազը սանրում
Կրքիայի սանրով.
Նա հագնում էր բէհէզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին,
Նա չըգիտէր ինչ ասել է
Կարօտութիւնն աղճատին:
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Ձունի հագուստ թէև հին՝

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան՝ «Խղճուկ,
Ե՛կ դու մեզ մօտ, մենք կամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն»։
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին՝
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

49. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Մի անգամ մարդու մարմնի անդամները վիճեցին միմեանց հետ և վճռեցին չծառայել իրար։ Ոտներն ասացին՝ ինչի՞ մենք պէտք է կրենք մեզ վրայ ամբողջ մարմինը. թող նա իրան համար ուրիշ ոտներ շինէ և ման գայ՝ որքան կամենում է։ Ձեռները նոյնպէս ասացին՝ մենք այլ ևս չենք կամենում ուրիշների համար ծառայի պաշտօն վարել, շինեցէք ձեզ համար ուրիշ ձեռներ և թող նրանք գործեն։ Բերանը փընթփընթաց՝ հապա ես յիմար կըլինիմ, որ ոչինչ օգուտ չունենալով՝ ստամոքսի համար սկսեմ կերակուր ծամել, որ նա յետոյ պարոնի նման ձգուած, մարսի նրան. չէ, թող իրան համար ուրիշ բերան գտնէ. ես այսուհետև էլ չեմ կամենում նրան ծառայել։ Աչքերն ևս շատ զարմանում էին, որ իրանք պէտք է նայեն ամբողջ մարմնին և շարունակ հսկողութեան մէջ լինին։ Այսպէս խօսեցան միմեանց հետ մարդու մարմնի բոլոր անդամները և վճռեցին այլևս միմեանց չծառայել։ Բայց գիտէք ինչ պատահեցաւ։ Որովհետև ոտները չէին կամենում մանգալ, ձեռները դադարեցին գործ շինելուց, բերանն ևս չէը ուտում և աչքերը վակուեցան, ապա և ամբողջ մարմինը, անսնուռնդ և անշարժ մնալով, սկսեց թուլանալ, նիհարիլ և վոքը էր մնացել, որ մեռնէր։ Բոլոր անդամները, որոնցից

կազմուած էր մարմինը, ծանրացան և աւելի վատթար վիճակի մէջ կրնկնէին, եթէ չըհասկանային, թէ ո՛րքան անմիտ է իրանց վարմունքը: «Ո՛չ, վատ է այս տեսակ ապրիլը», մըտածեցին նրանք, հաշտուեցան և սկսեցին ըստ առաջնոյն միասին և միաբան գործել: Այնուհետև ամբողջ մարմինն էլ ուղղուեցաւ, նորոգուեցաւ և առողջ, ուժեղ դիրք ստացաւ:

50. ՈՍՏԻԿ

—Ո՞ւր ես առաջ գընում, խեղճ ոստիկ ծառին,
Տես չըձրգեն քեզ ալիք անդունդը ծովին,
Ինչպէս անտէր որբիկ՝ թշուառ, անպաշտպան,
Որ ընկել է ձեռքը չարանենգ մարդկան:
Ձես ունենալ, ոստիկ, ազատութեան հընար.
Ջոհ կըլինիս, խեղճիկ, ալեաց չարաչար»:

«Ձեմ զարհուրում ծովից, ոստիկը ասաց.
Կեանքս արդէն կորել է, վաղուց եմ ցամքած.
Չարազատ այն ծառէն ինձ պոկեց Հովը,
Չիմի ինչ, թող տանէ, ուր կուզէ, ծովը:
Այսուհետև ինչն է էլ ինձ մըխիթար.
Գալար ծառին կպչելու էլ չունիմ հընար»:

---

51. ԱՐԱՄ

(Արտաքին զգայարանք)

Արամը շատ շուտ զարթեցաւ, բացեց իւր աչքերի վարագոյրները՝ երկար ու թուխ *արտեւանունքը*. նրա յետևից շարժուեցան, բարձրացան աչքի ծածկոցները—*շարժական*

կոպերը: Արեգակի ճառագայթները ներս մտան սենեակը, լուսաւորեցին պատուհանում դրած ծաղկամանը և պատի վրայ կախած փոքրիկ գանգրաւոր մանուկի պատկերը, որոնց վրայից արտափայլելով՝ ընկան Արամի փոքրիկ աչերի *ոսպի* վրայ, անցան ջրային մասի միջով և պատկերացան *ցանցաթաղանթի* վրայ: Այնտեղ նեարդային մոխրագոյն թելերը յափշտակեցին նրանց և հաղորդեցին գլխի ուղեղին, որի միջնորդութեամբ իսկոյն ամենայն բան լմացաւ տանուտէրը—հոգին: «Ա՜, արդէն լուսացել է և ինչպէս գեղեցիկ առաւօտ է» ասաց Արամը և իսկոյն վեր թռաւ անկողնուց: Նա ձեռներով շփեց իւր գեղեցիկ, դուրս ցցուած ճակատը և արագապէս սկսեց հագնուիլ: Հագնուելուց յետոյ՝ նա շտապով ձեռներն ու երեսը սառը ջրով լուացաւ և մաքուր երեսսրբիչով սրբեց: Արամը սառը ջրի շօշափումից աւելի և ևս զուարթացաւ, կենդանացաւ:

Այդ րոպէին էր, որ օդի արագ հոսանքը ներս մտաւ նրա ականջը, ցնցեց խողովակի առաջը կապող *թմբկամաշկը* և նրա յետևից շարժուեցան երեք փոքրիկ ոսկրները՝ *մուրճը, սալը* և *սապանդակը*: Այս փոքրիկ շփոթութիւնը ականջի *հեղանիւթին* շարժողութիւն պատճառեց, որի միջի քնքոյշ նեարդը՝ այդ շարժողութիւնից զրդռուելով, յանձնեց դորա տպաւորութիւնը ուղեղին: Արամը եռանդագին կոչեց. «Ա՜խ, ինչպէս քաղցր է երգում մեր պարտիզում թռչնակը»:

Արամը մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս հանեց դէպի պարտէզ և կամենում էր զուարճանալ թռչունի գեղեցիկ երգով. բայց այդ րոպէին ծաղկային անուշահոտ փոշիով լիքը օդը, ներս մտնելով նորա մաքուր քթածակերից, շօշափեց այնտեղ տարածուած *լորձային մաշկը*: Ծաղկի փոշինեըը գրգռեցին նորա մէջ ձիւղաւորուած նեարդերը, իսկ սորանք այդ տպաւորութիւնը հաղորդեցին մայր ուղեղին և իմացրին նորան, թէ ինչ է պատահում իւր շուրջը: Լեզուի

նեարդերը շարժուեցան և Արամը ուրախացին բացականչեց. «Ի՞նչ գեղեցիկ անուշահոտութիւն է բարձրանում մեր պարտիզի ծաղիկներից»:

Արամը կամենում էր դուրս գնալ պարտէզը, փունջ կապել այդ անուշահոտ ծաղիկներից. բայց այդ րոպէին օդը մերձակայ սենեակից մօտեցրեց նորա շրթունքներին և լեզուին սուրջից, սերից և պատրաստի նախաճաշիկից բարձրացած խոնաւութիւնը: Նորա բերանում առատ լորձունք գոյացաւ, բերանի և լեզուի *ծրծիկների* նեարդերը յափշտակեցին այդ խոնաւութիւնը, հաղորդեցին գլխի ուղեղային զանգուածին և տանուտէրը—հոգին, կարծես, ասաց Արամին, «Նախաճաշիկը պատրաստ է, իսկ դու ուտելու ցանկութիւն ունիս»: Արամը ուրախ մտաւ սեղանատունն, վազեց, ողջունեց իր մօրը. նորա ձեռների նեարդերը շարժուեցան և ահա նա մատներով *շօշափեց*, թէ որքան փափուկ է այն հացը, որ նա վերցրեց և սկսեց ախորժակով ուտել: Նախաճաշելուց յետոյ նա գուարթագին խաղում ու վազվզում էր պարտիզում և ծաղիկների տեսքով ու նոցա անուշահոտութեամբ զմայլում էր:

52. ՄԱՆՈՒԶԱԿ

Ո՜հ, մի ողբալ դու, թառամած
Եւ դալկացած մանուշակ,
Որ քո անոյշ բոյրն առած,
Քեզ ձգեցին ոտի տակ:

Աւելի պարզ էր շողշողում,
Մեր գարունը մանկութեան,
Բայց մեզ համար այս աշխարհում
Նա չքացաւ յաւիտեան:

53. ԳԱՐԵԳԻՆ

(Գլուխ)

Գարեգինը երբ ծնուեցաւ, շատ փոքր էր և թոյլ, ինչպէս առհասարակ թոյլ են լինում բոլոր նորածինները. նրա գլուխը այս ու այն կողմն էր տատանւում, որովհետև դեռ ոսկրներ չունէր: Գլխի ճաքուռները (ղըրճ-ղըրճուկները) իրանց ասեղնաւոր ծայրերով դեռ չէին միաւորուել միմեանց հետ: Սկզբումը Գարեգինը միայն ճչում էր, իսկ փոքր ժամանակից յետոյ աւելի բարձրաձայն էր ցանկութիւն յայտնում ուտելու. նա այնպէս դուռում ու լաց էր լինում, որ կարծես ողջ տունը իրանն է. միևնոյն բանը նա անում էր, երբ անհանգիստ էր պարկացրած լինում, կամ երբ նրա բարակ ու կարմիր մաշկը փոքր ինչ ցուրտ էր զգում: Նրա բերանի, լեզուի ու շնչափողի կապերը դեռ այնքան ամրացած չէին, որ կարողանային շրջապատողներին հասկանալի ձայնով արտայայտել նրա զգացմունքը:

Գլխի ուղեղն էլ դեռ այնքան ամրացած չէր. առհասարակ նրա գլուխը դեռ կանոնաւորուած չէր, այս պատճառով էլ չէր կարողանում նրան գործ ածել, ինչպէս իրան պէտք էր և յարմար: Գարեգնի բերանում դեռ ատամները չկային, շրթունքները ձգւում էին դէպի ամենայն բան, որ մերձենում էր իրանց և կամենում էին նրան ներս քաշել:

Բայց սակաւ առ սակաւ նրա *անշարժ ծնօտի* և ստորին *շարժական ծնօտի* վրայ սկսան ուռչիլ ու կարմրիլ լնդերքը և նոցա տակից դուրս երևեցան առաջին երկու *կտրող* ատամները, որոնք սպիտակ էին և գեղեցիկ: Այն ժամանակ Գարեգինը աւելի էր աշխատում ամենայն բան բերանը կոխել, որովհետև նրա լնդերքը սաստիկ քոր էին գալիս: Գարեգնի մարմնի մէջ այդ ժամանակ շատ ֆօսֆօր ու կիր էր ժողովուել. նորա ճաճառներն սկսել էին պնդանալ, ոսկր դառնալ. Հոգին և

սկսել էր իր առաջին դործողութիւնները։ Գարեգինն սկսեց ճանաչել հօրը, մօրը, ժպտալ նոցա դիմացը, սկսեց ճանաչել և այն առարկաներից շատերը, որոնք միշտ շրջապատում էին նորան։ Բայց միևնոյն ժամանակ նա այժմ աւելի էր հիւանդանում, նիհարանում, գոռում, լաց լինում։ Այն սպիտակ ոսկրները, որոնք իրանց արմատից ծլում-շարւում էին նրա ծնօտի վրայ, ինչպէս երևում է, շատ էին անհանգիստ անում նրան։

Գարեգինը փոքր առ փոքր մեծանում էր։ Աստիճանաբար նրա գլուխը կանոնաւորուեցաւ, կլորացաւ, դուրս ցցուած ճակատից սկսած դէպի բարձր՝ *գագաթը*, *ծոծրակը* և *քունքերի* մի մասը գանգրաւոր մազերով ծածկուեցան, որոնց արմատները գլխի մաշկի մէջ եղած մածուցիկ հիւթը ծծելով՝ ամրապէս հիմնաւորուեցան։ Եթէ նա պատահմամբ իւր գլուխը մօտեցնում էր ճրագին, այդ մազերը ճրճռում ու կծկւում էին և եղջերայինն անախորժ հոտ էին արձակում. բայց այդ ժամանակ Գարեգինն ամենևին ցաւ չէր զգում. իսկ երբ այդ փորձանքին հանդիպում էին նրա փափկիկ մատները, նա ցաւից աղաղակ էր բարձրացնում։ Այսպէս փոքր առ փոքր նրա երկու ծնօտների վրայ ատամներ դուրս եկան, որոնց երեսը ծածկուած էր մաքուր և սպիտակ *էմալով* (արծնապակի)։ Այդ ատամները թուով քսանի հասան։ Գարեգինն էլ այն մանուկը չէր. նրա դէմքն աւելի լոհուն կերպարանք էր ստացել։ Դէմքի վրայ աւելի փայլուն բծեր էին ձգուել։ Նորա փափկիկ, վարդագոյն շրթունքներն այժմ պարզ արտասանում էին ոչ թէ անկապ բառեր, այլ ամբողջ պարբերութիւններ։ Այժմ ոչ թէ նա չորեքթաթ էր անում, կամ առաջուայ պէս կարասիներից բռնած էր ման գալիս, այլ ազատ ու համարձակ թրըչկոտում էր ու խաղում։

Ահա Գարեգինը նստած է սեղանի մօտ և պատրաստում է իւր դասերը. նա այժմ գիտէ, որ թէև ինքը շատ մեծ չէ, բայց մարդ է, որովհետև այնպիսի հոգի և այնպիսի մարմին ունի, ինչպէս միւս մարդիկը։ Գարեգինը շատ բան գիտէ. նա գիտէ և այն, որ իւր գլուխը բաղկանում է մի քանի մասերից, որոնցից առաջին մասը կոչւում է դէմք, վերին մասը—գագաթ, յետին մասը—ծոծրակ, իսկ կողմնային մասերը—քունքեր։ Դէմքն ունի ճակատ, յօնքեր, աչքեր, քիթ, այտեր, թշեր, բերան և ծնօտ. վերջինս բաղկացած է վերին և ստորին ծամելիքից, որոնց վրայ շարուած են սպիտակ ատամներ։ Ատամների թիւը (չափահասներինը) 32 է։ Ատամները բաժանւում են՝ առաջնատամների, որոնք կտրող էլ են կոչւում. նոցա աջ և ձախ կողմումը գտնւում են ժանիքները, իսկ ժանիքներից յետոյ—սեղանատամները, իւրաքանչիւր ծնօտի վրայ հինգ-հինգ ամեն մի կողմից։ Առաջնատամներով կտրում են ուտելիքը, ժանիքներով նրան բռնում կամ պատառոտում են, իսկ սեղանատամներով մանրացնում են նորան, որպէս երկանով, ուստի դորանք աղօրիք էլ են կոչւում։

Այս բոլոր բաներն այժմ Գարեգինը լաւ և գիտակցաբար գիտէ, հասկանում է, կարող է հաղորդել ուրիշներին. բայց երբ նա աւելի կըմեծանայ և իւր կրթութեան վրայ հիմնաւորապէս ուշք կը դարձնէ և երբ նրա վերջին սեղանատամներն էլ դուրս կըգան, որոնք կոչւում են հասունութեան ատամներ, այն ժամանակ նա շատ բան կըսովորի և առաւել հիմնաւորապէս։

54. ՄԱՆՈՒԿԻՆ

Ինչո՞ւ այդպէս ամբողջ օրը
Ձայչարւում ես, անչափ տանջւում,
Մինթէ քեզ էլ մթնոլորդը
Ծանր է դալիս, ճանր է ազդում։

Դու մանուկ ես. դեռ քեզ շատ օր
Խոստանում է քո արևը.
Դու դեռ ժպտա՛, խաղա՛ անհոգ
Եւ հեզ ընկէր մօրըդ գիրկը,
Ու թոթովիր մի երգ սիրուն
Քո մանկական անուշ ձայնով,
Ու միշտ յիշիր դու այն անուն,
Որ պաշտում է քեզ իւր սիրով.
Մայրդ է որ օր ու գիշեր
Անթարթ աչքով քեզ է հսկում,
Եւ կարդալով շատ աղօթքներ,
Երկար օրեր է միշտ խընդրում։
Խաղա՛, մանուկ, թրթրթալով,
Քնէր, զարթիր սիրահէզիկ.
Մայրդ կ'երգէ քեզ փարելով,
Որ շատ ապրիս դու երջանիկ։

---

55. ԱՐՁԱԻԻՐԸ

(Ներքին գործարաններ)

Առաւօտեան վաղ վեր կենալով՝ Արշաւիրը լսեց մի բաժակ կաթ, հետն էլ կերաւ մի կտոր հաց և գնաց ուսումնարան։ Նա վեր էր առել իւր պայուսակը, որի մէջ դրած էին նորա գրքերը և միւս դասական իրեղէնները, և մտածում էր այդ օրուան դասերի վրայ, իսկ հացը, որ կերել էր նա, այդ րոպէին ճանապարհորդում էր նրա մարմնի մէջ։ Ատամները լաւ ծամել էին նրան, լորձիւնի բշտիկները նուրբ լորձիւնով պատել, իսկ փափուկ լեզուն շտապով ներս էր մղել որկորի մէջ։ Ճանապարհին նա քիչ մնաց՝ որ ընկնէր շնչափողի մէջ, բայց փոքրիկ մսեայ խցանը—ՙատլ՚ը ծածկեց նրա բերանը

և ծամած պատառը սահելով գլորուեցաւ դէպի ցած և ընկաւ այն մսեայ պարկի մէջ, որ ստամոքս է կոչւում։ Այդտեղ տաք էր ու մուրճն և որ կողմը դառնում էր, ամենայն կողմից նրան շրջապատում էր ստամոքսային հիւթը, որ կողքից պատրաստում էր կարծր փայծաղը։ Բայց նորան չէր վիճակուած երկար ժամանակ շրջել այնտեղ, որովհետև իւր ընկեր կաթնի հետ ստամոքսային հիւթի մէջ լուծուելով՝ դարձաւ մի տեսակ թանձր խիւս։ Խիւսը ստամոքսի ստորին դրռնով ցած իջաւ. այդտեղ նրա հետ խառնուեցան լեղու կաթիլները և աւելի կերպարանափոխուած՝ աղիքներով առաջ գնացին։ Այդ ուղին առաջ լայն անցք էր. փոքր առ փոքր նա նեղանում ու նեղանում էր և հէնց ինքը հիւթն էլ աստիճանաբար փոխւում էր։ Այդ նեղ անցքերից անցնելիս՝ նա կարմիր զգեստ էր հագել և իրրև արիւն այլ և այլ երակներով վազում էր դէպի մարմնի ամենայն կողմերը։ Արիւնը որքան հեռանում էր, այնքան իւր պլտանի մասերով սննդելով մարմնի այլ և այլ մասերը, ինքն ստանում էր նոցանից անպէտք հիւթեր և նրա կաթիլները աստիճանաբար մգանում էին։ Կարծր ոսկորներին մօտենալով՝ նա իւր դեղին գիճութինից նորանց էլ իրանց սնունդը տուեց—ֆոսֆոր և կիր։ Եւ ահա նա բոլորովին մգացած, ամբողջ մարմինը ման եկած, ուղեղի մեծագործութիւններին և շարունակ սեղմուող ու բացուող մկնամսերի գործունէութեանը ականատես լինելուց յետոյ, վերջապէս թափւում է այն աւազանը, որ ունի երկու մուտք և երկու ելք և որին մարդիկ *սիրտ* են անուանում։

Սիրտը ձևով տանձի նման է։ Կաթիլ առ կաթիլ վերևից ու ներքևից ներս են մտնում և դուրս են գալիս այդ մսեղէն պարկից արեան կաթիլները և նորա դռնակներն ուրիշ գործ չունին, բացի փակուիլն ու բացուիլը։ Սիրտը մսեղէն միջնապատով բաժանուում է երկու հաւասար մասերի՝ աջակողմեան և ձախակողմեան, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս երկու բա-

ժանմունք ունի՝ վերին և ստորին: Անմաքուր արեան կաթիլները թափում են սրտի աջակողմեան վերնասենեակը և հրելով ու բանալով փոքրիկ դռնակը, մտնում են աջակողմեան *սրտախորշը*: Բայց սիրտը անմաքուր արիւն չի սիրում, ուստի մրկնամսերի անդադար սեղմուելովը մի այլ ճանապարհով հալածում է նրան դէպի այն ընդարձակ թևերը, որոնք կազմուած են բազմաթիւ բշտիկներից: Մարդիկ դոցա *թոքեր* են անուանում: Այդտեղ կաթիլները հանդիպում են օդին, որով լցւում ու դաղարկւում են թոքերը: Օդը քթի և բերանի խոռոչներից արագապէս մտնելով, անցնում է դէպի թոքերի բշտիկները, շուտափոյթ նայում է նորեկ հիւրերին, որոնք փաթաթուած են մուգ վերարկուի մէջ, մօտենում է նոցա և նրա այրող ոյժը—*թթուածինը* յափշտակում է նրա մուգ ծածկոցն ու դորա փոխարէն տալիս է վարդագոյն զգեստ. այդ րոպէին սեղմւում են թոքերի բշտիկները և օդը արագապէս դուրս թռչելով միևնոյն ճանապարհով՝ տանում է իւր հետ արեան անպէտք մասը—ածխային թթուն: Արեան մաքուր վարդագոյն կաթիլները թողնելով թոքերը, նորից վերադառնում են դէպի սիրտը, բայց այժմ մտնում են նորա ձախակողմեան մասը—նախ վերին բաժանմունքը, ապա ստորին և այնտեղից դուրս գալով՝ դարձեալ սկսում են իրանց վաղեմի ճանապարհորդութիւնը: Այդպիսով նոքա տալիս են Արշաւիրին կեանք, ոյժ և առողջութիւն:

Արշաւիրն ուսումնասրանում աշխատում էր, առանց իմանալու, թէ ինչ բաներ են կատարւում իրան ներսը: Նա մինչև անգամ մոռացել էր, թէ ինքը հայ ու կաթն է կերել:

56. ՀԵՏԱՔՐՔԻՐ

«Բարի եկար, հազար բարի, բ՛արեկամ,
Ո՞ւր էիր՝ տեսնամ»:

—«Թանգարանից եմ գալիս.
Շորս ժամ եղաւ մանգալիս:
Ամենայն կողմ պըտրտեցի, պըրպըտացի,
Բոլորը տեսայ, ոչինչ չըթողի:

Աշխարհումս ինչեր են եղել,
Իրաւ խելքից, մըտքից վեր.
Ո՛ր կողմ նայիս՝ արմանք-զարմանք, հրաշալիք.
Ո՞րն էլ դիտես՝ մէկը միւսից գեղեցիկ.
Ի՜նչ գազաններ, ինչ թռչուններ,
Թիթեռնիկներ, բըզէզներ,
Ի՜նչ զատիկներ, ինչ կերպ ճանճեր,
Որքա՜ն ոսկի եղնակներ,
Որը կանաչ՝ զմրուխտի պէս.
Որը կարմիր՝ բուստի պէս.
Հապա մանրիկ բոտոտնեբը. հաւատա՛,
Գընդասեղի գլխից էլ շատ փոքրը կայ»:

«Հապա փղին ինչ ասիր.
Ի՜նչ ահագին վիթխարի.
Հարկաւ մտքով կարծեցիր,
Թէ մի լեռ է սոսկալի»:

—«Մինթէ փիղը այնտեղ էր»:
«Այնտեղ էր. ինչ չըտեսա՞ր»:

—«Ափսո՜ս, ինչ ասեմ, ա՛ղպեր,
Փիղն աչքովս չի ընկել:

---

57. ՀՐԱՇԱԼԻ ՏՆԱԿ

Ես մի հրաշալի տուն եմ ճանաչում, որի մէջ ամեն բան կարգաւորուած է և չունի ոչինչ պակասութիւն: Նա ունի կանոնաւոր աղօրիք, ունի և խոհանոց, ուր գիշեր ցերեկ տաք կերակուր է պատրաստւում: Տունը շատ մուտքեր և անցքեր ունի, որոնցով արիացան ծառաները կրում են տաք կերակուրը դէպի նրա ամենայն անկիւնները: Տունը մի հմուտ տնտես ունի. նա այնքան աշխատասէր է, որ գիշեր ու ցերեկ մի րոպէ չի հանգստանում. անդադար թրջխթրջխկացնելով՝ նա լուր առոյգ և արագաշարժ ծառաներին մղում է այլ և այլ կողմեր, ուր որ հարկաւոր է լինում կամ կերակուր, կամ ըմպելիք, կամ ջերմութիւն և կամ որևէ անկիւնը նորոգելու համար նոր նիւթ: Տունն ունի ընդարձակ դահլիճ, ուր մաքուր օդը ազատ ներս է մտնում, ունի նոյնպէս երկու պայծառ լուսամուտներ շարժական փեղկերով: Գիշերն այդ փեղկերը փակւում են, իսկ ցերեկը բացւում: Տան մէջ ապրում է անտեսանելի տանտիկինը: Թէև նրան չի կարելի տեսնել, բայց նա ամեն բան գիտէ և ամենին բարեկարգողը և կենդանացնողը նա է: Նրա համար է հոգում տնտեսը. նրա համար են գործում փոքրիկ ծառաները. նա ինքն է նայում պայծառ լուսամուտներից. նա է բանում և փակում նորանց: Գիշեր և ցերեկ քնել չգիտէ նա. նրա աչքերը—միտքը շատ հեռու է տեսնում: Եթէ տանտիկինը դուրս է գնում տանիցը, այնուհետև ամբողջ տունը խոր քնով ծածկւում, թրուանում և լռում է. տնտեսը դադարում է գործելուց, ծառաները կաշկանդւում են անցքերում և ամբողջ տունը խոր լռութեան մէջ մտնելով՝ սառչում է և քայքայւում: Բայց ո՞ւր է գնում տանտիկինը: Նա գնում է այնտեղ, որտեղից եկած էր. նա գնում է երկինքը: Երկրի վրայ նա ժամանակաւոր հիւր էր. հեռացաւ հիւրը և նրա բնակարանը —մարմինը դրեցին մի այնպիսի արկղի մէջ, ուր ոչ արեւի է

կանգնել, ոչ շարժուիլ և ոչ ուտել: Արկղն ամփոփեցին հողի մէջ և տունը քայքայուելով հող դարձաւ:

58. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ծառերն անտառում երբ շատ նեղացան
Կացնի ձեռիցը ու էլ չիմացան
Ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն,
Խորհուրդ արին որ մի հնարք գտնեն:
«Կացինն ո՛վ է որ՝ մեզ կարողանայ
Ջօր անել—յաղթել, ինչ մեծ բան է նա»:
Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.
«Մենք որ կոթ չտանք, կացինն ինչ է որ
Յանդգնի անել մեզ կտոր-կտոր»:

Թող իմացողը ինքըն իմանայ
Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.
Ով որ կոթ կըտայ պողպատէ կացնին՝
Թող «հոգւոցն» ասէ առաջ իւր անձին:

---

59. ԿԱՊԻԿԻ ԵՂԲԱՅՐԸ

Փոքրիկ կապիկի մայրը վախճանուեցաւ և նա բոլորովին որբ մնաց: Տխրադէմ նստած էր ծառի վրայ և իւր սև օրը լալիս էր: Կապիկը դեղեցիկ չէր. նրա դէմքը փոքր էր և կնճռոտ, բունը վտիտ և ունէր չորս երկար ձեռներ: Ոչ ապաքէն կապիկները ոտներ չունին.—նոքա ունին միայն չորս ձեռներ, որովհետև նոցա ստորին վերջաւորութիւններն էլ մարդու ձեռների նման ընդունակ են գործ կատարելու,

առարկաներ վերցնելու։ Այս պատճառով մեծամեծ կապիկները դժուարութեամբ են մանր գալիս դետնի վրայ. նոքա առհասարակ ծառերի վրայ են ապրում և այդ բանին սաստիկ օժանդակում են նոցա չորս ձեռները։ Մեր փոքրիկ կապիկին ոչ ոք դեղեցիկ չէր ասիլ։ Այս բաւական չէ. նա անօգնական էր գլխովին։ Նա դեռ ևս չէր կարողանում մէկ ծառից միւսը ցատքիլ և նոցա վրայ բարձր ու ցածր անել՝ իւր համար կերակուր ճարելու. նորա ատամները դեռ շատ փոքր էին՝ ընկուզներ ջարդելու համար։ Ինչպէս երևում էր, նրան վիճակուած էր քաղցածութիւնից մեռնիլ, ինչպէս կըմեռնէր մի փոքրիկ մանուկ, եթէ մօր մահից յետոյ բոլորովին անտէրունչ մնար։ Բայց ո՛վ կըհոգար մեր կապիկի համար։ Նրա ցեղակիցներն ապրում էին խմբերով, որոնց մէջ էր և նրա մեծ եղբայրը, որ ամբողջ խմբի մէջ ամենաճարպիկ խեղկատակներից մէկն էր և մի քանի տարի շարունակ արդէն շատ խորամանկութիւններ էր անում անտառում։ Եթէ մի տեղ կռիւ պատահէր, պէտք է հաստատ իմանայիք, որ կռուողներից մինը նա էր։ Եթէ կապիկները ժողովուէին արշաւելու և կործանելու գիւղացիների սիմինդրի արտերը կամ աոպատակելու նրանց այգիները, անպատճառ մեր կապիկի եղբայրն այս արշաւողներից առաջինը կըլինէր։ Այս խեղկատակը տեսաւ իւր եղբօրը և բարձրացաւ դէպի նա։ Կարելի էր կարծել, թէ կամենում է փորձանք բերել նրա գլխին, կամենում է ցնցել և վայր գլորել նրան ծառից։ Բայց ո՛չ։ Նա նստեց եղբօր կողքին և քնքշաբար բռնեց նրա ձեռքից։ Մանուկն սկսեց փարիլ նորանով և իւր առաջին ձեռներով վաթսաթուեցաւ նրա պարանոցով, իսկ յետին ձեռները պատ տուեց մէջքին. նա մեծ կապիկի հետ վարւում էր ինչպէս իւր մօր հետ. իսկ վերջինս խնամում էր նրան լըրև ծնող. իւր կենդանի բեռը գրկած՝ նա թռչում էր մի ծառից միւսը, միջատներ էր որսում ու կերակրում էր նրան, ջոկում էր նրա համար ամենահիւթալի

պտուղները, նրա հետ և նրա համար իսկ որոնում էր թռչունների բներ և գողանում էր նրանց միջի ձուաները։

Երբ փոքրիկ կապիկը սակաւ ինչ մեծացաւ և ուժեղացաւ, այն ժամանակ նրա դաստիարակը ցոյց տուեց, թէ ինչպէս պէտք է ցատկել և վեր ելնել ծառերը. նա սովորեցրեց նրան այն ամենայն խորամանկութիւնները, որ պիտի իմանայ իւրաքանչիւր կապիկ, եթէ կամենում է կուշտ լինել և չընկնիլ վորձանքի մէջ։ Մի անգամ փոքրիկ կապիկը ծարաւեցաւ և եղբայրը տարաւ նրան սառն աղբիւրի մօտ։ Յանկարծ թփերի տակից բարձրաձայն հաչելով դուրս վազեց որսի շունը։ Բոլոր կապիկները, որոնք այնտեղ ներկայ էին, շուտափոյթ փախան այլ և այլ կողմեր և թռչունների պէս թազ կացան ծառերի վրայ։ Միայն փոքրիկ կապիկը չկարողացաւ վեր բարձրանալ ծառը։ Երկիւղի առաջին րոպէին՝ նա ցատկեց մի բարձր քարի գլուխ և ամբողջ մարմնով դողում էր, իսկ չար շունը քարի մօտից կատաղաբար հաչում էր նրա վրայ։ Ահա հեռուից երևեցաւ և որսորդը։ Խեղճ կապիկն անշուշտ կըկորչէր, եթէ եղբայրը նրան չփրկէր։ Նա, երբ նկատեց, որ իւր սանիկը վտանգի մէջ է, իսկոյն յետ դարձաւ և համարձակ ընթացաւ դէպի քարը. յետոյ զայրացած նայեց շանը և այնպէս սպառնագին կրճտացրեց ատամները, որ նա չըհամարձակուեցաւ յարձակուիլ նրա վրայ։ Այսպիսով նա հասաւ իւր որդեգրին, գրկեց նրան և բարձրացաւ ծառը։ Որսորդը, ի դուր շարժուած նրա անձնանուիրութիւնից, հրացանը չարձակեց և այսպիսով փոքրիկ կապիկը փրկուեցաւ։

60. ԿԱՊԻԿՆԵՐ

Ուրիշներից թէ խելքով առնես քեզ մի օրինակ,
Զարմանք չէ որ մեծ օգուտ շահիս ամեն ժամանակ.
Բայց թէ հետևիս մէկին կուրօրէն,

Վայ ու թուք ու մուր լսիր ամենէն.
Այս բանիս հաստատութիւն
Ա՛ռ քեզ ահա նոր պատմութիւն։

Ով որ կապիկ տեսած ունի՝ նա գիտէ,
Թէ այս վտիտ կենդանին
Ուրիշներին տրնազ տալ շատ կըսիրէ,
Կուզէ նման անել ամեն տեսածին։

Ափրիկէի մէջ կապիկը խիստ բազմաթիւ է ու ցեղ-ցեղ.
Մի օր մի մեծ ծառի վրայ ժողովուեցան միատեղ.
Որը վերևից, որը ներքևից,
Որն էլ ճղների տակից ու գլխից
Ծրկրակում էր աչքը տընկած ու նայում,
Թէ որսորդի մէկն ինչ կերպով,
Գետնի երեսին մի ցանց փըռելով,
Ինքը նրա մէջն էր գլորւում,
Տակըն էր մրտնում, վերև բարձրանում։

Ամեն կապիկ մօտինին կրմրշտելով նըշան էր տալիս,
Եւ կասես թէ ականջն ի վեր այսպէս լինէը ասելիս.
«Սըրան նայիր, եղբայրիկ, ինչ է անում ժամերով.
Ի՛նչպէս ելնում— մտնում է ծռմըռուելով, յոգնելով,
Մերթ պառկում է, երկարում և մերթ կրծիկ է դառնում.
Այնպէս որ ոչ ոտքերը և ոչ ձեռքն է երևում.
Մենք դըրանից ինչով ենք պակաս.
Այդ արհեստը սակայն չունինք, ինչ կայ վնաս.
Եկէք, մենք էլ փորձ փորձենք,
Գուցէ իրանից անցնենք.
Նա հերիք խաղաց իւր ուզածին պէս.
Տեսնենք՝ երբ կերթայ—հեռացածին պէս...»

Մէկէլ տեսնես իրօք ելաւ մէկ կողմ գընաց որսորդը,
Այնտեղ թողեց իւր ցանցերով թակարդը։
«Գուտ անենք, ասին կապիկք իրարու,
Բոպէ չկորցնենք, երթանք փորձելու»։

Իսկոյն ծառից վայր թափուեցան խևերը,
Ցանցի վրայ շարուեցան նոր հիւրերը՝
Տակը մրտան, վըրան ելան,
Կրծկըտեցան, գըլորուեցան։

Կապիկների կանչ ու ճիչը աշխարհ բըռնեց խնդալուց.
Բայց ինչ փորձանք՝ թակարդի մէջ բռնուել են շատ վաղուց.
Չեն իմանում, ինչպէս ազատուին,
Էլ դուրս գալու հնարը չունին։

Իսկ որսորդը այդ վայրկեանին էր սպասում.
Գուտով մի քանի պարկ է վերառնում.
Գալիս՝ հիւրերին մօտենում։
Ա՛ւր փախչէին, ինչ անէին,
Նորա ձեռին գերի էին։
Բռնեց ամենքին,
Տարաւ, ծախեց թանկագին։

---

61. Ո Չ Խ Ա Ր

I.

Ոչխարը մի հեզ, հանդարտ և անվրդով կենդանի է։ Խնամքիւնը նորան պաշտպանելու զէնք չի տուել, այս պատճառով նա մի թեթև որս է իւր բոլոր թշնամիների համար։ Ընտանի ոչխարներն իրանց վայրենի ցեղակիցների ճարպիկութեան և անվեհերութեան հետքն անգամ չեն պահել։ Ո-

խարը մարդուս հետ միասին տարածուել է աշխարհիս ամենայն մասերը, բայց սառը կամ տաք երկիրները տանելը նրան ոչինչ օգուտ չի տուել: Այսպիսով թէև բաւականաչափ փոխակերպուել է ոչխարի արտաքին տեսքը, բայց ամենայն տեղ նա մնացել է նոյն անբախտ ոչխարը:

Ոչխարի արտաքինը գեղեցկութիւնից զուրկ չէ. մարմնի և անդամների մեծութիւնը համապատասխան են, գլուխը տգեղ չէ, իսկ բարակ ոտները կոկ են և սիրուն: Բայց ոչխարի կերպարանքը չունի արտայայտութիւն, աչքերն անխմաստ և անորոշ են նայում. ամենայն վտանգ նրան շփոթութեան, անգիտակցութեան և կաշկանդման մէջ է գցում, և ոչխարը կամ անմտաբար իւր տեղը կանգնած է մնում, կամ առանց մտածելու առաջ է վազում: Նա փախչում է միամտաբար, գլուխը վեր բարձրացրած, առանց չորս կողմը դիտելու, առանց յետ նայելու. իսկ սա վատ նշան է թէ կենդանիների և թէ մարդկանց համար: Չրդեհը, հրաձգութիւնը, որոտումն ու կայծակը գլխովին շփոթում են նրանց:

Ոչխարը սեփհական կամք չունի, այս պատճառով նա կատարելապէս ենթարկւում է առաջնորդողին: Ոչխարներին առաջնորդում է խոյը, հօտը պահպանող շունը, երկարամազ այծը և, վերջապէս, հովուի սրինգը: Եթէ ոչխարների առաջնորդը փարախից դուրս գայ և ցատկէ մի տեղով, միւս բոլոր ոչխարները, անգիտակցաբար նորան հետևելով, կըցատկեն. եթէ նա նեղ շաւղից ջուրը գլորուի, շատերը՝ նորան հետևելով, կըգլորուին նոյն ջրի մէջ. նորանք այդ ժամանակ ոչինչ չեն կամենում, բայց հետևում են իրանց առաջնորդողին այն պատճառով, որովհետև անկախ կամք չունին:

Ոչխարների մայիւնը համարեա միաձև է և անմիտ: Ձին խրխնջում է համարձակ, ուժեղ և խելացի, նոյն եռանդով բառաչում է և եզը, իսկ ոչխարը մայում է անվստահ, երկչոտ համարեա երեխայաբար: Բայց չնայելով այս բանին, մայրը

ճանաչում է իւր գառան ձայնը, իսկ գառը որոշում է իւր մօր մայիւնը հարիւրաւոր ձայների մէջ և երկուսն էլ անխափան գտնում են միմեանց: Իսկ թշնամու ձեռքն ընկնելով՝ ոչխարն անմռունչ տանում է ամենատեսակ տանջանքներ. նա հազիւ է ընդդիմանում, երբ սպանդագործը դաշնակը նրա կոկորդն է կոխում:—Ոչխարին բարկացնելն էլ դժուար է. արուոչխարը միայն մի անշնորհ բարկութիւն է արտայայտում: Մինչև անգամ մայրական սէրը նորա սառնասրտութիւնը չի վրդովում: Բոլոր կենդանիների մէջ միայն ոչխարն է, որ թողնում է յափշտակել—տանել իւր մայող գառը, առանց արտայայտելու ոչ զրկանք ու ցաւ, ոչ տխրութիւն ու խռովութիւն:

II

Երբէք չի յաջողուել ոչխարին մի բան սովորեցնել: Նա հազիւ է ճանաչում իւր հովուին ու իւր փարախը և մոլորեալ ոչխարը շատ հազիւ է գտնում տան ճանապարհը: Բայց լոյնու նուագածութիւնը ոչխարի վրայ հաճելի տպաւորութիւն են անում: Մութը գոմի մէջ ոչխարները գլուխ ցերեկ քնում են կամ կանգնում են անշարժ ու գլխակոր. իսկ երբ բաց են անում դուռը և ներս է թափանցում լոյսը, իսկոյն ոչխարներն արթնանում են և զուարթանում: Նուագածութեան ներգործութեան մասին հովիւները պատմում են, որ սրնգի ներդաշնակութեան տակ ոչխարները մշտ առաւել հանդարտ և խաղաղ են արածում, նաև մեծ ուշադրութեամբ նայում են հովիւների առաւօտեան և երեկոյեան երգ ու պարին: Եղանակի ամենաչնչին փոփոխութիւնն անգամ ներգործում է ոչխարների վրայ. եթէ նոքա անհանգստութեամբ այս ու այն կողմն են ընկնում, ապա պէտք է գուշակել, որ փոթորիկ կըլինի. իսկ եթէ երեկոները հաճութեամբ բարձրանում են բլուրների և սարերի գլուխները և նոցա վրայ վազվզում ու թռչկոտում են, ապա պէտք

է սպասել, որ երկարատև ու բարեհամբոյր եղանակ կըլինի։

Թէ ոչխարը մի ժամանակ առաւել համարձակ և ուշիմ է եղել՝ ապացուցանում են նոցա վայրենի և կիսավայրենի տեսակները, որոնք ապրում են Ասիայի լեռնոտ մասերում։ Ընտանեցնելը և անազատութիւնը զրկել են նրանց խելքից և համարձակութիւնից մինչև այն աստիճան, որ նոքա այլևս լինքնակամ և անկախ չեն կարողանում ապրել և, անկօր մանուկի նման, կարօտում են մարդու հոգատարութեանը։—Բայց չընայելով այս անմեղ կենդանու բոլոր մտաւոր անընդունակութիւններին, նա է, համարեա, ամենաօգտակարը բոլոր ընտանի կենդանիներից։ Ոչխարը գլխովին մարդուս օգտին է ծառայում։ Նրա երկար և փափուկ բրդից պատրաստում են թէ նուրբ և թէ հաստ մահուդներ, որ մարդու ամենալաւ հագուստն է։ Նրա մորթուց տաք մուշտակներ են կարում։ Նրա ճարպից պատրաստած մոմերը մենք վառում ենք. շատ անգամ դմակը իւղի տեղ ենք գործ ածում։ Ոչխարի կաշուից կօշիկների համար պատուական ապրանք է պատրաստւում. միսը համեղ կերակուր է. կաթնից շինում են իւղ և լաւ պանիր։

---

62. ԱՐԱՄԱԶԴԸ ԵՒ ՈՉԽԱՐԸ

Ոչխարը գնաց Արամազդի մօտ և դառնապէս գանգատուեցաւ իւր անպաշտպան վիճակի վրայ։

—Ես ինքս տեսնում եմ այժմ, իմ խղճուկ արարած, ասաց Արամազդը, որ քեզ չափազանց անպաշտպան եմ ստեղծել։ Այժմ ինքդ ասիր, թէ ինչով կարող եմ ուղղել իմ սխալը։ Եթէ կըցանկանաս, ես կը տամ քեզ սուր ատամներ և ամուր ճանկեր։

«Ա՛խ, ո՛չ, ասաց ոչխարը, ես չեմ կամենում նմանուիլ արիւնարբու գազաններին»։

—Կամ գուցէ դու կըկամենաս, որ ես թոյն խառնեմ քո լորձունքի հետ։

«Ո՛չ, ո՛չ, թունաւոր օձերին ամենքն ատում են»։

—Ուրեմն ինչ տամ քեզ։ Կըկամենաս՝ ես կըտնկեմ ճարկատիդ ամուր և սուր եղջիւրներ և կ'ուժեղացնեմ պաշտօդդ։

«Դա էս լաւ չի լինիլ, բարի Հայր. ամուր եղջիւրները ուենենալով՝ ես կարող եմ այնպէս հարուա տուող (ոգորող) լինել, ինչպէս ցուլը»։

Բայց դու պէտք է միջոց ունենաս վնասել ուրիշներին, երբ կամենում ես, որ ուրիշները քեզ չվնասեն։

«Եթէ այդպէս է, հառաչելով ասաց մաքին, ուրեմն թո՛ղ ինձ նոյն կացութեան մէջ, ինչպէս ստեղծուել եմ։ Ես վախենում եմ որ մի՛ գուցէ հնարաւորութիւն ունենալուց յետոյ, ես էլ ուրիշների պէս անիրաւութիւններ անեմ։ Չէ, առաւել լաւ է ինքս վիրաւորանք կրեմ ուրիշներից, քան թէ այլոց վիրաւորանք պատճառեմ»։

Այն օրից ոչխարը համբերութեամբ տանում է ամենատեսակ զրկանքներ և չի տրտնջում իւր անպաշտպանութեան վրայ։

63. ԳԱՅԼՆ ՈՒ ԳՈՒԼ

Ուժովի մօտ միշտ տկարն է մեղաւոր.
Այս բանիս պատմութեան մէջ օրինակներ
կան բիւրաւոր.
Բայց պատմութիւն չէ մեր այստեղ գրածը,
Ուստի տեսնենք առակաց մէջ ասուածը։

Գառնուկի մէկը ամառուայ տաք օրին,
Մի առուակի մօտ կերթայ, որ ջուր խըմէ.
Բայց ինչ կասես խեղճին եկած փորձանքին.
Նոյն տեղերից դիմացը մի գայլ կ'ելնէ.
Ի՛նչ լաւ որս գըտայ, ասում է մտքում.
Բռնեմ գառնուկը, տեղ տամ իմ փորում։

Եւ օրինաւոր ձև տալ ուզելով գործին,
Կանչում է բարձրից. «Այդ ինչ լրբութիւն, ինչ յանդգնութիւն,
Որ դաս իմ ջուրս քո պիղծ ընչովրդ այդպես պղտորես.
Նայիր, ինչ արիր՝ բոլոր ցեխ, աւազ. ինչպես խմեմ ես.
Հիմայ չար գլուխդ կրջախջախեմ
Եւ ոսկորներդ իրար կ'անցընեմ»:

—Սման, աղա, ծառադ եմ,
Թէ հրաման տաք, միայն այսքանը կասեմ,
Որ ձեր գերազանցութեան կանգնած տեղից հարիւր քայլ
Յած եմ կանգնած ողորմելիս. դուր տեղը մի՛ք նեղանալ.
Ո՞նց կարող եմ ես պղտորել ձեր ջուրը:

—«Մի՛թէ ուրեմն սուտ եմ ասում. տեսա՛ր կերած ապուրը.
Հապա մի՛տքդ չէ գուցէ, հերու չէ մէկել տարել,
Դու կրկին այս տեղերում ինչ վնաս արիր ինձի.
Եթէ դու մոռացել ես,
Ես չեմ մոռացած, գիտե՛ս»:

Գըլխիդ *ղուրբան*, ծառադ եմ,
Հազիւ մէկ տարուայ լինեմ,—
Ասաւ գառնուկն արմանալով:—Նա դարձաւ՝
«Թէ դու չէիր, եղբայրդ էր»:—Եղբայր չունիմ ես, ասաւ:

Օ՛, անիրաւ, մի՛թէ եղբայրդ չէր.
Թէ այդպէս է՝ խըղնամիդ կամ սանահէրդ էր:
Վերջապէս ինչ ես երկարացընում.
Ով էլ լինի՝ ձեղնից մէկն էր, չեմ գիտում.
Դուք ամենքդ էլ, այ անպիտաննե՛ր,
Ոչխարներ, շներ ու չար հովիւներ,

Անիծից արմատք, ինձ թշնամի էք.
Ձեռներից գայ՝ արիւնս կըխմէք:
Ես էլ ոխս քեզանից պիտի հանեմ, որ սիրտս հովացընեմ»:
—Վա՛յ ինձ, յանցանքս ինչ է, աղա, ինչ անեմ:
—Ձայնդ կտրի՛ր, փուճ կենդանի.
Հիմա նստեմ յանցանքներդ համրե՞մ պիտի.
Քո յանցաքիդ մէկը որն է, գիտենալ կուզես,
Այս է ահա, որ քէֆըս կրտայ ուտել, լաւիել քեզ»:
Այս ասաց ու խեղճ գառնուկը քաշեց, տարաւ,
Անտառի մէջ պատառոտեց ու կերաւ:

---

64. Ձ Ի

Ձին խելացի կենդանի է: Մարդս նրանից շատ օգուտներ է ստանում: Դուք նրան ամենայն տեղ կը տեսնէք՝ դաշտերում, երբ նա քաշում է արօրը,—ճանապարհներում, երբ նա ամենայն ջանք գործ է դնում, որ դարխայրի տակից վերև հանէ բեռնած սայլը,—ախոռում, երբ նա ախորժակով ուտում է գարին,—արօտատեղերում, երբ նա ազատ արածում է ջոկի մէջ: Իարի՛, չարքաշ, դեղեցիկ կենդանի է նա: Ապա մտաբերեցէք, թէ ինչ առանձնաւորութիւններ էք նկատել նրանում:—Նրա գլուխը երկայն է, բայց դեղեցիկ, դընչի ծայրը դուրս ընկած է, ականջները մանր են և դէպի վեր են նայում. երբ մի օտարոտի ձայն է լսում, կամ երբ քայլերից կամ ձայնից ճանաչում է իւր տիրոջը, այդ ականջները խլշում-վեր է ցցում: Ականջների մէջտեղը, ճակատի վրայ, նա մի մազէ փունջ ունի. իսկ նրա դեղեցիկ ու խոշոր աչքերը որքան իմացականութիւն են արտայայտում: Ուշադրութեամբ դիտեցէք և նրա ատամները. առաջից նա ունի *թիականման կտրողները*, որոնք

վեց-վեց են իւրաքանչիւր ծնօտի վրայ. սրանցով է նա կծում կտրում խոտը. իսկ յետին կողմումը նա ունի վեց-վեց հաստ ատամներ վերևից և ներքևից. որանք ձիու ակռանատամներն են և այնպէս լայն են ու խորդուբորդ, որ կասես աղօրիք լինեն—և իսկ որ ձին սրանցով աղում, մանրացնում է խոտը, դարմանը, գարին, որ յետոյ ստամոքսի համար դժուար չլինի նրանց մարսելը:

Ձիու պարանոցը կորանում է որպէս կարապինը. պարանոցի վրայ ունենում է երկար բաշ: Նրա կուրծքը լայն է ու դուրս ընկած, իսկ ամբողջ մարմինը կոլորաւուն, երկարաձև. մէջքին նստելու տեղը տափակ է: Եւ ինչպէս վսեմ, գեղեցկատեսիլ ձիանք են լինում, որոնք արշաւում են այնպիսի թեթևութեամբ, որ շատ անգամ չես իմանում, թէ ինչպէս են փոխում իրանց բարակ ու երկար ոտները: Ձիու յետին ոտներն առաւելապէս ուժեղ են. ում որ նա նրանցով քացի է տալիս, շատ անգամ հէնց տեղն է մնում. գայլերն էլ են վախենում ձիու այդ հարուածից: Ձին ոտի վրայ ամբակ ունի. սա մի ևնոյն է, ինչ որ մեր եղունգը, այնպէս որ եթէ կտրես էլ նրա ծայրերից, ամենևին ցաւ չի զգալ: Նա իւրաքանչիւր ոտի վրայ մի եղունգ ունի, նշանակում է՝ մատն էլ մի հատ է: Ձին ընթանալու ժամանակ իւր մատի եղունգը այսինքն ամբակն է գետնին կպցնում: Էլ հարկաւոր չէ յիշել ձիու գեղեցիկ երկայնամազ պոչը, որով նա մաստիկ զանազանւում է միւս միասմբակներից:

---

65. ԱՐԱՄԱԶԴԸ ԵՒ ՁԻՆ

«Կենդանիների և մարդկանց Հայր, ասաց ձին, մտածելով Արամազդի գահին. ասում են, որ ես ամենագեղեցիկ կենդանիներից մինն եմ և ես կարծում եմ, որ այդ ճշմարիտ

է. բայց ինձ թւում է, որ իմ մարմնիս մէջ շատ բան կարելի է աղնուացնել»:

—Ի՞նչ կարծիքով ինչը կարելի է աղնուացնել, ասա՛, ես պատրաստ եմ ուսանիլ քեզանից, ժպտալով պատասխանեց Արամազդը:

«Կարելի է ես աւելի արագընթաց լինէի, ասաց ձին, եթէ ոտներս աւելի երկայն լինէին և բարակ. երկար, կարապային պարանոցն ինձ աւելի դեղեցկութիւն կըտար. լայն կուրծք ունենալով՝ ես առաւել ուժեղ կըլինէի, և որովհետև դու նշանակել ես, որ ես շալակած մարդ ածեմ քո սիրելի ստեղծուածին՝ մարդուն, ուստի կարող էիր և պատրաստի թամբ դնել իմ մէջքին»:

—Իարի է, ասաց Արամազդը, սպասի՛ր մի րոպէ: Եւ աստուածների Հայրը հրամայեց երկրին ուղտ արտադրել: Տեսնելով այս նոր կենդանուն՝ ձին զզուանքից և երկիւղից սկսեց դողդողալ:—Ահաւասիկ բարձր, բարակ ոտները, որ դու ցանկանում էիր, ասաց Արամազդը. ահա և երկար կարապային պարանոցը, լայն կուրծքը և պատրաստի թամբը: Կամենո՞ւմ ես, որ քեզ և այսպէս փոխակերպեմ:—Ձին շարունակում էր դողդողալ:

—Գնա՛ ուրեմն, ասաց աստուածների Հայրը. այս անգամ թո՛ղ սա բաւական դաս Համարուի քեզ: Իսկ դու, ասաց նա դառնալով ուղտին, ապրի՛ր և, չնայելով քո անհամբոյր տեսքին, եղի՛ր մինը ամենաօգտակար, բարի և խելացի կենդանիներից:

Այն ժամանակից սկսած ապրում է ուղտը երկրի վրայ, իսկ ձին մինչև այժմ էլ դողում է ամէն անգամ, երբ նրան տեսնում է:

---

66. ԷՉՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Բացուել էր գարուն, սար ու ձոր ծաղկել,
Անոյշ հոտն ու հովն ամեն տեղ բռնել,
Ամեն աշխարհից, հեռու տեղերից
Փախած թռչուններն լրանց բներից
Եկան ողջունել գայլ՝ստոր գարնան,
Պայր ու ձագ նստած թրփերի վերան։

Պարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,
Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մտքի
Կարօտն ու աշխոյժ բերան բերելով՝
Խոր ձորում նստած՝ վըշտերը լալով՝
Նայում էր ջրին, իւր վարդի թփին,
Սպասում էր որ՝ բացւի սիրելին։
Բայց վարդն անիրաւ մընացել էր միակ,
Սոխակի սիրտը դարձել էր կրակ։

Այս դառն րոպէին սատանի քամին
Որտեղից հանեց մեր կորած իշին.
Քունըն էր հատել, թէ կերը պակսել,
Գայլն էր յետ ածել, թէ տէրը դընքսել,
Ականջներն խլշած,
Սարն ի վեր ընկած՝
Վազեց ու հասաւ, դունչը վրայ բերեց,
Անմեղ վարդի թուփն ու կոկոնն բռնեց,
Փշրեց ու ջարդեց, արաւ կտոր-կտոր
Ու ինքն վայր ի ձոր
Գլուխն առաւ գնաց։
Սոխակն այս բանը որ տեսաւ՝
Եկաւ

Վարդի վրայ կանգնեց,
Իւր սուգն սկսեց.
«Աննման իմ վարդ, ցանկալի հոգուս,
Սրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս,
Ինչի գառն օրհաս հանեց քեզ աշխարհ,
Երբ ոչ ոք գինդ պէտք է չիմանար.
Երկինքն է տեղդ, ինչի ես մնում
Իշի կերակուր այս փշի մէջում.
Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս՝
Մտածում եմ որ՝ անտէր կըմնաս.
Կամ այլիր դու ինձ, որ մի օր պրծնիմ,
Կամ թէ ւռ, թռչինք, երեսիդ մեռնիմ»։

Իմ սիրուն սոխակ, մի այդքան ցաւիր,
Կայ մեր միջումը, քո վարդը գովիր.
Էշն աղբի մէջն է առել իւր ծնունդ,
Նորա հոտովն էլ առնում է անունդ.
Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ, մանուշակ
Պարգեւել է Տէրն, իմ ազնիւ սոխակ։

---

67. ԿՈՎ

Ներս մտնենք գոմը, նայենք՝ թէ ինչպէս են կաթը կըթում տանտիկինները։ Խմենք այդ թարմ և փրփրուն կաթնից հէնց իսկոյն, կթելուն պէս։ Բայց մենակ խմելուց բան չի դուրս գալ, պէտք է մի բան էլ սովորենք։ Ա՛յ, մտիկ տանք մեր կովին, թէ ինչպիսի մարմին ունի, ինչով է զանազանւում նա ձիուց։ Սա ձիուց քիչ ցածր է, բայց հաստ. մէջքն էլ, տես, ինչպէս սուր է. բոլոր ոսկորները դուրս են ցցուած, իսկ կողքերը փքուած են։ Կովի գլուխն այնպէս գեղեցիկ չէ.

դունչը բութ է, պարանոցը բարակ, իսկ կուրծքի վրայ աւելամիս ունի կախուած։ Յետին անդամների մէջտեղը մեծ կուրծ ունի, ուր առատ կաթն է պատրաստուում։

Կովի ոտները հաստ են և կարճ, քան ձիունը. նրանց վրայ ոչ թէ մէկ-մէկ, այլ երկու-երկու եղունգներ—*կղզնղակներ* կան։ Պոչը թռկի պէս կախուած է և միայն ծայրին ունի մի մազէ փունջ։ Նշանակում է, կովն այնպէս դեղեցիկ չէ, ինչպէս ձին. նա չի սիրում վազել, նրա վրայ նստելն էլ յարմար չէ։ Այսուամենայնիւ եղներին գործ են ածում բեռը կրելու համար, որովհետև նրանք ուժեղ են և համբերատար։

Ահա կովը երեսը դէպի մեզ դարձրեց և նայում է քաղցրաբար. բայց նրա աչքերը չեն արտայայտում այն խմացականութիւնը, ինչ որ ձիունը։ Նրա պարանոցն էլ կարճ է և չի կարող այնպէս վեր բարձրացնել իւր լայն դունչը, ինչպէս եռանդոտ ձին։ Կովը ճակատի վրայ երկու մանգաղաձև պողեր ունի, որոնք ոսկրից կակուղ են. նրա ականջներն աւելի մեծ են և դէպի մի կողմն ուղղուած։ Կովն էլ, ձիու պէս, բերանում կտրողներ (առաջնատամներ) և սեղանատամներ ունի, բայց նրա կտրողները ութ հատ են և դասաւորուած են ստորին ծնօտի վրայ. իսկ վերին ծնօտի վրայ, ատամների փոխանակ, հաստ կաշի կայ միայն։ Սեղանատամները նման են ձիու սեղանատամներին թէ թուով և թէ տեսակով։ Ձիերի ստորին ծնօտը կարող է շարժուել միայն դէպի վեր ու դէպի ցած, իսկ կովերինը, բացի դրանից, աջ ու ձախ էլ է շարժուում և այդպիսով օգնում է նրան խոտը լաւ մանրացնելու։ Իսկ ինչի են կովին որոճող կենդանի կոչում։ Դուք, երևի, նկատած կըլինիք, որ երբ նա հանգիստ նստած է, մինչև անդամ քնած ժամանակը, շարունակ ծամում է—որոճում է։ Ձին մարդու նման մէկ ստամոքս ունի, կովը—չորս։ Խոտը, որ փոքր ինչ ծամելով կուլ է տալիս, առաջ մտնում է առաջին երկու ստամոքսի մէջ, իսկ յետոյ գունտ-գունտ յետ է գալիս

տում դէպի բերանը և սկսում է նորից լաւ ծամել և մանրացնել նրան. լաւ ծամելուց յետոյ կովը կերակուրն ուղարկում է փորի միւս երկու բաժանմունքը։ Նշանակում է՝ կովի համար ուտելն էլ ինքն ըստ ինքեան մի մեծ գործ է, որի պատճառով էլ նա ուրիշ շատ բան չի շինում ձիու նման։

68. Փիղ

Փիղը ցամաքային կենդանիներից ամենամեծը և ամենաուժեղն է և հեշտ է ընտելանում։ Նա 4—6 արշին բարձրութիւն և 6—8 արշին երկայնութիւն ունի. մարմնի ծանրութիւնը 160 փթից աւելի է։ Փղի կաշին այնքան հաստ և կարծր է, որ հրացանի գնդակով անգամ դժուար է ծակել։ Նրա գլուխը մեծ է և փոքր ինչ երկայն։ աչքերը մանր և խմաստալի, ականջները լայն և կախ ընկած։ Փիղը վերին ծնօտի վրայ միայն երկու առաջնատամներ ունի. սեղանատամների թիւը զանազան է՝—մէկից մինչև երեք իւրաքանչիւր ծնօտի վրայ։ Ժանիքը երկու են, որոնցից իւրաքանչիւրը մինչև մէկ սաժէն երկայնութիւն է ունենում։ Բայց սոքա իսկապէս ժանիք չեն, այլ արու փղի երկարացած ատամները, որոնք շատ թանկ են և վաճառւում են *փղոսկր* անունով։ Իսկական ժանիքներ փղերը չունին, որպէս և միւս խոտաճարակ կենդանիները, և սրանով նոքա զանազանւում են իրանց ցեղակից *ամենակեր* խոզից։ Փղի ոտները հաստ են և իւրաքանչիւրի վրայ կայ հինգ կճղակ։ Սակայն նրա մարմնի ամենահետաքրքրական մասը *կնճիթն* է, որը նրա քթի շարունակութիւնն է և չափազանց շարժական է։ Կնճիթը մի սաժէնից աւելի երկարութիւն ունի և ընդունակ է սեղմուելու, կարճանալու, երբ ինքը կամենայ։

կնճիթը նրա համար մի այնպիսի գործածական և կարևոր անդամ է, ինչպես մեզ համար մեր ձեռքը: Նրանով փիղը կարող է վերցնել գետնիցը թէ ամենամեծ և թէ ամենափոքր բաները. փիղը իր կերակուրը նրանով է տանում բերանը, նրանով կարող է պարանի կապը լուծել, փակած դուռը բանալ և կրկին փակել, շիշերի խցանները դուրս հանել և այլն: Բացի այդ յատկութիւնները՝ կնճիթը սաստիկ ուժեղ է և նրա մի հարուածովը փիղը հեշտ կարող է մարդ սպանել: Նրանով մինչև հինգ փութ ծանրութիւն բարձրացնում է գետնիցը. իսկ իր մէջքի վրայ 50—100 փութ ծանրութիւն կարող է տանել. նա վեց ձիու ուժ ունի: Երբ փիղը գնում է սովորական ընթացքով, ձին սրընթաց միայն կարողանում է նրա յետևից հասնել. սակայն փղերը կարող են նաև արշաւել և լաւ են լողում: Փղերը բնակւում են մեծամեծ խմբերով, երբեմն մինչև 400 հատ միասին: Նոքա տաք կլիմայի կենդանիներ են: Փղերը չափազանց երկարակեաց են և ապրում են մինչև 200 տարի: Նոքա կերակրւում են բոյսերով, ուստի շատ անգամ մեծ վնասներ են տալիս այն դաշտերին, ուր բրինձ է լինում ցանած: Ընտանի փղերի պահելը մեծ ծախս է պահանջում. միջին հաշուով նորան օրական փութ ու կէս բրինձ են տալիս և այդքան էլ խոտ կամ տերև:

II

Ընտանեցրած փղերին մարդիկ գործ են դնում զանազան բաների համար, օրինակ՝ բեռն են բարձում, նրանցով որսի են գնում, իսկ Հնդկաստանում նոցա վրայ բարձում, մարդ են ածում զօրքի թնդանօթները: Հին ժամանակ փղերին պատերազմների ժամանակ էլ գործ էին ածում: Փղերին սայլերում չեն լծում, այլ առհասարակ նոցա մէջքի վրայ փոքրիկ տուն են շինում և մէջը նստած՝ ճանապարհորդում են: Նրան քշելու համար գլխին նստում է փղապանը և սուր մուրճով անդադար գլխին խփում է, որ երթայ: Փղապանի բոլոր իրաւացի պահանջները փիղը խոնարհաբար կատարում է և առանց բարկութեան կրում է արժանի պատիժը, բայց անիրաւացի և խիստ վարմունքի համար սաստիկ վրէժխնդիր է լինում: Մի ճանապարհորդ պատմում է, որ մի անգամ փղապանը՝ փղի վրայ նստելով, կոկոսի պինդ ընկոյզները իր հաճոյքի համար կոտորում էր և ուտում: Կենդանին համբերութեամբ տանում էր սաստիկ ցաւը. բայց մի ևնոյն օրը, փողոցից անցնելիս, փիղը կանգնեց կոկոսի ընկոյզի կոյտի մօտ, կնճիթով վեր առաւ նոցանից մինը և այնպէս զարկեց նորանով իր քշողը գլխին, որ նա մեռած վայր ընկաւ գետին:

— Փիղը չափազանց նրբամիտ է և հնարագէտ: Մի անգամ մի փիղ, քաղաքի մէջ շրջելու ժամանակ, մօտենում է մի դերձակի խանութի և, տեսնելով որ պատուհանը բաց է, կընճիթը ներս է մտցնում: Դերձակներից մէկը, զուարճանալ կամենալով, ասեղով ծակծկում է նրա կնճիթը: Փիղը բարկանում է, գնում գտնում է մի աղտոտ ջուր, կնճիթը լցնում է և շուտով վերադառնալով՝ պատուհանից աղտոտ ջուրը հեղեղի նման այն դերձակի գլխին է ածում և իր ճանապարհը շարունակում: Այսպէս հատուցող է տաք երկիրների այդ հրսկան: Նրա աչքերը իզուր չեն այնպէս խմաստալից նայում: Բայց առանց կնճիթի փիղը մի ամենահեղճ կենդանի է, և եթէ նա զրկւում է կնճիթից, ապա նրան մնում է մեռնիլ. ահա թէ ինչ պատճառով այնպէս զգուշութեամբ է պահպանում նա իր կնճիթը առիւծների և վագրերի հետ պատերազմելու ժամանակ, որոնց նա շատ անգամ յաղթում է. իր կնճիթովը փիղը նորանց վեր է նետում, յետոյ իր մեծ-մեծ ժանիքներով ցաւ-ցիից հարուածում է, կամ վայր գցելով՝ տրորում է իր ծանր ոտներով: Սակայն չնայելով իր սաստիկ ուժին, նա շատ խաղաղ բնաւորութիւն ունի և երբէք առաջին անգամ ինքը չի

յարձակւում, այլ, ընդհակառակն, միշտ աշխատում է թագչիլ. բայց երբ բարկանում է, սաստիկ զարհուրելի է:

69. ՓԻՂԸ ԵՒ ՔՈԹՈԹԸ

Մէկ փիղ առած ման կածէին,
Փողոցներից անցընելով.
Յանկարծ քոթոթ մի կռռւասէր
Վրայ վազեց խիստ հաչելով:
«Չայնդ կտրէ, դրացի եղբայր,
Սսաց գամփռը մեր քոթոթին.
Չես տեսնում որ ծաղր եղար
Բոլոր շների դու առաջին:
Դու ո՞վ ես և փիղը ո՛վ.
Ահա քո հևքդ է բռնում,
Իսկ նա հանդարտ և անխռով,
Չաջելուդ էլ ուշք չէ դնում»:
—Չա՛—Հա՛, Հա՛—Հա՛, դու չիմացար,
Պատասխանեց մեր քոթոթը,
Ու իմ միտքս չըհասկացար.
Չեռուից կանչեմ-կռռւիմ հետը,
Որ մեծ բանի մէջ երևամ
Եւ ուրիշներին էլ ասել տամ.
«Տեսէ՛ք՝ քոթոթն ինչպէս քաջ է,
Որ փղի դէմ էլ կըհաչէ»:

---

70. ԱՌԻՒԾՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Առիւծը, որին իւր վսեմ տեսքի, սաստիկ ոյժի և զարհուրելի ձայնի համար գազանների թագաւոր են կոչում,

սովորապէս մութ դեղին գոյն ունի. նրա մարմնի երկայնութիւնն է մօտ երեք արշին, իսկ բարձրութիւնը — արշինուկէս: Նրա ձէտը երկար է, ծայրը փնջամազ. պարանոցի վրայ ունի երկար, թաւամազ բաշ. էգ առիւծը բաշ չունի: Առիւծը բնակւում է Աֆրիկայում և Հարաւային Ասիայում: Ամենամեծ առիւծները Պարսկաստանում են գտնւում: Առիւծը միևնոյն ժամանակ վեհանձն է. նա, ինչպէս ասում են, միայն քաղցած և բարկացած ժամանակն է մարդուս վրայ յարձակւում. իսկ միւս կենդանիների վրայ յարձակւում է ոչ միայն քաղցած, այլև կուշտ ժամանակը: Առիւծի ոյժը ցոյց տալու համար՝ բաւական է ասել, որ նա մի թաթի հարուածով կարող է ձիու ողնաշարը կոտրել և եզանը գրկած փախցնել, ինչպէս փախցնում է գայլը գառանը: Նա առաջ է գալիս մեծապանծ և իւր որսի վրայ յարձակուելիս՝ չորս սաժէնաչափ ցատկումներ է անում: Ահա թէ ինչ է պատճառը, որ երբ անապատի մէջ, կէս գիշերին, առիւծի մռնչիւնը ամպի նման որոտում է, բոլոր կենդանիները, նաև մարդը, շտապում են թագչիլ:

Վագրը կենդանիներից ամենազարհուրելին և ամենաչարն է: Նա ունի դեղնակարմիր գոյն, սև շերտերով: Վագրը առիւծից քիչ փոքր է, բայց չափազանց ճարպիկ է և արագաշարժ. նա ահագին ցատկումներ է անում և յարձակւում է ամենատեսակ կենդանիների վրայ, առանց զանազանելու և մարդուս, ոչ միայն իւր քաղցած, այլ և կուշտ ժամանակը: Ուժի կողմից վագրը քիչ պակաս է առիւծից, իսկ չանդգնութեան կողմից նրանից գերազանց է:

71. ԼՈՒՍՆԱՀԱՉ

—Մայրիկ, ինչու մեր Հօղարը
Միշտ հաչում է լուսնի վրան,
Մինթէ պայծառ լուսնիակը

Մէկ վնաս է տալիս նրան:
«Ո՛չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս
Այլ լոյս, միայն լոյս է տալիս.
Իսկ շանն, իբրև գայլի ցեղի,
Լոյս դիշերը դուր չէ գալիս»:
«Բայց լուսինը խօմ չը գիտէ,
Որ իւր վրայ հաչողներ կան,
Նա լուռ ու մունջ, բակ բոլորած,
Զարունակում է իւր ճամբան»:
«Արդն էլ, որդեակ, լուսնի նըմանՊէտք է լոյս տայ մութ աշխարհին,
Եւ համարէ, թէ չի լսում
Իւր վրայ զուր խօսողներին»:

---

72. ՎԱՆԻ ԿԱՏՈՒՆ

1. Ձատերն են լսել Վանի կատուի մասին, բայց քչերն են տեսել և շատ քչերն են ուսումնասիրել նրան: Այդ կատուն շատ սիրուն է, բրդոտ, դեղեցիկ, կլոր դլխով ու փայլուն, սիրուն աչքերով. նրա բուրդը փուռւում է մինչև ոտները և մարդս ախորժանքով է շոյում այդ խիտ մետաքսանման մազերը: Իմ Հօրաքոյրս ունէր մի այդպիսի կատու և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ:

2. Մենք նրան գտանք պառկած և ձագերին իւր գրկի մէջ ամփոփած: Ձատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը նրանք չէին շարժւում և մայրը լիզում էր նրանց: Ես կամեցայ խաղալ նրանց հետ, հեռացրի մօրը և ձեռքս առայ միայն երկու խեղդած կատուի ձագեր... Որքան ցաւեցինք... Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց նրանց և երբ տեսաւ, որ

չէին շարժւում, մի քայլ հեռու գնաց, մեզ նայեց. մենք շոյեցինք նրան. նա կրկին մօտեցաւ, լիզեց իւր ձագերին և ես նկատեցի նրա—կատուի աչքերում արտասուքի կաթիլներ... Խեղճ ձագուկներ. արու կատուն էր խեղդել նրանց: Մայրը հանդարտութիւնով մեզ նայեց և դուրս գալով անհետացաւ, առանց յետ նայելու...

Հօրաքրոջս մանուկները մի փոս փորեցին և ձագուկներին թաղեցին:

3. Այդ օրը կատուն չերևեցաւ երբէք. ես շատ փնտռեցի, բայց չգտայ: Միւս օրը, առաւօտեան, նկատեցի, որ մի մոխրագոյն, գղգղուած կատու կանգնել է այնտեղ, որտեղ թաղեցին խեղդուած ձագուկներին: Զար, անգութ կատու:—Դա ձագուկների խեղդողն էր: Աչքս դարձրի և մի քանի քայլ հեռու ծառի տակը կծկուած տեսայ ձագերի մօրը, որը սարսափելի աչքերով արուին էր նայում. արուն նկատեց այդ, երկու ոստիւն գործեց և յետ փախաւ. էգը վազեց նրա յետևից և երկուսն էլ անհետացան. ես յետ դարձայ, բայց լսելով կատուների մլաւոցը, բարձր նայեցի և տեսայ, որ արուն և էգը միմեանց դէմ կանգնած մլաւում էին—խօսում էին: Նրանք առաջ մեղմութիւնով էին մլաւում, երևի էգը հաշիւ էր պահանջում արուից՝ նրա արած անգթութեան համար: Արուն արդարանալ աշխատեց. «ոչ», դոռաց էգը կատաղի մլաւոցով, «դու անգութ ես...» ասում էր այդ մլաւոցը: «Էլ չեմ անիլ», դոչում էր արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... էգը մեղմացաւ, մլաւոցները էլ մեղմացան և երկուսն էլ ցած իջնելով՝ բաժանուեցան:

4. Դրանից մի շաբաթ յետոյ, մի օր Հօրաքոյրս գանգատուեց, որ սիրուն փիսօն ձգել էր պղնձի բերանը և կերել էր նրա միջի միսը: Ես կատուին նայեցի, որը վեհանձնութիւնով նստել էր նոր շինած թոնիրի շրթունքի վրայ և կարծես հսկանալով այդ գանգատը, ժպտում էր: «Ես նորան շատ կրճե-

ծեմ», ասաց Հօրաքոյրս և մի փայտ վերցնելով՝ յարձակուեցաւ կատուի վրայ, որը տեղիցն անգամ չշարժուեցաւ, այլ վեհութիւնով Հօրաքրոջս նայելով, ընդունեց նրա առաջին հարուածը, ոչ ձայն արձակեց և ոչ դիրքը փոխեց: Հօրաքոյրս հարուածը կրկնեց. կատուն ոտի կանգնեց, կարծես արհամարհելով նրան նայեց, հանդարտութիւնով դուրս գնաց սենեակից՝ մի մեղմ մլաւուն արձակելով, որից ես իսկոյն հասկացայ, թէ մեր փիսօն մեղաւոր չէր, այլ մոի դողը նրա թշնամի արուն էր եղել:

5. Ձատ տխուր էր փիսօն իւր ձագուկները կորցնելուն համար և երբէք հաց չէր ուտում: Ես խնդրեցի մեր դրացուն և նա տուաւ ինձ իւր կատուի ձագերից մէկը, որին ես դրի մեր կատուի առջևը: Նա նայեց ձագուկին տխուր աչքերով, մի քանի րոպէ մտածեց, և յետոյ, գրեթէ ակամայ, վերցրեց բերնով նրան և, տանելով իւր բնակարանը, սկսեց թոյլ-թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իւր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան:

Մեր փիսօի կաթը կտրուել էր և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս:

6. Հօրաքրոջս մօտ նստած, մի կիւրակէ օր, խօսում էինք, երբ Հօրաքրոջս որդին լմաց տուաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է: Մենք դուրս վազեցինք և մտանք կատուի մօտ... Փիսօն այս անգամ ոչ թէ լալիս էր, այլ կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից: Այս անգամ անգութ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից: Մենք դուրս գնացինք սենեակից և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր առջև:

Մեր փիսօն բռնել էր բերնով արուի կոկորդից և խըփում էր նրան պատէ պատ, խուզուտ մռնչիւններ արձակելով... մի կատարեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Ձար արուն ոտներով աշխատում էր վիրաւորել մեր փիսօին, բայց նա սաստիկ արագութիւնով նրան պատէ պատ խփեց, մինչև որ արուն հոգին տուաւ. յետոյ էգը թող տուաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքով մեզ նայեց և իւր սուր ճանկերը մխեց արուի կոկորդի մէջ, ապա յետ քաշուելով՝ կանգնեց և նայում էր, թէ ինչպէս արուն կրում էր իւր արժանի պատիժը. . . . .

73. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

«Ընկել եմ ճանկդ, դէհ ուտում ես՝ կեր,
Էլ ի՞նչ ես խառնում իմ դառը ցաւեր.
Գիտեմ որ իմ վերջս այսօր հասել է,
Խեղճ ձագս բնում անտէր մնացել է».
Ասաց մի խեղճ մուկ անելրաւ կատուին,
Որ ճանկել նրան՝ դըրել էր տակին:
—«Մէթէ ուտելն է մենակ իմ ուզած,
Պատասխան տուեց կատուն բարկացած.
Ամէն մի ձայնդ, քաղցր ծվծըվոցդ,
Որ ականջս է ընկնում, ու այդ թռուլանալդ
Տեսնելիս՝ սիրտս այնպէս է ցնծում,
Որ կարծում եմ թէ, նոր կեանք եմ ստանում»:

---

74. ԹՌՉՈՒՆՆԵՐ

Կենդանաճիննները մի անգամ են ծնւում, իսկ թռչուններն համար կարելի է ասել, որ ծնւում են երկու անգամ, առաջ—իբրև ձու, իսկ յետոյ—ձուից: Օրինակ՝ հաւը ձու է

աճում, եթէ ձուերը թողնենք և չվերառնենք, նա նրանց վրայ թուխս կընստի ամբողջ երեք շաբաթ և ձագեր կըհանի: Հալէ բնական ջերմութիւնից ձուի դեղնուցում զարգանում է *սաղմը*, կերակրւում է դեղնուցով և սպիտակուցով, միայն այս կերակուրը ոչ թէ բերանովն է մտնում մարմնի մէջ, այլ այն շիւղովը, որը դեղնուցից ձգւում է դէպի նրա փորը. յետոյ մեծանալով նա նելսից կոտրում է ձուի կեղևը և դուրս է գալիս իբրև դեղնագոյն, փափկափետուր վառիկ և դուրս գալուն պէս սկսում է վազվզել և իր համար կերակուր որոնել: Ձուի կեղևը կազմւում է այն կրային մասերից, որ կուլ է տալիս թռչունը մանրիկ քարերի, սերմնահատերի և այլ կերակուրների հետ: Այդ կեղևն առ ժամանակ պահպանում է քնքոյշ սաղմը, իր մէջը եղած ծակոտիներով օդ մատակարարելով նրան, որով և նա շունչ է առնում: Փորձի համար մոմով պատիր ձուն այնպէս, որ ծակոտիները լցուին, ծածկուին, և սաղմը կըսատկի, կ'ոչնչանայ: Հալը չորքոտանիների նման *թոքերով* է շունչ առնում. նա ևս նոցա պէս ստամոքս ունի, ուր մտնում է կերակուրը, միայն թէ ատամ չունի: Նրա փոքրիկ գլուխն ունի եղջերային կտուց: Կտուցի վերին մասը խողովակի նմանութիւն ունի: Կտուցով նա հողը քրքրում է—քջուջ է անում, կտցահարում է սերմեր, որդեր, ծառերի պտուղներ... բայց չի ծամում, ուրեմն նա ինչպէս է մարսում ամենայն ամուր կերակուր: Նրա ստամոքսը սաստիկ ուժեղ է, այնպէս որ նա անվնաս կուլ է տալիս մինչև անդամ մանր քարեր: Բացի դրանից կերակուրը ստամոքսը մտնելուց առաջ փափկում է քարճիկի (կտնարքի) մէջ: Հալի ոռնդները կտուցի կողքերումն են, աչքերը ոչ թէ ճակատի վրայ են այլ գլխի այս ու այն կողմումը, այնպէս որ նա երկու աչքով միանգամից միևնոյն առարկան չի կարող տեսնել. նոքա փոքր են և իւրաքանչիւրի անկիւնում մի տեսակ կոպ կայ—թոթափողական թաղանթ, որ ցանկացած ժամանակ առաջ է գալիս և ծածկում է աչքը:

Ականջը ծածկուած է գլխի մէջ (ականջի արտաքին մասը չունի): Գլխի վրայ նա ունի կարմիր կատար (աքաղաղինը առաւել մեծ), իսկ ներքևից, կտուցի տակը, երկու կարմիր մսաթերթիկ: Հալի պարանոցը երկար է և փետրապատ, մարմինը կոնաձև, որպէս իւր ձուն—կրծքի կողմը հաստ, իսկ պոչի կողմը բարակ:

75. ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընտանի թռչուններին պատկանում են՝ հաւերը, սագերը, բադերը, աղաւնիները, հնդկահաւերը: Բայց կան և վայրենի հաւեր, սագեր, բադեր, աղաւնիներ: Օրինակ՝ միևնոյն հալի տեսակներն են դշխոյահաւը, փայտմորիկը, կաքաւը, լորամարգը, և նոքա ազատ ապրում են անտառներում ու սարերում: Մարդս շատ վաղուց ընտելացրել, բազմացրել է ընտանի թռչունները միևնոյն վայրենի թռչուններից: Սովորաբար տանը ապրելով և իրանց համար պատրաստի կերակուր ուտենալով, նոքա, կարծես, մոռացել են թռչիլը: Թռչուները առհասարակ թռչում են իրանց համար կերակուր որոնելու. այս նպատակով վայրենի թռչունները երբեմն ճանապարհորդում են հազարաւոր մղոններ: Այդպիսի թռչունների կրծոսկրը ամուր է և ունի ուժեղ մկնակներ, որոնցով նոքա շարժում են իրանց թևերը. նրանց թևերն անգամ ամուր են ու երկար, մարմնի ոսկրներից շատերը դատարկ են՝ այսինքն ոսկրուղեղ չունին: Այս բոլորն օգնում է թռչունին հեշտութեամբ թռչիլ: Առհասարակ թռչունները մեզանից արագ են շունչ առնում և առաւելապէս շատ օդ են ներշնչում. այս է պատճառը որ նոցանից ամենափոքրերն անգամ այնպիսի ուժեղ ձայն ունին. այս է պատճառը նոյնպէս, որ նոքա կարողանում են թռչիլ ընդդէմ հողմի և շնչասպառ չեն լինում. ընդհակառակն, ուր օդը նօսր է, այնտեղ նոքա նիհարանում

ու հիւանդանում են։—Կաթնասուն կենդանիներին միմեանցից զանազանում են ատամներին և թաթերին նայելով, իսկ թռչունները զանազանում են կտուցի և ոտների կազմուածքով։ Օրինակ՝ բադին նայելով՝ իսկոյն նկատում ես, որ նա ջրային թռչուն է. նրա ամբողջ մարմինը տափակ դիրք ունի, իսկ կուրծքը դուրս ընկած է և ոտները պոչին աւելի մօտ են. այդ ամենն այնպէս է յարմարեցրած, որ նա կարողանայ աւելի արագ լողալ։ Նայեցէք նրա ոտներին և դուք կրտեսնէք, որ մատները կապակցուած են միմեանց հետ լողացողական թաղանթով. ջրի մէջ իւր ոտները դէպի առաջ շարժելիս՝ նա սեղմում է մատները, որ հեշտութեամբ կտրէ ջուրը, իսկ յետ վերելիս—բանում՝ տարածում է իրրև լայն թիակներ։ Նրա կուտուցը, որի եզերքին փշանման եղջրատամներ են շարուած, շրջապատուած է զգայուն, շօշափողական մաշկով, այս պատճառով որսը չէ ազատւում նորանից, թէև ջուրը պղտոր է լինում և լաւ չի տեսնում։ Երբ որ նա դուրս է գալիս, ջրի կաթիլները նրա վրայից սկսում են սահիլ, որովհետև նա իւր փետուրները իւղոտում է։ Իւղը նրա պոչի մօտ եղած մէկ առանձին պարկի մէջ է գտնւում։ Սագը և կարապը նոյնպէս ջրային թռչուններ են։

Կտցարը, կռունկը, արագիլը բնակւում են ճահիճների վրայ։ Իրրև սկզբնապատկեր ճահճային թռչունների՝ վեր առնենք *ծկնկուլը*։ Ձկնկուլը, որ մի արշինից աւելի բարձրութիւն ունի, արտաքուստ այնպէս ծիծաղաշարժ է, որ կարծես սապատաւոր պառաւ լինի. հանգիստ կանգնած է նա մէկ ոտքի վրայ որևիցէ ջրի մօտ, գլուխը մի կողմը թազցրած։ Բայց ահա յանկարծ նա մեկնեց իւր *ծիգ պարանոցը* և իւր երկար, սուր կտուցով արագապէս բռնեց մի գորտ, ողջամբ կուլ տուեց և նորից կանգնեց նոյն հանգստութեամբ, կարծես թէ ոչինչ չի պատահել։ Նրա ոտները շատ երկայն են և ունին մեծամեծ մատներ, սուր-սուր, մեծ-մեծ եղունգներով, իսկ մի-

ջին մատն աւելի լայն է և ատամնաւորուած։ Ձկնկուլի մերկ ոտներն այնպէս են կազմուած, որ նա կարողանայ մանգալ ճահիճներում և դուրս քաշել նրա միջից ամեն տեսակ ճճիներ, խխունջներ, գորտեր. . . Երկար ոտներ ունենալուց յետոյ, հարկաւ պէտք էր և երկար պարանոց։ Ճահճային թռչունները թշնամի են օձերին, որոնց անվրդով կլանում են պատահածին պէս։

Փայտփորն [1]), ընդհակառակն, *մագլցող* թռչուն է։ Նա ունի կարճ ոտներ՝ դէպի դուրս հակուած պճղակներով, որոնց վրայի չորս մատներից երկուսը դէպի առաջ է ուղղած, իսկ երկուսը դէպի յետ։ Մատների վրայ կան ծուռ-ծուռ սուր եղունգներ։ Այսպիսի ոտների օգնութեամբ նա մագլցում է ծառերի բնափայտի վրայով և արագ-արագ պտոյտ է գալիս նրա շուրջը։ Մէկէլ ես տեսնում՝ նա կանգնեց, ամուր կպաւ ոտներով, պոչն էլ ցածից դիմհար տուեց և սկսեց եռանդագին ծակել ծառի կեղևը իւր քառանկիւնաձև ամուր կտուցով։ Այսպիսով փայտփորը հալածում, դուրս է անում այն վնասակար որդերը, որոնք բուն են դրել փայտի մէջ։ Միմեանց յետևից յաջորդող հարուածից վախենալով՝ որդերը դուրս են սողում կեղևի տակից և թռչունը, որ արագ արագ պտոյտ էր կազմում բնափայտի շուրջը, ուտում է նոցա։ Երբեմն պատահում է, որ որդերը վախենալով՝ աւելի խորն են մտնում. այն ժամանակ փայտփորը իւր երկար և սուր լեզուն ներս է տանում կեղևի տակ և նոցա դուրս է հանում այնտեղից։ Փայտփորներն անտառներին վնաս չեն. նոքա միայն փտած և չորացած ծառերն են ծակում։ Ընդհակառակն նորանք օգտակար են և մարդիկ խնայում են ու չեն սպանում այնպիսի թռչուններին, որոնք պահպանում են ծառերը վնասակար միջատներից։ Շատ տեսակ փայտփորներ կան։

---

[1]) Ծառածակիկ, ծառակուտկուտ։

Դուք ամենքդ էլ շատ լաւ էք ճանաչում *ճնճղուկներին* (ծտեր), որոնք ունին կլոր գլուխ և հաստ կտուց. գիտէք որ նրանք հաւերի պէս չեն կարող քայլել գետնի վրայ, այլ ոստոստում են և ծլվըլալով ցատկոտում: Նրանք մարդկային բնակարանների մօտ են իրանց համար բնակութեան տեղ ընտրում. խոտից բուն են շինում և նոցա մէջը փափկացնում են փետուրներով և աղուամազով: Նրանք դաշտերում ուտում են շատ ցորեն, գարի և այլ հացահատիկներ, այդ պատճառով մարդիկ մտածեցին բոլորովին ջնջել նոցա, բայց տեսան որ՝ ուր չկան ծտեր, այնտեղ շատ անգամ որդերից փչանում է բոլոր հունձը: *Ճնճղուկների* տեսակին են պատկանում *արտուտները, սարեակները, դեղձանիկները, քնարիկները, սոխակները* և ուրիշ երգող թռչուններ: Սոցա թւում պէտք է համարել *ծիծեռնակը*, որ իւր բարակ և թոյլ ոտներով հաղիւ է կարողանում մանգալ, բայց դրա փոխանակ, թռչելում շատ վարպետ է: Նայեցէք, թէ նա որպիսի երկար սրածայր թևեր և եղանակեւ պոչ ունի: Ծիծեռնակը, կարծես, երբէք դադար չի առնում, այլ միշտ թռչում՝ սլանում է դաշտերի վրայ և թռչելիս էլ որսում է թիթեռներ և ամենատեսակ մժեղներ: Նա գարնանն է մեզ մօտ գալիս տաք երկիրներից և մի որ և է ճաճկոցի տակ իւր համար հողից կամ կաւից բուն է հիւսում. այդ բնի մէջ ձու է ածում, ձագեր է հանում և նոցա կերակրում ու մեծացնում է. այդ ժամանակ նա կոտորում է անհամար միջատներ, որ իւր ձագերին կերակրէ: Այս կողմից ծիծեռնակը ամենաօգտակար թռչունն է մեզ համար:

Փոքրիկ թռչուններից շատ բարձր, օդի մէջ, թռչում են մեծամեծ *յափշտակողները*—շահէնը, բազէն և արծիւը: Սոքա ամենքն էլ ունին սուր-սուր կտուցներ, ուժեղ թևեր, սրատես աչեր, որոնցով նկատում են առարկան ահագին հեռաւորութիւնից. և պինդ մանգաղաձև եղունգներ (ճանկեր, ճիրաններ): Բազէները և արծիւները մրրկի նման նետւում են իրանց

որսի վրայ, ճանկերով պատառոտում և ուտում են նրան ոսկրների և փետուրների հետ միասին, կերածի ամուր մասերն էլ, որոնք չեն մարսւում ստամոքսում, բերանից դուրս են ործկում: Բազէն դեռ այնչափ մեծ չէ, իսկ արծիւը, երբ իւր թևերը տարածում է, մի սաժէն լայնութիւն և մի արշինից աւելի երկարութիւն է ունենում: Նոքա գլխաւորապէս ապրում են Հեռու Հիւսիսում, Սառուցեալ Ովկիանոսի ժայռերի վրայ, նոյնպէս Կովկասի լեռներում, Հայաստանում և ուրիշ երկիրներում: Բազէն իւր գեղեցիկ թռիչքով ամենին գերազանցում է. նա սլաքի նման վեր է բարձրանում և այնտեղ իւր թևերը տարածած, օդային ովկիանոսում ազատ լողում է: Թրռչելիս նա արագապէս յափշտակում է վայրենի աղաւնիներ, բադեր, կաքաւներ, բայց երբ նոքա խմբով են լինում, սովորապէս չի յարձակւում վրաները: Բազէները փոքրուց բռնուելով՝ ընտելանում են իրանց տիրոջը և վարժւում են որսորդութեան: Արծիւը, բացի թռչուններից, որսում է նոյնպէս գառներ, ուլեր, ճագարներ, նապաստակներ, կատուներ... բայց, բարեբախտաբար, մարդկային բնութեան շատ հաղիւ է մօտենում: Գիւղացիների համար յափշտակող թռչուններից ամենավնասակարը ցինն է (ուրուրը): Նա յափշտակում է նոցա հաւերի և բադերի ճագերը, կոտորում է շատ օգտակար թռչուններ, շատ անգամ քանդում է նոցա բունը և ուտում է միջի ձուանը: Գիւղացիք ամենայն կերպով աշխատում են այդ վնասակար թռչուններին ոչնչացնել թէ հրացաններով, թէ թակարդներով:

Դիշերային յափշտակող թռչուններից յայտնի են բոցփետուրը և բուն: Սոքա ցերեկը ծառերի խոռոչներում կամ աւերակ շինութիւնների ճեղքուածքներում նստած են մնում, իսկ գիշերը դուրս գալով՝ որսում են թռչուններ, մկներ և ուրիշ մանր կենդանիներ: Բոցփետուրը թանձր մազով ծածկուած է, իսկ ականջակութերի մազերն աւելի երկար են. նրա

մեծ-մեծ փայլուն աչերը ոչ թէ գլխի այս և այն կողմն են դասաւորուած, այլ առաջին կողմը, որոնք նոյնպէս շրջապատուած են երկար մազերով: Նրա աչքերի խոշոր բիբերը չեն կարող տանել ցերեկուայ լոյսը. իսկ գիշերային ամենանուազ լոյսն անգամ բաւական է, որ նա առարկաները որոշ տեսնէ: Նա ունի անախորժ և թափանցիկ ձայն: Տգեղ կազմուածքը և գիշերային շարունակ մխաձև գոչիւնը վատ գաղափար են տուել խեղճ թռչունի մասին, այնպէս որ նրա անունը պարսաւանքի առարկայ է դարձել: Տգէտ մարդիկ մանաւանդ վախենում են նրանից և նրա գոչիւնը մի չարագուշակ մարգարէութեան տեղ են ընդունում. մինչդեռ բուն մի անվնաս թռչուն է և միանգամայն անտեղի է նրան արհամարհել և նրանից վախենալ: Առհասարակ թռչունները մեզ աւելի օգուտ են տալիս, քան թէ վնաս: Նոցանից մանրերը վնասակար միջատներ են ոչնչացնում, որոնցով կերակրում են թէ իրանց ձագերին և թէ իրանք են կերակրւում. ջրային և ճահճային թռչունները գորտերի, մասամբ էլ օձերի բազմանալուն են արգելք լինում. յափշտակող թռչուններն ուտում են լեշերը և օդն ապականութիւնից ազատում են:

76. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ

Գուցէ դուք ամենքդ տեսած լինիք գեղարքունին, բայց Հազիւ թէ ձեզանից մէկը ուշադրութեամբ քննած լինի նրան: Գեղարքունին, մեզ ծանօթ կենդանիների նման, ունի ողնաշար, գանգ և կողեր. բայց նրա մարմինն այն յարմարութեամբ է կազմուած, որ կարողանայ ջրի մէջ ապրել: Ամբողջ մարմինը ձիգ է, իսկ պոչի կողմից աւելի սուր. նա պատած է թեփերով, որոնք կլորիկ բլթակների նման ցրուած են նրա վրայ. կաշին արտադրում է լորձիւն, որ պահպանում է մարմինը ջրի վնասակար ներգործութիւնից: Գեղարքունին ոտ-

նների կամ ձեռների փոխանակ ունի լողացողական փետուրներ, *լողնակները*, որոնք կազմուած են մանր եղջրանիւթ մազերից և միացած են թաղանթով: Լողնակները ուժ հատ են, որոնցից չորսը կենտ-կենտ, իսկ մնացածները զոյգ-զոյգ: Մի զոյգը զետեղուած է կուրծքի վրայ (գլխի այս և այն կողմը, շնչառութեան *քիմուխտի* մօտ), իսկ միւս զոյգը—փորի վրայ: Կուրծքի լողնակները ծառայում են նրան իբրև ձեռներ, իսկ փորինը —իբրև ոտներ. թէ մինը և թէ միւսը գեղարքունին գործ է դնում ջրի մէջ բարձր ու ցածր անելու համար: Անզոյգ լողնակների օգնութեամբ ձուկն ընթանում է հորիզոնական ուղղութեամբ ջրի մակերևոյթի հետ. այս բանին աւելի օգնում է պոչի կիսալուսնակաձև լողնակը (ագին). պոչը աջ ու ձախ շարժելով, ձուկը շատ արագ է լողում: Բացի պոչի լողնակից՝ միւս անզոյգ լողնակները գտնւում են բնի վրայ՝ թիկունքի կողմից: Գեղարքունու գլուխը միաւորւում է բնի հետ առանց *պարանոցի*, գլխի երկու կողմը գտնւում են նրա երկու մեծ-մեծ, դուրս ընկած աչերը, որոնք չունին կոպեր. ռունդներն առաջին կողմից են. նրա ականջները արտաքուստ չեն նշմարւում, բայց կարող էք հաւատացած լինիլ, որ նա ունի լսողութեան զգայարանք, որովհետև շատ լաւ է լսում. շրթունքները մաշկապատ են և կորընդհարթ. բերանում ծամելիքների վրայ մանր ատամներ կան, որոնք ոչ թէ կերակուր ծամելու, այլ նրան որսալու համար են: Գեղարքունին կերակրւում է ջրային բզէզներով, որդերով, ճիճուներով և այլն. նա ունի կարճ և կոշտ լեզու: Գեղարքունին բոլոր ձկների նման ջրումն է ապրում և շունչ է առնում *շնչառութեան ականջներով—քիմուխտներով*, որոնք գտնւում են գլխի երկու կողմերում, *ականջափակի* տակը. բարձրացրէք այդ ականջափակերը և դուք կընկատէք նրա տակը կամարաձև ոսկրներ, որոնց վրայ տարածուած են կարմիր, լորձիւնոտ արիւնաբեր երակներ, որոնք փոցխի նման ատամներ են կազմում նոցա վրայ:

Կամարաձև ոսկրները չորս-չորս են իւրաքանչիւր կողմում: Ջուրը մտնում է ձկան բերանը, անցնում է այդ ոսկրային ճալքերի միջից և իւր մէջ եղած օդը նրան մատակարարելով՝ մաքրում է այնտեղ ժողոված անմաքուր արիւնը, իսկ ինքը դուրս է գալիս ականջափակի տակից. շնչառութեան ժամանակ ականջափակերը շարունակ բաց ու խուփ են անում: Ձուկն էլ, գորտի նման, սառն արիւն ունի: Եթէ նրա փորը ճղէք, դուք այնտեղ կըգտնէք ստամոքս, աղիքներ, *լողացողական փամփուշտ*, իսկ մարիների փորում—մեծաքանակ *ձկնկիթ*: Լողացողական փանփուշտը օգնում է ձկանը բարձր ու ցածր անելիս. օդով լցնելով նրան, գեղարքունին թեթևանում է և իւր զոյգ լողնակների օգնութեամբ բարձրանում է. իսկ օդը դուրս մղելով՝ նա ծանրանում է և խորասուզւում: Ձկները ձկնկիթներով են բազմանում: Մարին այդ ձկնկիթները մեծ թուով քարերի և բոյսերի վրայ կափուցանելուց յետոյ, այլ ևս չէ հոգում նոցա մասին: Այս ձուերի մեծ մասը կերակուր է լինում միւս մեծամեծ ձկներին, իսկ մնացած մասից ձկնաձագեր են գոյանում, որոնք իրանց մանկական հասակում նոյնպէս ազատ չեն մեծամեծ ձկների յետամտութիւնից: Եթէ ձկների բազմանալն այսպիսի նշանաւոր վտանգների ենթարկուած չըլինէր, նոքա անչափ կը շատանայինն, որովհետև մի ձուկը հազարաւոր ձկնկիթ կարող է ածել մի տարում:—Հայաստանի ջրերը շատ գովական և քաղցրահամ ձկներ ունին, որոնցից մի քանիսը յիշենք: Գեղամայ լիճը լի է ազգի-ազգի ձկներով՝ իշխանը, պախտակը, գեղարքունին, կողակը Արարատեան նահանգի իւրաքանչիւր Հային ծանօթ են. նոցանից իշխանը, որ իւր մէջքին կարմրագոյն բծեր ունի, ամենագովականն է. նրա միսը նոյնպէս կարմրագոյն է և անչափ համեղ, որի համար և արժանապէս կրում է իշխան անունը. սա երբեմն մէկ փութից աւելի ծանրութիւն է ունենում: Գեղամայ լիճը իւր առատ ձկներով մեծ օգուտ է տալիս նրա շուրջը բնակուող Հայ և օտար ազգու-

թիւններին, որոնք բացի իրանց երկրագործական զբաղմունքը, պարապում են նաև ձկնորսութեամբ: Հայաստանի մի ուրիշ լիճ հռչակուած է մի տեսակ մանր, կաթնահամ ձկներով, որոնք *տառեխ* են կոչւում և որոնց աղ դրած ծախում են թէ Վասպուրականի և թէ այլ նահանգներում: Ափսոս որ տեղացի բնակիչները չեն կարողանում այդ պատուական ձկներից ախորժահամ վաճառելիք պատրաստել. նոքա իրանց նահապետական ձևով այնքան աղ են անում, որ այդ անուշահամ ձուկը միանգամայն կորցնում է իւր արժէքը:

77. ԿԱՐԱՊԸ, ՁՈՒԿԸ ԵՒ ԽԵՉԱՓԱՐԸ

Երբ ընկերաց մէջ միութիւն չըկայ,
Ոչ երբէք նոցա գործն առաջ կերթայ.
Գործ էլ մի կոչիր դու այն աշխատանք,
Այլ անտանելի վիշտ ու չարչարանք:

Մի օր Կարապը, Ձուկն ու Խեչափար,—
Ձեմ գիտում ինչպէս որ գտան իրար,—
Մի բեռնաբարձ սայլ տանիլ կուզէին.
Երեքը մէկէն լծուեցան սայլին.
Երեքն էլ արիւն-քրտինք են մտնում,
Սակայն իւր տեղից սայլը չի շարժւում:
«Ջարմանք, ասում են նոքա մէկ մէկու,
Ըզգիտենք ինչո՞ւ
Ձենք կարողանում շարժել այս սայլը.
Ոչ ճամբան է վատ, ոչ ծանր բեռը»:
Բայց չ՚ես ասիլ՝
Կարապն ըսկսեց դէպի վեր քաշիլ,
Խեչափարը յետույետ,
Ձուկն իւր կողմից դէպի գետ:

Փուռը ո՛վ էր, կամ թէ ումն էր իրաւունք,
Այն թոզունք.
Բայց բանն այս է որ
Չէնց մինչև այսօր
Սայլն այնտեղ է բեռնովը.—
Այսպէս կասէ Կրիլովը։

---

78. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Ձուկը *հաջում* է, քաճը *կաղկանձում* է. գայլը *ոռնում* է. Էշը *զոռում* է. ձին *խրխնջում* է. ոչխարը *մայում* է. կովը *բառանչում* է. փիղը *գոչում* է. խոզը *խռնչում* է. արջը *մըրթմըրթում* է. առիւծը *մռնչում* է. եղնիկը *խորդում* է. աղուէսը *ղողանջում* է. վագրը *խռնչում* է. կատուն *մլաւում* է. գորտը *կրօրընչում* է. ագռաւը *կռաւում* է. արծիւը *կառաչում* է. աքաղաղը *երգում* է. սիրամարգը *ճչում* է. հաւը *կարկաչում* է. սագը *ռնգում* է. օձը *սուլում* է. աղաւնին *մնչում* է. տատրակը *գուրգուրում* է. թռչնակը *խօսում* է. ճնճղուկը *ճռուողում* է. բուն *աղաղակում* է. սոխակը *դայլայլում* է. ճանճը *բզզում* է. միայն մարդն է, որ իր միտքը յայտնում է *խօսքերով*։

79. ՀՕՏ

Ոչխարների *հօտ*, ձիանների *ջոկ*, եղների *անդեայ*, խոզերի *երամակ*, այծերի *հօրան*, գայլերի ու շների *վոհմակ*, թռչունների *պար* կամ *երամ*, ագռաւների *ջոլիր*, կռունկների *տարմ*, ձկների *վտառ*, աստղերի *հոյլ*, ծաղիկների *ըոյլ*, խոտերի *ղէզ*, յարդի և կրակի *շեղջ*։

---

80. ՄԵՂՈՒ

Ներս մտէք մեղուատուն, ուշադրութեամբ նայեցէք այդ մանր գեռուններին, որոնք այնպիսի քաղցր մեղր են պատրաստում ձեզ համար և դուք նոցա մէջ կրգտնէք շատ օրինակելի գործողութիւններ և յատկութիւններ։ Մեղրագործ մեղուներն իրանց օթևանները շինում են կամ դուրսը, գոգաւոր ծառերի ու ժայռերի ճեղքերում, կամ մարդու ձեռքով յատկապէս նոցա համար պատրաստած փեթակներում։ Իւրաքանչիւր փեթակում լինում են մինչև քսան հազար *աշխատաւոր* մանր մեղուներ, 1600 որձամեղուներ, որոնք աւելի խոշոր են և ստուար, և մի հատ *մայր* մեղու կամ *թագուհի*։ Չետևենք աշխատաւոր կամ մշակ մեղուներին, ուշադիր լինելով նրանց հրաշալի գործողութեանը։ Ահա նորանցից մինը դուրս է սողում փեթակից, իւր թևերն ուղղելով և բզզալով թռչում գնում է ծաղկապատ դաշտը և ցած գալով մերթ այս, մերթ այն ծաղկի վերայ, իւր փոքրիկ կնճիթը ներս է մտցնում ծաղկի բաժակի մէջ ու շարժում է իւր խաւոտ ոտները։ Նորա վերին ծնօտը երկար է և ծայրը լայն՝ իբրև թիակ. դորանով մեղուն մոմը ճմլում է, երբ որ կամենում է իւր փեթակը սարքել։ Իսկ ստորին ծնօտը երկար է և սուր, որ և ստորին սրաձև շրթունքի հետ մի փոքրիկ կնճիթ է ձևացնում։ Այս կնճիթով մեղուն դուրս է ծծում ծաղիկների մէջ եղած քաղցր հիւթը, որ նորա ստամոքսի առաջին մասում ժողովուելով մեղր է դառնում։ Նորա յետին ոտներն էս շատ յարմարութեամբ են կազմուած. ոլոգի վերայ կայ մի փոքրիկ խորութիւն, որ *պնակ* է կոչւում. իսկ թաթը կազմուած է հինգ մասնիկներից, որոնցից առաջինը շատ մեծ է, խաւոտ և վրձնանման։ Ծաղկի փոշին փոշիանօթից քսւում է նորա ամբողջ մարմնին, երբ նա քաղցր հիւթ է ծծում ծաղկից. իւր թաթերի վրձիններով նա այդ ծաղկափոշին թափ է տալիս

և ժողովում է ոլոգի պնակում: Բաւականաչափ պաշար ժողովելով՝ բանուորը վերադառնում է տուն: Այստեղ մի ուրիշ մեղու նորա ոտներից պոկում է այդ *ըլթակները*, կուլ է տալիս նոցա և նորա ստամոքսում նորանից մոմ է պատրաստւում: Մոմը բարակ թերթիկներով դուրս է ծորում նորա կուրծքից, որոնց մեղուն իւր թաթիկներով պոկում և բերանում ծամելով՝ *քշիշներ* է շինում: Ինի յետին մասում մշակ մեղուն ունի *խայթոց*, որով ծակում է իւր հակառակորդի կաշին և թափում է նորա մէջ թունաւոր հիւթ: Ահա թէ որքան կենսական յարմարութիւններ ունի այս փոքրիկ կենդանին, որ բացի հիւթից և փոշուց, բոյսերից ժողովում է նաև *խէժ*: Այս բոլորը հարկաւոր է նորան նախ իւր տնակը—փեթակը կարգի դնելու և երկրորդ՝ թէ իրան և թէ ձագերին կերակրելու: Փեթակների մէջ ճիշտ ընկերական գործունէութիւն է թագաւորում. իւրաքանչիւրը գիտէ իւր տեղը և իւր գործը և չէ խանգարում միւսին: Աշխատաւորներն ամենից առաջ մոմից շինում են մեղրահացեր—եռանկիւնի և բազմանկիւնի բջիճներ: Նոքա դուրս են ծորում մոմը, ծամում են նորան և շինում են մինը միւսի յետևից կանոնաւոր վեցանկիւնի *չէշեր* (բջիճներ առանց մեղրի): Չէչերը կամ բջիճները երեք տեսակ են լինում՝ մանր ծակոտիներով—աշխատաւոր մեղուների համար, առաւել մեծերը—որձամեղուների համար, իսկ ամենամեծը և կոլորը—թագուհու համար, որը միւս մեղուներից զանազանւում է իւր մեծ և երկայն փորով: Ուր որ հարկաւոր է, բջիճներն ամրացնում են փեթակի առաստաղի վերայ առանձին կապերով, որ շինում են ակնամոմից—խէժից: Աշխատաւոր մեղուների երկրորդ հոգսն այն է, որ բջիճների դատարկ ծակոտիները մեղրով լցնեն և պահպանեն թագուհուն ու հոգան նորա ձագերի մասին: Մայրը՝ յղանալով որձամեղուներից, սկսում է ձու ածել: Այդ ժամանակ աշխատաւորները նորան եռանդագին ծառայում են և պաշտպանում են

ամենատեսակ վտանգներից: Մայրը ման է գալիս բջիճների վերայ և շատ լաւ գիտէ, թէ ուր ինչ ձու պէտք է ածել և նորանցից որը աշխատաւորների, որը որձամեղուների և որը ապագայ թագուհիների համար է պատրաստուած. այդ իմանալով՝ նա իւրաքանչիւրի մէջ այնպիսի ձու է ածում, որպիսին հարկաւոր է (թագուհին ամառուայ ընթացքում 30—40,000 ձու է ածում): Մի քանի օրից յետոյ ձուաներից ծնւում են փոքրիկ որդեր: Այդ ժամանակ աշխատաւորները անդադար որոնում են նոցա և դուրս են ծորում իրանց բերանից մեղրի կաթիլներ ու կերակրում են որդերին: Տասն օրից յետոյ դոքա փաթաթւում են ոստայնի մէջ—պատենաւորւում են. աշխատաւորներն խոկոյն ծակոտիների բերանները մոմում են, որ նոցա հանգստութիւնը ոչնչով չխանգարուի: Տասն օր ևս անցած՝ պատենաւորներից գոյանում են մեղուներ, որոնք ծակելով մոմեղէն տանիքը, դուրս են գալիս ծակոտիներից: Այստեղ ևս աշխատաւորներն անգործ չեն. նոքա օգնում են փոքրիկներին, կերակրում են, մինչև ուշքի կըգային և մաքրում են ծակոտիները՝ նորից ձու ածելու համար:

Նոր թագուհու դուրս գալու ժամանակ՝ փեթակի մէջ զարհուրելի խառնակութիւն է ընկնում. աշխատաւորներն արդելք են դնում նոր թագուհու դուրս գալուն, մինչև հինը փեթակումն է և ակնդէտ նայում են հին թագուհու յետևից. իսկ սա ամենայն կերպով աշխատում է ծակել նորի բնակարանի դուռը և խեղդել իւր հակառակորդին, որ կարողանայ առաջուան պէս միահեծան թագաւորել: Աշխատաւորները, որոնք մինչև այդ րոպէն կուրօրէն կատարում էին նորա բոլոր ակնարկութիւնները, նախազգալով այդ չար մտադրութիւնը՝ վազվըզում են, խառնւում են նորա շուրջը, ամենայն սովորական զբաղմունք ընդհատում է, իսկ նոր թագուհին՝ աւելի զայրացած, բզզում է իւր բանտի մէջ: Գործը վերջանում է

նորանով, որ մեծ մայրը, չհամբերելով այս ամենայն անհանգըստութեանն ու ճնշմանը, վեր է առնում իւր նորածին զաւակների մի մասը և դուրս է գալիս փեթակից: Այս դուրս գալը կոչւում է *ճագ տալ*: Դուրս եկած խումբը մի քանի րոպէ պտտում է մեղուատան առաջ և ապա ցած է գալիս այնտեղ, ուր իջնում է մայրը: Նոքա սովորապէս ծառի ճիւղի վերայ են կախւում. մէկը վայր է գալիս, նորանից կախւում է միւսը, երրորդը, չորրորդը... այնպէս որ բոլոր մեղուների խումբը մի ողկոյզաձև մարմին է կազմում: Մեղուապանը նոցա բոլորին թափ է տալիս *կօղի* մէջ և դնում է նոր փեթակում: Եթէ մեղուապանն ուշանում է, նոքա դիմում են դէպի անտառները՝ մի բնակարան գտնելու: Հաւանական է, որ մեղուապանը ճանաչէ և բռնէ թագուհուն ու գցէ *կօղի* մէջ,—բոլոր միւսները, նորան հետևելով, ներս կմտնեն: Միևնոյն փեթակը տարէնը (ամառը) երեք-չորս անգամ կարող է ճագ տալ:

Հին փեթակում մնացած մեղուները, իրանց մօր դուրս գալուց յետոյ, փականքից արձակում են նոր թագուհուն և սովորական աշխատութիւնները նորից սկսում են: Հին թագուհուն այլ ևս ներս չեն թողնիլ, եթէ նա աշխատէ անգամ վերադառնալ իւր նախկին բնակարանը: Բայց պատահում է, որ նոր թագուհին դուրս է գալիս իւր խուղից՝ առաջ քան թէ կըհեռանար հինը. այդ ժամանակ բանը երկուսի մէջ կռւում է վերջանում:

Աշնանը մշակ մեղուները որձամեղուներին արտաքսում են փեթակներից և սպանում, որովհետև դոքա անգէն են—չունին խայթոցներ: Եթէ որձամեղուները մնային, բոլոր մեղրը նոքա կուտէին և խեղճ աշխատաւորների համար ձմեռուայ պաշար չէր մնալ: Ձմեռը մեղուները թմրում են. այդ ժամանակ նոքա հազիւ են շարժւում և սակաւ են ուտում:

---

82. Ջ Ե Ր Ա Մ

Գեղեցիկ ժապաւէնները, սիրուն, բազմերանգ թաշկինակները, հիանալի ու շողշողուն հանդերձները շինուած են մետաքսից: Իսկ ինչից է գոյանում մետաքսը և կամ ո՞վ է շինում նորան:—Մետաքսը շինում է շերամը (աբրեշումի որդը) որին մարդիկ պահպանում են այդ բանի համար մեծ խնամքով ու հոգացողութեամբ: Ջերամը գոյանում է գնտասեղի գլխի չափ մանր սերմից կամ ձուից, որ գարնան ոկզբին, երբ թթան ծառը սկսում է կանաչիլ, դնում են արևմուտը: Սրեգակը իւր ջեռուցիչ ճառագայթներով տաքացնում է այդ ձուն և նորանից գոյանում է մի փոքրիկ որդն, այնքան փոքրիկ, որ կարողանում է մի գնդասեղի գլխի չափ ձուի մէջ պառկիլ: Պառկելուց, վերջապէս, ձանձրանում է որդը. նա կամենում է իւր նեղ խցիկից լոյս աշխարհ դուրս գալ: Բայց ինչպէս ճեղքէ նա պինդ կեղևը: Սորա համար բնութիւնը տուել է նորան երկու սուր ատամներ, որոնցով նա կռծում է իւր բանտի պատը: Երկար աշխատելուց յետոյ, վերջապէս, ծակում է և լոյս աշխարհ է դուրս գալիս: Որդը ուրախութեամբ պարզում է իւր մարմինը թթենու տերևի վերայ և ծծում է անուշահոտ օդը: Ծանրատար աշխատանքից յետոյ՝ նորա ախորժակը բացւում է. սորա համար նա արդէն բաւականացուցիչ միջոցներ ունի: Նորա գլխի վերայ կան դուրս ընկած աչքեր, որով կարող է իւր կերակուրը տեսնել. իսկ փորի վրայ ունի 16 ոտք, որոնցով կարող է սողալ թթան նորափթիթ և քնքոյշ տերևների վերայ: Այս տերևները նորա նախաճաշն են, և ճաշը, և ընթրիքը. գիշեր ու ցերեկ նորա բանն ու գործը այնուհետև ուտել-խմելն է: Վերջապէս որդն այնքան է ուտում, այնքան հաստանում, որ կաշին նեղ է գալիս նորան, ուստի և դադարում է ուտել-խմելուց, վայր է ընկնում անշարժ, նիհարանում է և կարծես սատկելու պատրաստւում:

Բայց պահողներն իմանում են սորա պատճառը. նոքա ասում են, որ շերամն *առաջին քունը* մտաւ. երեւի նա նորից պէտք է զարթնի: Արդարեւ, այդ միջոցին նորա վերեւի կաշին, որ արդէն չորացել էր, ճեղքւում է եւ որդը մի քանի անգամ շուռումուռ գալով՝ հանում, դէն է ձգում իւր հին շորը, որ նորա համար շատ նեղ էր եւ նորա փոխանակ հագնում է մի նոր շոր, որ հինի տակին արդէն պատրաստուած էր առաջինից աւելի սիրուն եւ լայն:—Շերամը, հագնելով այս նոր հանդերձը, կրկին սկսում է անդադար ուտել ցերեկ ու գիշեր, մինչեւ որ ստուարանալով՝ կաշին կրկին նեղանում է նրան համար: Կրկին փոխում է նա իւր կաշին, փոխում է երրորդ ու չորրորդ անգամ եւ նրանքանչիւր անգամին նոր հանդերձ է հագնում, որ հնից աւելի պայծառ եւ աւելի լայն է լինում: Վեց կամ եօթը շաբաթից յետոյ փոքրիկ շերամը, որ գնդասեղի գլխի մեծութիւն ունեցող ձուից դուրս եկաւ, մի մատի չափ թրթուր է դառնում, որ թթան տերեւներից ապագայ աշխատանքի համար իւր մէջ մեծ նիւթ է ժողովել: Այս նիւթից նա պատրաստում է մի նուրբ թել եւ նորա մի ծայրը ճախի վերայ պնդացնելով՝ սկսում է զարմանալի շարժողութիւն անել. ման ու ման եւ պտոյտ-պտոյտ գալով՝ արձակում է իւր սորին շրթունքից նուրբ թելեր, որոնց փաթաթում է իւր շուրջն այնպէս, ինչպէս մենք փաթաթում ենք թելի կծիկը, միայն այն զանազանութեամբ, որ մենք կծիկը դրսից ենք փաթաթում, իսկ թրթուրը ներսից, այսինքն նա առաջ կծկում է նորա արտաքին մասը, ապա ներքինը, այնպէս որ կենդանին ինքն իւր համար, կարծես, մի բանտ է շինում, կամաց-կամաց ներսից հաստացնելով նորա պատը: Եօթը կամ ութ օր աշխատում է նա առանց իւր թելը կտրելու եւ այդ թելից դեղին կամ սպիտակ գոյնով, վառիկի փոքրիկ ձուի չափ, մի սիրուն կծիկ է ոլորում, որ աստւում է խոզակ կամ բոժոժ: Խոզակի արտաքին մասը բաղկացած է բազմաթիւ պնդացած

եւ միմեանցից կպած թելերից, սակայն նորա տակի թելերը շատ նուրբ են եւ այնքան երկայն, որ մանուկը պիտի մի քառորդ ժամ վազէ, որ թելի երկայնութեան չափ տարածութիւն անցկենայ: Խոզակի մէջ շերամը իւր համար մի փոքրիկ սենեակ է շինում եւ շատ աշխատելուց յետոյ՝ պառկում է այնտեղ դադրած եւ անզօրացած: Վեց շաբաթ ուտում էր նա անդադար, չորս անգամ փոխելով իւր հանդերձը, ութ օր կծկում ու ոլորում էր իւր նուրբ թելը, իսկ այժմ ժամանակ է հանգստանալու: Վերջին անգամ նա փոխում է իւր բանտրի հագուստը: Նա էլ 16 ոտի հարկաւորութիւն չունի, որովհետեւ ուրիշ տեղ վազելու չէ եւ միջոց էլ չունի. հարկաւոր չեն նոյնպէս ատամները, որոնք այնքան տերեւները կտճեցին: Եւ ահա այդ բոլորը խաւուտ կաշուի հետ պնդանում եւ խոզակի պինդ մաշկն են կազմում, որի մէջ գտնուող որդը մնում է անշարժ եւ կարծես թէ մեռած է: Բայց խոզակի պինդ մաշկի տակին բոլորովին մի նոր բան է գոյանում. 14 օր անցած խոզակի միջի պինդ մաշկը պատռւում է եւ նորանից դուրս է. գալիս մի *թիթեռ*: Նորա գլխի վերայ երեւում են երկու մեծ աչքեր եւ չորս թեւեր, որոնցով նա օդի մէջ թռչում է, իսկ *վեց ոտները* հարկաւորւում են ծաղիկների վերայ նստելու համար: Ամենայն բանից երեւում է, որ այս փոքրիկ միջատը նշանակուած է արեգակի ճառագայթների տակ, օդի մէջ, թռչելու համար: Բայց նա ինչպէս կարողացաւ դուրս գալ իւր բանտիցը, որի մէջ ինքն իրան բանտարկել էր: Նորա անզօր ոտները չէին կարող խոզակի հաղարաւոր թելերը քակել, առաջուայ ատամները չունէր, որ կարողանար կտճել, նուրբ լեղուակը, որ այժմ ունի, պէտք կըլինի միայն նորա համար, որ ծաղկաբաժակի միջի հիւթը ծծէ: Էլ տարակոյս չկայ, որ նա խաւար բանտի մէջ կ'ոչնչանար, եթէ Արարիչը նորան մի ուրիշ հնարք չէր տուել. թրթուրն իւր սեպհական հիւթիցը բոժոժ պատրաստեց, բայց նա ունի եւ մի ուրիշ հիւթ, որի

մի քանի կաթիլը բաւական է, որ կարողանայ բոժոժի թելերը կտրատել և մի նոր դուռը բանալ ու դուրս թռչել:

Մարդս հնարք է գտել օգուտ քաղելու շերամի աշխատանքից, ուստի միայն մի քանի թիթեռների է թողնում, որ դուրս գան իրանց խաւար բանտից, որովհետև բոժոժից դուրս գալիս՝ նոքա կտրատում են նորա թելերը, փչացնում են մետաքսը: Այդ մի քանիսներն էլ դուրս են թողնում այն պատճառով, որ կրկին ձու ածեն գալոց սերունդի համար: Միւս խոզակների միջի որդերին՝ դեռ չ'դուրս եկած, սատկացնում են տաք հնոցի կամ տաք ջրի մէջ ածելով. այնուհետև խոզակի նուրբ թելը յետ են տալիս, ներկում են զանազան գոյներով և գործում են գեղեցիկ մետաքսեղէններ, թաշկինակներ, ժապաւէններ...

Շերամն այնքան սիրուն չէ, որքան նորա ընկերակից թիթեռները, սակայն միայն շերամն է, որի վերայ մարդս այնքան հոգացողութիւն է անում.—նորա համար շինում է առանձին տներ, սենեակներ, պէտք եղած ժամանակը տաքացնում է, տնկում է թթենիներ, որոնց տերևներով նա կերակրւում է և շատ անգամ էլ նոցա պատճառով իւր անձը զրկանքների է ենթարկում: Սորա փոխանակ շերամը վարձատրում է մարդուն առատ կերպով և նորանով զբաղւում են միլիոնաւոր անձինք:

---

83. ԽԵՑԵՄՈՐԹԸ ԵՒ ԱՐԾԻՒԸ

Ստորջրեայ ժայռի վերայ, ծովեզերքի մօտ, նստած է մի Հսկայական խեցեմորթ: Նորա երկու փեղկերը մեծութեամբ հաւասար են մի մի լուացուելու կոնքի, իսկ երբեմն աւելի և մեծ. նա այնպէս ծանր է, որ մինչև անգամ չափահաս մարդը կըդժուարանայ տանել նորան գոնէ մի փոքր տարածութիւնը:

Ընայելով իւր ահագին մեծութեանը, այս խեցեմորթը, ըստ երևոյթին, ամենախաղաղ արարածն է աշխարհիս երեսին: Նա անշարժ ու հանգիստ նստած է ժայռի վերայ. ժամանակ առ ժամանակ բաց ու խուփ է անում իւր փեղկերը և ջուր է խմում. իսկ ջրի հետ նա կուլ է տալիս բազմաթիւ մանր՝ հազիւ նշմարելի ջրային կենդանիներ. սա է նորա մշտական կերակուրը: Ծովի ջուրն ամենայն օր յետ է քաշւում—տեղի է տալիս (տեղատուութիւն): Խեցեմորթն այն ժամանակ մնում է իւր նախկին տեղը, ժայռի վերայ և նորա հետ միասին դուրս է երևում ջրի տակից: Խեցեմորթի մէջ խխունձ է ապրում: Նա փակում է փեղկերը և համբերութեամբ սպասում է այն ժամին, երբ ջուրը վեց ժամից յետոյ նորից կրծածկէ իրան:

Նոյն ծովի մօտ ապրում էր և մի արծիւ: Նա իրան համար բուն էր շինել ծովեզերեայ ժայռի վերայ: Շատ անգամ արծիւն ևս ամբողջ ժամերով նստում էր այնտեղ. նա անհամբերութեամբ սպասում էր, թէ չի՞ երևալ արդեօք որևէ ձուկը կամ ուրիշ ծովային կենդանի ջրի մակերևոյթի վերայ: Որսը երևալուն պէս՝ նա կայծակի արագութեամբ ընկնում էր նորա վերայ, ճարպիկաբար բռնում էր իւր երկար ճանկերով, պատառ-պատառ գիշատում էր և ուտում:

Մի անգամ այս արծիւը նստել էր նոյն տեղի Հանդէպ, ուր պառկած էր Հսկայական խեցեմորթը: Սա բաց էր արել իւր փեղկերը, ինչպէս աշակերտը իւր գիրքը: Տեղատուութեան ժամանակը մօտեցաւ, ջուրն սկսեց յետ քաշուիլ: Խեցեմորթի փեղկերի վերին կողերն երևեցան ջրի տակից և նա արդէն կամենում էր ծածկել իւր խուփերը, երբ յանկարծ նորան նկատեց քաղցած արծիւը: Կայծակի արագութեամբ ցած նետուեցաւ նա և իւր երկար ճանկերը կոխեց բացուած փեղկերի մէջ, որ դուրս քաշի նոցա միջի պարարտ կենդանուն: Բայց խեցեմորթը, երբ զգաց կոպիտ, անկոչ հիւրի ներկայութիւնը, իսկոյն սաստկութեամբ փակեց իւր ծանր փեղկերը և

սեղմեց նոցա մէջ արծուի թաթերն ու ճանկերը: Արծիւը շատ ուշ հասկացաւ իւր սխալը. հսկայամարմին խեցեմորթը նորա համար շատ ծանր էր. նա չկարողացաւ վեր բարձրացընել նորան: Խեցեմորթը նորանից ուժեղ հանդիսացաւ, այնպէս որ արծիւը մինչև անդամ իւր թաթերը չկարողացաւ հանել հուպ տուած փեղկերի միջից: Իզուր էր ճչում նա և թեւերը թափթփափ տալիս. խեցեմորթը նորա ոտները պինդ էր բռնել: Վեց ժամից յետոյ ջուրը նորից բարձրացաւ (մակընթացութիւն) և խեղդեց յափշտակողին: Միայն այն ժամանակ, երբ արծիւը դադարեց շարժուելուց, խեցեմորթն արձակեց յափշտակողի ոտները և նա լողաց ալիքների վերայ:

---

84. ԲՈՅՍԵՐԻ ՄԱՍԵՐԸ ԵՒ ՆՈՅՆ ԲԵՂՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ուշիուշով նայեցէք և տեսէք, թէ ինչ կըզտնէք բոյսերի մէջ: Վերցնենք, օրինակ, պարտիզի *խաշխաշը*: Դուրս փորեցէք նորան հողից և դուք կըտեսնէք, որ նա իւր սպիտակաւուն *արմատներով* մտած է հողի մէջ, յետոյ վեր է բարձրանում նորա կլոր *ցօղունը*, որի վերայ լինում են երկար, ատամնաւոր *տերեւներ*, իսկ գագաթը վերջանում է խոշոր *ծաղիկներով*, որոնք նստած են լինում երկայն *հրախակալի* վերայ: Բոյսը դիտելիս՝ դուք պէտք է նկատէք, թէ *որպիսի* են նորա *արմատները* և ինչ կայ արմատին մօտ. *որպիսի* է *ցօղունը*, *ոստերը* եւ *տերեւները*, *որպիսի* է *ծաղիկը*:

Ա.

Արմատով բոյսը սնանում է, հողի մէջից դուրս է ծծում իրան հարկաւոր հիւթը: Փառերի արմատները մեծ-մեծ են և ամուր. դորանք երբեմն շատ խորն են մտնում հողի մէջ.—

խոտերինը աւելի քնքոյշ են և բարակ: Դաղարի, շաղգամի, բողկի, ճակնդեղի արմատը *ստամարանում* է, *մնակալում* և նորան իբրև պտուղ գործ են ածում կերակրի մէջ. բայց սա իսկապէս պտուղ չէ, այլ հաստացած արմատ: Խոտաբոյսերից *ոմանք* ամառը բուսնում են, իսկ աշնանը միանգամայն մեռնում, ինչպէս ցորենը, գարին. միւսների *ստորերկրեայ ցօղունը* մնում է, որից միւս տարի բոյս է դուրս գալիս: Այս իսկ պատճառով բոյսերը կոչւում են *միամեայ*, *երկամեայ* եւ *բազմամեայ*: Բազմամեայ բոյսերի ստորերկրեայ ցօղունը, որ ծածկուած է թեփանման տերեւներով և տալիս է *ստորերկրեայ կոկոնները* և արմատիկները, կոչւում է *հիմնարմատ*: Արմատից պէտք է զանազանել *կոճղէզը*, օրինակ սոխինը և սխտորինը, որ բաղկացած է միմեանց վերայ դասաւորուած մսալի տերեւներից. արմատները թելերի նման կախուած կըզտնէք նորանց տակը: Կլորիկ կարտոփիլը՝ որ տեսնում էք կարտոփլաբոյսի տակը, նոյնպէս ստորերկրեայ ցօղունների վերայ է աճում և արմատ չէ. դա նոյնպէս ստորերկրեայ կոկոն է, որի բոլոր մասերը միախառնուած են:

Բ.

Փառերի, որպէս և թփերի ցօղունը լինում է հաստ, պինդ, ամուր միջուկով, և կոչւում է *ծառ*: Խոտաբոյսերի ցօղունը փափուկ է, դիւրաբեկ, երբեմն էլ մէջը դատարկ (ծղօտ, եղէգն): Ցօղունը հաստանում է այն տեղերում, ուր որ նորան կպած են տերեւները. այս հաստացած տեղերը կոչւում են *հանգոյցներ*, իսկ մի հանգոյցից մինչև միւս հանգոյցը—*հանգամէջ*: Կան բոյսեր, որոնք միայն ստորերկրեայ ցօղուն ունին և այդ ցօղուններից ուղղակի աճում են տերեւներ ու ծաղիկներ: (Օրինակ՝ մանուշակ, գառնալեզու, ելակ, անտառաշուշան, Հոմածաղիկ և այլն—այս բոյսերի թէ ծաղիկները և թէ տերեւները

դուք կըտեսնէք ուղղակի հողի տակից բարձրացրած, առանց յայտնի ցօղունի)։ Բայց այս ստորերկրեայ ցօղունի կապամէջերն այնքան *մանր* են, որ նկատելն էլ դժուար է։

Գ.

Տերևներ։ Տերևները լինում են անկոթ (աներակակալ) —*նստած* տերևներ, կամ կոթով. երբեմն նոքա ընդդրկում են ցօղունը։ Տերևների վերայ դուք կընշմարէք երակները, որոնք թելի նման կամ մէկ ուղղութեամբ են ձգւում, կամ մի գլխաւոր երակից այս ու այն կողմն են ճիւղաւորւում, երբեմն մինչև անգամ ցանցանման միմեանց հետ են խառնւում։ Դուք պէտք է նկատէք նաև, թէ ձևի կողմից որպիսի են տերևները՝ կլոր, երկարաւուն, ատամնաւոր, թէ դուրս կտրտուած եղերքով,—պարզ թէ բաղադրեալ, այն է՝ բաղկացած մի քանի զոյգ կամ անզոյգ տերևներից, օրինակ սիսեռը, գազարը, հացի ծառը...։

Դ.

Ցօղունը տալիս է *կոկոնները*, որոնք կամ ցօղունի վերայ եղած ծոցիկներից են բուսնում, կամ նոյն իսկ գագաթից։ Բացէք մի այդպիսի կոկոն և դուք նորանում կըտեսնէք նոր ցօղունի սկսուածքը տերևների հետ։ Դա տերևաբեր կոկոն է։ Բայց կայ կոկոն, որ միայն ծաղիկ է արտադրում։ *Ծաղիկը* բոյսի ամենանշանաւոր մասն է։ Պիտեցէք դէթ խոշոր ծաղիկը։ Նորա տակը դուք տեսնում էք երկու կանաչ տերևիկներ. սոքա կազմում են ծաղկի *ըմժակը*. նոցա հետևում են մեծամեծ վարդագոյն թերթիկները, որոնց ստորին մասը մուգ մանիշակագոյն է. սա ծաղկի *պսակն* է իր չորս *թերթիկներով*։ Պսակը ծաղկի մէջ պահպանում է նախ բազմաթիւ

բարակ *ծիլերը*, որոնք կոչւում են *առէջները*. իւրաքանչիւր առէջում դուք կընշմարէք բարակ թելանման ծիլ, իսկ նորա ծայրին դեղին փոշիանօթ (անօթ ծաղկափոշիով լիքը)։ Առէջների մէջտեղը դրուած է ծաղկի հաստ *կնիքը*՝ որ ունենում է իւր վերայ տարածուած *կնճիթ*, տանիքի պէս։

Ծաղիկների տեսակները։ Ցօղունի վերայ ծաղիկները լինում են՝ կամ միայնակ—*ազգական* կամ *խմբովին*. երբեմն նոքա միասին հաւաքուած՝ մէկ փնջակ են ձևացնում, օրինակ՝ երեքթևուկ առւոյտի կամ արևածաղկի ծաղիկները։ Ձեզ այնպէս է թւում, թէ նա մի հատ ծաղիկ է, բայց քայքայեցէք նորան և դուք կըտեսնէք թէ ինչպէս թափւում են նորա միջից բազմաթիւ մանր ծաղիկներ։ Նոցանից իւրաքանչիւրի խողովակաձև կամ լեզուականման պսակի մէջ դուք կըգտնէք հնգական բարակ առէջքներ, որոնք իրանց գլխներին կունենան փոշիանօթ, իսկ փոշիանօթների միջից թելի նման տարածուած կըլինի կնիքի սիւնակը (ծիլը) երկճեղքուած կնճիթով. միայն եղերքի ծաղիկներն են երբեմն անպտուղ լինում։ Այսպէս միասին ժողովուած ծաղիկներ ունեցող բոյսերը կոչւում են *բաղդատածաղիկ*, որովհետև շատ ծաղիկներ բարդուելով, կարծես մի ծաղիկ են բաղկացրել։ *Շրջթնատածաղիկ* բոյսերի ծաղիկներն էլ խմբւում են, բայց սոքա թէև միմեանց մօտ, սակայն առանձին-առանձին են դասաւորուած։ Շրջթնատածաղկի օրինակը դուք կարող էք տեսնել համբաեղինճ (եղնճամէը) բանջարի վերայ։ Նա ամբողջապէս ծածկուած է մաղերով, բայց այդ մաղերը չեն մրմնջացնում—չեն կծում, որպէս սովորական եղնճինը։ Միքանի ծաղիկների գագաթը փուում—տարածւում է որպէս Հովանոց։ Հովանոցանմանները պատկանում են՝ գազարի, չամանի, սամիթի, նեխուրի, մաղադանոսի և այլոց ծաղիկները։ Ձուշանը, ոլոռը... ունենում են վրանաձև ծաղիկներ. ոմանք էլ աւելանման հացաբոյսերն ունենում հասկեր և այլն։

Ը.

Ի՞նչ բանի է ծառայում ծաղիկը: Բայց ժամանակ է հարցնելու, թէ ինչ բանի է ծառայում ծաղիկը. մի՛թէ նա միայն մեզ զուարճացնելու համար է սահմանուած: Ո՛չ, ծաղկի բաժակն ու պսակը գեղեցկութեան համար չեն ստեղծուած, այլ նորա համար, որ ծածկեն ու պահպանեն ծաղկի նշանաւոր մասերը — առէջքներն ու կնիքը: Կնիքի մէջ է պատրաստուած բոյսի *սաղմը*, բայց որ նորանից, որպէս *ծուից*, սերմ կամ պտուղ գոյանայ, անհրաժեշտ է առէջքների *ծաղկափոշին*: Երբ առէջքները հասնում են, նոցա փոշեհանօթները բացւում ու ճերմակ ծաղկափոշին տարածւում է օդի մէջ: Բաւական է, որ այդ փոշեհատիկներից գէթ մի քանիսն *ընկնին կնիքի կնճռի մէջ*. հէնց փոշեհատիկը ցած է իջնում մածուցիկ կնճռի վերայ, իսկոյն նորանից դուրս է աճում մի *բարակիկ թել*, որ սիւնակի միջով ձգւում է դէպի ներս և հասնելով մասուրի մէջ զետեղուած սաղմին, *կեանքանացնում* է նորան: Ո՛ր ծաղկի կնիքի կնճռին առէջքի փոշուց չնստի, նա պտուղ չի կարող արտադրել: Բեղմնաւորուելուց յետոյ՝ ծաղկի պսակը, առէջքները և մինչև իսկ կնիքի սիւնն ու կրնճիթը այլ ևս հարկաւոր չեն, ուստի և չորանում են, իսկ կնիքը (մասուրը) օրէցօր մեծանում ու հասունանում է և տալիս է այնպիսի սերմն, որ հողի մէջ ընկնելով՝ նոր բոյս է արտադրում: Թէ ինչպէս են զետեղուած սերմերը մասուրների մէջ, դուք շատ լաւ կարող էք տեսնել խաշխաշի, լոբու պատիճների և այլ ամենայն պտուղների մէջ:

Զ.

Պտուղ: Բոյսը ծաղիկ է տալիս, որ պտուղ արտադրէ: Պտուղը լինում է սերմնահատ, կոլիզ կամ բնակ բազմաթիւ

սերմերով (ուռենի, խաշխաշ, թուր...) սիսեռը տալիս է սիսեռահատներ — միաբնակ, երկարաւուն պտուղներ, ուր սերմերը զետեղուած են բնակի մէկ կողմը. ընդհակառակն՝ պատիճների մէջ մենք գտնում ենք երկաբնակ պտուղներ, որոնք միմեանցից բաժանուած են առանձին միջնապատով, իսկ իրանք զետեղուած են միջնապատի այս ու այն կողմը: Ընկուզենու վերայ լինում են ընկոյզներ — սերմ, ամփոփուած ամուր փեճկի մէջ: Կեռասի, ծիրանի, սալորի, դեղձի պտուղներն ունենում են կորիզներ: Ելակի, մորու, թթենու նոյն իսկ որջը, որի վերայ գտնւում է ծաղկի կնիքը, փափկում, պտուղ է դառնում. բայց իսկապէս պտուղը սա չէ, այլ այն մանրիկ սերմերն են, որոնք լողում են դորա մէջ: Խնձորենու և տանձենու մասուրներն էլ ծաղկի որջի հետ խառնուելով՝ խնձոր ու տանձ են դառնում, որոնց մէջ, առանձին խորշերում, զետեղուած են նոցա սերմերը:

Սերմերը տարածւում են ամենուրէք: Նոցա կտցահարում — ուտում են թռչունները և յետոյ հեռու թռչելով, առաւելապէս իրանց տարագնացութեան ժամանակ, արտաթորում են նոցա՝ շատ անգամ բոլորովին անմարս: Բացի սորանից՝ նոցա հեշտութեամբ քշում — տանում է քամին. այս բանին օժանդակում են այն *թեւուկները*, որոնք լինում են շատ բոյսերի վերայ: Մի քանիսների սերմերը զգեստաւորուած են բամբականման աղուամազով. սոքա են *թռչկան* սերմերը, որոնց քամին տարածում է ամենայն կողմեր: Այսպէս ահա բոյսի ամենագլխաւոր մասը պտուղն է (սերմը): Պտուղ արտադրելու համար անհրաժեշտ են կնիքը և առէջքները. հետևաբար՝ բաժակը և պսակի թերթիկները կարող են և չլինել: Այն ծաղիկները, որոնք գեղեցիկ պսակ չունին, աչքի չեն զարնում. բայց դոքա գտնւում են ամենաօգտակար բոյսերի վերայ: Յորենի և զարու հասկերի ծաղկածածկոցի (բաժակի) փոխանակ ծառայում են երկարաձև կանաչ թեփուկներ: Յետ բաց արէք

այդ թեփուկները և դուք կըզտնէք երեք փոքրիկ ծաղիկներ, որոնք նոյնպէս ծածկուած կըլինին աւելի նուրբ թեփուկներով. նոցա տակից դուրս կերևան երեք երկար *առէջքները*՝ բարակ ծիլերով ու խոշոր փոշիանօթներով, և մազոտ, երկճեղքուած *կնիքը*։

Հ.

Մ ի ա տ ն ա կ և ե ր կ ա տ ն ա կ բ ո յ ս ե ր։ Բոյսերը, որոնց առէջքները և պտղամանները, (թէև առանձին ծաղիկների մէջ), մէկ ծառի վերայ են, կոչւում են *միատնակ* բոյսեր. բայց կան և այնպիսիները, որոնց առէջքաւոր, կամ ինչպէս նոցա անուանում են, *արական* ծաղիկները մի ծառի վերայ են, իսկ պտղամանաւոր կամ *իգական* ծաղիկները միւս ծառի վերայ։ Այսպէս է, օրինակ, ուռենին։ Դուք, երևի, շատ անգամ տեսած կըլինիք ուռենու խաւոտ ճիւղերը իգական ծաղիկներով, երբ պտուղներն արդէն հասունացած են լինում։ Այդտեղ դուք կըտեսնէք անհամար պայթուած պտղամաններ և իւրաքանչիւր պտղամանի միջից, կարծես, դուրս են նայում սերմերը, որոնք զարդարուած են բրդոտ գանգրամազով։ Այսպիսի գառնուկաւոր ճղներ չեն ունենում արական ծաղիկներ ունեցող ուռենիները։ Այս տեսակ ծառերը կոչւում են *երկատնակ*։ Ուրեմն ծաղկափոշին առէջքներից ինչպէս է ընկնում պտղամանների մէջ, երբ նոքա ոչ թէ միևնոյն ծաղկի, այլև միևնոյն ծառի վերայ չեն։ Իգական ծաղիկներին այս փոշին հասցնում են՝ քամին և միջատները, առաւելապէս մեղուները. երբ նոքա ցած են իջնում առէջքաւոր ծաղիկների վերայ, որ դուրս ծծեն նոցա միջի մեղրահիւթը, փոշին առատութեամբ կպչում է նոցա ոտներին և այդ փոշին իրանց հետ առած՝ նոքա թռչում են դէպի այն բոյսերը, որոնք ունին միայն պտղամանաւոր ծաղիկներ։ Առանց թիթեռների, բզեզների և մեղուների գուցէ չաճէին շատ խոտեր և ծառեր։

85. ԱՐՏԱՍՈՒՈՂ ՈՒՌԵՆԻ

Կարկաչահոս գետի եզերքում երես առ երես բուսած են երկու ուռենի ճկուն, կարմրաւուն ճղներով։ Նոքա երկուսն էլ աճել են մի զոյգ սերմիկներից, որ մի ժամանակ գլուխ գլխի պառկած են եղել հինօրեայ ուռենու ծաղկի մէջ։ Երբ որ այդ սերմիկները դեռ ևս քնած էին իրանց տաք օրրանի մէջ, մի տաստիկ քամու ճայթիւնն դուրս խլեց նորանց այն տեղից ու դցեց սերմիկներից մէկը մէկ, միւսը միւս եզրը. նոքա ընկան փափուկ, խոնաւ հողի մէջ, պստիկ արմատներ դցեցին և փոքր առ փոքր իրանք էլ մեծ ծառեր դարձան։ Մենակ նոքա չէին այնտեղ, ուրիշ շատ ծառեր էլ բուսան նոցա չորս կողմում, այնպէս որ երկու հարազատ քոյրիկները դժուարութեամբ էին միմեանց երեսը տեսնում։ Ահա՛ ինչու նոքա ցած են թողել իրանց ոստերը և այնպէս վշտագին սօսափում են իրանց տերևներով. ահա՛ ինչու մարդիկն էլ տխրալի ծառեր են համարում ուռենին ու շատ անգամ տնկում են նորան իրանց սիրելիների գերեզմանների վերայ ու անուանում են նորանց *արտասուող*։

Յիրաւի՝ ուռենու ոստերից կաթիլ-կաթիլ թափւում է արտասուքի պէս մի տեսակ հիւթ, բայց այս կաթիլները ոչ թէ ուռենին է պատրաստում, այլ նորա վերայ բնակուող մի-ջատները։ Սակայն արտասուող ուռենին էլ ունի իւր ուրախ օրերը։ Գարնան ովզբում, երբ այլ ծառերն ու թփերը տակաւին քնած են լինում, նոցա կոկոնները (պտոյտները) սկսում են արդէն զարթնել։ Մինչ այն ժամանակ, կլինամոնագոյն թեփուկներով փաթաթուած, քնած էին նոքա. տաք հովը փչեց թէ չէ՝ նոքա իսկոյն քանդեցին իրանց բանտի պատերը և

դուրս երևեցան այնտեղից որպէս փափուկ ու սիրուն բամբակի քուլաներ: Այդ քուլաներն ուռենու ծաղիկներն են, բայց նոքա երկու ծառերի վրայ էլ նման չեն իրար. մէկի վերայ քուլաները դեղին են և թեփուկների տակ ունին բազմաթիւ *փոշիանօթներ*. այստեղ է հասունանում ոսկեփայլ փոշին: Մեղրի հոտ է գալիս քուլաներից և մեղուները խումբ-խումբ շտապում են նոցա մօտ՝ անուշահոտ կերակրի պաշար առնելու համար: «Ձատ լաւ, ասում են մեղուներին ոսկեշող քուլաները, մեղր առէք, ինչքան կուզէք, Տէրը ձեզ հետ, բայց դորա փոխանակ մի փոքրիկ ծառայութիւն արէք մեզ.—այնտեղ, դեսի մի ւս ափում, բուսած է մեր հարազատ քուրիկը, գնացէք նորա մօտ, բարև տուէք մեղանից և մեր ոսկեփայլ փոշուց ընծայեցէք նորան, որքան կարողանաք»: Մեղուները յանձն են առնում ուրախութեամբ. նոքա իրանց թաւուտ հանդերձը բոլորովին շաղախում են ոսկեշող փոշիով. մնում է սորանց թռչիլ մինչև մի ւս ուռենին, որ կատարեն յանձնարարութիւնը: Այս մէկ ուռենու քուլաները աւելի քնքուշ ու աւելի կանաչ են. նոքա նայնպէս մեղրի հոտ ունին և դրաւում են մեղուներին. բայց նոցա թեփուկների տակ չկան փոշիանօթներ, այլ երկերկու *պտղամաններ* բաց բերանիկներով—*կնճիթներով*, որոնք անհամբերութեամբ սպասում են իրանց հարազատ եղբօր ոսկեղէն ընծային: Մեղուները բերում են այդ ընծան և անկասկած կտան, ում որ պէտք է հասնի. տալիս են նոքա և որպէս պարգև իրանց աշխատանքի, այստեղ էլ են մեղր ստանում: Ուրախութեամբ ընդունում են պտղամաններ ունեցող քուլաներն իրանց հարազատ, թէև հեռաւոր, եղբօր ընծաները և նորանց օգնութեամբ շինում են իրանց փոքրիկ սերմիկները:

Աշունքին նորէն փչում է քամին, նորէն ցրւում են սերմիկները, և թէպէտ նոքա հազարներով փչանում են, բայց այնքան շատ են լինում, որ ինչպէս և իցէ մէկն անշուշտ ընկ-

նում է պտղաբեր երկրի վերայ և ժամանակին ուռի ծառ է դառնում: Այսպէս ուրեմն մեղուների շնորհիւ մի ուռենի ընծայ է ուղարկում միւսին:

86. ԿԱՂՆԻ ԵԻ ԵՂԷՓՆ

Մի օր կաղնին
Եղէգնիկին
Խօսքեր նետեց այս կերպով.
«Թէ որ դու դժգոհելով
Բնութեան դէմ տրտընջաս ու դանդատիս,
Ձշմարիտ որ հաճ [1]) ունիս.
Ձնճղուկ ասածդ որքան փոքր ու թեթև թռչուն է,
Եւ սակայն քեզ համար ահագին բեռ՝ ծանրութիւն է.
Թեթև բարակ հովիկ թէ փչէ,
Որ չըի երեսն էլ հազիւ շարժէ,
Քեզ կը տատանի, դետին կը ծռուլիս
Ու խըղճուկ-խըղճուկ կընկնիս, կըպառկիս:
Իսկ ես,
Կըտեսնես,
Կովկաս սարի պէս
Փառաւորապէս
Արևի ճառագայթներն եմ արգելում
Եւ հովերի կատաղութիւնը ծաղրում.
Ես կանդնած եմ շիփ-շիտակ.
Անխռով, ան-այլայլակ:
Այն քամին, որ քեզ համար սոսկալի փոթորիկ է,
Ինձ անուշ զեփիւռիկ է:

---

[1]) Իրաւունք:

Գոնէ գայիը, ողորմելի, ինձի մօտիկ տեղ բուսնէիը,
Իմ ճիւղերիս թանձր շուքի տակ մտնէիը ու պահուէիը։
Ես քեզ կըպահպանէի մըրիկների, հովերի դէմ։
Բայց ձեր կոյր բաղդն այն է եղել, ես ինչ անեմ։
Ձեր ճակատի գիրն է, որ բաց տեղ, քամու առաջը բուսնիք
Ու անդադար այս ու այն կողմ գինովի պէս տատանուիք»։

Եղէգնիկը պատասխանեց կաղնիին.
«Պարոն, քո սրտիդ բարուրթեանը խօսք չունիմ.
Բայց ես կրխնդրեմ, որ հոգ չանես ամենևին.
Դու ինձ այնքան խեղճ մի կարծիլ.
Հողմ, փոթորիկ ինձ շատ վնաս չեն անիլ.
Ես թէպէտև կրծռուիմ, բայց չեմ կոտրիլ.
Հողմի ոյժը վրաս սաստիկ չի ազդիլ.
Եւ, գուցէ, կարէ քեզ վրնաս բերել։
Իրաւ է որ մինչև հիմա
Դիմացել ես դու փոթորկի
Մրրկի,
Մինչև հիմա ուղիղ կանգնած՝
Ձես ծռուած
Քամիների հարուածներից—
Փչուածքից,
Բայց Ըր շտապենք.
Վերջը կրտեսնենք։

Չաղիւ թէ եղէգն այս խօսքերն ասաւ,
Մեւս կողմից յանկարծ քամին վերկացաւ,
Սաստիկ անձրևով՝ խոշոր կարկուտով
Լցրեց անտառը գոռում գոչումով։
Կաղնին ըՀ չարաւ.
Իսկ եղէգը մինչև գետին պառկեցաւ։

Քամին, կասես, քանի գնաց սաստկացաւ,
Մէկ կատաղեցաւ, մէկ էլ գոռաց, մըռընչեց
Ու արմատից խլեց, ձգեց
Այն կաղնին
Ահագին,
Որ ամպերին հասել էր իւր գլխովը
Եւ անդունդին կըռթընաճ էր ոտքովը։

ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

87. ՀԱՅԻ ԳԵՐԻԱՍՏԱՆԸ

Գ... գիւղի վերի թաղումը մի տուն կար՝ բոլորովին հեռու միւս տներից: Այդ տան չորս կողմովը բաւականին բարձր ցանկապատ էր քաշած, որ պարսպի ամրութիւն ունէր և, ինչպէս ասում են հէքիաթներումը, ծիտն իրան թևովը, օձն իրան պորտովը չէր կարող դորա վերայով ներս թափանցել: Ժամանակով մեծ տուն էր այդ տունը: Միանգամից ութ-ինն օրօրոց էր օրօրւում այդ տանը, չորս-հինգ թորոն հաց էր թրխւում Աստուծու օրը: Երկու դութան էր դուրս գալիս այդ տանիցը, վաթսուն գլուխ կով ու գոմէշ էր կթւում. *սուրուով* ոչխարներ, *ղոլուկներով* խոզեր, *իլխիներով* ձիաներ էին պահւում: Այդքան ապրանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին: Տասն եղբայր էին որդոց ու թոռանց տէր, որոնց թիւը հասնում էր եօթանասունի: Բայց երբէք չէր պատահում, որ դոքա ամէնքը երբևիցէ միասին մի սուփրի վերայ գտնուէին, միասին իրանց նահապետի չորս կողմը ժողովուէին: Քանի մի հոգի տարուայ մեծ մասը սարերումն էին անցկացնում, ըստ որում ոչխարներ էին պահում, մի քանիսը որպէս տաւարած՝ գոմերումն էին մնում, որ մի օրուան չափ հեռու էր գիւղիցը, մնացածներն էլ հեռաւոր դաշտերում վարուցանքով էին պարապում: Թէպէտ սոքա այսպէս միշտ տանից հեռու էին մնում, այնուամենայնիւ իրարու կարօտ էին քաշում և իրարու հետ սիրով մնում:

Ահագին մեծութիւն ունէր այդ տան շինութիւնը, և եթէ այդպէս շէն չլինէր, մտնողի վրայ սարսափ կըբերէր, ինչպէս որ հէքիաթներում ամայի տունը սարսափ է բերում մտնողի վերայ, մանաւանդ նախապաշարեալ գիւղացու վերայ: Հարիւր երեսուն տարեկան էր՝ որ մեռաւ, այս տան վերջին նահապետը և ինքն ականատես էր իւր բոլոր ժառանգների և հարբսուտութեան կարճ միջոցում ուչնչանալուն, բայց Աստուծուն փառք տալը իւր բերանից չպակսացրեց մինչև մահը: Յակովը էր նորա անունը և միշտ միտս էր ձգում Հրէից Յակովը նահապետին: Ձատ անգամ եմ համբուրել նորա ձեռքը և նա ինձ օրհնել է: Նորա օրհնութիւնը մեծ տպաւորութիւն էր գործում իմ մանկական սրտի վերայ: Սուրբ էր համարւում դրանց օջաղը և սովորութիւն կար գիւղի մէջ, որ նորապսակ հարս ու փեսաներին, եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կբերէին դրանց օջաղը համբուրելու: Ձոքում էին նորապսակները և ծերունազարդ Յակովբի օրհնութիւնն ստանալով՝ գնում էին, իրանց *մուրազին* հասնում:

Նշանակած բառերի տեղ հայերէն բառեր դրէք:

88. ՍԻՐԱՍՈՒՆ ԽՆՂԻԿ

Ես իմ սիրած չքնաղ ծաղկին նայեցի
Եւ իմ աչքին բացուեց դիւթիչ մի աշխարհ.
Տեսայ հովտում սպիտակ տնակն հայրենի,
Ձուրջը փռուած մարգագետին ծաղկավառ:

Եւ ես նստած այդ տնակի դրան մօտ
Գրում էի կրծքիս սեղմած մանուկին.
Իսկ դու իբրև գաւակատէր մայր գրթոտ,
Թրպտում էիր, ով իմ քաղցրիկ ամուսին:

Բայց ահա նա թռչնեց՝ խղճուկ իմ ծաղիկ,
Ո՜հ, էլ զուր եմ զարձեալ նայում ես նորան...
Էլ չեմ գտնիլ ես այդպիսի քնքուշիկ
Մի այլ ծաղիկ. նա մենակ էր աննման:

---

89. Մ Ե Ծ Ն Ա Ն Ը

Այն անդամը, որ ամենից աւելի նախապատիւ է համարւում դերդաստանի մէջ և ամենքի վերայ իշխում է, սովորաբար հայր է կոչւում: Այդ անունի վերայ է բոլոր տան բեռը, հոգսը, սնուցանելու և հագցնելու ծանրութիւնը:

Մի այդպիսի անուն էլ կայ տան մէջ, որ քանի այս հայրը կենդանի է, նա երկրորդական դեր է խաղում, իսկ սրա մահից յետոյ՝ անմիջապէս միահեծան տէր է դառնում, իւր վերայ է առնում ամբողջ դերդաստանի սանձը և վայելում է ընդհանուրի յարգանքը:

Այս անձը մայրն է. սա այն անձն է, որ կարծես իւր ամուսնու մեծ կորուստից յետոյ՝ մի մխիթարական վարձատրութիւն է գտնում:

Այս կինն է՝ որ կրում է իւր վերայ *նանի՛*, *ազի՛*, *մեծ նանի՛* յարգելի մականունները, և դրա մէջ էլ կենդրոնացնում է իւր անպայման իշխանութիւնը, մանաւանդ եթէ դեռ ևս կայտառ և առոյգ է նա: Այն օրուանից՝ առանց նորա տնօրէնութեան և խորհրդի՝ ոչինչ բան չի կատարուիլ: Ո՛չ միայն իգական սեռը, ոչ միայն տան փոքրիկները, նորա կատարեալահասակ որդիքն էլ առանց նանի կամ մեծ նանի ոչինչ գործ չեն բռնիլ: Թողնենք մի յարկի տակ ժողովուած անբաժան եղբայրները, որոնք ամեն երեկոյ մանրամասնօրէն հաշիւ կըտան իրանց մօրը բոլոր կատարած գործողութիւնների համար,—բաժանուած և անհամաձայն որդիքն էլ առանձնապէս իրանց մօրը

կըհաղորդեն իրանց գործելիքը և կըլսեն նորա տուած բարի խորհուրդները:

—«Գնամ, նանիս հարցնեմ, օրհնէ այս իմ նոր գործը, որ Աստուած էլ յաջողի»:

Իւր որդոց բաժան ժամանակը նանը ապրում է նոցանից մէկի մօտ, որն աւելի կարօտութիւն ունի իւր հսկողութիւններին, որի երեխայքը մանր են կամ կինն աւելի պատանի ու անփորձ է. բայց և այնպէս նա լիակատար իրաւունք է պահում և իւր բոլոր որդոց տները իւր սեպհականութիւնն է համարում, ժամանակ ժամանակ մտնել, կարգադրել, բարեկամներին հիւրասիրել, կերակրները եփել ու առանց իւր հարսին հարցնելու բաժիններ ուղարկել իւր միւս որդոցը կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարևաններին, այս ամենը նա կատարում է ամենայն իրաւամբ: Այդ ինքնիշխան կինը շատ լաւ գիտէ, որ իւր համեստ հարսին հաճելի չէ իւր արարքը, բայց ում ինչ, հարսն ինչպէս կըյանդգնի, քանի սկեսուրը գլխին պտտւում է, տանտիկնութեան իրաւունքների մէջ մտնել: Այսօր նա մեծ նանն է, քանի որդի ունի, այնքան էլ տուն ու օջախ ունի, այնքան էլ շերեփ կայ ձեռքին:

Այսքան ահա մեծ է ամուսնու մահից յետոյ նրա այրի կնոջ յարգը:

Եթէ ներկայումս փոքր առ փոքր ընկնում են այս նահապետական սովորութիւնները, հարսներն աներեսանում են, որդիքը մօր վրայ գոռում, նորան մարդատեղ չեն գցում, հին ժամանակներումն այդպէս չէր, հին ժամանակը Աստուծոյ կրակը կըթափուէր այդպէս անողների գլխին:

Մեծ նանին ոչ թէ միայն հարազատ որդիքն են լսել, այլև երեք-չորս հօրեղբօր որդիք իրանց զաւակներով, թոռներով ու ծոռներով նայել են այդ ժրաջան տանտիկնոջ ձեռքին: Քառասուն, յիսուն, վաթսուն, մինչև ութսուն հոգի մի ըն-

տանիք են կազմել և այդ փոքրիկ գիւղի ամրութիւնը, պնդակազմութիւնը, ներքին կապը մեծ նանն է եղել. նա է իւր ճեռքովն ամենքին իւր արժանաւորութեան համեմատ բաժին տուել ու նորա արածի վերայ ոչ ոք չի տրտնջացել։

90. ԳԻՒՂԻ ՃԱՄԸ

Տան-դօ, տան-դօ... Նազլու, վերկաց,
Արեւն արդէն մայր է մտնում.
Տես, խաթունն էլ գործը պրծած՝
Փողոցումն է, ժամ է գնում։

Ճամը տուին — տան-դօ, տան-դօ։
Տէր, վառքդ շատ, տան-դօ, տան-դօ։

Ճուտով նախիրն՝ հանդից կըգայ.
Դնանք, որ էլի շուտ յետ գանք,
Կովը կըթենք, թր՛ռ-թր՛ռ, կաթ տայ,
Կովը կըթենք, մեր ցաւն հոգանք...

Ա՛խ, նազլու ջան, չես իմանում —
Էգուց էլի աղան կըգայ.
Նորա սիրտը միշտ անկշտում,
Էլի ամպի պէս պիտ՝ գոռայ.
— «Ճուտով, գրիգոր, փողերը բեր...
Էլի չըկա՞յ. կովըդ Հանիր»...
Ա՛խ, նազլու ջան, այն ինչ բան էր,
Մ՛ոտդ է հերու... Տէր, դու փրկիր։

Հայրիկդ արդէն գնացել է,
Որ փող ճարէ. երբ պիտի գայ.
Տեսնենք մէկը խղճացել է...
Ա՛խ, սև օրը Տէրն էլ չըտայ։

Ճուտով, նազլու, գնանք ժամը,
Աղօթք անենք, քո ճայնն Աստուած
Ճուտ կըլսի — այս անգամը
Մեզ չի թողիլ անկով, անհաց...

---

91. ԴՐԻՃԱԿ

Նահապետական պարզ սովորութիւնները օրըստօրէ անհետանում են. բարեկամութիւն, հարևանութիւն սուրբ բառերն իրանց նշանակութիւնը միմիայն քաղաքավարութեան ձևերի մէջ են պահում. էլ չըկայ այն ընտանեկան կապը, որ օտարներին միմեանց հետ մի տան պէս պահում էր. խոր գիւղերումը որպէս և իցէ այժմ էլ կըտեսնես նախկին քաղցրութեան ստուերը, իսկ քաղաքներումն ու մեծամեծ գիւղերումը՝ երբէք։ Մի անմխիթար ապագայ է դուշակում մեզ այս բանը։

Սորանից քսան կամ քսանուհինգ տարի առաջ, իմ լաւ մխիթարս է, մեր գիւղերումը երկու դրացի մի տան պէս էին ապրում, մի առած ունէին, որ պատգամի նման ընդունուած էր ամենքից. «փոխը ե օ թ ը տ ու ն է պ ա հ ե լ»։ Այս առածի սուրբը նշանակութիւնն ամենքին լաւ յայտնի էր. պատէպատ հարևաններն եղբօր նման միմեանց կարիքին հասնում էին։ Ինչպէս այսօր՝ ես յիշում եմ *դրիջակը*, որ բացած էր մեր և մեր պատկից դրացի Ազատենց պատի մէջ։ Այս մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր երկու հարևանների միջնապատումը շինած. ոչ վարագոյրն էր ծածկում այդ պատուհանը և ոչ մի զգալի արգելք խափան էր լինում ականատես լինել միմեանց տան գաղտնիքին. մի բարոյական զգացմունք էր, որ հաստ պատի նման փականք էր դնում դրիջակի վրայ, այն է՝ ամեն մարդ սուրբ պարտականութիւն էր համարում դրիջակը զորճ

դնել կարևոր ժամանակը մյայն՝ ճրագ ուղել մխմեանցից, կեբակրի բաժին տալ իրար, քաղցր զրոյցներ անել պարապ միջոցները, մէկ մէկու նեղութիւնին օգնութիւն հասնել. ահա ինչ էր դրիջակի նշանակութիւնը. ընդհակառակն՝ աննեղելի յանցանք էր, եթէ մինը չար դիտաւորութեամբ ձգտէր իւր դրիջակից դրացու տան գաղտնիքն իմանալ. եթէ որպէս և իսկ դիպուածով նա տեղեկանար դրիջակովը իւր հարևանի տան որևիցէ ընտանեկան խորհրդին, նա պատրաստ էր իւր լեզուն բնիցը պոկել, քան թէ մեղանչել դրացիութեան սուրբ պարտականութեան դէմ:

Այսչափ մեծ էր այն նուիրական փոքրիկ պատուհանի սրբութիւնը մեր պարզ և առաքինի պապերի համար:

—«Ո՛րդիք ջան, ձեզ մատաղ, առանց պատը ծեծելու դրիջակովը մտիկ չըտաք. ով գիտէ, ինչ բանի են», զգուշացնում էր մեզ ամեն ժամանակ իմ լուսահոգի մայրը:

Մի կողմից էլ որքան այս դրիջակները շինուած էին փոխադարձ օգնութեան նպատակով և կամ, դուցէ, պարսկական բռնակալութիւնից ազատուելու համար, բայց և միևնոյն դրիջակի միջով երկու սիրով հարևան տանտիկինները ազատ միջոցները ժամերով ծնօտները դէմ էին տալիս դրիջակի քարին և քաղցր զրոյցների մէջ խորասուզւում. դրիջակների միջնորդութեամբ գերդաստանի մայրերը, առանց իրանց ամուսինների ու որդոց համաձայնութեան, խնամի էլ էին դառնում:

---

92. ՋՐՕՐՀՆԻՔ

Յունվարի 6-ին, առաւօտեան արշալոյսից առաջ, Աշտարակ գիւղի եկեղեցու զանգերը խփեցին. ամեն մարդ իւր ընտանիքով գնաց եկեղեցի: Հէնց որ պատարագը վերջացաւ, տէրտէրներն ու տիրացուներն, առաք փառաք զարդարուած, խաչ ու խաչ-

վառով, քշոցները շրղկշրղկացնելով, բուրվառները շիկշխկացնելով, կնդրուկի հոտն աշխարհը լցնելով, ժողովուրդը առաջնեին գլխաբաց գնալով, խաչը տարան «Մելիքի բաղչէն», այնտեղ առուռւմը ջուրը ձգելու համար: Առուի եզերքի ուռիների վերայ ամուրի երիտասարդները, հրացանները լցրած, կանգնել էին. մեր Սօսն էր դրցա գլխաւորը: Առուի երկու կողմը շարուել էին մեծ բազմութիւն. «Ազըզենց կալը» կանանցով և հարս ու աղջկերանցով զարդարուել էր. մի մարդ չկար, որ մի փոքրիկ «փ ա ր չ» կամ մի շիշ չունենար խաշալուայ վերցնելու համար:

Հէնց որ մեռոնը ջրի մէջն ընկաւ, ուռիների միջից հրացաններն սկսեցին որոտալ. ամեն բերանից այս խօսքերն էին դուրս գալիս. «Ո՛վ Սուրբ Մեռոն, դու մեր հայոց ազգը հաստատ պահես, ամեն ցաւի փարատում լինիս, ամեն ցաւսումի զովութիւն տաս»: Կանայքն էլ, արտասուք թափելով, ջերմեռանդութեամբ աղօթում և իրանց ցաւերին դարման էին խընդրում: Առուի վերայ կանգնածներն էլ մի-մի փարչ խաչալուայ էին վեր առնում, աչքներին քսում, մի քիչ խմում ու պահում՝ տուն տանելու համար:

Խաչը ջրիցը հանելու ժամանակը, փառաւորուի՛ տէր հայրը, մի այնպիսի ազդու քարոզ տուեց, որ թէ՛ ինքը լաց եղաւ և թէ՛ ժողովրդին լացացրեց: Ահա նրա քարոզը:

«Օրհնեա՛լ ժողովուրդ, դուք գիտէք, որ ամենքս էլ հայ քրիստոնեայ ենք, Լուսաւորչի լոյս հաւատիցն ենք, 12 խաչապաշտի գլուխը մենք ենք. մեր մեռոնը ամեն ազգի մեռոնից էլ գօրաւոր է. Էջմիածինը մեր սուրբ աթոռն է. Լուսաւորչի լուսաթաթախ սուրբ Աչը այնտեղ բազմացրած՝ մեզ համար բարեխօսութիւն է անում, որ Աստուծու աչքը մեզ վրայ քաղցր լինի. արեւնակոլոլ սուրբ Գեղարդը, կենաց փայտը այնտեղ են. մեր ազգին ամեն նեղութիւնից ազատել են և մինչև վերջը պէտք է ազատեն. աշխարհիս բոլոր սրբերի

մասունքներից էլ այնտեղ կայ. գինաւոր Սուրբ Գէորգն էլ այստեղ, ծառայ եմ նրա սուրբ զօրութեանը, մեղ թէև ու թիկունք է, մեր բանին ու գործին յաջողութիւն է տալիս, մեր այգինները կարկուտից, թրթուրից, ժանգից ազատում է. մենք էլ, օրհնեալ լինիք, սոցա փոխարէն պէտք է մեր ջերմեռանդութիւնը ցոյց տանք, սրտներս բաց անենք, ոչինչ չխնայենք: Քրիստոս Տէրն մեր լինքը այսօր մկրտւում է. Յովհաննէս Մկրտիչը այսօր նրան կնքահայր դարձաւ. մենք էլ այն օրինակն ենք պահում: Պէտք է որ այս խաչը, որ Քրիստոսի փոխանակ ջուրն ենք գցել, մէկդ հանէք՝ սուրբ եկեղեցուն օգուտ տաք, ինչ որ ձեր սրտիցը կըըղխի: Օրհնեալ լինիք, մի խնայէք, ով որ ձեզանից շատ կըտայ, թող նա հանի. միւսներդ էլ թէ ուզում էք, տուէք, թող եկեղեցին շահուի: Դէհ տեսնեմ, որդիք, ով է գալիս խաչին կնքահայր դառնում: Խաչի զօրութիւնը ձեր տուն ու տեղի, ձեր ագդի ու ընտանիքի, ձեր անդ ու անդաստանի վրայ լինի»:

Տէրտէրի քարոզն ամեն մարդու սիրտն էլ դուր գցեց. բայց մեր ջերմեռանդ Սօսը ամենքիցն առաջ ընկաւ, ծառի վերայից ձայն տուեց. «Ես երեք ռուբլի կըտամ, կըհանեմ. իմ կարողութիւնս այսքան է ներում. ով աւելի կըտայ՝ հրամայեցէք»:

—Դէհ, ցած արի, օրհնեալ լինի քո ծնունդը, ձայն տուեց մեծ տէրտէրը. անցեալ տարի դռնաբացէքը դու արիր, հիմա էլ խաչին ես կնքահայր դառնում:

Սօսը ցած իջաւ, հրացանն ու զէնքերը եղբօրը տուեց, գնաց տէրտէրի կողքին կանգնեց:

—Օրհնեալ լինի Սօսը, բարձր ձայնով առաց տէր Հայրը, Աստուած սորա հաւատն օրհնի, շատ ապրի, Քրիստոս սորա սրտի խորհուրդը կատարի. անցեալ տարի ժամի դուռը բաց արեց, հիմա խաչն է ջրիցը հանում, Յովհաննէս Մկրտչին փոխանորդ դառնում, երեք ռուբլի էլ փող է տալիս սուրբ եկեղեցու օգտին:

Ամեն տեղից կանչեցին. «Զօրանայ լինքը,—խաչն իրան պահի, շատ լաւ է անում»:

Խաչը տէրտէրը ջրիցը հանեց, թաշկինակը ձգեց Սօսի կրծքին, տուեց գլուխն ու շարական ասելով յետ դարձան դէպի եկեղեցին: Մինչև եկեղեցի մտնելը երիտասարդներն իրանց հրացանները ճանապարհին տրաքտրաքացնում էին:

Խաչը տարան եկեղեցի. Սօսին կանգնեցրին սեղանի առաջը՝ խաչը գրկին. ջերմեռանդ ժողովուրդն եկաւ՝ համբուրեցին ու գնացին իրանց տները:

Թամերդութիւնից յետոյ, տէրտէրները, տէրացուները, երիցփոխը և մի քանի պատուաւոր մարդիկ գնացին Սօսենց տունը՝ հաց ուտելու:

---

93. Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Սրբալոյս Միւռոնի օրհնութեան հանդէսը ոչ միայն հոգևոր, այլ և ազգային ժողովրդական բաղձալի մի ուրախութիւն է և ամեն մի հայի համար մի վսեմ ու խորհրդաւոր նշանակութիւն ունի: Մեր այսօրուայ կեանքի մէջ, երբ Լոնդոնից սկսած մինչև Ճաւայ կղզին և Հեռաւոր Չնդկաստանը՝ ամենուրեք ցրուած են հայերը, ս. Միւռոնի օրհնութիւնն է, որ, ինչպէս ս. Էջմիածնի հայրապետական աթոռի անբռնաբարելի իրաւունք, ամեն տեղի հայերին կապում է ի մի և ամենքի աչքը ուղղել է տալիս դէպի աղգային ընդհանուր կեդրոնը՝ դէպի նուիրական ս. Էջմիածինը: Համազգական նախամեծար Աթոռի անբռնաբարելի իրաւունքի մէջ է ծածկուած ազգիս ընդհանուր միութեան դաղափարը. այս է պատճառը, որ ս. Միւռոնի օրհնութեան հանդիսի ժամանակ՝ ս. Էջմիածնի լայնարձակ գաւթում ժողովուած է լինում բարեպաշտ հայերի աշխարհախումբ բազմութիւնը՝—Չնդկաստանից, Պարսկաստանից,

Տաճկաստանից, Ռուսաստանից, մի խօսքով երկրագնտի բոլոր վիճակներից:

Ս. Մխիթարը մեր ժողովրդի հոգևոր բարոյական կեանքում դեռ ևս հին ժամանակներում մի առանձին ու խորհըրդաւոր դեր է կատարել: Հայ ժողովուրդը մի շարք առածներ, դրոյցներ ու օրհնութիւններ ունի ս. Մխիթարի վերաբերմամբ: «Սրա ճակատին մեռոն կայ քսած». «նրա ճակատին կ'ասես թէ մեռոն չըլինի» և շատ ուրիշ այսպիսի խորհրդաւոր խօսքեր հայ ժողովրդի համար առաքինութեան կամ անբարոյականութեան աստիճանները որոշող գաղափարներ էին:

Այսպէս թէ այնպէս, բայց ս. Մխիթարի օրհնութիւնը այսօր Հայաստանեայց եկեղեցու ամենահին ծիսակատարութիւններից մինն է և նորա մանրամասն հետազօտութիւնը գիտնական հետազօտների ձեռքով պիտի ապացուցանէ, թէ որքան անարատութեամբ Հայաստանեայց եկեղեցին պահպանած է քրիստոնէութեան առաջին դարերի աւանդութիւնը:

Ս. Մխիթարի օրհնութեան համար խիստ որոշ ժամանակ չկայ նշանակուած: Այդ հանդէսը կատարւում է միշտ, երբ վիճակներում և Մայր Աթոռում սպառւում է ս. Մխիթարի պաշարը: Մեր դարում սովորաբար կատարւում է չորս-հինգ տարին մի անգամ. բայց ռամիկ ժողովրդի մէջ ընդհանրացած է այն կարծիքը, որպէս թէ եօթը տարին մի անգամ է կատարւում:

Ս. Մխիթարի օրհնութեան հանդէսը խիստ սկսուած է նախորդ երեկոյին, որպէս նախատօնակ. բայց Մխիթարի պըղընձեայ մեծ կաթսան, զտուած ձիթով լցրած, արդէն 40 օր է, որ դրուած է աւազ սեղանի բեմի վրայ: Նորա բերանը ծածկած է կափարիչով և քօղարկած է եօթնադուենայ քօղով: Կափարիչի վրայ դրուած է մի մեծ ու ճաճանչաւոր խաչ, որի արծաթափայլ պատուանդանը Ս. Էջմիածնի տաճարն է պատկերացնում:

Առաւօտեան ժամերգութիւնը արդէն մինչև արշալոյսը վերջացած էր: Ժամը ուղիղ վեցն էր, որ զանգակների նուագը աւետում էր պատարագի ժամը: Ամեն ուխտաւոր աշխատում է Տաճարի միջումը մի տեղ բռնել, որ հանդիսի տեսարանը աչքի առաջ բաց ունենայ: Բայց կարելի՞ է արդեօք այդ խաժամուժ ամբոխը տեղաւորել: Տաճարի ներքին դասաւորութիւնը մեզ ծանօթ է: Թանձր սիւները, իջման Ս. Սեղանը, հայրապետական աթոռները տախտակամածով շրջապատուած են, որպէս զի խուժան ամբոխի ալիքներից չխորտակուին: Տաճարը դատարկ է: Պէտք է թափօրն անցնի, որ ժամաւորները մտնեն: Դռները ամրացած են կրկնակի. դրսից պահպանում են զինուորները: Մտրակ է, որ շառաչում է անխնայ և դարձեալ դժուարութեամբ է դրոհ ամբոխի խռմունքի առաջն առնւում: Տաճարից դուրս զինուորներին է յանձնուած կարգապահութիւնը, ներսում՝ Թիֆլիսի համքարներին: Կարգադրուած է, որ հեռաւոր տեղերից եկողներին նախապատուութիւն տրուի, իսկ մնացածներին՝ երկրորդ, երրորդ տեղերը աստիճանաբար:

Բայց ահա զանգակները մի նոր եղանակով հնչում են. «Խորհուրդ խորին»-ի ձայնը լսւում է: Երկու անգամ մեր տեսած թափօրական հանդէսը շարժւում է նոյն ճանապարհով, որ բաց է պահել երկու կարգ շարուած զինուորների վաշտը: Բայց այս անգամ այս թափօրը առաւել հանդիսաւոր է և փառաւոր: Ահաւասիկ ձեռքերը համեստութեամբ կուրծքերին դրած, միւս ձեռքերին արծաթազունդ դաւազան, կարմիր զգեստը հագած կաթողիկոսական շքիրները, որ պարսից շահերի տուած արտօնութեանց մնացորդներն են: Նորանց ծանր քայլերին հետևում է, ճերմակ շապիկներ հագին, երգեցիկ խումբը, որի դպրապետի քաղցրանուագ ձայնը «Խորհուրդ խորին» է եղանակում: Սորանց հետևում են երկու կարգով տեղացի և ուխտ եկած քահանաներ, յետոյ աբեղաներ և վարդապետներ: Այս կարգի մէջ ընթանում են ջահընկալներ և

խաչվառ կրողներ. նորանց հետևից չորս աւագ սարկաւագներ՝ տապանակները ձեռքներին՝ յետ ընթաց խնկարկում են Մասունքներին և հայրապետական քօղին: Տասներկու եպիսկոպոսք բոլորովին զգեստաւորուած և երկու կարգ շարուած՝ բերում են հետևեալ Մասունքները. աջ կողմից՝ ս. Գեղարդը, Յակովբ Հայրապետի ս. Աջը, Ծաղկանց Հիւթը, Պետրոս Առաքեալի ճկոյթը, Արիստակէս Հայրապետի Աջը, Աւետարանը: Ձախ կողմից Լուսաւորչի աջը, Գետադարձի Աջը, Թովմաս Առաքեալի աջը, Բալասանը, Թադէի Աջը, Ադաւնին հին Միւռոնով:

Սորանց յետևից շապկազգեստ չորս դպիրներ կրում են կաթողիկոսական ձողաբարձ խաչը և գաւազանը: Սորանից յետոյ գալիս է շառագոյն ամպհովանու տակ Վեհափառ Կաթողիկոսը՝ տեառնագրելով աշխարհախոմբ բազմութիւնը այն ճաճանչաւոր քառաթևեան նշանով, որի մէջ ամփոփուած է Կենաց փայտի մասունքը: Վեհափառը զգեստաւորուած է պատարագչի զգեստով. երկու եպիսկոպոսներ՝ որոնք պիտի սպասաւորէին, կերպասեայ ճերմակ շապիկներով, բազպաններով ու փորուրարներով՝ բարձրացրած կրում են Վեհափառի շուրջառի քղանցները: Ամպհովանու չորս անկիւններից գնում են քշոցակալները, իսկ յետևից կաթողիկոսական գաւազանակիրը՝ Հայրապետական գաւազանը բարձր բռնած: Թափօրական հանդէսն փակում են այն ուխտաւորները, որոնց արտօնութիւն է շնորհուած հանդէսի ժամանակ եկեղեցում նախակարգ տեղ բռնելու:

Հաղիւ թէ թափօրը մտնում է եկեղեցին, Վեհափառը, որպէս պատարագիչ, բարձրանում է աւագ սեղանը և դպիրները բռնում են իրանց տեղը. և ահա ուխտաւորների բազմութիւնը հեղեղի նման գրոհ է տալիս ներս խուժելու: Անցքերը պաշտպանող զօրքերի շղթան այդ հեղեղի անդիմադրելի ալիքների առաջ երերում է: Չէ անցնում մի քանի րոպէ, և տաճարը լցւում է մի ահագին բազմութեամբ, այնպէս որ, յիրաւի, եթէ վերևից ասեղ ձգեն, գետին չի ընկնիլ. տեղ չկայ

որ խուժած չլինի, միմիայն աւագ սեղանի բեմն է, որ ազատ է, այն էլ գուցէ Մասունքների եպիսկոպոսներն են, որ վեցը աջ կողմից, վեցը ձախ կողմից բռնած ունեն աստիճանների վերայ խռնուած բազմութիւնը: Կարծես թէ ովկիանոսն է, որ խռովում է և նորա սոսկալի ալիքները սարսափելի շաչիւնով առաջ ու յետ են տարուբերւում: Առաջ գաւառապետը, յետոյ Վեհափառը յորդորում են խուժանը, որ հանդարտուի,—բայց հնա՞ր է հնազանդիլը: Ո՛րի սիրտն է գնում, ո՛րը թուլանում է. բայց ո՞վ կարող է զորանց ազատել, դուրս բերել, անցքերը այնպէս բռնուած են: Ուրարողութիւնների և ընթերցուածների ունկընդիր լինելու մասին մի՛ մտածիր: Խռովեալ ովկիանոսի սարսափելի աղաղակի մէջ ամէն ձայն խափանւում է: Ես զգում եմ, որ նուաղում եմ, բայց մատս սաստկութեամբ կծում եմ, որ զգայութիւնս արթուն մնայ:

Այս խռովութեան և աղաղակի մէջ պատարագը շարունակւում է: Վերաբերումը կատարուեցաւ: «Ողջոյն»-ը ձայնում են: Վեհափառ պատարագիչը, դառնալով դէպի ժամաւորները, բազմում է սեղանի աջ կողմում Հայրապետական Աթոռի վերայ: Երգւում են ու կարդացւում են օրհնութեան սաղմոսները և աղօթքներն ու ներսէս Շնորհալու «Ո՛ր յառաջագոյն» շարականը: Եպիսկոպոսները հետզհետէ կարգով կարդում են սահմանուած գրքերը և աւետարանները: Պսակիրները սկսում են երգել Հոգւոյն Սրբոյ իջմանը նուիրեալ շարականը:

Մայր Աթոռի լուսարարապետը բաց է անում ս. Միւռոնի կաթսայի եօթնագոյն ծածկոցը և կափարիչը: «Այսօր ցնծամք երկրաւորքս» շարականի վերջին հատուածի վերայ Վեհափառ կաթողիկոսը ս. Միւռոնի կաթսայի մէջ խաչաձև թափում է մինը միւսի յետևից Ծաղկանց Հիւթերը և Պալասանը, իսկ «Առաքելոյ Աղաւնոյ»-ի վերայ հին Միւռոնը: Այդ միջոցին դրսի զանգակներն ու քշոցները ուժգին ու նկրպաշնակ աճում են: ժամաւորը համակւում է մի առանձին հոգեկան բերկ-

լուԹեամբ: Նա լարել է իւր տեսողուԹեան բոլոր ոյժն ու կորովը: Միայնակ փափագն է՝ չնուաղել, որ բաց աչքով տեսնէ ս. Միւռոնի տեառնագրուԹիւնը, որով նա եւի է գալիս: Ահա Վեհափառ կաԹուղիկոսը ձայնով սկսում է տեառնադրել սրբալոյս Միւռոնը՝ նախ կենաց Փայտը ընկղմելով, ապա Աստուածամուխ Գեղարդը և յետոյ Ս. Լուսաւորչի Աջը և ամեն անգամ խաչաձև խառնելով: ՏեառնագրուԹեան «Օրհնեսցի»-ները Վեհափառ Հայրապետը ինքն է երգում, իսկ երկոտասան եպիսկոպոսները մեղմօրէն ձայնակցում են: Սարկաւագը խնդրում է Վեհափառի օրհնուԹիւնը ուխտաւորների վերայ: ԿաԹսան փակւում է նոյն կափարիչով, բայց առանց ծածկոցի: Հոգևոր Տէրը կնքում է Հանդէսը «Պահպանիչ»-ով և դառնում է դէպի սեղանը պատարագը շարունակելու:

Երեկոյեան ՀրավառուԹիւն կայ, որ բաւական ակնապարար տեսարան ունի և բազմուԹեան վերայ ուրախ տպաւորուԹիւն է գոյծում: Նոյն զուռնան, նոյն խաղը, նոյն պարերն ու երգերը, որ նախընԹաց երեկոյին տեսանք, կրկնւում է և այս երեկոյ, միայն առաւել եռանդով ու աշխուժով: Սորա պատճառը գուցէ այն է, որ ուխտաւորը իւր սրտի ուխտը կատարուած տեսնելով՝—ս. Միւռոնի կաԹսան մի քանի անգամ տաք-տաք համբուրելով—իրաւունք է համարում ուրախանալ, քէֆ անել. երեկուայ քէֆը մի տեսակ նախատօնակ էր: Թափառելով այդ ուրախացող խմբերի շուրջը, ակամայ ձեր սիրտն ուրախանում է. մանաւանդ երբ տեսնում էք, որ նորանց քէֆը պատշաճի սահմանից չէ դուրս գալիս: Բոլոր ժամանակ մի դէպք անգամ ինձ չպատահեցաւ տեսնել, որ անվայելչուԹեան ապացոյց համարուէը: Կէս գիշեր էր, որ ՀրավառուԹեան կանԹեղները և լապտերները առկայծելով հանդչում էին: Նորանց լոյսի հետ խաղաղում էր և ուրախացող ամբոխը և կամաց կամաց քուն մտնում, ի հարկէ, Ազամական խորանի աստեղազարդ երկնից կամարի տակ:

94. ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍ

Անլոյս խաւարը, չարուԹեան ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ.
Անցած օրերի մաքուր պարզուԹիւն
ԱպականուԹեան ասպարէզ դարձած.
Էլ չէր կարմրում նենգամտուԹիւն,
ԱռաքինուԹեան փառքըն էր շիջած...
Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Ու բեԹղէհէմից նոր արև ծագեց.
Այրից առաջին ճիչը Մանուկի
ՓրկուԹեան ժամը մարդկանց աւետեց.
Նորա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառուցն պլիտ՝ հալեցրնէր,
Ու մարդկուԹիւնը նորա շրԹունքով
ՁշմարտուԹիւնը պլիտ ուսանէր:

---

95. ՀԱՅԻ ԲԱՐԻԿԵՆԻՆԸ

Սորանից երեսուն կամ քառասուն տարի առաջ, բուն բարիկենդանի վերջին շաբաԹը, Աշտարակի փողոցներովն անց կենալ չէր լինել: Ամեն տեղ ուրախուԹիւն, ամեն տեղ սէր ու խնջոյք, ամեն բարձր կտուրի սեղան փռել—բաց անելը հասարակայ էր. էլ պատանի ու հասակաւոր չկար, էլ երիտասարդ ու միրուքաւոր չէիր ջոկիլ, բոլորը միասին երիտասարդացել, կայտառացել էին: Պապիս պէս պատուելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտաւէ գօտկից ոլորած լախտն այնպէս էին փռռացնում, իրար մէջքի կպցնում,

որ մէջքի կաշին վեր էր կենում։ Տէրտէրն էլ՝ վերարկուն ծալած, մի կողմը դրած, կաբի ծլըփան փեշերը կոկիկ հաւաքած՝ գօտիկը խրած, այնպէս էր ծուլ-ծուլ լինում ճժի բոլորքովը՝ որ, կ'ասես թէ, սա իրան կեանքումը միշտ ըմբշամարտ է եղել. միայն լախտը որ մէջքախառն ուսագլխին հասնում էր, զգում էր որ այնպիսի բան իր օրումը չի տեսել։

—«Դէհ, օրհնած, մի փոքր էլ կարդիս խնայեցէք, կամաց խփեցէք Ը», ասում էր մեր տէր-Հայրն ու էլ յետ թռչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը խլել բռնողի ձեռքից։

«Ոչինչ, տէրտէր ջան, այսօր արձակուրդ է, բարիկենդան օրեր է, խելքներս կորել է», պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում։

Այսպիսի իրարանցում, այսպիսի զոռում-գոչում, թէ ուրիշ ժամանակ լինէր, ամէնքը կըկարծէին, թէ գիւղը կոխեցին, աւար տուին. մօտագայ գիւղերիցն անգամ, դուցէ, օգնութիւն կըգային. բայց հիմա ամբողջ Արագածոտն գաւառն է այդպէս, ինչ պէտք է արած։

«Դէ հերիք չարդուեցինք ծեծուելով, լաւ ալիւր աղցան եղանք, մի քիչ էլ վեգ խաղանք. ով տարուի՝ մէկի տեղակ՝ երկու կաւ գինի բերի»։

Սկսում էին այնուհետև մեր մազով ու միրուքով իշխանները վեգը ձեռների մէջ պտտեցնել և ճժի մէջ շարած ընկոյզներին աչքել։

«Ա՛յ գիտի. երանի՛ էր այն օրը, երբ մենք երիտասարդ էինք. միտս է գալիս՝ ես էի ամենքից լաւ խաղացողը», պարծենում էին ամեն մէկը. «քանի տարի կըլինի՝ վեգի *սախկէն* ձեռս չեմ առել, ի հարկէ որ երիտասարդները մեզ կըտանեն ու մեր կարասի ծեփը կըպոկուի. պա՛հ, պա՛հ, ձեզ մատաղ՝ ինչ գինի ունի՛մ, քաղցրութիւնից կծպճում է, կծպճում. պուօշներդ իրար կըկպչին. չէ, եղբայր, ես պիտի տարուիմ. թէ որ այսօր մեր ներքի այգու գինու համը չտեսնեմ, ձեզ էլ չխմացնեմ, ես կըմեռնիմ. էլ ո՞ր օրի համար եմ պահել։

«Տօ, դէ վեգդ գցում ես, գցի, էլ քանի խօսես ու քո քացախի պէս գինին գովես։ Քո չգրու ես պիտի տարուիմ, որ մեր մեծ այգու գինու համը բերնումդ թողեմ. սրան տես Է. ես կըթողեմ որ դու պարծենա՛ս. այս րոպէիս տասը կարասի ծեփ կըպոկեմ՝ մինը միւսից լաւ», ասում էր երկրորդն ու վեգը ձգում, գիտութեամբ փուստ գալիս։

«Տօ, սատանայ Գէվոյ, ես չեմ տեսնում, որ դու դիտմամբ ես փուստ գալիս. որ մեռնի՛ս, Հա՛մ ընկոյզները կըտանեմ, Հա՛մ էլ մէկի տեղակ չորս կաւ գինի կըբերեմ. գերեզմանս Հօ չպիտի լցնեմ. Աստուած այնքան տուել է, փառք Իրան, որ ճտահար է», ասում էր երրորդն ու վեգը շպրտում։

—Տօ, դէ հերիք է, հերիք, միրուքներիդ ամաչեցէք, այն մանուկներից գոնէ քաշուեցէք. գնանք մենք էլ մի փոքր կոկորդներս թաց անենք. Փարբուս խանը հիմայ կրգայ։

«Ա՛յ տղայ, մարգարէի որդի էիր. ահա՛ Փարբուս խանի աղուէսը (համբաւաբերը) գալիս է»։

Մէկ էլ այն տեսար, գլուխը երկար պոչաւոր թաղիքի գտակ անցկացրած, ոչխարի գզգզուած մորթին, բուրդը դէպի դուրս, մէջքին կապած, երեսն ալիւր քսած, մի ահագին կրակախառնի ձեռքին սիւն տալով՝ մէկը եկաւ, խոր գլուխ տուեց մեր իշխաններին։

«Չը՛, ինչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհի քամին է քեզ պտտել՝ մեր գիւղը գցել», Հարցնում է մի ծերունի։

—Խնդիրս առէ՛ք՝ պատմեմ Աշտարակի Հասարակութեանը, որ մեր Փարբուս տէրը, քաջերի քաջ Եղգեար խանը, իւր նախարարներով ու իշխաններով, իւր մեծամեծներով ու ստրաղրեալներով՝ հինգ Հարիւր մարդու Հետ գալիս է ձեր սեղանը շէն անելու, մեր բարեկամութիւնը Հաստատ պահելու։ Նորա Հրամանն է, որ ողջ գիւղը իշխաններով դուրս գայ նորա առաջ։

«Մեր գլխի, մեր աչքի վերայ տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նորա համար օթևան ենք պատրաստել տանուտէրի վերնայարկի կտրին. սեղանը լիառատ. գաթայ-հալուան հողի պէս. հազար մարդով էլ որ գայ, մեզանից ոչինչ չի պակսիլ: Տղէք, Փարբուս աղուէսին մի պարզև բերէք», հրամայում էր իշխաններից մինը:

Այս խօսքերն ասելուն պէս՝ մօտիկ տանից մի շարան ալանի (չորացրած դեղձ) էին բերում և ձգում մեր պատգամբերի վիզը, մէջքին էլ մի քանի լախտ կպցնելով՝ ճանապարհ դնում:

«Էլ ինչ էք ուշանում, գնանք էլի, հիմա կըզայ մեր Եղգեարը»:

Գնում էին այնուհետև մեր իշխանները և իրանց համար վաղուց փռուած սփռոցի չորս կողմովը շարւում. դափ ու զուռնէն էլ դրանց պոչիցը կպած էր. ուր երթայինն, հետները տանում էին:

«Տանուտէր, դու ուտել-խմելու յետևից ես, էլ չես ասում, թէ փարբուս խանի ընծան ինչ պիտի լինի»:

—Դուք ուրախութիւն արէք, ես վաղուց պատրաստել եմ:

«Եալլա՛», գոռում են փողոցներումը: «Եալլա՛», լսւում է ամեն կտուրներից: Ամենայն տեղից դիմում են Փարբուս խանին, որ գիւղի մի կողմից երևացել էր արդէն:

Ա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ, այս ինչ շատուր են. ամբողջ գիւղը հետը բերում է տնաշէն Եղգեարը: Միայն մեր տանուտէրը, իշխաններն ու տէրտէրը յառաջ չեն գնալ. ինքը խանը պէտք է գայ և նորանց սեղանի վերայ դտնի:

Ուռած-ուռած բազմած է մեր Փարբեցի Եղգեարը իշի վերայ՝ պոչը ձեռքին բռնած, երեսը դէպի յետ, մի երկար ճիպոտ էլ միւս ձեռին, իբրև ծխաքարշ դնչին դէմ արած. նա գլխին դրած ունի մի դղդղուած պարսից խանի երկար գդակ՝ վերան հին փալասներ փաթաթած. երեսին քսած է աթարով

վառուող տան առաստաղի մուր. պարանոցին ձգած է զանազան ոսկրների կտորներից կազմած մի շարան. հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քաշ ընկած արխալուխ. նորա կուրծքը բաց է և նոյն մրով սևացրած, կողքիցն էլ մի երկար փայտի թուր կախած: Երկու երիտասարդ, նոյնպէս այլանդակ հագնուած, քաշում են իշի սանձը. երկուսն էլ յետևիցը մի-մի մեծ, ծայրերը սրած, գաւազանով բզում են իշին. դափ ու զուռնէն ածելով՝ գնում է այդ հանդէսը դէպի տանուտէրի կտուրը, իսկ խուռն ամբոխը շարունակ «եալլա՛» է կանչում:

Եւ ահա խանը, իշի վրայ նստած, մտաւ տանուտէրի բակը: Աղաղակը սաստկանում է: Կառավարչի հրամանով խանի մարդիկը մի րոպէում բարձրացնում են ուսերի վերայ խանին և տանում կտուրը: Այդ միջոցին կտրին նստողներն առատ ալիւր են թափում բարձրացողների գլխին: Փիծաղը, խնդումը, ուրախութիւնն ընդհանրանում է:

«Գլուխս, գլուխս տուէք, Աշտարակի իշխաններ, մեր ողորմած խանին», կարգադրում է ընդհանուր կառավարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայիցը և, իրանց տեղը կանգնած, խոնարհութեամբ գլուխ իջեցնում: Վա՛յ նորան, ով գլուխը մի փոքր ուշ կրկռացնի. աչքով է անում խանն իւր կառավարչին և բարակ ճիպոտը կպչում է այդ յանդուգն մարդուն:

Հրապարակ քաշեցէք տանուտէրին և ոտները փալախայի մէջ դրէք, հրամայում է խանը:

Տասը—քսան այլանդակ հագնուած երիտասարդներ մօտենում են տանուտէրին, պառկեցնում և ոտները փալախայի մէջ ոլորում:

—Չարցրու դրան, հրամայում է խանը իւր նազիրին, դա քանի գլխանի էր, որ մեր Հրամանը չկատարեց, մեզ բանի տեղ չդրեց, մեր առաջը չեկաւ:

«Թողութիւն կ՚անես, խանն ապրած կենայ, խնդրում է տանուտէրը պառկած տեղիցը. ես քո մեծութեան համար պատ-

բաստուԹիւն էի տեսնում այստեղ իմ իշխաններով. տեսնում ես՝ հրամանոցդ համար սուփրէն բացարած է, վարդի նեկտարը գաւաԹի մէջ լիքը պատրաստ դրած, որսահաւը ձողու ծայրին կախ արած՝ որ հրամայես ԹԷ չէ, խորովենք՝ անուշ անես. քո ընծադ էլ, լաւ նայիր, ոտները կապած դռռը այստեղ պատրաստ, երբ որ ուզես՝ փլաւի գլխին առաջդ կրբերենք»:

«Կեցցես, կեցցես, տանուտէր. տղէք, բայց ԹողԷք դորան»:

Առնում է իսկոյն մեր տանուտէրը գաւաԹով լիքը քացախը և խոնարհուԹեամբ մատուցանում խանին:

Ձատ լաւ էլ գիտէ բարձրապատիւ խանը՝ որ նեկտար կոչուածը ոչ այլ ինչ է, եԹէ ոչ ԹուռնդՔացախ, բայց ոչինչ դէմք չցոյց տալով՝ առնում է ձեռքը և մօտեցնում բերանին:— «Օ՜խ, ինչ լաւ է շինած, սիրտս հովացաւ, շատ ծարաւ էի:

—Այ տղայ, հորսը մօտ բերէք, հրամայում է տանուտէրը:

Վերցնում են ջահելները ձողու ծայրին կախած՝ սպանած ագռաւը և յառաջ բերում:

«Ծառայ, հրամայում է խանը, վերկալ այս կաքաւը, երբ որ մեր երկիրը կ'երԹանք, փլաւի գլխին տապակած առաջս կրբերես»:

«Այստեղ բերէք գառը», տնօրինում է տանուտէրը:

Մօտ են բերում ոտները կապած՝ տեփուրի մէջ դրած մի սև կատու, համեցէք անում խանին:

«Ա՛յ անպիտաններ, ձեր գառը կատու դառաւ. շո՛ւտ, շո՛ւտ կապոտեցէք Աշտարակի բոլոր իշխաններին. բանտի մէջ պիտի փԹացնեմ, մինչև որ խելքները գլուխները գայ, նորից կատուն ոչխար շինեն, հրամայում է խանը: Բայց նորա այս հրամանն էլ չի կատարուում, որովհետև իսկոյն միւս կողմից յառաջ է բերւում մի մեծ պարարտ որձ ոչխար և գիւղի կողմից ընծայում է խանին: Այնուհետև մասնաւոր անձանց կողմից էլ զանազան ընծաներ ստանալուց և ամեն ընծայ բերողին իւր առաջը չոքացնելուց և զանազան խեղկատակու-

Թիւնները անելուց յետոյ՝ խանը կամենում է հեռանալ:

«Ձատ շնորհակալ եմ Աշտարակ գիւղի մեծ ու փոքրից. իրանց պատիւն իմ աչքի, իմ գլխի վերայ, այժմ մնացէք բարով», ասում է խանը և կամենում է հեռանալ իւր հանդիսականներով: Բայց ինչպէս կարելի է: Մինչև հիմա արածները կատակ էին, հիմա սկսւում է ուղիղ հիւրասիրուԹիւնը: Խանի հետ եկողները բոլորը պիտի վայելեն Աշտարակեցոց սեղանիցը և պիտի խմեն երկու գիւղին միաբանուԹիւն և յարատևուԹիւն ցանկանալով և ապա միևնոյն կերպով «եալլա» կանչելով ճանապարհ ընկնեն դէպի մի ուրիշ մերձակայ գիւղը:

---

96. ԲԵՐԱՆ-ՓԱԿԻՔ

Բուն բարիկենդանի կիւրակէ երեկոյին Աշտարակցիք վերջ դրին երկու շաբաԹուան գժուԹիւններին. ամենքը միմեանց բարի գիշեր ասելով, ուրախ զատիկ ցանկանալով, իւրաքանչիւրը մտաւ իրանց յարկի տակը՝ իրանց ընտանեաց հետ մեծ պասին դիմաւորելու:

Գիւղումը լռուԹիւնը տիրեց. կերուխումը վերջացաւ. բոլորովին մի հասարակ երեկոյի նմանուԹիւն առաւ օրը. կարծես ԹԷ այս գիւղի մէջ երկու շաբաԹ շարունակ ոչինչ արտաքոյ կարգի բան չէր պատահել: Այս արտաքուստ էր. մտիր ամեն մարդի տունը և բոլորովին ուրիշ տեսարան կրտեսնես:

Տան նախանդամը կամ ծերունին՝ շուրջը առած իւր բոլոր գերդաստանը, շարուել են քուրսու տակը՝ բերան-փակէք անելու:

Այստեղ ահա նահապետական սուրբ աւանդուԹիւնը պարզ փայլում է. տան նահապետն իւր լիազօր իրաւունքի մէջն է. ամենքը նորա աչքին են նայում, նորանից ակնածում: Իսկ մեր պապը՝ քաղցրուԹիւնն ու սէրը երեսին՝ չէ ԹԷ այս անցեալ

երկու շաբաթուան նման աղաղակներով ու հարայ-հրոցներով է դիմաւորում պասին, քաւ լիցի, նա համեստ և զուարճալի բարոյական առակներով, չխօսուն օրուայ հիւր եկող մեծ պասի վերայ խօսելով, բարիկենդանի ուրախութիւնները գժութիւն համարելով, գովում է պասը:

Մեր ծերունին սրտանց ուրախ է. նա ոչ մի օր իւր չորս կողմն այսպէս հաւաքուած չի տեսել իւր ընտանիքը և մերձաւորները. այսօր նա միայն իւր փոքրիկ գերդաստանի հետ չի սեղան նստել. նա բազմել է այն սեղանի գլխին, որի չորս կողմը իւր մերձաւոր ազգականներն են շարուած:

Բաժանուած փոքր եղբայրներ, հօրեղբօր որդիք, ամուսնացած աղջիկները իրանց ամուսինների և զաւակների հետ, բոլորը-բոլորը հաւաքւում են իրանց ազգապետ ծերունու մօտ՝ նորա օրհնութիւնն առնելու, նորա հետ միասին բերանփակէք անելու:

Ծերունու տանը ոչինչ նոր պատրաստութիւն չի տեսնուելու, ամեն եկող գերդաստան իւր հետ բերում է բարիկենդանից մնացած ուտելիքները և մի կաւ գինի ու խառնում նորանց տան եղածի հետ: Այս երեկոյ վառարան չպիտի վառուի, պապոնց վառարանից միայն ծուխ պիտի բարձրանայ, այն էլ բերան-փակէքի ձուաձեղն անելու համար:

«Աղջկերք, տղայք, հէնց որ կ'երթաք պապոնց, ամենքդ էլ պապի ձեռը պաչեցէք ու ասացէք. «Շնորհաւոր բարիկենդան»:

Ի՞նչ ուրախութեամբ սերնդի նահապետը գրկում է իւր սիրելիներին և աչքերը դէպի երկինք բարձրացնելով՝ օրհնում վերին նախախնամութիւնը և աղօթում, որ արժանացնի իրան նորանց մի բուռն հողին:

—Պապի ջան, մի առակ ասա՛ս:

—Դէ թող թուշիդ պաչեմ:

Երեխան թուշը դէմ արեց: Պապը մկան ու կատուի առակը պատմեց:

«Պապի ջան, ինձ համար էլ ասա»:

—Դեռ կաց. այս մէկը Փրիդոլիս համար եմ ասում:

—Պապի ջան, բա ինձ համա՞ր:

—Դեռ այս լսիր, աղուէսի ու հաւերի առակն էլ քեզ համար եմ պատրաստել:

—Պապի ջան, բա ինձ համա՞ր. ազատ բարձրանում է մի երեք-չորս տարեկան մանուկ, մեծ աղջկայ տղան, պապի ծնկանը նստում ու մօրուսի թելերի հետ խաղում:

Ցանկարծ պապը բերանը մօտեցնում է նորան և ատամներով բռնում սիրուն տղայի փափլիկ կուռը:—Ամենքը ծիծաղում և ուրախանում են:

«Իմ կո՛ւռն էլ, իմ կուռն էլ, պապի ջան, իմ կուռն էլ կծիր»:

—Չէ, քո կուռը պահիր, ոչխարներ պիտի շինեմ կռանդ վերայ:

Էլի երեխաների կչկչոցը տունը բռնում է:

Մեծերն էլ կամաց-կամաց մասնակից են լինում այս անմեղ զուարճութիւններին:

Բաւական մէջտեղ անցկացաւ և առակը մոռացուեցաւ:

Վա՛յ, առակը կխօսա՞ մնաց, աղուէսը կբխռովի: Չա՛, Չա՛, պապի ջան, առակն ասա՛, առակը:

—Որտեղ մնաց, մտիցս ընկաւ:

«Ը՛—ը՛,—ը՛, վա՛յ, մոռացանք»:

—Դէ, մտքամոլորներ, ասենք ես եմ ալևորել, դուք ինչի՞ պիտի մոռանայիք. ամօթ քեզ, Մկրտիչ, այս քո առակն էր՝ ով մոռանար, դու չպիտի մոռանայիր, պիտի մտքումդ պահէիր:

«Իլ յետ գլխիցը՝ պապի ջան, էլ յետ գլխիցը»:

—Գլուխն էլ մտքիցս թռաւ. մինչև որ հերթով մի մի համբոյր չտաք, միտս չի գալ. ով շուտ թուշը դէմ կ'անի, նորա համար կ'ասեմ:

Միմեանց յետ մղելով, երեխայքն ուրախ-ուրախ պապի

գլուխը և ուսերը հեծան, աշխատում էին երեսները շուտ մոտեցնել նորա բերանին։

—Է՛լ չեմ ասում, համբուրելուց յետոյ հրաժարւում էր պապը, սոված փորս վեց-վեց է անում. դե գնացէ՛ք, տատին ասացէ՛ք, թող հացը քաշի՝ մի քիչ փորներս լցնենք, հացից յետոյ շատ բան ունիմ պատմելու։

Չէ՛, չէ՛, խաբում ես, այսօր բարիկենդան էր. ամբողջ օրը կերել ես. մենք սոված չենք. ա՛յ, չեբուռս գաթի կտոր ունիմ, ախորժակ չկայ, որ ուտեմ. կամենաս՝ քեզ տամ»։

—Չէ՛, ես հաց ուտել եմ ուզում. կերակուրները կըմնան, վաղը դէն կ՛ածենք, շներին կըտանք։

«Տատի ջան, դէ՛ դու էլ շուտ արա՛, նոր կերակուր հօ չես եփելու, էլ ինչ ես ուշացնում, փոքրիկ շրթունքներն ուռցնելով՝ քաշքշում են տանտիկնոջ փեշերը մեր գառնուկները. պապը քաղցած է. ինչ անկուշտն է. բոլոր բարիկենդանին շարունակ ուտում է ու դեռ ասում է, թէ փորիս մի կողմը դատարկ է»։

—Էլ քունչ ու պուճախ մի՛ ընկնէ՛ք, ինչ ունէ՛ք, չունէ՛ք, բերէ՛ք, մէջտեղը լցրէ՛ք ու դուք էլ նստոտեցէ՛ք. այս երեկոյ մի հալալ հաց ուտենք, բերան-վիակէ՛ք անենք՝ էլ ո՛վ կենդան, ո՛վ մեռած մինչև միւս տարի», հրամայեց պապը ու ամենքը մի՛ասին շարունեցան։

—«Ա՛յ պառաւ, դու այնպէս նստիր, որ կէս երեսդ մեր կողմը լինի, կէսը՝ հարսներին. դու երկու ախոռանի ես», կատակ անելով ասում էր պապը իւր կնոջը։

Տղամարդկանց քամակին շարւում են հարս ու աղջիկ և, երեսները միւս կողմը դարձրած, քամակները դէպի տղամարդիկը, ընթրում են։

—Ա՛յ կնիկ. այսքան բանը որ մեր առաջն ես լցրել, այդ ջահել-ջհուլին ինչ է մնացել, հոգում է պապը։

«Ֆօ՛, ճար կտրածի մարդ, այստեղ այնքան է թափած, որ

մի շաբաթ էլ բարիկենդան լինէր՝ չէր հատնիլ. մի տես քանի տնւոր ենք. ամէն տանից էլ եկել է. մի ասող լինի՝ այսքանը բերում էիք՝ թէ ինչ։

Սեղանի վերայ ևս կարճ-կարճ ծիծաղաշարժ ասացուածքներ են լինում։

—Դուք էլ հօ փոքրիկ հարսներ չէք, յանդիմանում է պապը տղամարդկանցը. մենակ հօ ես չպէտք է խօսեմ, ինչ էք բերաններդ հուպ տուել. երևի մի մի բան էլ դուք կլմնաք, ասացէ՛ք էլի՛։

Ուրախութիւնն ընդհանրանում է. արձակուրդ է. պապը հրաման տուեց. ամէնքն ինչ սրախօսութիւն գիտեն՝ գործ են դնում։

Հարսներն էլ փառ-փառ ծիծաղում են։

—Դէհ, ով խաղ գիտէ, չպահի։

Ամէն մարդ իւր շնորքը բանացնում է։

—Դէ՛, ա՛յ կնիկ, վեր կաց, վառարանը վառիր, բերան-վիակէ՛քի ձուաձեղն արա՛, հացը վեր քաղենք, երեխայքը մի փոքր ուրախութիւն անեն։

Տանտիկինը մէջտեղ բերեց մի հաստ ձուաձեղ։ Ամէն մարդ մի-մի պատառ վերցրեց, բերանը դրեց. ծծի երեխաների պաշտօնեին էլ որդեսէր մայրերը քսեցին և պապը մի երկար օրհնութիւն ու քարոզ սկսեց։

«Տարուան մէջը շատ ուրախ օրեր են գալիս, գնում», ասաց պապը, մի թաս գինի ձեռքին բռնած, «զատիկ, ջրօրհնէք, հինգ նաւակատիք, ես ինչ գիտեմ, որ մինն ասեմ, մենք այդ օրերին էլ ուրախանում ենք. բայց, ձմեռուայ տնայլին գործերի թեթև ժամանակամիջոցին, մեր պապերը սահմանել են բարիկենդանը, որ ամէն աշխատանք թողնենք, ուրախութեան հետ լինինք։ Ինչ գժութիւններ արինք, ինչ կերանք, ինչ խմեցինք, վերջացաւ, պրծաւ. չիսուն օր մեծ պաս է գալիս, ինչքան որ պարապ օրեր ենք անցկացրել, այս եօթը շաբաթուան

մէջ պէտք է փոխարէնը հանենք։ Վաղը-միւս օրը աշխատանքի օրերը դուրս կրգան. պէտք է ամեն մարդ իւր Աստուծոյ անունը տայ, գլուխը քաշ՝ իւր աշխատանքին կենայ, որ Աստուած էլ նորա ճակատի քրտինքն օրհնի, նորա վար ու ցանքին, նորա անդ ու անդաստանին, նորա այգիներին լիութիւն, առատութիւն տայ։ Այս երեկոյ ձուով բերաններս փակեցինք, մինչև զատիկ շաբաթ երեկոյ, ով ապրի, թող տեսնի, կարմիր ձուով բերան-բացէք անենք։ Աստուած այսպիսի ուրախ սրտով, ցամաք աչքով զատկին արժանացնի ամեն Հայ-քրիստոնէի, նորանց բախտէցն էլ ձեզ, իմ որդիք, ձեր զաւակներով, ձեր ընտանիքով։ Մօտ եկէք, զաւակներս, ամենքիդ էլ համբուրեմ։ Բարով դուք էլ իմ տարօրը դառնաք, շատ-շատ տարիներ այսպէս ուրախ սեղան բաց անէք, փեսաների, թոռների, ծուռների տէր դառնաք, ձեր զաւակների կարմիրը կապէք։ Ա՛յ հարսներ, ա՛յ աղջիկներ, շատ ապրիք, հնազանդ լինիք, դուք էլ պառաւիք ու ձեր տատի պէս որդով, թոռնով հացի նստէք. բարով սև օրեր չտեսնէք. ձեր սև օրերն այսօրուան պէս լինին։ Ինձ ու իմ պառաւին էլ ձեր ձեռովը հողը դնէք, որդիք, ձեր մի բուռը հողին արժանանանք։ Երկնային Թագաւորից էլ խնդրել եմ անարժան բերանով, որ մեզ իւր արքայութեանն արժանացնի. ամէն»։

Անխոհեր անէնքը վերկացան, պապի ու տատի ձեռքը համբուրեցին. որանք էլ նոցա երեսները պաչեցին և սեղանը հաւաքուեցաւ։

---

37. ՄԵԾ ՊԱՍԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Մեծ պասի երկուշաբթի առաւօտը, լուսաբացին, ամէն պառաւ տանտիկին տեղիցը շուտ վերկրկենայ, տան միւս անդամներին կրզարթացնի, տղամարդկանցը ժամ կ'ուղարկի,

կնիկարմատներին էլ կըհրամայի պղնձկարգը ցած բերել, պահան կ'անի, ուտիսի հոտը միջից կըկտրի ու իստակ-իստակ լուացած՝ տեղերը կըշարի։

—Աղջիկներ, մի սոխ ու եօթը փետուր բերէք, կըհրամայէ տանտիկինը, և սոխի վերայ եօթը փետուր կարգով կը շարի սայլի անիւի ճաղերի նման ու իւր ձեռքով կըտանի՝ տան երթիկից կըկախի։

Եօթը փետուրը պասի եօթը շաբաթն է. ամէն կիւրակէ մի-մի փետուր պիտի քաշեն սոխի վերայից, վերջին փետուրն էլ ծաղկազարդին կը հանեն և դա նշան է, որ պասը վերջին է հասել, զատկի հոտը փչում է, կարմիր ձուն ներկելու օրերն եկել են։

«Ձեզ մատաղ, աչքներդ երթիկին դցեցէք, ասում է տանտիկինը՝ սոխը կախելուց յետոյ. շնորհաւոր մեծ պաս, բարով զատիկ հասնենք, ուրախ սրտով, ցամաք աչքով. պահին շնորհաւորեցէք, տեսէք, թևաւորուած՝ ոտները կախ արեց մեր երթիկով, ծանր-ծանր նստեց. բարով պասի փետուրներն էլ պոկելով տկլորացնենք։ Կեանքը լորի պոչ շինենք [1]), յետ աճենք—քշենք, դնայ քարափների տակին թագնենայ։

Մեծ պասի երկուշաբթին հայ գիւղացոց համար շատ մեծ և նշանաւոր օր է. նոքա զատկից պակաս ուրախութեամբ չեն դիմաւորում մեծ պասին. նոքա այսօր *պաս-շնորհալորէք* ունին։

Առաւօտեան՝ ժամումը «լուացարուք սրբեցարուք» լսելուց յետոյ, ամէնքը տնէտուն կ'ընկնեն և միմեանց համբոյրներ տալով՝ կըշնորհաւորեն մեծ պասը։

Նորափեսաներն էլ, որոնք այս ձմեռ պսակուել են, այսօր շատ մեծ դործի վերայ են։ Սորանցից մինը, Մարութենց Սահակը, այսօր իւր խաչեղբօրն ու փեսեղբօրն առած, իւր

[1]) Ծան. կարճացնենք, ինչպէս որ լորի պոչը կարճ է։

նորափեսայութեան հանդերձը հագած, մի կաւ գինի և մի ափսեով չոր միրգ փեսեղբօր ձեռքը տուած, գնաց իւր անեբանց տուն՝ նորանց պասը շնորհաւորելու։

Մարութենց տանն այսօր մեծ հրաւէրք է. նորահարսի համար պէտք է այսօր պատուան բաժինը գար իւր մօր ու բոլոր բարեկամների տներից. այսօր նորահարսը պիտի հաւաքէր իւր բոլոր ընկերուհիներին և նրանց հետ պաս բռնէր։

Աներոջ ձեռքն ու զոքանչի կուրծքը համբուրելուց յետոյ, մեր նորափեսայ Սահակը իւր ընկերներով նստեց քուրսու վերևի կողմը։

—Ա՛յ կնիկ, էլ մի՛ յետացնիր. երեք ժամ մի ծռծռացնիր, տնօրինեց Սահակի աները. ես գիտեմ, այսօր խեղճ փեսայիս քաշ պիտի տաս քո բարեկամների դռներին. այնքան ազգ ու ընտանիք ունիս, որ Մողնի գիւղի նախրիցը շատ են. մինչև երեկոյ հազիւ կըպրծնեն խեղճ տղայքս. բեր սրանց պարգևը։

Սահակի զոքանչը բերեց մի-մի զոյգ խորասանու նախշուն գուլպայ, դրեց պատուաւոր հիւրերի առաջը, իսկ փեսային, բացի գուլպայն, մի բաղդադի աղլուխ էլ վիզը փաթաթեց և թուշը համբուրեց։

—Դէ՛ հրամայիր, խնամի, խօսեց փեսեղբայրը. տեսնենք քանի՛ տուն ենք պաս շնորհաւորէք գնալու. այսօր մենք քո ստրուկներն ենք, ժայռից էլ որ վայր գցես՝ լսելու ենք։

—Բարով դու էլ այսօրին արժանանաս, գնաւակս, օրհնեց նորան Սահակի զոքանչը, և սկսեց մէկ-մէկ համարել մերձաւոր բարեկամների տները։ «Ձեզ մնատաղ, չմոռանաք, աւելացրեց նա, թէ չէ էլ մեր ազգականների ձեռքիցը պրծնիլ չեմ, կ'ասեն՝ Ղողակաթը արժան չտեսաւ իւր փեսին մեր տունն ուղարկելու։

—Դու միամիտ կաց, խնամի ջան, մենք ամէքի տունն էլ կայցելենք, ասաց փեսեղբայրը և միւսների հետ դուրս եկաւ, գնաց խնամոնց բոլոր բարեկամների պասը շնորհաւորելու։

98. Ս. ՏԱՃԱՐԻ ԴՐԱՆԸ

Սուրբ տաճարի դըրան առաջ
Հիւանդ, մաշուած, սովատանջ
Պպասում էր ողորմութեան
Մի տառապեալ մուրացկան։

Վըշտահայեաց ու լալագին
Նա լոկ հայ էր աղերսում.
Բայց խաբելով ով-որ խեղճին՝
Մի քար դըրեց նրա ձեռքում։

Այսպէս և ես, տանջուած վըշտից,
Խնդրում էի քեզնից լոյս,
Բայց դու աւաղ, խաբելով ինձ,
Խորտակեցիր իմ սուրբ յոյս։

---

99. ՅԻՄԱՐ ԻՄԱՍՏՈՒՆՔ

Այսօր, որ աւագ երեքշաբթի է, մեր գիւղի որ փողոցովն անց ես կենում, կնանիքը մի-մի փայտէ խնոցի ուսերին դրած, փողոցէ փողոց են ընկել, բան ու գործը այսօր է մտքերն ընկել. ամեն կողմից խնոցի հարելու ձայն է գալիս. ամբողջ մեծ պասին թէկուզ երբ ասես հարած լինին, բայց վերջին հարը այսօր պէտք է տան, թէ չէ վաղը՝ որ չիք-չորեքշաբթին վրայովն անց կենայ, կարագը կըչքուի, թան կըկտրուի. այսօր պիտի հարեն, որ աւագ հինգշաբթի օրուան համար նոր կարագ վեր առնեն, որ ժամհարը հաւաքելիս՝ իրանք էլ տան, որ իրանց կովերը կաթնալի, խինալի լինին, եթէ ոչ պտուկը կըքորանայ։ Այսօր մինչև երեկոյ խնոցաբանի են։

Իբիկնապահին՝ որ խնոցուց պրծան, նոր կ՚սկսեն կերակուրն եփել, անուշ անել. յետոյ վեր կրկենան, նոր շորերը կըբերեն, կըհագնեն, կը նստեն քուրսու տակին: Հէնց որ դանդակի թելը դնգացրին, կարմիր ծուղէքը կըքաշեն ոտներն ու դէպի ժամը:

Ժամի ժամանակ Սօսն էլ հագաւ շորերը և դնաց ուսումնարան՝ Գարեգին վարժապետի մօտ, և տեսաւ որ նա էլ յիմար-իմաստունի Թղթերը դրոտել էր տասը Հատ՝ հինգի վերայ իմաստուն, հինգի վերայ յիմար: Ժամը որ տուին, Գարեգինը աշակերտներին առաւ դնաց ժամ: Հէնց որ վերջին աւետարանն սկսեցին կարդալ, վարժապետը տասը երեխանց շապիք հագցրած՝ տարաւ աւետարանի տակին կանգնացրեց և ամենի ձեռը մի-մի մոմ տուեց: Հէնց որ քահանան հասաւ այն տեղը, որ ասում է՝ «Յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց», Թղթերը բերեց և բաժանեց մանուկներին: Իսկ երբ որ կարդաց՝ «Հինգն ի նոցանէ յիմարք էին և Հինգն իմաստունք», բաց արեց մանուկների Թղթերը և որը իմաստուն էր ընկել, այնտեղ Թողեց կանգնած մինչև աւետարանի աւարտը, իսկ որը յիմար էր, կռնիցը բռնեց՝ հեռացրեց:

---

100. ՀԻՒ-ՀՈՐԵՔՇԱԲԹԻ

Հորեքշաբթի գիշերը՝ լոյս աւագ Հինգշաբթի, դեռ Ադամայ մուրթը չէր կոխել, Սօսի մայրը ճրագը վառեց, Սօսին անուշ քնիցը վեր կացրեց. «Վէրկաց, ասաց, ար կացինդ, անխօս գնա՛ մեր պահունի խնձորենու, մեղրակենի տկլոր ծիրանենու և մեծ մալաչի տանձենու արմատին երեք անգամ կացնով տուր: Այսօր աւագ Հինգշաբթի է. ասա՝ պտուղ ես տալիս, տուր, թէ չէ կտրում եմ: Ահա տասը տարի է երեքն էլ, չգիտեմ աչք է դիպել, թէ ինչից է, մի Հատ պտուղ չեն

տալիս. ողորմած Հոգի Հայրդ ձեզ պէս աշխատաւոր էր այ, անխօս ամեն տարի այսօր վեր կրկենար՝ կերթար, ծառ չէր Թողիլ, կըտար կացնով: Քանի լուսահոգին կենդանի էր, ամէն բարուրթիւններս էլ կար. ինքը մեռաւ, եղած չեղածն էլ Հետը տարաւ»: Սօսը անխօս վեր կացաւ, առաւ իւր ծայրը պողպատած (զօդած) կացինը, կապեց երախակալը, փղոսկրեայ դաշոյնը և մտքումը մի երկու անգամ Աստուծու անունը տուեց ու ծէգաբացին, ոչ խէր արած, ոչ շառ, եափունջին վրան դրեց ու դնաց Հասաւ այգին: Ամենափոքրիկ տնկից սկսած մինչև ամենամեծ ընկուզենին՝ ամենին երեք-երեք անգամ զարկեց և ասեց. «Պտուղ ես տալիս, տուր, թէ չէ կտրում եմ»: Յետոյ միտքն ընկաւ, որ այսօր եթէ վայրենի դաղձը (անանուխ) ճմրթով Հանես և շուռտուած—արմատները դէպի վեր տնկես, կըփոխուի, ուեհան կըդառնայ: Այս պատճառով էլ դնաց մի քանի ճումբը կտրեց դաղձալի տեղերիցը, բերեց մի քանի տեղերում շուռտուած տնկեց, որ ուեհան դառնայ: Երբ որ տեսաւ, թէ փոքր է մնացել, որ առաւօտուայ ժամը տան, այն է՝ ծէգծէգոտում է, յետ դարձաւ տուն:

101. ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Չայրիկ, ասաց դուստրը Հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես Համար, թիւ չըկայ.

Ասում են որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարիտ է, ասա՛, Հայրիկ,
Իմը որտեղ է փայլում»:

—«Այո՛, զաւրիկ այդ աստղերը
Ունին Հաշիւ ու Համար,

Եւ մեզանից իւրաքանչիւրն
Մի աստղ ունի իւր համար»։

«Չայրիկ, տես-տես, աստղ թըռաւ,
Հետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ այլ չերևեց»։

—«Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չգիտէր.
Աղքատները նորա դռնից
Դիշեր-ցերեկ հալածուած,
Մի մարդ չըկար նորան ծանօթ,
Որ չըլինէր վըշտացած»։

«Չայրիկ, տես-տես, աստղ թռաւ,
Հետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

—«Ո՛վ իմ զաւակ, մի վըդովուիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ խրատը իւր հօր ու մօր
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա փախել էր իրանց տնից...
Մուր էր քըսել տան վերայ...
Իւր ծընողքը լացացրել էր,
Ինչքը վատնել անխընայ»։

«Չայրիկ, դարձեալ թըռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Չայրիկ, ո՞րի աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իւր տեղից։

—«Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.

Փարիսական իւր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացրեց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցրեց»։

«Չայրիկ, տես-տես, մի աստղ թըռաւ,
Եւ գիծ անգամ չըթողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

—«Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իւրեան դերի
Ծոնած օրից կարծել էր.

Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում»։

«Ապա այն ինչ աստղ է, Չայրիկ,
Որ այնպէս պարզ վառւում է,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Ցորս կողմը բակ բռնել է»։

—«Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում երբէք մարդու
Ոչինչ վնաս տուած չէ.

Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործերը.
Աղօթք արա՛, որ երկարին
Նորա կեանքի թելերը»։

---

102. ՈՒԹԻ-ՈՒՐՔԱԹ

Ութի-ուրքաթ գիշերը, աքլարականչից առաջ, դարբինները անխօս եկան, իրանց դռքանները բաց արին, *զնդաններին* երեք անգամ մրճեցին, որ Արտաւազդի շղթան հաստանայ և նա չկարողանայ դուրս գալ, աշխարհը քանդել, տակնուվրայ անել։ Զնդանին խփելուց յետոյ, նոյնպէս անխօս, ինչպէս եկել էին, դռները փակեցին ու գնացին ժամ, կտակը լսելու։ Այդ գիշեր, Քրիստոսի թաղման առիթով, պէտք է սուգ անէին և կտակը կարդային եկեղեցում։ Բայց մենք տեսնենք թէ ով էր Արտաւազդը, որի շղթաները Հաստացնում էին դարբինները։

Արտաւազդը Արտաշէս Թագաւորի որդին էր։ Արտաշէսը Հայոց Հզօր Թագաւորներից մինն էր։ Ժողովուրդը Աստուծու չափ սիրում և պատւում էր նորան։ Երբ որ Արտաշէսը մեռաւ, ժողովրդից շատերը յօժարակամ նահատակեցին իրանց, որ այդպիսի Թագաւորից յետոյ էլ կեանք չտեսնեն։

Թագաւորի աւագ որդուն շատ էլ դուր չեկաւ ժողովրդի ցոյց տուած այդ անսահման սէրը. նա նախանձեցաւ Հօրը և ասաց. «Երբ որ դու գնացիր, բոլոր աշխարհը քեզ հետ տարար. արդ՝ ես աւերակների վերայ ինչպէս Թագաւորեմ»։ Բարկացաւ Հանգուցեալը. նորա ուրուականը գլուխը շարժեց և վրէժխնդրութեամբ անիծեց Արտաւազդին. «Որովհետև դու նախանձեցիր քո Հօր փառքին, ապա երբ որ դու ազատ Մա-

սիսն ի վեր որս անելու երթաս, թող բռնեն քեզ քաջերը և տանեն Մասիս սարի անդունդները. այնտեղ մնաս միշտ և լոյս չտեսնես»։

Արտաւազդը քաջ և կատաղաբարոյ երիտասարդ էր. նախանձն էր, որ նորան կուրացրեց և ոչ թէ փոքրոգութիւնը։ Նորա քաջութիւնից երկիւղ կրելով՝ ասում են, վիշապները նորան կախարդել էին։ Չօր մահից մի քանի տարի յետոյ մի օր Արտաւազդը որս անելու գնաց Մասիսի ստորոտները։ Վարազների յետևից արշաւելիս՝ նա ընկաւ խոր խորխորատի մէջ իր երիվարով և հաւատարիմ շներով։ Նորա անակնկալ կորուստն այնպէս մեկնեցին, իբր թէ Հօր անէծքը կատարուեցաւ, իբր թէ Մասիսի քաջերը Հասան, բռնեցին և երկաթէ շղթաներով կապկպելով, մի այրի մէջ փակեցին։ Նորա երկու հաւատարիմ շները մինչև այսօր էլ կռծում են նորա ոտների շղթաները, որ նորան ազատեն։ Զայրացած արքայազնը, հէնց որ ազատուի, մի ակընթարթում պիտի կործանէ աշխարհը։ Բայց ինչքան որ աշխատում են Հաւատարիմ կենդանիները, այնուամենայնիւ նոցա տէրը չի ազատւում, որովհետև աւագ ուրբաթ գիշերը, երբ մի փոքր է մնացած լինում, որ երկաթը կտրուի, դարբինները երեք անգամ զարկում են սալին և այն րոպէին Արտաւազդի ոտների շղթաներն իրանց առաջուան հաստութիւնն են ստանում։

Այսքան ուժ ունի ահա Հօր անէծքը որդու ապագայի վերայ։

103. ԱՐՏԱՒԱԶԴ

Լոյսը շողաց. ծագեց արև
Թուխ-թուխ ամպերի միջից.
Մի ձիաւոր անցաւ շուտով
Արարատայ կամուրջից։

Ինչպէս գետի ափերի մօտ
Սև նժոյգը վազում էր,
Նա վազում էր որպէս սև ծուխ,
Մըտքից արագ թռչում էր։
Նորա վերայ մի պատանի
Նստած էր քաջի նման
Կապարճը լի էր նետերով,
Ուսին՝ աղեղ, լայն վահան։
Որսորդական իւր շրջերը
Թափառում են սար ու ձոր,
Չոտ քաշելով փրնտռում են
Էրէկ, թռչուն նորանոր։
Թրփի միջից յանկարծակի
Վազեց կինճը սոսկալի,
Սոսկալի էր ժանիքները,
Աչքերը վառ, կրակով լի։
Տեսաւ նորան Արտաւազդը,
Վերայ հասաւ ձիրնթաց,
Նետեց նետը, վայրի կինճը
Ահեղ ձայնով որոտաց։
Օդը մըթնեց, փոշին պատեց,
Բարձրացաւ մի թունդ մրրիկ,
Եւ անդունդը խոր յատակից
Գոռաց ձայնով յոյժ սաստիկ։
Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վիհ—փոս,
Ուր որսորդը իւր ձիու հետ
Ներս է գլորւում դիւրահոս։
Կորաւ արին՝ Արտաւազդը,
Կորաւ խորին անդընդում.

Հօր անէծքը նորան պատժեց,
Որին նա շատ էր սիրում։
Իսկ քաջերը մեծ Մասիսի
Փարբնեցին շէկ երկաթը,
Յափշտակած՝ Արարատի
Տարան նորան գագաթը։
Այնտեղ դրին խոր այրի մէջ,
Շեռքն ու ոտքը շղթայած,
Որ Արտաւազդ մինչ յաւիտեան
Մընայ այնտեղ բանտարկուած։
Զր Հեռացան Արտաւազդից
Իւր շներն հաւատարիմ,
Չոյգ շրջերը որսորդական
Մնացին նորան մըտերիմ։
Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կրրծոտում են հաստ շղթան,
Կրրծոտում են, որ որսորդին
Ազատութեան հնար տան։
Եւ մաշւում է ծանր շղթան,
Նա մաշւում է օրէցօր,
Փոքր է մնում, որ կորցընի
Չօրութիւնը իւր հզօր։
Հայոց երկրի դարբիններըը
Ութի-ուրբաթ գիշերին,
Երեք անգամ ծանր մուրճը
Չարկում են իրանց սալին։
Նոյն րոպէին հաստանում են
Արտաւազդայ շղթայքը,
Որ չազատուի, չը կարենայ
Ջընջել բոլոր աշխարհքը։

---

104. ԴՐԸՆԴԷԶ

Հայաստանի հին սովորութիւններից մինն է դրընդէզը, որ առաջ հայ գիւղերում կատարւում էր մեծ հանդիսով, իսկ այժմ տարէցտարի կորցնում է իւր նշանակութիւնը: Դրընդէզի հանդէսը կատարում են մեծ պասի վերջին շաբաթը՝ Ցեառնընդառաջի տօնին: Այդ օրը ժամը դուրսն են ասում: Եկեղեցու բակումը մի ահագին դրընդէզ է շինած, որ համարեա մի խոտի դէզի չափ է, բոլոր նորափեսայքը շարուած են նորա չորս կողմը, ձեռներին մի-մի մոմ բռնած: Երբ «Քրիստոս վառաց թագաւորն» երգում են, տէրտէրն առաջինը մօտենում է դրընդէզին և վառում. մօտենում են նորա հետ և բոլոր փեսաներն ու խոտը վառում: Հուրը բորբոքւում է և ժամատորների ջերմեռանդութիւնը կրկնապատկւում:

Փամերգութիւնից յետոյ՝ նորափեսայքը նոյն մոմերը ձեռներին, առանց հանգցնելու, իրանց խաչեղբօր ու փեսեղբօր հետ գալիս՝ բարձրանում են իրանց կտուրները և երեք ծուռը կրկնելուց ու իրանց մտքումը որևիցէ մի ուխտագրութիւն անելուց յետոյ, վառում են իրանց դրընդէզները:

Նորահարսներին առաջուց չարաչաւորած կանգնեցնում են կտրին. դրընդէզը կպցնելուն պէս՝ ամեն նորափեսայ բրւնում է իւր սիրելի հարսի կուռը և երեք անգամ վառուած կրակի գլխովը պտոյտ է գալիս: Այդ քառասընքակոս չլինելու համար է:

Մանր երեխայքն էլ, որոնք կտրները լցուած, ատամները սրած՝ փոխինձ ուտելու էին սպասում, ճնվախ թռչկոտում են բոցավառ կրակի գլխովը:

Մի հիանալի տեսարան է ներկայացնում գիւղն այդ երեկոյ մօտիկ հանդիսականներին. երկինքը շառագունում է. լոյսը մինչև հորիզոնն է խփում և խառնուելով երեկոյեան վերջալոյսի հետ՝ կարմիր ծիրանի գոյն է տալիս առաջդ ձգուող

պատկերին: Միևնոյն բանը հեռուից դիտողին բոլորովին այլ կերպ է երևում. բոլոր գիւղը, կարծես, հրդեհի մէջ է. տանիքներից բարձրացող ծուխերը խառնւում են միմեանց հետ և բոցի հրեղէն լեզուներն օձի պէս դուրս են ձգտում նոցա միջից: Ի հարկէ այս երկիւղը մի քանի րոպէ է տևում: Ջոր խոտը մի րոպէի մէջ բոցի կերակուր է դառնում, և ամեն բան վերջանում է:

---

105. ԱԽԱՒ

Ջմեռուան պղտոր օրերն անցնում են. մեծ պասը բերում է իւր հետ Արարատեան դաշտի համար ջերմ և պայծառ արեգակը, ձիւները հալւում, առուներ են կազմում. գետերը բարձրանում են. գետինը կակղում, կանաչում է. հազար տեսակ բուսեղէնների ու բանջարեղէնների հետ՝ դուրս են գալիս գիւղացոց աշխատանքի քաղցը և կարևոր օրերը. երկրագործն իւր գութանն է սարքում և մանը բռնած՝ դաշտը հերկում. այգեգործը իւր բահն ու հատոցն է սրում և այգին մշակում, թաղած տեղից Ղազարոսի յարութիւնը տալիս մեռած խաղողի բարեւնակներին և հատոցն առնում, աւելորդ մատները կտրատում: Գիւղացի կանանց գործն էլ շատացաւ. առաւօտադէմ շուտ հաւաք-տեղակ են անում տունը և մշակաւորների համար ճաշ-կերակուր պատրաստում, մատաղահաս հարսներն ու աղջիկների հետ ուղարկում հանդը կամ այգին. հարսներին էլ պատուիրում են, որ հացը վերցնելուց յետոյ՝ աղցան քաղեն իրիկուան բանւորների համար: Պառաւ կանայքն ու անդործ ծերունիքն էլ ուրախացել են, ժամերն երկարացել են, օրը երեք անգամ փայտը սիւն տալով ժամ են գնում, «տէր ողորմեան» քաշելով դուրս գալիս, և տէրտէրի, իշխանների հետ քաղցը զրոյցներ անելով՝ տուն դառնում, արևկող տեղե-

րում նստում, Աստուծու բարիքը—արևի տաքութիւնը վայելում են։

Բայց ահա մօտենում է վերջին շաբաթը և դիւղի քահանան հրաւիրում է ժողովրդին, որ ամէն տարուայ պէս, այս տարի էլ ախառի հոգսը քաշեն։

«Օրհնեալ ժողովուրդ, քարոզում էր տէրտէրը վեցերորդ կիւրակէին. գիտէք որ մեր պապենական սովորութիւնն է՝ զատիկ կիւրակէ առաւօտեան Հայ քրիստոնեան պէտք է ծէգելահան ախառի մսով բերանը բաց անի. շաբաթ երեկոյեան նաւակատիք է լինում, մսեղէն չենք ուտում. այն քրիստոնեան, որ ախառով չմասնաւորուի, ամբողջ տարին իրաւունք չունի մսի համ տեսնելու։ Սխառի եղը որ կայ՝ Հայ-քրիստոնէի նշանն է. մենք էլ հօ, փառք Աստուծու, Հայ-քրիստոնեայ ենք։ Դէ որ այդպէս է, ժամից յետոյ դառնը հաւաքուեցէք, երեցփոխին էլ ընկեր երկու մարդ ջոկեցէք, որ նորանք ախառի համար փող հաւաքեն՝ զատիկ կիրակի մորթելու համար։ Աստուած ձեր քսակի բերանը բաց պահի. ուրդիք, լիաբուռը տուէք, մի խնայէք, էլի ձեր վերայ պիտի բաժանուի. աղքատոնանկ պիտի ուտեն, եթէ որ մի բան էլ փողից կամ կաշուցը մնայ, այն էլ եկեղեցու, տէրտէրի բաժին կ'երթայ, էիլ վարձքը ձերը կլինի։ Օրհնեալ էք և օրհնեալ եղերուք, ամէն»։

Խէչանէնց Խէչանը թէպէտ ոչինչ բանի չէր խառնուում, բայց իւր մէջ ուխտ էր արել, որ ամէն տարի ախառի փող հաւաքողներից մինն էլ ինքը լինի։ Այս տարի էլ իւր պաշտօնը շատ արիւթեամբ կատարեց։

106. ՈՐԲԻ ԶԱՏԻԿԸ

Ահա, մանկտիք,
Եկաւ զատիկ,

Բերաւ ամենիս
Ուրախ աւետիք։

Երկինքը պարզուել, էլ սև սև ամպեր
Չեն ծածկում նորա դէմքը կապուտակ,
Էլ չեն սարսեցնում մարդկային սրտեր
Ձմրան արհաւիրք, հողմունք բքաբեր։

Սարեր, հովիտներ, դաշտեր ու ձորեր
Ծածկուել են կանաչ թաւշեայ գորգերով,
Փայլուն արեգն էլ զատկի գալուստը
Ողջունում է իւր կենսատու լուսով։

Նայեմ ես չորս դիտ—ահ ինչ ցնծալի
Տեսարաններ են բացւում քո առջև.
Թռչնոց ճլվլըլոց, գառանց բառաչիւն
Ամենքն էլ զատկին տալիս են բարև։

Այո՛, այսօր է հրաշալի զատիկ,
Ուրախ են ամենք, թէ ծեր, թէ մանկիկ.
Բայց միայն գժբախտ որբիկն է անտէր,
Լըռիկ թափւում է աղի արցունքներ։

Չարուստ մանուկներ կոկիկ, զարդարուն,
Յաւի, տանջանքի չըլսած անուն,
Որպէս թռչուններ երգում են, պարում,
Բերկրալի սրտով զատիկն ողջունում։

Բայց որբի համար ո՞րտեղ է զատիկ,
Զարդարուն զգեստ, անուշ ուտելիք,
Նա զուրկ ծնողից, զուրկ բարեկամից,
Չունի ապաստան, դողում է ցրտից։

Գոչըլտած, կեղտոտ, հնամաշ լաթեր—
Ահա անբաղտի զատկական շորեր.
Մի կըտոր չոր հաց և մի բաժակ ջուր—
Ահա քաղցրահամ նորա կերակուր...

Խաղեր, զուարճանք, երգեր մանկական,
Կարմիր ձուաներ, նշանք զատկական,
Ո՛հ, չկան, չկան, որ գէթ մի չընչին
Բերկրութիւն տային խեղճ որբի սրտին։

Դողդոջուն ձեռքը երկիւղով պարզած,
Նա թափառում է լայն փողոցներում,
Եւ դառն արցունքով աչքերը լցուած,
Անց ու դարձողից չոր հաց է խնդրում...

«Մի կտոր չոր հաց»... լաւ խոլհենք, մանկտիք...
Տեսէք ինչին է որբը կարօտում,
Եւ մի մոռանաք, որ թշուառը մլշտ
«Չոր հացովքեն» է զատկին հանդիպում...

---

107. ՆԱԻԱՍԱՐԴԻ ՏՕՆԵՐԻՑ ՄԻԿԸ

Նաւասարդը ոչ կրպատմուի, ոչ կրգրուի. հապա պէտք է տեսնել, շօշափել քնքշութիւնը, ճաշակել քաղցրութիւնը։ Երանի՛ այն հային, որ Նաւասարդի օրը իւր օջաղումը կրզտնուի, երանի՛ նրան, որ Նաւասարդի անհուն քաղցրութիւնը, սրտաշարժ տեսարանը վայելելու բաղտաւոր և երջանիկ րոպէ է ունեցել իւր կեանքում։ Եթէ իսկ հայ է, այդպիսի հազուագիւտ աննման օրը վայելելուց յետոյ որ մեռնի էլ, սրտումը դարդ (վիշտ) չի ունենալ։ Արդեօք այս քաղցր օրուայ յիշատակը չէր, որ Արտաշէս Թագաւորի սիրտը փղձկացրեց, աչքերը արտասուքով լցրեց, քթածակերով ֆխ ու մուխ հանելով լացացրեց,— և նա՝ մեծ արքան, մտաբերելով սքանչելի օրը, բարձրաձայն կանչեց Հառաչելով. «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց և զվազելն եղջերուաց. մեք փողս Հարեաք և Թմբկի Հարկանեաք»...

Ընթերցո՛ղ, եթէ հայրենազրօս, գիւղազրօս մարդ ես, գնա՛նք Հետս Հայի գիւղ, բայց այնպիսի գիւղ, որի բնակիչները իսկ Գեանջու Թոռներ են։ Դէհ, շտապի՛ր, որ ուրբաթ երեկոյեան գիւղում լինենք։—Տես, շաբաթապատին, ուրբաթ օր է, և գիւղում մօտ Հարիւր տաւար մորթած, այնպիսի պարարտ մսեր, որ ճարպից տրաքում են։ Ամէն մարդ էլ կրեց միս, ա ր տ ա լ ա և տարաւ իւր տուն. վայր դրեց *խոնչան*, *սինին*, մսեր դարսեց. տան մեծը, որ շնորհքով կոտորել գիտէ, սկսեց դարսել՝ խորովածացուն առանձին, եփելուն առանձին։ Արդէն մթնել է. բերել տուեց չ ա ր խ ո ւ ն կ-ն ա ւ ո ր պ ղ ի ն ձ ը, մէջը մի շարք միս դարսեց, վրայից ճաւար-կորկոտ շաղ տուեց, հետն էլ աղ, էլի գէր միս կամ արտալի ճուճ. կրկին ճաւար ու աղ ցանեց։ Դռանը Թոնիրը վառւում է. ցախը մի կողմից են դարսում, որ շեղջ կանգնի, իսկ երեխայքը՝ տղայ, աղջիկ զարթուն, Թոնրի չորս կողմը բռնած՝ ծիծաղում, խնդում են, որ ահա *աւրին*—Հայրը պղինձը կրգնի մէջը, որ եփուի։ Բերին պղինձը՝ երկու Հոգի ունկնեբից բռնած։

Նանը զօտիկը յետ արեց, պղնձի ունկից կապեց, մի ուրիշն էլ միւս ունկից։ Կիսաւառ ածխակոթերը Հանեցին, բակն ածեցին, կարմիր շեղջը յետ-յետ արին, պղինձը կամաց կախեցին, դրին մէջն։ Առաջ մի չափ ջուր ածեցին, յետոյ երկու, երեք՝ մինչև լցուեց. կրակքաշով շեղջը պղնձի չորս կողմը պատեցին,—պղինձը Թաղեցին կրակի մէջը։ Թոնրի բերանին խուփ դրին, որ բան չընկնի, իրանք միամիտ տուն գնացին՝ վաղուան պատրաստութիւնը տեսնելու։

—Երբ որ այդ տեսար, մէկ դուրս արի, մի բարձր տեղ, Թմբի վերայ կանգնիր և գիւղին նայիր։ Է՛, ինչ ես տեսնում, ինչ է զգում սիրտդ, ինչ է բլբլում լեզուդ ակամայ։

Ա՛մբողջ գիւղը առաջդ խլխլում, գժվըժում է, մէր, մանուկ ոտքի վերայ. որը ճչում է, որը ծկլթում, որն աղաղակում—Թէ Թոնիրն անց կացաւ, պղինձը բերէ՛ք, որը իւր

ըանը պրծել է, երգում է անհոգ և սրինգն ածում: Ամէն տեղ հարմ՛այ, ամէն տեղ հրոց. ամենայն երդկից ծուխ է բարձրանում, կայծեր վեր ցայտում. այդ գիտե՞ս ինչու.—օջաղի վերայ բ ո ւ ղ լ ա մ ա յ են եփում: Բուղլաման մի կերակուր է, որ շինում են գեր մսից, սալորից, սոխից—պղնձի բերանին խուփ են դնում և կողքերը խմորով կալնում, որ ամենևին գոլորշի դուրս չգայ: Չիմա հասմը տե՛ս, ինչ զարմանալի բան է, որ չես ուզում թէ կշտանաս: Այդքան կրակները տեսնելով, կարծում ես թէ գիւղացիք գիւղը հրդեհում են. բայց որ տեսածդ գիտում ես, ասում ես. «Ձլինի՛ թէ գիւղացիք բոլորը հ ա ր ս ա ն ք ա հ ա ր են, որ այսքան սարք ու կարգ են անում»: Այո՛, չես սխալուիլ, եթէ մի բան էլ աւելի ասես. գիւղացիք հարսանքահար են, փեսան իրանք են, իսկ հարսը, համեստ հարսը—Նաւասարդի հրաշափառ առաւօտն է: Այդ գիշերը ամենքն էլ տանն են, հանդումը ոչ ոք չի մնացել. օտար մարդկանց ուժով քաշ են տուել տները, որ նա էլ Նաւասարդը շնորհաւորէ, ողջունէ Հայի նոր ու ազիզ տարին:

Աքաղաղները առաջի բերան կանչեցին. նանը մօտեցաւ մրգեղէնի արկղին, տոպրակների բերանների կապերը յետ արեց, շիջուխից, ընկուզից, սերկևիլից, տանձի, խնձորի, դեղձի չրից, փշատից, յունապից, չորացրած թթենից, չամչից, ես ի՞նչ գիտեմ՝ հազար տեսակ մրգեղէնից բաժին է դնում ամէն մինին: Մինչև նրանց մէրդ բաժանելը կրպրծնի, պղնձի մօտ կրգնայ, որ ակը տայ, մինչև հարսները պաշարները ամանների, ափսէների մէջ կրշինոտեն, մինչև տղամարդիկ՝ որը կարասից գինի կրհանի, որը *քոցուց* օղի կրբերի,—աղամայ մուրթը աշխարհքի շ ա ռ ը իւր հետ վեր առած՝ կրքաշուի, սուրբ ծէգը վերայ կրհասնի և բոլորին թարժաժ անելով՝ ոտքի կրկանգնեցնի: Չիմա աչքդ բարի՛ն տեսնի:

Մեծ դարպասի տունը զուգած զարդարած է, ինչպէս նորահարս, պատերից նախշուն կապերտ ու գորգ թառ տուած,

սիւներից բ ա ղ դ ա դ ի ք, տեսակ-տեսակ թաշկինակներ, թելից գործուած բլբլներ կախ տուած, ամանները իրանց տեղը շարած, թախտին թաղիքները փռած՝ դրանց վերայ էլ ն ա հ ա լ ին մեկնած. մուրթաքանները շարած, սփռոցը սփռած երկար ու մէկ. հաց, պանիր, հաւկիթ, ձուկ, միս, եփած հաւեր դարսած, դինու կաւեր, մէկը սփռոցի մի ծայրին դրուած՝ միւսը միւս:

Տան մեծը բաղմած է սփռոցի վերայ ուստրով, դստրով, մեծով, փոքրով, եղբայրներով, զաւակներով: Պեռ բերանները մանանայ չեն դրել, նանը թոնրի կշտին է, կերակուր չի հանել. իսկ թոնրից մեծ պղինձը հանելը հեշտ բան չէ. երկու ուժեղ տղայք ամէն մինը հ ա գ ա հ ա ն լ կեռը ձգում են պղնձի ունկը և կամաց-կամաց թոնրի միջից բարձրացնում: Նանը կողքներին կանգնած՝ սիրտ է տալիս. «Քաշի՛ կեա՛յ, քաշի՛ կեա՛յ:» Ահա այդ պատճառով այդ կերակրի անունը կպցրել են ք ա շ կ ե ա յ—իբր ք ա շ ի գ ա յ: Պեռ ք ա շ կ ե ա ն դռանն է, նորա անուշ հոտը ընկել է տուն և անուտիլ արբեցրել: Չատ տեղ սովորութիք ունին՝ հ ա բ լ ս ա յ են եփում. բայց Հարիսան ինչ կարող է ք ա շ կ ե ա յ ի պատուական համն ու հոտն ունենալ:

—Լա՛ւ, սուս, նանը եկաւ տուն, ամէն մէկը իւր պասը քաշկեայով պէտք է բանայ: Բաժինները աճելուց յետոյ՝ ա ռ ա ջ պապն ու տատը մի-մի գդալ վերցնում են, բերաններին տանում, տեսա՜ծ, տեսա՜ծ, բարձրաձայն կանչում: —«Ա՛յ խոխէ՛ք, ա՛յ բալէ՛ք, քաշկեայի զօրութիւնը ձեզ պահապան ըլի, ծլծաղ երեսով, ուրախ օրերով, մէկ էլ քաշկեայինն ասած կեանք»:

Տատն էլ խոնչայի մէջ բերում է, իւրաքանչիւրի բաժինը տալիս, գլխին, ճակատին կամ թշին համբուրում և ասում. «Քաղցը պառաւիս, բալայ ջան. խոխայ ջան, իմ տարսը հասնես, ծլես, ծաղկիս, շիւեր անես»: Նորանք էլ նանի ստինքն են համբուրում և մրգի բաժինն առնում: Պապը կամ տան մեծ հայրը գինու բաժակը ձեռքն առնելով՝ ասում է. «Ա՛յ

տղէք, ա՛յ բալէք, շնորհաւոր Նաւասարդ ըլի, Հաստա՛տ մնայ մեր աղդի համար. սա մեր պապերի ազիզ օրն ա ըլել. մեզ վերայ պարտք են դրել՝ քանի շունչ ունինք, կատարենք, էս սովորութիւնը մեր մտէն չգցենք. մեր Հայութիւնն էլ Նաւասարդի վերայ ա. բա՛լէն կծիմ. դուք էլ անմոռ պահեցէք՝ թէկուզ խեղճ, թէկուզ հարուստ ըլինք, դէ՛, ձեզ մատաղ ըլի՛մ. մեր պապերի, սուրբ Հայրապետների օրհնանքը ձեզ վերայ կենայ, ամէն»:

— Շնորհաւո՛ր Նաւասարդ ըլի, ազիզ, յաջողակ տարի ըլի, ձայն տուին, կրկնեցին մի՛ասին տղայ ու աղջիկ. և հարսներից սկսած՝ եկան, համբուրեցին պապի ու տատի ձեռքերը: Հալսները մի-մի զոյգ դուլպայ հագցրին նստածներին: Այսքանը տանստանէ էր:

Եկաւ տարէքերէքի ժամը. կնքաւորի, խաչեղբօր տունը ընծաները պէտք է դնան, — մի խոնչալի մէջ դնում և ուղարկում են կախանով խաղող, նուռը, սերկևիլ, շիչուխ, մի կաւ գինի և մի շիշ օղի: Նորանք էլ տանողին դուլպայ, պաճի՛ճ, բաղդադի են ընծայում, չեքերը մրգերով լցնում:

Ծէգը բացուել է. շէմքից դո՛ւրս արի, դռներին նայի՛ր. բարեկամները բարեկամաց տուն, փեսայէք աներանց տուն շնորհաւորէք են գնում: Մի տեղ փող, մի տեղ ծնծղայ, մի բարձր տեղ ղլղլան զուռնան սհարի եղանակը վեր քաշած. մի տեղ մանուկներն են աղբերացեղ բռնում, միւս տեղ ողջում-աղբերները դառնում, երրորդ տեղ ողջումաքիրներ իրար մօտ հաւաքւում, իրար «քաղցր պառաւես» ասում, իրար համբուրում, խնդում, ծիծաղում:

Տե՛ս, գիւղի երէցը լինչ կրակի մէջն է մնացել, լինչպէս է ուրախ ճչում, ժողովրդին խրատում, որ շուտ բաց թողնեն: Նորանք չեն լսում, ամէն մէկը խեղճին դէպի իւր տունն է քաշում, որ նստեն քահանայով, հասարակութիւնով ուրախութիւն

անեն, Նաւասարդը [1]) քաղցրացնեն: Գիւղի ծայրին երիտասարդները զանազան խաղեր են խաղում, մենամարտում: Կալեւում չիրիդ են խաղում. կտրիճները, լաւ ձի նստողները, դուրս են եկել, որ իրանց կտրիճութիւնը չափեն, վարժուին: Ի՜հ, էլ ո՛րն ասեմ. Նաւասարդը Հայի ուրախութիւնն է, նորա սիրտն ու Հոգին վառող կենդանացնող օրն է, մոխրի տակ մղմեղած կրակից կայծեր Հանող շունչն է, աղքատ Հայի վըշտակոծ սրտի փարատող և բուժող պալասանն է:

107. ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Վարդավառի շաբաթ օրն էր: Գարեգինն ու Սօսը կէսօրուան շոգի ժամանակ, երեսների քրտինքը սրբելով, ձորամիջի ջրումը լողացած, տնքալով, քրտնաթաթախ դուրս էին գալիս ձորիցը: Հեռուից նկատեցին, որ ուխտաւորների մի մեծ բազմութիւն Երևանի կողմից ուրախ ու զուարթ, ձի հեծած, արշաւում են դէպի Ս. Կարապետի վանքը, դատարկելով իրանց Հրացանները և օդը թնդացնելով:

Երբ մօտ եկան սոցա, Գարեգինը ոչ մէկին չթողեց անցկենալու. քաշեց իրան ծանօթ բարեկամ Հրաչեայի ձիու սանձն ու դիմեց դէպի իրանց տունը: Դուան առաջը ճանապարհորդներն իջան ձիաներից և բակումը նստատեցին մի կապերտի վերայ, Հով տեղում:

— Մի քիչ սառը ջուր չունի՛ք, ասաց Հրաչեան:

Իսկոյն ներքնատանից Հանեցին մի այնպիսի սառը ջուր, որ կարծես Ջրօրհնէքին լինէր լցրած:

Չէնց խմեց Հրաչեան՝ «Օխա՛յ, ասաց, ակդ օրհնուի՛. քո

[1]) Նաւասարդի այս տօնը սովորաբար ժողովուրդը կատարում է Նոյեմբեր ամսում, Յիսնակի կամ Նախարարողի շաբաթապասի շաբաթ օրը:

պատճառ դարձողի հոգին դրախտական լինի. ես այսքան մանեմ եկել, լաւ ջրեր շատ եմ տեսել, բայց այս օրհնուած Աշտարակի ջրի պէս մարսական ու քաղցր ջուր ոչ մի տեղ չկայ։ Վաղդավառ շաբաթ օրն այսպիսի ջուր, Երևանայ երկիրը քանդես՝ չես գտնիլ. Աբարան շատ աղբիւրներ կան, Ալագեազ շատ քաղցր ջրեր կան, բայց ոչ մէկը սորա պէս մարսական չէ. Ամբերթը գոված ջուր է, բայց սորա խումը չունի»։

—Մեռնի՛մ սուրբ Ականատեսի զօրութեանը, նա մեր գիւղի համար այս լաւութիւնն է արել, ասաց Գարեգինը. Կարբու ներքևից գետիցը գաւազանն առել է, աղօթք անելով ճանապարհ է ընկել և առաջ գնալով դէպի ցած, ուր գաւազանը գետնին է դիպել, լայն առու է զոյացել, ջուրը հետն է եկել, ինչպէս որ ստուերը մարդու ետևիցը. որտեղ ապառաժ քար է եղել, գաւազանով խփել՝ երկու կտոր է արել, կամ մի-ջիցը ծակել, ջուրը անցկացրել, մինչև բերել հանել է գիւղատեղը։ Նո՛ր յետոյ կամաց-կամաց մարդիկ են եկել, տեսել են ջուր կայ, գիւղ են շինել, որ ահա այս աննման Աշտարակն է։ Ինքն էլ վերադարձել, գնացել է Սաղմոսավանք՝ ճգնութիւնն անելու. մեռնի՛մ նորա լոյս գերեզմանին. մենք նորան շատ ենք պարտական. նորա սուրբը գերեզմանը հիմայ էլ Սաղմոսավանքի եկեղեցու մէջն է և մեզ համար աղօթք է անում։

Գարեգինը հիւրերին նստացրեց և գնաց կախանատնից լաւ ընտիր խաղող դուրս բերեց, լուաց սառը ջրով ու դրեց նոցա առաջը. «Հրամեցէ՛ք, ասաց, ներեցէ՛ք, որ չեմ կարողանում լաւ հիւրասիրել ձեզ. տանը ոչ ոք չկայ, ամէնքը այգին են գնացել»։

Խաղողը ուտելուց և մի փոքր հանգստանալուց յետոյ՝ հրաչեան ձայն տուեց, «Գէ՛, տղէ՛ք ջան, վե՛ր կացէ՛ք, մեռնում է արդէն, շնորհակալութիւն, սիրելի՛ Գարեգին, Աստուած օջաղդ հաստատ պահի»։

Ամէնքն էլ «ամէն» ասացին, ձի հեծան և դիմեցին դէպի Հանավանքը։

Հետևեալ առաւօտը, արեգակը նոր էր ծագել, դեռ այնքան զօրութիւն չունէր, որ մարդու աչքերը ծակծկէր։ Աշտարակայ ուխտաւորներն էլ ճանապարհ ընկան։ Ամուրիները խումբ-խումբ իրանց հացները կապել էին շալակներին ու առաջ էին գնում. պաս պահողներն էլ խնձորներ էին լցրել գրպանները և մուրացկաններին բաժանելով՝ վազում էին, որ պատարագին հասնեն, սրբութիւն առնեն։ Բազմութիւնը այնքան մեծ էր, որ քիչ էր մնացել՝ կանանց մի տուտը Հանավանք հասնի, մինչդեռ միւս տուտը դեռ նոր էր դուրս գալիս գիւղից։ Երեխայքն էլ, գրպանները խնձորներ լցրած, ձեռք ձեռքից բռնել էին ու կանանց առաջն ընկած՝ վազում էին։ Գարեգինն էլ մատաղացու ոչխարը մորթել էր տուել ու միսը լցրել մի մեծ կաթսայի մէջ։

Երբ տեղ հասան, պատարագն աւարտուեցաւ, պաս պահողները հաղորդուեցան։ Յօն էլ գնաց գործակալի մօտ, խնդրեց նորան, որ ժամարարին, միւս քահանաներին ու տիրացուներին հետն առած՝ գայ իրանց սեղանին։

Կանաչ խոտի վերայ սփռոցը տարածեցին ու սեղան բաց արին. ամէն բան կար, Աստուծու բարութիւնն էլ այնտեղ էր։ Հացկերոյթի վերայ լաւ ուրախ ժամանակ անցկացնելուց յետոյ՝ ուխտաւորներն սկսեցին կամաց-կամաց քաշուիլ գնալ։ Մնացին պարտէզներում զուարճացող մի քանի երիտասարդներ. սոքա էլ կամաց-կամաց գնացին ձորը, շորըհան եղան և կխամերկ ընկան գետը, ինչ ո՛վ չէր ուզում իւր շորերի թրջելը, նորա վերայ ջուր էին ցանում՝ ասելով թէ. «Վարդավառ է»։ Մինչեանց այնքան թրջեցին, որ ջուրը ծլծլալով վերաներից թափւում էր։ Լողանալը վերջանալուց յետոյ, գետումը ձուկ բռնելով գնում էին դէպի Աշտարակ, որ այնտեղ ղուրս գան, գնան այգիներն ու զարձեալ մի լաւ ուրախ ժամանակ անցկացնեն։

108. ԷՋՄԻԱԾԻՆ

Էջմիածին խիստ սիրուն պայծառ տեսայ,
Երկու հարիւր կանթեղ՝ յիսուն ջահ տեսայ.
Դիւի ամէնը շարէշար ու վառ տեսայ,
Վաթսունի չափ հէնց ոսկէ բուրվառ տեսայ,
Լուսաւորչի տաճարը մարմար տեսայ:

Մարմար քարից շինուած էր աւազանը,
Բերին, դրին տասներկու գաւազանը,
Որ խաչով խաչակնքեց Սրբազանը,
Ինքն իրան եփեց Մ ե ռ ո ն ի ղ ա զ ա ն ը
Համբուրեցի՝ մէկ այսպէս հրնար տեսայ:

Ուխտ են եկել Հիւսիսից մինչև Հարաւ,
Դիւի լիառատ, ոչ սուաճ են, ոչ ծարաւ,
Տասներկու եպիսկոպոս Թափօրը արաւ,
Տիրացուների ձայնը խելքըս տարաւ.
Նորանց ժամ ասելը ուրիշ բան տեսայ:

Հրեւիպսիմէն, Զողակաթը, Գայիանէն,—
Երեքըն էլ խիստ գօրաւոր նըշան են.
Մեծ ու փոքր հինգ հարիւր միաբան են,
Աջով, խաչով, սիրուն պատարագ կանեն:
Երեք հարիւր ոսկէկապ շուրջառ տեսայ:

Մխակին Բուրջին ասում է՝ չի ըլի Հատը,
Սուրբ Լուսաւորիչն է տըւել խրատը.
Որ անիծեց՝ խոզ դարձաւ Տըրդատը.
Ոսկի՝ արծաթ պատկեր է ամէն պատը.
Աբրշումէ խալիչէքը զաւ տեսայ:

109. ԳԻՒՂԱՑՈՒ ԵՐԷՆԿՈՒԹԻՒՆԸ

Ձմարիտ է շատի հազինը տրեխ է, գուլպայ էլ չունի, որ ոտը ծածկէ, շատի չուխի վերայ հարիւր կարկատան կայ. բայց ինչ կանես՝ որ տունն ու մառանը հազար բարութիւնով լիքը՝ տրաքում էին: Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու դոմէշը, հորթ ու ձագը տակինը՝ դոմումը կապած, նժոյգ ձին ախոռումը, գութանը դրանը լծած, մառանը սեխով, կախանել տանձ ու խնձորով խըլթխըլթում և մտնողին հոտը տեղնուտեղը բռնում, շշմացնում էր: Որը երկու, որը երեք այղի ունի, ծառայ ու հօտաղ դրանը պատրաստ և տան ներսն ու պուճախը բազմութեամբ լիքը: Կարասներով աղ-դրած կողակ, կճուճներով պանիր ու դաւրմա, աքաշներով զոկ ու բոկ, բղուղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր—մի խօսքով ծով՝ և ոչ թէ տուն: Տասը հիւր որ միևնոյն ժամին մէկի դրանը ցած գային, ամբողջ ամիս ուտէին, խմէին, կոտրէին, ջարդէին, փչացնէին, նորա տան բարիքը կար ու կար, և եթէ մինչև անգամ վայրենի օտարականը նոցա դռնով անց կենար, իրանք թևիցը կը քաշէին, տուն կը կանչէին, որ նորանց սեղանի համն առնի ու այնպէս ճանապարհը շարունակէ: Շատ անգամ եկեղեցումը որ մէկ օտարական կրտեսնէին, «սուրբ սուրբն» ասածին պէս՝ շատը կերթար՝ եկեղեցու դուռը կրկտրէր, որ ամենից առաջ ինքը նորան իւր տունը տանի, և շատ անգամ՝ երբ խնդրողները շատ լինէին, խօսքը մին կանէին, որ մի երկու շաբաթ նորան իրանց մէջումը պահեն, պատիւ տան և բոլորը միասին մէկ օր սորա տանը, միւս օրը նորա՝ ուրախութիւն անեն, օտարականի սիրտը առնեն: Շատերը ոչխարի հօտեր ունէին: Ցմեռին մարդ կար, որ տարէնը երկու հարիւր, երեք հարիւր լիտր տանձ, խնձոր, ծիրան էր ծախում, և մէկ այնքան էլ աղքատի ու ճանապարհորդի ուտացնում, կամ դեղապետի հա-

մար պահում, որ սարերում բնակուողները, որոնք այգիներ չունեին, մեկ հիւանդ պատահելիս՝ գան տանեն ու իրանց հիւանդի աչքը դրանը չմնայ, որովհետև մեր աշխարհումը, ինչ հիւանդ էլ որ լինի, նորա առաջին ու վերջին դեղը պտուղն է։ Ամենայն մարդ իւր բաժակի գինին առանձին ունէր պահած, որ համ իւր եկեղեցուն էր տալիս, համ էլ այն գիւղացիներին, ուր այգի չկար։ Ամէն նաւակատիքի՝ ոչխար ասես, կով ասես մորթում էին, մատաղ անում, ժամ—պատարագ անել տալիս, ժամից բաժանում ու տանով տեղով գնում իրանց սիրելիների գերեզմաններն օրհնել էին տալիս ու աղքատներին կշտացնում։ Մեկ կոպեկի բան փողոցիցը տուն չէր գալ, բացի իրանց հագնելու շորիցը, այն էլ կտաւ, շապկացու, չուխայ, շատը հարսներն ու աղջկերքն էին նորանց համար մանում, գործում, կարում։ Նորանց կանանցը որ մտիկ տային, խելքդ կերթար՝ խասի ու նուրբ կտորների մէջ կորած էին. բերաններից կտրում էին, իրանց ընտանիքի ոտն ու գլուխը մաքուր պահում. տղամարդը իւր օրը մեծ մասամբ հանդումն է անցկացնում, ինչ փոյթ, եթէ վատ էլ հագնի. կինամարդը միշտ պէտք է պատշաճապէս հագնի, պատշաճապէս մաշի։ Ջատը չորս-հինգ հարս ունէր տանը, որ մեկ տեղը ցաւելիս՝ կամենում էին գլխովը պտուտ գան ու ոտները ջուր անեն՝ խմեն։ Մեկ հիւր պատահելիս՝ այս պատիւը հիւրինն էր։ Աչքը կթած՝ կանգնած են համեստ հարսները, որ տեսնեն, թէ իրանց տէրը կամ հիւրը ինչ կը հրամայի, որ կատարեն։

«Ինձոտ, բանիտ սա է. փողի օգուտն էլ անլիճած, նորա կտրողն էլ», ասում էին շատ անգամ գիւղացիք, գլխները շարժում։ Այսօր չէդ լեցնես, վաղը պէտք է մատդ լիզես։ Ոչ գիշերը քունդ է տանում, ոչ ցերեկը հանգիստ ունիս, փորացաւ ընկած պէս՝ մարդ չի իմանում, լէկ պատառը որ կողմովն է կոխ գնում։ Փողը որ կայ՝ ժանգ է, ձեռի կեղտ. այսօր կայ, վաղը՝ Աստուծով միլիթարուիս»։ Պահելուդ յետոյ է՝ պէտք է

շներոց, գայլերոց լինի։ Թէկուզ փողի համն առած, թէկուզ իւր միսը կերած, հաշիւը մեկ է։ Սարդարն էլ է մեր դուռը գալիս, փողատէրն էլ։ Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջուալումն ալիւր, հէրն անլիճած, եթէ բոլորովին մերկ էլ լինիմ և հոգս անեմ։ Օջաղս լիքը լինի, տունս առատ, տրդիկս ողջ-առողջ, թող օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուրս գայ, ինչ եմ հոգում, հացն էլ է Աստուծունը, ես էլ, ով հասնի թող ուտի։ Գդակս ծուռը կրդնեմ, ուրախութիւնս կ'շարունակեմ. ով ծոյլ է, թող նա հոգս անի։ Տարէնը որ հազար շուն, գայլ, թուրք, հայ, աղքատ, օտարական, հացս չուտեն, տանս չքնեն, գինիս չխմեն, իմ աչքը խակի քուն կրգայ։ Բացի ուտացնել, խմացնելուց, այնպէս եմ պատուիրել, որ խուրջիններն էլ լցնեն ու տանեն իրանց տները։ Իւր տնկած ծառի տակին քնելը, նորա պտուղն ուտելը՝ աշխարհքս արժէ։ Նոր չեմ հագնիլ, հին կրհագնեմ, ձեռքս ով է բռնում, ով է գլուխս ծեծում. ես չեմ իմ գլխիս տէրը։

«Քաղաք որ մտնում եմ՝ հէնց իմանաս թէ աշխարհք սով է ընկել, էլ ոչ խէր կայ, ոչ բարաքաթ։ Մեկ տեղ որ հացն ու ջուրը փողով լինին ծախում ու առնում, էլ ում դուռը գնաս, ձեռդ ում դէմ անես։ Երբեմն էլ կիտուկ-կիտուկ փողերը համարելիս՝ փողատէրն այնպէս սրբսրբում է, որ հէնց իմանաս թէ առաջինը թէև կառնի, կրթռչի։ Թռւհ... մարդ իրան հոգին պէտք է ծախի փողի պատճառով։ Հազար տարի էլ որ քու ամենասիրելի բարեկամի դուռը շլինիդ ծռես՝ կանդնես, սոված մեռնելիս լինիս, հազար տարի անօթի փորով գիւտաս, ոչ ոք քեզ տուն չի կանչիլ. սառը ջուր չի խմացնիլ։ Մինչև անգամ այն մարդը, որ քո տանը կերել, խմել, ամսով—տարով քո աղ ու հացի վերայ է եղել. աչքն աչքիդ առնելիս՝ հէնց իմանաս թէ դնդակով խփեցին, յետևն է քեզ անում ու աչքը քամակը դցում։ Տօ, օրհնուած, ասենք թէ աչքերդ կուրացրել ես ու ինձ չես ուզում ճանա-

չել, ասենք թէ չես կամենում քո օրհնուած սեղանիդ կողքը ինձ ցոյց տալ, մէկ՝ «բարով, Աստուծու բարին» գոնէ ասա, հօ բերանիդդ վարձ չես ուզում, դա էլ հօ փողով չէ, այ փողակեր, հողակեր: Ասենք թէ չուխէս մահուդ չէ, հին մաշուած բրդից է, իսկ քոնը նոր, կանաչ մահուդից, ձեռքիդդ հօ չեմ խլում: Քեզպէս հազար մահուդսմարդ իմ այս աղքատ չուխիս մատաղ լինի, որ առանց հիւրի հաց չեմ ուտում: Այսպէս են ահա քաղաքի մարդիկը: Էլի Աստուած օրհնի մեր ջուրը, մեր հողը, էլի թէ հոգի կայ, հաւատ կայ, մեղանում է: Մարդ ինչ անի, իւր առաջը կրգայ. լաւութիւն կ'անես, լաւութիւն կըտեսնես, վատութիւն կ'անես, վատութիւն կ'ստանաս: Հաբիւր տարի կըլինի, որ լուսահոգի Աբովը մեռել է, բայց նորա ողորմին կայ ու կայ. թուրք ու հայ նորա գերեզմանոլն են երգւում, նորա բարերարութիւնները սահման չունէր. տալիս էր՝ ինչ որ կարողանում էր, և ոչ ոքի դադարկաձեռն չէր բայ թողնում»:

110. ԱՒՍՈՐՈՒԱԾԻ ՋՈՒԱԿԸ

—Հայրիկ, երբեմն, կարծես եր ւմ,
Որպէս միգապատ ամպերի միջով,
Ինձ մի հրաշալի երկիր է փայլում՝
Իւր կախարդական գեղեցկութիւնով:
—Բայց մեր չորս կողմը պատիլ է ձիւնը,
Կանաչ են մնացել միայն եղևնիք...
Այստեղ ամբողջ օր փչում է բուքը
Եւ կատաղաբար մռնչում մրրիկ:
—Իսկ այնտեղ, հայրիկ, ւև լոյս է և տօք,
Ծաղ՛ղունք, անտառներ, կարկաչուն գետակ.
Բայց ս՛Թէ տեսածս ցնորք է, հայրիկ,
Ո՞ւր է այն հեռու երկիրն գեղեցիկ:

«Լուռ կաց, դու լուռ կաց, իմ քաղցրիկ մանուկ,
Բախտի ցնորքը տուր մոռացութեան.
Հազիւ կրժպտայ նա քեզ մի վայրկեան,
Հետքից թողնելով յաւերժ արտասուք:
«Անգառնալի է, հեռու այն աշխարհ,
Այնտեղ ճանապարհ չկայ մեզ համար.
Աքսորանքիդ հետ հաշտուիր, սիրելիս.
Սրտիդ յուզմունքը մեղմացուր, որդիս:
«Ցընորք չէ միայն. ինչոր տեսնում ես,
Այն հայրենիքդ է քո կարօտալին,
Որն այնպէս չքնաղ ու գեղեցկապէս
Յաճախ փայլում է աչքիդ առաջին»:
—Այնտեղ ինձ մէկը կանչում է հեռուից.
Ուրւականի պէս նա վեր է կենում.
Չայրիկ, այն ձի է մայրենի երկրից,
Որ ինձ դէպ իրան ձեռքով է անում:
—Տես, կանգնած է նա ճաղիկների մէջ,
Դէմքը թախծալի, տխուր ու գունատ,
Կարծես թէ վաղուց իմ մտքերի մէջ
Նորան տեսել եմ... հայրիկ հարազատ:
—Օրն արդէն մթնեց, ցուրտ մառախուղում
Ո՞վ է հրապուրում ինձ այն հեռուից.
Արդեօք մայրս չէ՞, որ ինձ կանչում է,
Խորը քուն մտած սառ գերեզմանից:
—Այո՛. նա մայրըս է կանչում... ներիր,
Նա ինձ կանչում է այնպէս ժպտալից...
Գնամ նորա մօտ, այն հեռու երկիր,
Մինչ արշալոյսը կրծագէ նորից:
—Երազում գոնէ հայրենիք թռչեմ,
Այնտեղ անցկացնեմ ամբողջ գիշերներ,

Իսկ ցերեկը, հայր, քեզ հետ կըլինիմ...
Ձեզ չեմ մոռանալ, իմ հարազատներ...

111. ՆԱԽԱՊԱՀՔԱՐՄՈՒՆՔ

I

188... Թուականի մարտ ամսի 9-ն էր: Կէս օրը մօտ էր և արեգական ջեռուցիչ ճառագայթները, սփռուելով գիւղի շրջակայ ձիւնոտ դաշտերի վերայ, անտանելի կերպով խոշտանգում էին մարդկանց աչքերը: Տների և մարագների դռների առաջ, չոր կտուրների վերայ մանաւանդ, ոմանք կանգնած, շատերը ծալապատիկ նստոտած, հարիւրաւոր գիւղացի՝ տղամարդ և կինարմատ, մեծ և փոքր, ակնապիշ դիտում էին այդ օրը իրանց գիւղը ժամանող արագիլը, որը բազմած էր փինջաձև բնի վերայ, մի երկայն գերանի գլխին, գիւղի արևմտեան ծայրում: Գիւղացիների բոլորի երեսներն էլ առհասարակ ուրախութեան նշաններ էին արտայայտում: Ծերերն էին մենակ, որոնք իրանց կարճատեսութեան շնորհիւ չկարողանալով տեսնել արագիլը, անդադար այլ և այլ հարցմունքներ էին անում, թէ արդեօք ճիշտ է՝ ջահիլներն իսկապէս տեսա՞ն արագիլի բերած կանաչ խոտը. մի քուրջ կանաչ օձը կամ մողէսը նոքա կանաչ խոտի տեղ ընդունած լինին. արդեօք որևիցէ արեան նշան չտեսա՞ն ջահիլները արագլի կտուցին. կանաչ խոտը մե՞ծ էր, թէ փոքր, հնդե՞ր կային նորա վերայ...—Այս բոլոր հարցմունքներին գոհացուցիչ պատասխան ստանալով սրատես ջահիլներից՝ կարճատես ծերերը նոյնպէս ուրախանում էին: Չաւաստիանալով արագլի բերած բարեգուշակ նշանին և հետևաբար առաջիկայ տարումը լինելիք երկրի պտղաբերութեան և առատութեան՝ գիւղացիք հետզհետէ կտուրներից ցած էին

լջնում պատկից քարեայ նեղ սանդուխների վերայով, ուրախութիւնից միմեանց հրելով-հրըշտկելով, միմեանց հետ զանազան կատակ ու ծաղրածութիւններ անելով: Կէս ժամ չանցած՝ կարզալի գրեթէ ամէն մի տան առաջ, երկայն սրահների մէջ, սկսուեցաւ գիւղական կեանքի գործունէութիւնը: Գիւղացիները, ոմանք, մարագից դուրս բերելով մաճն ու դութանը, մեծ եռանդով սկսեցին սրել դոյա խոփը, կռել, կոփել այդ գործիքների երկաթեայ զանազան մասերը. ոմանք բակի միջի թառերից վեր բերելով լծկան եղների և գոմէշների լուծն ու սամիքը՝ մաքրոտում և կապկպում էին. ուրիշները մանգաղ ու դերանդի սրում, փոցխի ու եղանի ճանկերը փոխում, տաշում, սայլի և սայլակի ցցերն ու անիւներն անցկացնում, դէսուդէն շուռ տալիս, պտտեցնում, սերմնացու ցորենի և գարու ամբարների դռները բաց անում, աչքից անցկացնում, շոյում ու շոյշոյում այնտեղ եղած հացահատիկները:

Գարնանային յորդ անձրևների շնորհիւ դաշտերի խոտը, անցանք արօտն ու ուլաֆը այնքան առատ էր եղել այս տարի, որ գիւղացոց ուրախութեանն ու աշխատութեանը չափ չկար: Իսկ երբ նոքա մտաբերում էին ցանքերի առաջիկայ առատութիւնը, կամայ ակամայ մի ներքին յարդանք էին զգում դէպի արագիլը, որը այդ միջոցում գիւղի հարաւարևմտեան կողմում ձգուած ընդարձակ ճահճային խոտացում օրն ի բուն թրև գալով, աներկիւղ և առատ-առատ իրան որսն անելով, իրիկնագահին գալիս էր և առօք փառօք ճագուկների մօտ նստում:

II

Օգոստոսն եկել, հասել էր, բայց դեռ անձրև չկար. ցանքերը թէև առատ էին, բայց լաւ ատոքացած ու բարձրացած չէին: Կարզախու ամբողջ հովիտը ծածկող հացաբոյսերի գլուխները արևի այրող ճառագայթների առաջ չորացել, ճկուել ու

խոնարհուել էին: Իւրաքանչիւր գիւղացի դիտում և վկայում էր, որ այդ տարին յարդը սակաւ կլինի, որովհետև երաշտութեան պատճառով ցանքերը կարճ են մնացել: Եթէ մինչև վարդավառ գոնէ մի երկու անգամ անձրև չգայ, հացահատիկների բանն էլ պրծած կլինի և փոխանակ առատութեան ու աժանութեան, սակաւութիւն և սղութիւն առաջ կըգայ: Ձատերի, մանաւանդ ջահիլների մէջ՝ այն յոյսն ու հաւատը, որ ունէին նոքա դէպի արաղիլը և նորա բերած բարեգուշակ նշանը, սկսած էր տատանուիլ, կասկածի ենթարկուիլ: Բայց փորձառու ծերերը դեռ ևս աշխատում էին հերքել ջահիլների կասկածը: Երաշտութեան մխակ պատճառը հինաւուրց մարդիկը մեկնում էին իրանց մեղքերի շատանալով և գիւղական կենցաղավարութեան դեղխանալով:

Բայց ոչքան էլ աշխատէին ծերերն իրանց մէջ արմատացած նախապաշարմունքը ճշմարտութեան տեղ ծախել, այնուամենայնիւ տարուայ վերջին իրանք էլ համոզուեցան, որ պատարկ բանների հաւատ չպէտք է ընծայել: Այս թուականին կարգախի և շրջակայ գիւղերի արտերը համարեա ամբողջապէս ոչնչացան՝ մասամբ երաշտից և մասամբ անձրևախառն կարկտից:

---

112. ԲԱՌԱԽԱՂ ԵՒ ՁՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Միանգամ, երբ մայիսեան գեղեցիկ Հանդարտ երեկոյ էր, երբ պարզ երկնքի լուսինը և աստղերը ձգել էին իրանց լոյսը Ղոլթուլի (Թարալագեաղում) կանաչազարդ այգիների վերայ, երբ Ալագեաղ գետը գիւղի մօտ, ջրաղացի առաջ, Հանդարտ օդի մէջ տարածում էր իւր խոխոջման ձայնը, գիւղի միւս ծայրում լսւում էին մանր երեխանց ծիծաղ, երդ և այլ անորոշ ձայներ, որ մերթ Հանդարտում էին և մերթ կրկին սիրուում: Ես թողնելով իմ մառախլապատ սենեակը՝ գնացի

դէպի մանուկները: Այդպիսի դէպքում մի անճանօթ մարդու ներկայութիւնը կարող էր խանգարել մանուկների զուարճութիւնը, վասնորոյ ես ընտրեցի մի այնպիսի տեղ, որ անյայտ մնայի խմբից, բայց կարողանայի ուշադրութեան առնել նորանց արարմունքը և խօսակցութիւնը:

Երեսունի չափ մանուկներ, 8-ից մինչև 15 տարեկան, ժողովուել էին մի տան պատի տակ, իրանցից սորան կամ նորան հրում էին, միմեանց վերայ ծիծաղում և մինչև անգամ շատ կոպիտ կերպով հայհոյանքներ էին թափում: Հայհոյելը գիւղացի մանուկների ամենավատ սովորութիւններից մինն է:

— Տօ, տղայք, եկէք բառախաղ ասենք», ձայն տուեց նոցանից մինը:

«Եկէք, եկէք», ձայն տուին միւսները:

Մէկն առաջարկեց: «Ասա՝ ցախաւելը գցեմ մարագ»:

Միւսը պատասխանեց. «Ուտես կովի կարագ»:

Յաջողակ և շուտ պատասխանի վերայ մանուկներն ուրախացան և, իբրև նշան գոհունակութեան, ամէն կողմից կրկնեցին պատասխան տուողին, «Հայ ջան, հայ ջան»:

— Ասիր՝ կոնք, առաջարկեց ուրիշը:

— Աչքիդ վերևը յոնք, կրկնեց պատասխանը:

— Ասա՝ կանանչի:

— Գրողը քեզ կանչի:

«Հայ ջան», ձայնեցին շատերը, ծափ տուին և ծիծաղեցան: Բառախաղը երեխաների համար կենդանի զբաղմունք դարձաւ. ամէնքն սկսեցին կարգով առաջարկութիւններ անել և լուծել առաջարկածը:

— Ասա մէկ:

— Երեսդ է շէկ, գլուխդ քաշեմ լեկ (կաշի, մորթ):

— Ասա երկու:

— Կերածդ է ձու:

— Ասա երեք:

—Կողքդ քերենք։

—Ասա չորս։

—Հայ կեր, դնա հորս.

—Ասա հինգ։

—Աչքդ մտնի լինգ։

—Ասա վեց։

—Մեծ նանը քեզ խտտեց, գլխիդ ջուխտ բամփեց, ծվվոցդ վեր արեց։

—Ասա եօթը։

—Առնես հօրդ բօթը, բերանդ թիու կօթը։

—Չայ, ասա ութ։

—Ուտես մի կողով թուխ։

Բոպէական լռութիւնից յետոյ՝ կրկին շարունակեցին։

—Չայ, ասա տասը։

—Դու ինքդ ես թարսը, ուտես թանէ սպասը, վատ մարդ է քո հարսը, վկայ է սուրբ մասը, արագ-արագ կրկնեց պատասխանը։

—Չայ, ասա Հայ։

—Բերանդ բաց, վազի ջաղաց։

—Չայ, ասա բրինձ։

Այս առաջարկութեանը ոչ ոք խոհոյն պատասխան չգտաւ և, ընդհանուր կարճ լռութիւնից յետոյ, առաջարկողը, ինչպէս պահանջում է կարգը, նորից կրկնեց, «Հայ, ասա բրինձ»։

—Մատաղ լինես ինձ, պատասխանեց մինը։ Ամէնքը ուրախ-ուրախ ծիծաղեցան։

—Չայ, ասա պանիր։

—Ոտներդ հանիր, ճախարակ մանիր, ձեր տանը բանիր,

—Չայ, ասա երթանք ձեր տունը։

—Ուտենք մածունը, քանդենք ժամտունը, կրակ տանք սիւնը։

—Չայ, ասա Հայ էր։

—Դռները բաց էր, աչքերս թաց էր, մարդի զուրցած էր, մանուկ կըլացէր։

—Չայ, ասա ձիւն կայ։

—Տներումը սիւն կայ, ճնճղուկին բուն կայ, աչքերին քուն կայ։

Այսպէս երկար ժամանակ մանուկները զուարճանում էին սուր առաջարկութիւններ անելով և պատասխաններ տալով։ Բայց բառախաղը, որ սկզբումը սաստիկ գրաւել էր նոցա, փոքր առ փոքր թուլացաւ և մի րոպէաչափ բոլորը լռեցին, կարծես ձանձրանալուց։ Ընկերներից մինի առաջարկութեամբ խաղի տեսակը փոխուեցաւ։ Սկսուեցան շուտասելուկները։

—Տղէք, ո՞վ կարող է ձեզանից շուտ-շուտ ասել. «Ձուկ գցեմ, ձուկ կուլտամ. մուկ գցեմ, ձուկ կուլտամ»։ Ձատերն սկսեցին կրկնել։ Մանուկների կրկէոցը երկինք էր հասնում մանաւանդ, երբ շուտ ասելու ժամանակ, ձուկ կուլ տալու փոխանակ մուկ էր կուլ տալիս ասողը։

—Ո՞վ կարող է ասել՝ գետի այն կողմը մի աղուէս, ես չէր ուտեմ, նա փէթիր, նա փէթիր ուտի, ես չէր.

—Սկսեցին արագ-արագ կրկնել վերջին խօսքերը։ Ով որ ընտելացած չէր, շուտ-շուտ սխալւում էր—իւր ուտելին աղուէսին էր տալիս, իսկ աղուէսի ուտելին ինքն էր անուշ անում և ընկերներին ծիծաղու կոտորում։

Մինն առաջարկեց կրկնել հետևեալ պարբերութիւնը. «Ուլն ելաւ ուռի ծառը, ուլի ձեռով ուռ ոլորեց։

Միւսն առաջարկեց կրկնել. «Տէր Կարապետենց տանձի ծառին, երկու ծանր տանձ կայ ծայրին»։

—Երրորդն ասաց. «Սեխովը թռչեմ, սեխ ուտեմ, ցեխովը թռչեմ, սեխ ուտեմ...

---

113. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—Տղայք, եկէք Հանելուկներ ասենք, ձայն տուեց մանուկներից մինը:

—Ասենք, ասենք, ասենք, պատասխանեցին շատերը:

Ես ուրախ էի, որ գիւղական մրջևնանման այդ անգրագէտ բանաստեղծները կամենում էին արտայայտել իրանց Հանճարը, խելքը, սրամտութիւնը: Գիւղական երեխաները Հանելուկների անսպառ աղբիւր են. նոքա երեկոյեան ժամանակ Հանելուկները ասելու համար Հաւաքւում են մէկ տեղ և երկու խումբի բաժանուելով՝ մէկ մէկու առաջարկութիւնները են անում:

Այսպէս և այժմ իմ գնացած մանուկները երկու բաժին եղան և Հանդարտութեամբ մի բաժինը նստեց միւսի դէմ:

Մի բաժնի առաջարկած Հանելուկները լուծում էին միւս բաժնի անդամները և փոխադարձաբար իրանք առաջարկում: Կարգը և խաղաղութիւնը պահպանելու համար փոխադարձ երդումով պայմանաւորուեցին, որ ոչ ոք անկարգութիւն չանի:

—Ականջ դրէք, ինչ եմ ասելու, ձայն տուեց բաժնի անդամներից մինը:

—Ասա, տեսնենք, պատասխանեցին միւս բաժնից:

—Ին ինչ է որ՝ կարմիր թաղին ընկել է սև թաղու յետևը:

—Էդ ով չէ իմանում, որ կրակն է, կարմիր թաղին կրակի բոցն է, սև թաղին էլ ծուխն է:

—Ին ինչն է որ՝ խալին փռեմ, լագեանը (կոնք) դնեմ, նշերը ցրուեմ:

—Խալին երկինքն է, լագեանը լուսնակն է, նշերն էլ աստղերն են:

—Ին ինչն է որ՝ մէկ տուն ունիմ, սիւն չունի:

—Էդ էլ գիտենք:

—Չա՛, գիտես, դէ՝ ասա, տեսնենք:

—Էդ ով չէ իմանում, որ ամպն է. Աստուած այնպէս է շինել, որ առանց սիւն կանգնում է:

—Ին ինչն է որ՝ երկար աղիք, ծայրը ծաղիկ:

Մանուկները մտածման մէջ ընկան: Բաւականաչափ լռելուց յետոյ՝ նոքա ձայն տուին: «Չիմացանք, յաղթուեցանք, ասացէք, տեսնենք»:

—Չէ, մինչև մի քաղաք չտաք, չենք ասիլ:

—Տալիս ենք, հը՛, Երևանը ձեզ:

—Ուտեմ խմեմ Երևան, հագնեմ մաշեմ Երևան, նժոյգ ձին հեծնեմ, քաղաքի մէջ ման-ման անեմ, թշնամիներիս աչքը հանեմ, ընկերներիս հետ ես մի մեղրաՀոր ընկնեմ, դուք մի ցեխահոր:—Իմ ասածը մոմն է, ծայրի ծաղիկն էլ վառուած տեղն է:—Դէ հիմի դուք ասացէք.

Յաղթողները լռեցին: Յաղթուողներն սկսեցին:

—Ին ինչն է որ՝ նեղլիկ, կլորուկ, մէջը լի կարմիր Հուլունք:

—Դա նուռն է:

—Ին ինչն է որ՝ քեզ տուի կպաս:

—Ընուկն է, որ մկրտելիս կըտան, մարդուց կըկպչի:

—Ին ինչն է որ՝ երկու եղբայր մի սարի լանջին, որքան աշխատում են, միմեանց չեն տեսնում:

—Դոքա աչքերն են, որ միմեանց չեն տեսնում:

—Ին ինչն է որ՝ երկու տուն է, մի սիւն:

—Երկու տունը քթածակներն են. մի սիւնը նորանց միջի պատն է:

—Ին ինչն է որ՝ մուխը տուն, գաւիթը քուն, երկաթէ սիւն:

—Մուխը տունը թուանքն է, գաւիթը գնդակն ու վառօդը, երկաթէ սիւնն էլ ճիպոտն է:

—Ին ինչն է որ՝ մի ծառ ունիմ, երկու թուփ ունի, մէկը սև, միւսը սպիտակ:

—Ֆիշեր-ցերեկն է:

—Էն ինչն է որ՝ մեկ բան ունիմ ճիճան է (դդդդուաճ), ճիճանի տակը մեյդան է, մեյդանի տակը բաժակ է, բաժակի տակը զուռնայ է, զուռնայի տակը մարագ է, մարագի մեջը ուրագ է:

—Չիմացանք, բալամ, առա՛, տեսնենք, պատասխանեց Հակառակ կողմը:

—Ի՞նչ էք տալիս, որ ասեմ:

—Մի գլուղ կըտանք:

—Չէ, մենք քաղաք ենք տուել, քաղաք էլ կ'առնենք:

—Լաւ, լաւ, Ֆիւմբին քեզ տուինք:

—Ուտեմ-խմեմ Ֆիւմբին, հագնեմ-մաշեմ Ֆիւմբին, աչ գնամ, գործս աջողի, ձախ գնամ, բանս շինուի. նժույգ ձին նստեմ, Ֆիւմբու մեջ մտնեմ, թշնամուս սէջը հանեմ. եու նի ըլեմ, թախտին նստեմ, դուք վեր գաք, տափին նստէք, մեզ ղուլ ու ծառայ ըլէք:—Դե հիմի լսեցէք ու հասկացէք.—ճիճանը գլուխն է, մեյդանը ճակատն է, բաժակը աչքերն են, զուռնէն քիթն է, մարագը բերանն է, ուրագն էլ ատամներն են:

---

114. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ —«ՀԱ՛ ԳԱՆԳԱԼԱՅ»

—Տղայք, եկէք «Հա՛ գանգալայ» խաղանք, ասաց մանուկներից միևը:

«Եկէք խաղանք», պատասխանեցին միւսները և ժողովուեցան առաջին խօսողի շուրջը:

—Ես մայր կըդառնամ, ասաց առաջինը և ձեռն առաւ ոլորած ու լախտ շինած գօտիկը: Նա կարգով կանգնացրեց բոլոր խաղացողներին՝ թէ մեծ թէ փոքր, ինքն էլ կանգնեց նոցա դիմացը և առաջարկեց զանազան խնդիրներ՝ հանելուկի

ձևով: Ամէն մի խնդիրը առաջարկելիս՝ մայրը լախտի վերայ կամ ձեռքով ցոյց էր տալիս նորա յատկանիշները: «Հա՛ գանգալայ» խաղի մէջ առաջարկած խնդիրները բոլորը կենդանիների մասին է լինում Համարեա. մայրը ցոյց է տալիս մտադրած կենդանու մասերը և ամէն անգամ խաղակիցները նորա խաղին պատասխանում են «Հա՛ գանգալայ-գանգալայ» բացականչութեամբ:

Այս անգամն էլ մայրն սկսեց:

—Հա՛ գանգալայ-գանգալայ.
Մեր տանն ունինք մի թըռչուն,
Թևեր ունի խիստ նախշուն,
Նըրա գլխին մի պսակ,
Եւ մի միրուք ծնօտի տակ:
Խաղակիցները՝—Հա՛ գանգալայ-գանգալայ:
Մայրը՝
Լուսադէմին նա կանգնած՝
Թըրփըրտում է ու երգում,
Ողջ աշխարհը իւր ձայնով
Քընատեղից զարթեցնում:
Խաղակիցները՝—Հա՛ գանգալայ-գանգալայ:

Այնուհետև մանուկները մտածմտնքի մէջ ընկան. ամէն մէկը կամենում էր, որ ինքը լուծէր խնդիրը: Մայրը շարունակ անցնում էր կանգնած շարքի առջևից և լախտով խփում էր նոցա ձեռքին ու հարցնում: Վերջապէս մանուկներից մէկը բացականչեց. «Աքաղաղն է, աքաղաղը»:

Մայրը ղլխով արեց և լախտը տուեց գուշակողի ձեռքը.

—Ջուր տուր, քշէր, ասաց նորան մայրը:

Մանուկը վեր առաւ լախտը, սկսեց հալածել միւսներին, և որին հասնում էր, լախտում էր անխնայ:

Մայրը՝—կորեկ, կորեկ, կորեկ:

Մանուկը սկսում է հալածել:

Մայրը՝ —հաճար, հաճար, հաճար. գարլի, գարլի, գարլի:
Մանուկը հալածում է ու հալածում:

Յանկարծ մայրը կանչեց յետևից. ցորեն, ցորեն, ցորեն:

Այդ միջոցին բոլոր մանուկները յետ դարձան և ընկան Հալածողի յետևից. նա էլ ամենայն ուժով սկսաւ փախչիլ դէպի հօբանը—մօր կանգնած տեղը: Մանուկներից մինը, հօբանին չհասած, խփեց նորա մէջքին: Խաղացողը խաղը տանուլ տուեց. եթէ կարողանար հօբանը հասնել՝ չբռնուած, ինքը պէտք է մայր դառնար. իսկ այժմ մայր դառաւ նա, ով նորան հասաւ և լախտը ձեռքիցն առաւ:

Խաղը նորից սկսուեցաւ:
Նոր մայրն սկսեց հետևեալը.
—Չա՛ գանգալայ-գանգալայ.
Մի կենդանի չորս ոտով,
Ինքը ծածկուած խիտ մազով.
Առանց մարդու չէ գնում
Ոչ դաշտ, ոչ սար և ոչ դոմ.
Նորա մէյը ուտում է
Թէ մարդ, թէ շուն, թէ գազան.
Նորա մորթուց կարում են
Տաք մուշտակները ձմեռուան.
Դորանք շատ են մեր երկրում.
Մեզնից երբէք չեն փախչում.
Նորանց յաճախ կըտեսնէք,
Կանաչ խոտ են արածում:
Ահէք, տեսնեմ, ձեզանիցյ
Որն է ասածս լմանում:

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՅԱՒԵԼՎԱԾՈՑ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1. Երեխան դաշտումը, Թարգմ. Ղուկասեանց 5
2. Արմինէ, Փանոսեանց . . . 6
3. Մայրը և որդի, Հարխուդարեանց 8
4. Մանկանը, Զահազիզեանց. . 9
5. Բարեխոսի խափշիկը, Ղուկ. . 10
6. Աւետարան, Յովհաննիսեան . –
7. Ծնողասիրութիւն, Ն. Ղուկասեանց 11
8. Որբիկ, Ծատուրեան . . . 12
9. Ագահութեան պտուղը, Ն. Ղուկասեան 13
10. Գիւղականև մշակ, Կրիլովից . —
11. Գիւղական և մահ, ,, . 15
12. Ձկուռն և մրջիւնը ,, . —
13. Քամին և արևը, Ն. Ղուկասեանց 16
14. Գեթառատ քամին, Հարկաս. . 17
15. Նագեր 18
16. Արագիլ, Յովհաննիսեանց . . 19
17. Մի հոգի երկու մարմնի մէջ, Թարգ. Նազարեանց . . 20
18. Կեանք և ծաղիկ, Թարգմ. Ադամեան 21
19. Բիւրասպատիկ, Սրուանձտեան. 22
20. Մարդ և հրէշը, Գ. Հարխուդարեան 26

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

21. Գարնան սկիզբը, Պռօշեանց . 37
22. Գարնանամուտ, Նալբանդեան 38
23. Սար-գնալը, Աբովեանց . . . —
24. Գարուն, Պէշիկթաշլեան . . 39
25. Դաշտումը 40
26. Վարդի ոստ, Ջալալեան . . 42
27. Անտառը և նորա օգուտները 43
28. Երբոր ճնշում է քո սիրտը, Թարգմ. Հարխուդարեանց 45
29. Երաշտ, Պռօշեանց . . . —
30. Առաւօտ, Յովհաննիսեան . . 49
31. Ամպ, Թարգ. Րաֆֆի . . . —
32. Ամպեր, Մելիք-Զահնազար. . 52
33. Ամառային երեկոյ, Մուրացան 53
34. Ծառիկ, Արլինգ 56
35. Ամառն Երևանում, Աբովեան — ✓
36. Բոստանչի, Ղազյեանց . . 60
37. Կալոցի ժամանակ, Դեղամեան —
38. Կալի երգ, Արաբատեանց . 61
39. Կարկուտ, Մելիք-Զահնազ . 63
40. Աղօթք, Յովհաննիսեան . . 65
41. Աշունք, Պռօշեանց . . . 66
42. Աշնան վերջը, Սնար . . . 67
43. Այգեկութ, Պռօշեանց . . 68
44. Աշուն, Փանոսեան . . . 69
45. Ձմեռ, Աբովեանց . . . . 71 ✓
46. Սառնամանիք, Ղազյեանց . 72
47. Իմ հարևանները, Հրատ . . 73
48. Աղքատ կին, Նալբանդեան. 76

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

49. Մարդու մարմնի անդամները 79
50. Ոսոխ, Գ. Քաթիպա . . . 80
51. Արամ (արտաքինզգայարանք) —
52. Մանուշակ, Մանուէլեան . 82
53. Գաբեգինը (գլուխ) . . . 83
54. Աւ մանուկն, Կրասիլնիկեան 85
55. Երշաւիրը (ներքին գործարանները) 86
56. Հետաքրքիր, Կրիլովից . . 88
57. Հրաշալի տնակ 90
58. Ծառերն ու կացինը, Աբովեանց 91 ✓
59. Կապիկի եղբայրը . . . . —
60. Կապիկներ, Կրիլովից . . 93
61. Ոչխար 95
62. Արամազդը և ոչխարը . . 98
63. Գայլն ու գառը, Կրիլովից . 99
64. Ձի 101
65. Արամազդը և ձին . . . 102
66. Իշն ու սոխակը, Աբովեանց 104 ✓
67. Կով 105
68. Փիղ 107
69. Փիղը և քոթոթը, Կրիլովից 110
70. Առիւծն ու վագրը . . . —
71. Լուսնահաչ, Ղազյեանց . 111
72. Վանի կատուն, Փափազեան 112
73. Մուկն ու կատուն, Աբովեան 115 ✓
74. Թռչուններ . . . . —

75. Թռչունների այլ և այլ տեսակները. . . . 117
76. Գեղարքունի 122
77. Կարապը, ձուկը և խեչափարը, Կրկլովից . . . 125
78. Կենդանիների լեզուն . . 126
79. Հօտ . . . . —
80. Մեղու 127
81. Ձերամ 131
82. Խեցեմորթը և արճիւը . . 134
83. Բոյսերի մասերը և նոցա բեզմնաւորութիւնը . . 136
84. Արտասուող ուռենի, թարգմ. Ղուկասեանց . . . 143
85. Կաղնի և եղէգն, Կրկլովից . 145

ՀԱՏՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ

86. Հայի գերդաստանը, Աղայեանց 148
87. Սիրասուն ծաղիկ, Արծրւեան 149
88. Մեծ նանը, Պռօշեանց . . 150
89. Գիւղի ժամը, Յովհաննիսեան 152
90. Դրւջակ, Պռօշեանց . . . 153
91. Ջրօրհնէք 154
92. Ս. Միւռոնի օրհնութիւնը, Ադամեան 157
93. Մանուկ Յիսուս, Յովհաննիսեան 163
94. Հայի բարիկենդանը, Պռօշ. 163
95. Բերան — վակէք, Պռօշեանց . 169
96. Մեծ պասի երկուշաբթին, Պռօշեանց . . . 174
97. Ս. Տաճարի դրանը, Արծիւ. . 177
98. Յիմար իմաստունք, Պռօշ. —
99. Չիք-չորեքշաբթի, ,, 178
100. Վայր ընկնող աստղեր, Նալբանդեան 179
101. Ուխթի-ուրբաթ, Պռօշեանց . 182
102. Արտաւազդ, Բաֆֆի . . . 183
103. Դրընդէզ, Պռօշեանց . . 186
104. Ախառ ,, . . 187
105. Որբի Զատիկը, Ծատուրեան 188
106. Նաւասարդի տօներից մէկը 190
107. Ուխտագնացութիւն, Պռօշ. 195
108. Իջմիածին, Մ. Բուրջի . . 198
109. Գիւղացու երջանկութիւնը, Աբովեանց . . . 199
110. Աքսորուածի զաւակը, Կրասիլնիկեանց . . . 202
111. Նախապաշարմունք, Յովհաննիսեան 204
112. Խառախազ և շուտասելուկ, Յովհաննիսեան . . . 206
113. Հանելուկներ, Յովհ. . . 210
114. Մանկական խաղ, Մելիք . 212

4558
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0062821